ՋՈՆ ԲԻՎԵՐ

ԿՈՏՐԵԼ ԵՐԿՉՈՏՈՒԹՅՈՒՆԸ

Ասա՛ ո՛չ՝ առանց հանցավոր զգալու,
եղի՛ր հաստատուն, առանց մարդուն հաճեցնելու:

ԿՈՏՐԵԼ

ԵՐԿՉՈՏՈՒԹՅՈՒՆԸ

ՋՈՆ ԲԻՎԵՐ
«սատանայի խայծը» գրքի հեղինակ

Breaking Intimidation Armenian by John Bevere
© 2007 Messenger International
www.MessengerInternational.org

Additional resources in Armenian are available
for free download at: www.CloudLibrary.org
To contact the author: JohnBevere@ymail.com

Իմ խորին երախտագիտությունն եմ հայտնում՝

Կնոջս՝ Լիզային: Տիրոջից հետո դու իմ ամենասիրելի ընկերն ես:

Ես անչափ երախտապարտ եմ Տիրոջը՝ քեզ հետ ամուսնանալու արտոնության համար: Շնորհակալություն քեզ այն ժամերի համար, որ դու նվիրեցիր այս գիրքը խմբագրելուն:

Ես սիրու՜մ եմ քեզ, թանկագի՛նս:

Մեր չորս որդիներին՝

Էդիսոնին, ես երախտապարտ եմ քո նուրբ սրտի համար: Դու ապրում ես համաձայն քո անվան, որը նշանակում է «վստահության արժանի»:

Օսթինին, ես երախտապարտ եմ քո անձնվեր սիրո և նրբազգացության համար:

Ալեքսանդրին, դու լուսավորում ես այն տեղերը, որտեղ լինում ես: Ես սիրում եմ քեզ:

Արդենին, դու մեզ անպատմելի ուրախություն պարգևեցիր:

Ջոն և Քեյ Բիվերներին, դուք եղել եք աստվածապաշտ ծնողներ: Ես այնքան ուրախ եմ, որ Աստված թույլ է տվել ինձ լինել ձեր որդին, ես ձեզ՝ երկուսիդ էլ սիրում եմ:

Շնորհակալ եմ «Ջոն Բիվերի ծառայություններ»-ի աշխատակազմին: Շնորհակալություն ձեր աջակցության և հավատարմության համար:

Յուրահատուկ շնորհակալություն Ջոն Մեյսոնին՝ մի անկեղծ բարեկամի, որն իրապես ուրախանում է ուրիշների հաջողությամբ, ողջ «Քրիեյշն Հաուս»-ի աշխատակազմին, որ աշխատեց մեզ հետ և աջակցեց մեր ծառայությանը: Դուք բոլորդ յուրահատուկ գործընկերներ եք ծառայության մեջ:

Եվ ամենակարևոր բանը, ես անկեղծորեն գոհանում եմ մեր երկնային Հորից՝ Իր անսպառ սիրո համար, մեր Տեր Հիսուսին՝ Իր շնորհքի, ճշմարտության ու սիրո համար, Սուրբ Հոգուն՝ այս ծրագրի ընթացքում Իր հավատարիմ առաջնորդության համար:

Հեղինակի խոսք

Երբ գրում էի այս գիրքը, Աստված մարգարեական խոսք տվեց ինձ ասելով.

«Կան շատ մարդիկ, ովքեր իրենց անվանում են վերջին օրերի Իմ հզոր բանակի հավատացյալներ, բայց կապված են վախով: Նրանք Աստծո և մարդկանց առաջ մաքուր սիրտ ունեն, բայց և այնպես Գեդեոնի նման գերված են մարդկային վախից (Դատ. 6-8): Պարգևները, որոնք ես դրել եմ նրանց մեջ, հանգած են:

Ես կօծեմ այս գրքի ուղերձը, որպեսզի նրանցից շատերը ազատագրվեն: Այդ մարդիկ վեր կկենան և առանց վախի կհնազանդվեն Ինձ: Նրանք կլինեն քաջ պատերազմողներ և իրենց Աստծո զորությամբ ծնունդ կտան մեծ հաղթանակների»:

Առաջաբան ---------- 6
Ներածություն ---------- 8

Մաս I

Հաստատվիր քո հոգևոր դիրքի մեջ

1 Քայլիր քեզ տրված իշխանությամբ ---------- 13
2 Հոգևոր դիրք և իշխանություն ---------- 25
3 Երկու ծայրահեղություն ---------- 37
4 Տրված պարգևներ ---------- 49

Մաս II

Բացահայտել երկչոտությունը

5 Հանգած պարգևներ ---------- 65
6 Երկչոտությունից կաթվածահար եղած ---------- 81
7 Երկչոտության հոգին ---------- 95

Մաս III

Կոտրել երկչոտությունը

8 Բորբոքիր պարգևը ---------- 111
9 Երկչոտության արմատը ---------- 127
10 Ցանկությունը բավական չէ ---------- 143
11 Աստծո երկյո՞ւղ, թե՞ մարդու վախ---------- 163
12 Գործե՞լ, թե՞ արձագանքել ---------- 185
13 Զգաստության հոգին ---------- 199
14 Զգտիր առաջ ---------- 217

Վերջաբան ---------- 235

Առաջաբան

Արդեն շատ տարիներ է, որ ճանաչում եմ Ջոն Բիվերին՝ որպես երիտասարդ ծառայող և թանկագին ընկեր: Դա ինձ համար մեծ պատիվ է: Ես իմ ողջ սրտով հավատում եմ, որ Աստված նրան բարձրացրել է հաղթանակի, հավատքի և հույսի ուղերձ բերելու այս սերնդին:

Ջոն Բիվերը «Կոտրել երկչոտությունը» գրքով Քրիստոսի մարմնին բերում է մի ուղերձ, որն արդիական է և որի կարիքը շատ է: Մենք կարիք ունենք օգտագործելու այն պարգևները, որոնք Աստված տվել է մեզ՝ աշխարհին հասնելու համար: Բայց դրա փոխարեն մեզանից շատերը նահանջում են Քրիստոսի մեջ ունեցած մեր իշխանության վրա աննկատ և նկատելի հարձակումներից:

Սատանան ցանկացած ձևով պայմաններ կստեղծի և կօգտագործի մարդկանց՝ հանգցնելու Աստծո մեջ ունեցած քո պարգևը: Աստծո Խոսքում կան շատ հավատացյալների օրինակներ, որոնք վախի մեջ են եղել, բայց, կոտրելով այն, հասել են հաղթանակի: Նշենք մի քանիսին. Հեսու, Գեդեոն, Նեեմիա և Դավիթ: Աստվածաշունչն ասում է. «Բոլոր քեզ դեմ շինած գործիքները պիտի չհաջողվեն» (Եսայի 54.17):

Այս գրքի և Սուրբ Հոգու զորության միջոցով յուրաքանչյուր հավատացյալ կարող է ճեղքել վախը և հաղթել: Թող Աստված այս սերնդի մեջ բարձրացնի պատերազմողների այնպիսի մի բանակ, որը երբեք չի նահանջի:

Ջոն Մեյսոն

«Սովորական թշնամի», «Հեռացրու այն ամենը, ինչը փորձում է քեզ կանգնեցնել» և «Խոստումի խոսքեր» գրքերի հեղինակ:

Ներածություն

Շատ քրիստոնյաներ են պատերազմում վախի դեմ, շատերն էլ ավելի շատ կռվում են վախի հետևանքների դեմ, մինչդեռ պետք է պայքարեն դրա ակունքի դեմ: Պատկերացրեք թանկարժեք կահավորանքով մի շքեղ տուն, որը սակայն տանիք չունի: Հորդառատ անձրև է գալիս և ողողում է ամբողջ տունը: Գրեթե ամեն ինչ ավերվում է: Երկար ժամանակ կպահանջվի կեղտոտ ու ոչ պիտանի դարձած կահույքից ազատվելու, հագուստները և հատակը մաքրելու համար: Հետո տանտերը ջանասիրաբար պետք է աշխատի, որպեսզի նորից ձեռք բերի այն ամենը, ինչ փչացել է:

Մի գործը դեռ չավարտած, փոթորիկը ավերում է նորոգածը: Հուսախաբված նա նորից սկսում է վերականգնման ձանձրալի և վիատեցնող աշխատանքը: Կարճատև դադարից հետո անձրևը կրկին կործանում է ամեն բան, և հերթական անձրևի հետևանքները վերականգնելուց հոգնած մարդը սպառում է իր ուժն ու կարողությունը: Հուսալքված նա դադարում է պայքարել և համակերպվում է իրավիճակին՝ հավատալով իր ճակատագրին:

Իհարկե, սա անհեթեթություն է: Հավանաբար դու կմտածես. «Ինչո՞ւ նա չէր ամրացնում տանիքը. դրանով նա ոչինչ չէր կորցնի:

Ի՞նչ հիմար մարդ է»: Բայց և այնպես, այս տեսարանը բնորոշում է շատ շատերին, որոնք պայքարում են վախի դեմ: Նրանք վախի զորությունը կոտրելու փոխարեն ջանում են շտկել դրա հետևանքները՝ հիասթափությունը, շփոթվածությունը, հուսահատությունը…

Ոմանք էլ պայքարում են վախի դեմ՝ դիմելով հոգեբաններին, որպեսզի սովորեն, թե ինչպես վարվեն իրենց վախի հետ: Մյուսներն իրենց կյանքը հանձնում են երկչոտության ստրկությանը՝ վախենալով ազատության հույս ունենալ: Այս երկուսն էլ նման են առանց տանիքի թրջված կահույքով բնակարանում ապրելուն: Ոմանք էլ մեկուսանում են: Հուսահատված նրանք ընդհանրապես լքում են իրենց հեղեղված տունը:

Այս գրքի ուղերձը ձեզ չի սովորեցնելու պայքարել, այլ այն կբացահայտի բոլոր վախերից և երկչոտությունից ազատվելու Աստծո ճանապարհը, որից հետո դուք կարող եք իրականացնել Աստծո կոչումը ձեր կյանքում:

Ես շատ ժամեր եմ անցկացրել համակարգչի առաջ այս գրքի վրա աշխատելիս և խնդրել եմ Տիրոջ առաջնորդությունը: Մի առավոտ, երբ աշխատում էի գրքի վրա, իմ սենյակում զգացի Տիրոջ ներկայությունը:

Վեր կացա համակարգչի մոտից և սկսեցի քայլել ու աղոթել: Երբ աղոթում էի, Տիրոջ մարգարեական Հոգին իջավ ինձ վրա, և այս խոսքերը դուրս եկան. «Որդի՛ս, կան շատերը, որոնք իրենց անվանում են վերջին օրերի Իմ հզոր բանակի հավատացյալներ, բայց կապված են վախով: Նրանք Աստծո և մարդկանց առաջ մաքուր սիրտ ունեն, բայց և այնպես Գեդեոնի նման գերված են մարդկային վախից (Դատ. 6-8): Պարգևները, որոնք Ես դրել եմ նրանց մեջ, հանգած են: Ես կօծեմ այս գրքի ուղերձը, որպեսզի նրանցից շատերը ազատագրվեն: Այդ մարդիկ վեր կկենան և առանց վախի կհնազանդվեն Ինձ: Նրանք կլինեն քաջ պատերազմողներ և իրենց Աստծո զորությամբ ծնունդ կտան մեծ հաղթանակների»:

Սա ընդամենը աստվածաբանական ուսուցում չէ: Տարիներ շարունակ ես բռնված էի վախով: Ամենամեծ խոչընդոտը, որին ես հանդիպում էի, այն էր, որ չգիտեի իմ պրոբլեմների ակունքը: Աստված բացահայտեց այդ չար թշնամուն: Դրանից հետո Աստված օգտագործել է այս ուղերձը՝ ողջ աշխարհում քրիստոնյաներին ազատագրելու համար:

Մի ավագ այսպես արտահայտվեց՝ բացականչելով. «Այս ուղերձը Ամերիկայում պետք է լինի յուրաքանչյուր հովվի ձեռքում»: Այս պատգամը միայն հովիվների համար չէ, այլ եկեղեցու յուրաքանչյուր անդամի: Ես չեմ հավատում, թե պատահականություն է, որ այս գիրքը քո ձեռքերում է: Երբ դու ազատագրվես, խնդրում եմ, փոխանցիր այս ուղերձը նրանց, ովքեր ունեն դրա կարիքը: Երբ դու փոխանցես այն, ուղերձը քո մեջ ավելի կզորանա:

Ես քաջալերում եմ քեզ, որ աղոթքի մեջ միանաս ինձ, երբ սկսես կարդալ այս գիրքը: Խնդրում եմ, բացի՛ր քո սիրտը և խոսի՛ր այս բառերը Աստծո ներկայության մեջ.

«Հա՛յր, իմ Տեր Հիսուս Քրիստոսի անունով ես խնդրում եմ Սուրբ Հոգուն, որ հայտնի Քո խոսքը ինձ, երբ կարդամ այս գիրքը: Խնդրում եմ, բացահայտիր և հեռացրու իմ կյանքից ամեն տեսակի անվստահություն, որպեսզի վախի արմատը չորանա: Ձող ես ավելի մոտենամ Քեզ և համարձակ վկայեմ իմ Տեր Հիսուս Քրիստոսին»:

Հաստատվիր քո հոգեւոր դիրքի մեջ

Քայլի՛ր Աստծուց բեզ տրված
իշխանությամբ, այլապես ինչոր մեկը կվերցնի այն եւ
կօգտագործի բո դեմ:

Քայլի՛ր քեզ տրված իշխանությամբ

Ծառայելով Տիրոջը՝ ես ավելի ու ավելի եմ հասկանում, որ Աստված իրավիճակները և մարդկանց օգտագործում է մեզ նախապատրաստելու համար, որպեսզի մեր կյանքում իրականանա Իր կոչումը:

1983 թ-ին ես թողեցի իմ կարիերան՝ ինժեների պաշտոնը, որպեսզի մի շատ մեծ եկեղեցում մտնեի օգնության ծառայության մեջ: Իմ դիրքում ես ծառայում էի հովվին, նրա կնոջը, բոլոր հյուրծառայողներին: Օգնում էի երկրորդական խնդիրներ լուծելու գործում, որպեսզի նրանք անեին այն գործերը, որոնց համար Աստված կանչել է նրանց: Չորս տարի հետո Աստված ինձ հանեց այդ ծառայությունից, որպեսզի լինեի մեկ այլ մեծ եկեղեցու երիտասարդների հովիվ:

Երբ եկավ մեկնելու պահը, մի մարդ, որը ինձ հետ նույն ծառայության մեջ էր, կնոջս ասաց, թե Աստված իրեն խոսք է տվել ինձ համար: Դրանից հետո մինչև օրս այդ խոսքը որպես զգուշացում անընդհատ հնչում է իմ ականջներում՝ պաշտպանելով ինձ իր իմաստությամբ և զորությամբ: Ինչպես Աստծո ցանկացած ճշմարիտ խոսք, այն ևս դարձավ մի ղեկ իմ սրտի համար և անորոշությունից ինձ պահելու հիմք:

Այդ մարդը զգուշացրել էր կնոջս՝ ասելով. «Եթե Ջոնը չքայլի

Աստծո՝ իրեն տրված իշխանությամբ, ինչ-որ մեկն այն կվերցնի նրանից և կօգտագործի իր դեմ»: Այս խոսքն ունեցավ անմիջական ազդեցություն: Ես ընդունեցի այն որպես Աստծո իմաստություն, բայց լիարժեք պատկերացում չունեի, թե ինչպես պետք է կիրառեի այն: Այդ գիտությունը գալու էր հաջորդ մի քանի տարիների ընթացքում:

Կյանք փոխող փորձառություն

1990 թ-ի սկզբին Տերը հաստատեց, որ Իր կոչումն իմ կյանքում այդ ժամանակ ճանապարհորդելն ու ծառայելն էր: Երբ ես կարճ ժամանակով ճանապարհ ընկա, դրանից հետո ունեցա կյանքը փոխող փորձառություն, որի միջոցով ես վերջապես հասկացա Աստծո հաստատած խոսքերը, որոնք ինձ ասվել էին տարիներ առաջ:

Մենք սկսել էինք ծառայություններ անցկացնել մի եկեղեցում: Ծառայությունները ծրագրել էինք սկսել չորեքշաբթի երեկոյան և ավարտել կիրակի օրը: Աստծո Հոգին շարժվում էր շատ զորավոր ձևով, և լինում էին հզոր ազատագրումներ, բժշկություններ ու փրկություններ: Ամեն երեկո ծառայությունների ժամանակ Աստծո ներկայությունն ավելի ու ավելի ցայտուն էր դառնում:

Առաջին շաբաթվա ընթացքում մի կին, որը ներգրավված էր «Նյու էյջ» շարժման մեջ, փառավոր ձևով ազատագրվեց: Եվ սա փոփոխության խթան դարձավ, որը սկիզբ դրեց մեծ արթնության: Մի շաբաթվա ընթացքում մեզ միացան այդ վայրից իննսուն մղոն հեռավորության վրա ապրող մարդիկ:

Հովիվն ասաց. «Մենք չենք կարող դադարեցնել այս ծառայությունները: Աստված ավելին ունի մեզ համար պահած»: Ես համաձայնվեցի, և մենք ունեցանք ևս քսանմեկ ծառայություն: Աստծո Խոսքը հոսում էր արագավազ վտակի նման, և Հոգու պարգևները դրսևորվում էին յուրաքնաչյուր ծառայության ժամանակ:

Ծառայությունների երկրորդ շաբաթվա ընթացքում, մի երեկո, երբ ես քարոզում էի, շրջվեցի ու նայեցի երաժիշտներին և երգիչներին (բեմի վրա մոտ քսանհինգ մարդ կար): Այնուհետև ես հայտարարեցի. «Այս բեմի վրա մեղք կա: Եթե դու չապաշխարես, Աստված կբացահայտի այն»:

Երբ ականջիս հասան իմ այդ խոսքերը, մտածեցի. «Ա՜յ քեզ բան, որտեղի՞ց եկան դրանք»: Որոշ ժամանակ քարոզելուց հետո նոր հասկացա, որ լինում է ժամանակ, երբ Աստծո օծությունը քեզ վրա այնպիսի ուժով է իջնում, որ դու կարող ես հռչակել խոսքեր, որոնք քո ֆիզիկական ականջները լսում են ասելուց հետո: Սա մարգարեական քարոզ է, երբ մենք խոսում ենք աստվածային ներշնչանքով:

Միտքս սկսեց հարցեր տալ իմ ասածի վերաբերյալ, բայց ես արագ հեռացրի այդ մտքերը, որովհետև գիտեի՝ այն, ինչ ասացի, Աստծուց էր: Ես նախօրոք չէի պլանավորել դա: Քարոզելու օծությունը ծանրանում էր ինձ վրա:

Ծառայությունների ժամանակ գնալով աճում էր մարդկանց բազմությունը: Երրորդ շաբաթվա ընթացքում նորից, երբ քարոզում էի, շրջվեցի ու մատս ուղղեցի բեմի վրա կանգնածներին և Սուրբ Հոգու ներշնչմամբ համարձակ հայտարարեցի. «Այս բեմի վրա մեղք կա: Եթե դու չապաշխարես, Աստված կբացահայտի դա, և դու կհեռացվես»: Ես զգացի իշխանության և վստահության աճ: Այս անգամ իմ մեջ հարցեր չառաջացան, որովհետև գիտեի, որ Աստված Իր տանից մեղքը սրբելու գործընթացի մեջ է:

Դատիր քեզ, որ չդատվես

Եթե մեղքը գաղտագողի մտնում է մեր կյանքի մեջ, Սուրբ Հոգին հանդիմանում և ուսուցանում է մեզ, բայց եթե չլսենք, աստիճանաբար կդառնանք սառն ու անտարբեր: Սա կշարունակվի այնքան

ժամանակ, մինչև մեր սրտերում զգայուն չդառնանք Նրա նկատմամբ:

Մեզ կամ մեր շուրջ գտնվողներին հասնելու և պաշտպանելու փոխարեն, Աստված ուղարկում է ինչ որ մեկին՝ բացահայտելու սխալը: Աստված սա չի անում մեզ շփոթեցնելու նպատակով, այլ զգուշացնելու և պաշտպանելու:

Եթե մենք շարունակենք մերժել լսելը, դատաստանը կգա. «Որովհետև եթե մեր անձերը դատեինք, չէինք դատապարտվի: Բայց դատվելով Տիրոջից, խրատվում ենք, որ աշխարհի հետ չդատապարտվենք» (Ա Կորնթ. 11.31,32):

Աստված մեղքը հանդուրժում է որոշակի ժամանակ, որպեսզի այդ մեղքից ապաշխարելու ժամանակ տա՝ պաշտպանելով մեզ Իր պատժից: Նույնիսկ Իր խրատելի պատժի մեջ, Աստված ցանկանում է, որ մենք չդատապարտվենք աշխարհի հետ: Անառակ որդին սթափվեց, երբ խոզանոցում էր: Ավելի լավ է ինքդ սթափվես «խոզանոցում», քան շարունակես մնալ մեղքիդ մեջ ու մի օր լսես Տիրոջ ձայնը, որը կասի. «…Ինձանից դե՛ն գնացեք, ով անօրենություն գործողներ» (Մաթ. 7.23):

Եթե մենք չենք ապաշխարում, տառապում ենք, չնայած որ դա չէ Աստծո ցանկությունը մեզ համար: Վկայակոչելով սրա մասին՝ Պողոսն ասում է. «Նրա համար էլ ձեր մեջ շատ հիվանդներ և ցավագարներ կան, և շատերն էլ ննջած են (մեռած են)» (Ա Կորնթ. 11.30): Մեղքը, վերջ ի վերջո, հանգեցնում է հոգևոր և ֆիզիկական մահվան: Ես զգում էի, որ Տերը խրատում է բեմում գտնվող ինչ որ մեկին՝ փորձելով այդ մարդուն բերել ապաշխարության, բայց ես չգիտեի, թե ում էր հանդիմանում մեղքի համար:

Աննկատ հարձակում վախի կողմից

Հաջորդ երեկո, երբ հովվի հետ նրա գրասենյակում պատրաստվում էինք ծառայությանը, ավագներից մեկը ներս մտավ և տեղեկացրեց, որ փառաբանության ծառայողները մռայլ են ու բացասական տրամադրվածություն ունեն: Հովիվը մտածեց, որ նրանք գուցե պարզապես հոգնած են ամենօրյա ծառայություններից և ասաց. «Ուղղակի ասա նրանց, որ դուրս գան ու փառաբանեն Աստծուն և մի կողմ դնեն իրենց զգացմունքները»:

Ես նայեցի ավագին և ասացի. «Մի րոպե, ինչ-որ բան այնպես չէ՞»:

Ավագը պատասխանեց. «Լավ, նրանք կարծում են, որ դուք չափազանց խիստ եք, և եթե բան ունեք ասելու, պետք է առանձին դիմեք նրանց և ոչ հրապարակայնորեն»:

Չնայած որ ես այդ ժամանակ ոչինչ չգիտեի, բայց պահը վճռորոշ էր: Աստծուց ինձ տրված ծառայելու և պաշտպանելու իմ իշխանությանը մարտահրավեր էր նետվել: Թշնամուն դուր չէր գալիս այն, ինչ տեղի էր ունենում այդ հավաքույթներին, և ցանկանում էր կանգնեցնել այն:

Ես մի ընտրություն ունեի, չնայած որ այդ ժամանակ դա չէի գիտակցում: Ես կարող էի ենթարկվել վախին ու ետ քաշվել այն ամենից, ինչ ասել էի փառաբանության ծառայողներին՝ կորցնելով իշխանության իմ դիրքը, կամ էլ կարող էի մնալ իմ իշխանության մեջ, կոտրել նրանց վախի զորությունը՝ մնալով հաստատուն Աստծո ասածի մեջ:

Անմիջապես մտածեցի. «Զո՛ն, ինչու շփոթեցրիր այդ մարդկանց: Ինչո՞ւ չքարոզեցիր քո պատգամը առանց շրջվելու և մատնացույց անելու: Հիմա եկեղեցու ժողովուրդը զբաղված է պարզաբանումներով, թե բեմում գտնվողներից ո՞վ է մեղքի մեջ: Իսկ եթե ոչ մեկն էլ չլինի՞: Կամ եթե նույնիսկ մեղք կա, ի՞նչ կլինի, եթե չբացահայտ-

վի: Ժողովուրդը կդառնա կասկածամիտ, իսկ մաքուրները կտուժեն: Եկեղեցին դժվարություններ կունենա: Արդյո՞ք ես չեմ քանդել այս եկեղեցում ձևավորված բարի ավանդույթները: Եթե՝ այո, այն ինձ վատ համբավ կբերի, իսկ ես հենց նոր եմ սկսել ճանապարհորդել»:

Անընդհատ այս մտքերի գրոհի մեջ էի: Իմ վախերը սկսել էին կենտրոնանալ մեկ մտքի վրա. «Ի՞նչ կպատահի ինձ հետ»:

Ահա թե երկչոտությունն ինչպես է փոխելու քո կենտրոնացումը: Պատճառն այն է, որ երկչոտության արմատը վախն է, և վախն է պատճառ դառնում, որ մարդիկ կենտրոնանան իրենց վրա: Կատարյալ սերը դուրս է նետում վախը, որովհետև սերը կենտրոնացնում է Աստծո և ուրիշների վրա ու մերժում է ինքն իրեն (Ա Հովհ. 4.18):

Հովիվը ոչինչ չասաց: Երեքով ձեռք ձեռքի տվեցինք և աղոթեցինք, որ Աստծո կամքը կատարավի այդ հավաքույթի ժամանակ: Ծառայությունը սկսվեց այնպես, ինչպես որ անցած երեք շաբաթների ընթացքում: Փառաբանության և երկրպագության ընթացքում ես նկատեցի, որ Տիրոջ Խոսքը չի լցվում սրտիս մեջ: Ոչ մի առաջնորդություն չէի զգում, բայց մտածում էի, որ Աստված հավատարիմ է: Ես գիտեի, թե ինչ պիտի ասեի, և դա կլիներ իր ժամանակին, երբ բարձրանայի բեմ:

Փառաբանությունն ու երկրպագությունը ավարտվեց, և երբ հովիվը հայտարարություններն էր ասում, իմ սրտում ոչինչ չէի լսում: Մտածեցի՝ կբարձրանամ բեմ, և Աստված կառաջնորդի ինձ, երբ կանգնեմ այնտեղ:

Ես միակը չեմ, ով նշումներ է անում քարոզին պատրաստվելիս: Սովորաբար ես ուսումնասիրում եմ, աղոթում և հետո խոսում եմ իմ սրտից՝ ներշնչվելով Աստծուց: Անհանգստությունս գնալով մեծանում էր, քանի որ ժամանակն անցնում էր, և ես գիտեի, որ ոչինչ չեմ ունենա ասելու, եթե Աստված ինձ չառաջնորդի:

Հետո հովիվը ներկայացրեց ինձ: Առաջ եկա, և քանի որ առաջնորդություն չունեի, ասացի. «Եկեք աղոթենք»: Երբ աղոթում էինք, զգում էի, որ առաջնորդություն չկա: Ես աղոթեցի մի քանի րոպե: Իրավիճակն ավելի էր վատանում, քանի որ իմ աղոթքները իրենց մեջ կյանք չունեին: Բառերն ընդամենը դուրս էին գալիս բերանիցս և ընկնում ոտքերիս տակ: Մտածում էի. «Ի՞նչ եմ անելու»: Որոշեցի մի ուղերձ տալ Սաղմոսներից, որը նախկինում քարոզել էի:

Երբ սկսեցի քարոզել, ոչ մի կյանք չզգացի. ոչ մի օծություն չկար ուղերձի մեջ: Ես ջանում էի կենտրոնացնել մտքերս: Թվում էր, թե Աստված ներկա չէր: Մտածում էի. «Ինչո՞ւ դա ասացի, որտեղից եմ վերցրել սա»: Ինձ առաջնորդում էր շփոթվածությունը և ոչ թե Սուրբ Հոգին: Ես շարունակում էի ինքս ինձ սփոփել, որ Աստված կառաջնորդի և կփրկի ինձ խառնաշփոթությունից: Բայց և այնպես իրավիճակն ավելի էր վատանում: Վերջապես ավարտեցի քարոզը և ծառայությունը: Դա տևեց երեսունհինգ րոպե:

Շփոթված ետ վերադարձա այն տեղը, որտեղ կանգնած էի: Դիմեցի Աստծուն. «Աստվա՜ծ իմ, Դու ինչո՞ւ չառաջնորդեցիր: Մինչև այսօր անցկացրած բոլոր ծառայությունները հիանալի և զորավոր էին, մինչդեռ այս ծառայությունն իր մեջ կյանք չուներ: Եթե ես լինեի այս մարդկանց տեղը, այլևս ծառայության չէի գա: Ճիշտն ասած՝ ես չեմ ուզում նահանջել»: Այդ գիշեր, երբ անկողին մտա, թվում էր, թե մի պարկ ավազ եմ կուլ տվել:

Հաջորդ առավոտյան արթնացա և զգացի, որ այդ մի պարկ ավազը վերածվել է ցեխի շաղախի. այնքան ծանրացած էի ինձ զգում, որ չէի ուզում վեր կենալ անկողնուց: Ուրախությունը հեռացել էր ինձանից: Ես դուրս եկա աղոթելու: Նորից հարցրի Աստծուն. «Ինչո՞ւ Դու չես առաջնորդում»:

Ոչ մի արձագանք:

- Ես մեղանչե՞լ եմ: Վշտացրե՞լ եմ Քեզ…

Դարձյալ լռություն: Մեկ ժամ աղոթեցի: Ամեն մի րոպեն պայքար էր:

Փառաբանության մի ձայներիզ միացրի և սկսեցի երգել. մտածում էի, որ Աստված ծանրության հոգու դեմ տալու է փառաբանության հանդերձը: Կես ժամ երգեցի իր մեջ կյանք չունեցող երգը: Ավելի հուսահատվեցի, «Ես ի՞նչ եմ արել: Ինչո՞ւ Դու ինձ չես պատասխանում»:

Ճաշից հետո գնացի մոտակա դաշտը: Մտածում էի, որ կկապեմ սատանային: Բավակա՛ն է:

Բայց միայն ես էի ինձ կապված զգում: Երեք ժամ դրսում աղոթում էի, ձայնս կորցնելու աստիճան գոռում էի սատանայի վրա: Արդեն տուն գնալու ժամանակ էր. պետք է պատրաստվեի հաջորդ ծառայությանը: Ես սփոփեցի ինքս ինձ. «Այսպիսի դիմադրությունից հետո այս երեկո Աստված զորավոր ձևով կգործի: Զո՛ն, պարզապես քայլիր հավատքով»:

Այդ երեկո մենք փառաբանեցինք, երկրպագեցինք, հայտարարություններ ու զոհաբերություն եղան, իսկ իմ մեջ նույն վատ նախազգացումն էր, որ ունեցել էի նախորդ ծառայության ժամանակ: Կրկին մտածեցի, որ Աստված կգործի իմ միջոցով, երբ բարձրանամ բեմ: Ինձ ներկայացրին և նորից...ոչինչ: Ես աղոթեցի առաջնորդության համար, բայց լռություն էր...

Սկսեցի քարոզել մեկ այլ քարոզ, որ նախկինում քարոզել էի, և ընկա շփոթվածության մեջ. ո՛չ մի կյանք, ո՛չ մի առաջնորդություն և ոչ էլ օծություն: Այս շփոթվածությունից հինգ րոպե հետո ասացի. «Ժողովո՛ւրդ, մենք կարիք ունենք աղոթելու: Ինչ-որ բան ճիշտ չէ»: Բոլորը ոտքի կանգնեցին, և մենք սկսեցինք եռանդուն աղոթել:

Բացահայտված երկչոտություն

Ավելի քան քսանչորս ժամ հետո հանկարծակի, ես առաջին անգամ լսեցի Աստծո ձայնը: Նա ասաց. «Զո՛ն, դու վախեցած ես այն մարդկանցից, որոնք բեմի վրա են՝ քո ետևում: Դու դուրս ես եկել

իշխանության քո դիրքից, և քո մեջ եղած Աստծո պարգևը հանգած է»:

Այս պարզ հանդիմանությունից մի լույս վառվեց և ողողեց իմ հոգին: Մինչ մարդիկ աղոթում էին, հաջորդ հինգ րոպեի ընթացքում Աստծո Հոգին ինձ տարավ Աստվածաշնչի միջով՝ ցույց տալով բազմաթիվ դեպքեր, երբ տղամարդիկ ու կանայք վախեցած են եղել, և թե ինչպես է դա պատճառ դարձել նրանց մեջ Աստծո պարգևի մարելուն: Ես տեսա, թե ինչպես էին նրանք զիջում իրենց իշխանությունը և կորցնում իրենց արդյունավետությունը Հոգու մեջ: Այնուհետև Նա տարավ ինձ անցած մի քանի տարիների միջով և ցույց տվեց, թե ինչպես եմ ես էլ նույնն արել:

Անմիջապես աղոթքի միջոցով սկսեցի կոտրել վախի զորությունը իմ միջից: Այսպիսի աղոթքի մի օրինակ կա գրքի վերջաբանում: Հաջորդ յոթանասունհինգ րոպեների ընթացքում կրակի մեջ գտնվող մարդու պես ես քարոզեցի Աստվածաշնչի այն խոսքերը, որոնք Աստված էր ինձ տալիս: Երբ ավարտեցի, ժողովրդի երկու երրորդն առաջ եկավ՝ վախից ազատագրվելու: Դա արթնության ամենամեծ ծառայությունն էր:

Մեկ շաբաթ չանցած Աստված սկսեց բացահայտել բեմի վրա եղող մեղքը: Պարզվեց, որ բասկիթառահարը ծառայություններից հետո միշտ գնում էր հարբելու: Ավելացնեմ նաև, որ փառաբանողներից մեկը շնանում էր եկեղեցուց մի երիտասարդ աղջկա հետ: Այդ երկուսն էլ հեռացվեցին ծառայություններից: Բասկիթառահարը լքեց եկեղեցին, բայց փառաբանողն ապաշխարեց և վերականգնեց Տիրոջ հետ իր ընթացքը:

Կարճ ժամանակ հետո փառաբանության և երկրպագության ավագն ու ևս մի քանիսը եկեղեցու ներսում պառակտում առաջացրին: Եկեղեցու մեկ չորրորդը հեռացավ նրանց հետ: Ինչպես պարզվեց, փառաբանության և երկրպագության ավագը շնության մեջ էր, և, չանցած մի տարի, նա բաժանվեց ամուսնուց: Վերջերս իմացա,

որ հիմա էլ մեկ ուրիշ տղամարդու հետ է ապրում: Պառակտման պատճառ դարձած ընտանիքներից միայն մի զույգն է, որ դեռ չի բաժանվել:

Սրանք այն մարդիկ էին, որոնք դժգոհում էին, թե ես չափազանց խիստ էի իրենց նկատմամբ: Աստված նրանց նախազգուշացնում էր: Որքա՜ն լավ կլիներ, եթե նրանք այդ նախազգուշացումն ընդունեին իրենց սրտերում:

Ես երկու անգամ վերադարձել եմ այդ եկեղեցի և ավելի շատ միաբանություն ու զորություն եմ տեսել այնտեղ, քան նախկինում: Հովիվը բացատրում էր. «Աստված էր սրբում մեր եկեղեցին, և դա մեզ ավելի ուժեղ դարձրեց: Մեր փառաբանությունն ու երկրպագությունը երբեք այսքան ազատ չեն եղել»: Նա նաև ասաց, որ առաջացած տարաձայնություններն ու դժգոհությունները երկար չեն տևել և արագ լուծվել են: Փա՜ռք Աստծուն:

Այն ինչ Աստված ասաց այդ կարճ՝ հինգրոպեանոց աղոթքի մեջ, ծառայության ընթացքում աճեց՝ վերածվելով մի քարոզի, որի մասին դու կարդացիր: Նա տվել է ինձ այս ուղերձը, որ քարոզեմ ողջ աշխարհում: Որպես հետևանք՝ ես տեսել եմ անթիվ տղամարդկանց ու կանանց, որոնք ազատվել են վախի գերությունից:

Ուղերձ բոլորի համար

Չնայած այս ուղերձը տրվեց ինձ ծառայության մեջ առաջացած կոնֆլիկտի ժամանակ, մի կարծիր, թե այն դաս է միայն նրանց համար, ովքեր կանգնում են ամբիոնի մոտ: Անթիվ քրիստոնյաներ են պայքարում վախի դեմ: Հաճախ նրանք, ովքեր վախեցած են, չեն պատկերացնում, թե ինչի դեմ են կռվում: Ինչպես սատանայի շատ հնարքներ, վախը ևս քողարկված ու աննկատ է: Մենք զգում ենք դրա հետևանքները՝ ընկճվածություն, շփոթվածություն, հավատքի պակաս՝ առանց իմանալու դրա արմատը: Եթե ես հասկանայի, որ

վախեցած եմ, այդքան չէի պայքարի այդ եկեղեցում: Բայց շնորհակալ եմ Աստծուն այն դասի, պատգամի համար, որ տվեց ինձ:

Հուսախաբության մեջ մեզանից շատերը կռվում են վախի թողած հետևանքների կամ պտուղների հետ ավելի շատ, քան հենց իր՝ վախի կամ դրա արմատի հետ: Հետևապես մենք կարող ենք ունենալ ժամանակավոր սփոփանք, բայց մեր պայքարը չի վերջանա դրանով: Դու կարող ես ծառի բոլոր պտուղները պոկել, բայց քանի դեռ նրա արմատները առողջ են, պտուղները նորից կաճեն: Այս պտույտը կարող է հուսահատեցնել, քանի որ զգում ենք, որ չենք կարող մեզ ազատել այդ խոչընդոտներից: Մենք կկորցնենք հույսը և բնակություն կհաստատենք մի տեղում, որը շատ հեռու է այն տեղից, որում մեզ Աստված կանչել է:

Այս գրքի ճշմարտությունները կօգնեն քեզ ոչ միայն ճանաչել վախը, այլև կզինեն քեզ անհրաժեշտ գիտությամբ, որով կկոտրես վախի լուծը քո կյանքում: Իմ աղոթքն է, որ մինչ դու կարդում և քայլում ես այս ճշմարտություններով, ազատագրվես՝ իրականացնելու համար քո կոչումը որպես Տեր Հիսուս Քրիստոսի ծառա:

Հնարավոր է, հիմա դու ամեն ինչ անում ես, որպեսզի ընդդիմանաս քո կյանքը գլխավորող վախին: Հաճախ, երբ մեր կյանքում մեզ ճնշող ինչ-որ բան ենք տեսնում, շուտափույթ լուծում ենք փնտրում, բայց սովորաբար այդ շուտափույթ լուծումը թանկ է արժենում. այն մնայուն չէ: Ես ցանկանում եմ, որ մեծ ուշադրություն դարձնես և այս ուղերձը հասկանաս այնպես, ինչպես այն բացվել է ինձ: Հաջորդ երեք գլուխներում ես կխոսեմ այն վճռորոշ հիմքերի մասին, որոնց վրա ամրապնդվելով կսկսենք գիտակցել մեր ունեցած հոգևոր դիրքն ու իշխանությունը:

*Սատանան ջանք է անում զցել մեզ մեր դիրքից, որ-
պեսզի դրանով վերստանա այն իշխանությունը, որ Հի-
սուսն իրենից վերցրել է։*

Հոգեւոր դիրք եւ իշխանություն

Եկ քննենք այն խոսքը, որ տրվեց ինձ. «Եթե դու չքայլես Աստծուց քեզ տրված իշխանությամբ, ինչ-որ մեկն այն կվերցնի քեզանից և կօգտագործի քո դեմ»:

Նախ և առաջ, շատ կարևոր է հասկանալ, որ հոգու մեջ կա բնակատեղ կամ դիրք, որում մենք գտնվում ենք որպես Քրիստոսի մեջ եղող հավատացյալներ: Այս դիրքից է գալիս իշխանությունը և հենց այս իշխանությունն է ցանկանում թշնամին: Եթե նա կարողանա այնպես անել, որ մենք զիջենք Աստծուց տրված իշխանությունը, նա կվերցնի այն և կօգտագործի մեր դեմ: Սա միայն մեզ վրա չի ազդում, այլ նաև նրանց, որոնց մասին մենք հոգ ենք տանում:

Կան բազմաթիվ սուրբգրային խոսքեր, որոնք վերաբերում են հոգու մեջ ունեցած մեր իշխանության դիրքին: Թույլ տուր մի քանի օրինակներ բերել.

«Բարձրյալի ծածկոցի տակ բնակվողը Ամենակարողի շուքի տակ է հանգստանում» (Սաղմ. 91.1):
«Եվ ինձ հանեց լայնարձակ տեղ և ինձ փրկեց, որովհետև հավանեց ինձ» (Սաղմ. 18.19):
«Իմ ոտքը կանգնած է ուղղությունով, և կօրհնեմ Տիրոջը ժողովուրդների մեջ» (Սաղմ. 26.12):

Հավատացյալները պարզապես հոգու մեջ տեղ են գրավում: Քեզ, որպես հավատացյալի, կարգադրված է ոչ միայն ճանաչել այդ տեղը, այլ նաև գործել դրա մեջ: Եթե դու չգիտես քո դիրքը, չես կարող պատշաճ ձևով գործել Քրիստոսի մարմնի մեջ:

Այս դիրքը և դիրքի իշխանությունը կարող ես կորցնել կամ կարող են գողանալ: Աստվածաշնչյան վառ օրինակ է Հուդա Իսկարիովտացին: Հիսուսի երկինք համբարձվելուց հետո աշակերտները հավաքվեցին աղոթելու: Այդ ժամանակ Պետրոսը բացատրեց, թե ինչ էր պատահել Հուդայի հետ.

> *«Որովհետև Սաղմոսների գրքում գրված է, թե նրա բնակությունը ավերակ պիտի լինի և նրանում բնակվող չլինի և նրա պաշտոնը ուրիշն առնի» (Գործք 1.20):*

Անօրենության պատճառով Հուդան ընդմիշտ կորցրեց հոգու մեջ իր տեղը (Գործք 1.16,17): Սա այն հիմնական ձևն է, որով թշնամին մարդկանց դուրս է հանում իրենց հոգևոր իշխանությունից: Ահա թե ինչպես այն պատճառ դարձավ, որ Ադամն ու Եվան ընկնեն իրենց դիրքից, հետևաբար սատանան ծուղակը գցեց նրանց՝ իր տիրակալության տակ առնելով Ադամին և Եվային, և այն ամենը, ինչի վրա նրանք իշխում էին:

Ադամն ու Եվան ունեին իշխանության ամենաբարձր դիրքը երկրի վրա: Ամեն մի կենդանի արարած և բնության մեջ եղող ամեն ինչ նրանց իշխանության տակ էր: Աստված ասել էր. «…Որ իշխեն ծովի ձկների և երկնքի թռչունների, և անասունների, և բոլոր երկրի վրա, և երկրի վրա սողացող բոլոր սողունների վրա» (Ծննդոց 1.26): Երկրի վրա՝ հոգևոր և ֆիզիկական ոլորտներում, մարդուն տրված իշխանությունից բարձր ոչինչ չկար, միայն Աստված Ինքն էր բարձր:

Երբ Ադամն իր իշխանության դիրքում էր, ոչ մի հիվանդություն, երկրաշարժ, սով կամ աղքատություն չկար: Այս երկրի վրա երկն-

քի տիրակալությունն էր, քանի որ Ադամն ընթանում էր Աստծո հետ մտերիմ փոխհարաբերության մեջ և կառավարում էր Աստծուց լիազորված իշխանությամբ ու զորությամբ: Բայց Ադամի մեղքի պատճառով նրա իշխանության տակ գտնվող ամեն ինչի վրա առաջ եկավ մահվան անեծքը: Մեղքի միջոցով նա հոգու մեջ եղող իր տեղը զիջեց Աստծո թշնամուն:

Աստվածաշունչը վկայում է սրա մասին, երբ սատանան պարծենում էր անապատում՝ Հիսուսի փորձության ժամանակ: Սատանան Հիսուսին տարավ մի բարձր լեռան վրա, որպեսզի ցույց տա աշխարհի բոլոր թագավորությունները, և ասաց.

> *«Այս բոլոր իշխանությունը և սրանց փառքը Քեզ կտամ, որ ինձ է տրված, և ում որ կամենում եմ, տալիս եմ սրան» (Ղուկ. 4.6):*

Աստված իշխանությունը Ադամին էր վստահել, իսկ Ադամն այն, իր արարքի հետևանքով, տվեց սատանային: Ադամն իր դիրքից բացի շատ բան կորցրեց: Ամենը, ինչ Աստված դրել էր Ադամի խնամատարության ներքո, ապականվեց: Այն ամենը, ինչ ներդաշնակության մեջ էր, աստիճանաբար անկում ապրեց:

Բերեմ կենդանիների օրինակը. Աստծո և Ադամի տիրակալության տակ գտնվող այգու առյուծները չէին ուտում մյուս կենդանիներին (Եսայի 65.25): Օձերը թունավոր խայթոցներ չունեին (Եսայի 65.25): Գառները չէին վախենում գայլերից, մյուսներն էլ չէին վախենում, որ որս կդառնան (Եսայի 65.25): Մինչդեռ, անկումից անմիջապես հետո մենք տեսնում ենք, որ անմեղ կենդանի է զոհաբերվում՝ ծածկելու համար մարդու մերկությունը (Ծննդոց 3.21): Ավելի ուշ մենք տեսնում ենք, որ թշնամանքն ու վախն է տեղ գրավում մարդու և կենդանիների հարաբերության միջև, որոնց նա մի ժամանակ կառավարում էր (Ծննդոց 9.2):

Հաջորդ ոլորտը, որի վրա անկումը թողեց իր ազդեցությունը,

երկիրն էր: Հողն անիծված դարձավ: Մարդուն ծառայելու փոխարեն, այն գործեց մարդու դեմ, քանի որ մարդը տքնաջան պիտի աշխատեր՝ պտուղներ ստանալու համար, որով ժամանակին անհոգ ապահովված էր (Ննդոց 3.17-19): Հռոմեացիների 8.20-ն ասում է մեզ. «Նրա համար, որ ստեղծվածները հնազանդվեցին ունայնության, ոչ թե կամքով, այլ նրա համար, որ հնազանդեցրեց այն հույսով»:

Երկրի վրա ոչ մի բան՝ լինի դա ֆիզիկական, թե հոգևոր, չկարողացավ խուսափել անհնազանդության հետևանքներից: Ոճիրը, մահը, հիվանդությունները, դժվարությունները, երկրաշարժերը, սովը, ծանձրույթը և շատ բաներ մուտք գործեցին երկիր: Աստվածային կարգուկանոնի և իշխանության կորուստ տեղի ունեցավ: Ադամի առաջնեկը սովորեց ատել, նախանձել և սպանել: Թշնամին վերցրեց Աստծուց տրված պաշտպանության ու ապահովության իշխանությունը և այն ուղղեց ողջ արարչագործության դեմ՝ օգտագործելով այն կործանման ու մահվան համար:

Վերականգնված իշխանություն

Մարդն էր զիջել իր դիրքն ու իշխանությունը, հետևապես միայն մարդը կարող էր այն վերականգնել: Հազարավոր տարիներ հետո Հիսուսը ծնվեց: Նրա մայրը Աստծո ժողովրդից դուրս եկած մի դուստր էր: Հիսուսի Հայրը Աստծո Սուրբ Հոգին էր: Նա կես մարդ և կես Աստված չէր: Նա էմմանուէլն էր՝ «Աստված՝ հայտնված մարդու մեջ» (Մաթ. 1.23): Փաստը, որ Նա մարդ էր, Նրան օրինական իրավունք տվեց ետ ստանալու այն ամենը, ինչ կորսված էր: Քանի որ Հիսուսն Աստծո Որդին էր, Նա ազատ էր մարդու վրա ձեռք բերած թշնամու տիրակալությունից: Հիսուսը հայտնեց Աստծո կամքը ամեն ինչի մեջ, ինչ որ ասաց ու արեց: Մեղքերը ներվում էին, քանի որ Նրա ներկայության մեջ մեղքը ոչ մի իշխանություն չուներ:

Տկարություններն ու հիվանդությունները խոնարհվում էին Նրա իշխանության և զորության առաջ (Ղուկ. 5.20-24): Բնությունն ինքն էլ ենթարկվում էր Նրա հրամանին: Հիսուսը քայլում էր այն իշխանությամբ, որից Ադամը հրաժարվել էր: Հիսուսը հնազանդության և զոհաբերության միջոցով վերականգնեց Աստծուց տրված իշխանությունը, որը կորցրել էր Ադամը, հետևապես նաև մեր փոխհարաբերությունը Աստծո հետ:

Մինչև Հոր մոտ վերադառնալը՝ Հիսուսը հայտարարեց. «...Ամեն իշխանություն Ինձ տրվեց երկնքում ու երկրում: Ուրեմն գնացեք բոլոր ազգերը աշակերտեք՝ նրանց մկրտելով Հոր և Որդու և Սուրբ Հոգու անունով՝ նրանց սովորեցնելով, որ ամեն ինչ, որ ձեզ պատվիրեցի՝ պահեն, և ահա Ես ձեզ հետ եմ ամեն օր մինչև աշխարհքի վերջը» (Մաթ. 28.18-20):

Հասկանալի է, որ Հիսուսը նորից ձեռք բերեց և՛ այն, ինչ Ադամը կորցրեց և՛ դեռ ավելին: Սատանան և Ադամը իշխանություն ունեին միայն երկրի վրա, բայց Հիսուսի տիրակալությունը ներառում է ոչ միայն երկիրը, այլ նաև երկինքը: Հիսուսը բարձրացավ սատանայի իշխանությունից էլ վեր: Իր դիրքն ու իշխանությունը հայտնելուց հետո Հիսուսը մեզ ասաց. «Ուրեմն՝ գնացե՛ք»:

Ինչո՞ւ էր Հիսուսն Իր իշխանությունը կապում մեր կոչման հետ: Պատասխանը մենք գտնում ենք Պողոս առաքյալի գրվածքներում:

Իշխանության դիրքերը

Պողոսն աղոթում էր, որպեսզի մենք իմանանք. «...ի՞նչ է Նրա զորության գերազանց մեծությունը Նրանում, որ հավատացինք... որ Քրիստոսում գործադրեց՝ Նրան մեռելների միջից հարուցանելով և Իր աջ կողմը նստեցրեց երկնավորներում» (Եփես. 1.19,20) (անգլերենում՝ երկնավոր տեղերում): Ուշադիր եղիր, որ «երկնավոր տեղերը» եզակիով չէ: Պողոսը պարզ ասում է՝ «տեղեր»: Սրա

հիմքը գտնում ենք մի քանի խոսք հետո, երբ կարդում ենք. «Եվ դուք, որ մեռած էիք հանցանքներում և մեղքերում. Ինքը ձեզ կենդանացրեց…Նրա հետ մեզ հարություն տվեց և Նրա հետ երկնավորներում նստեցրեց՝ Քրիստոս Հիսուսում» (Եփես. 2.2,6) (անգլերենում՝ *«երկնավոր տեղերում»*): Սրանք այն տեղերն են, որտեղ Նրա փրկագնված զավակներն են բնակվում:

Հիմա՝ մի հարց. «Որտե՞ղ են այս բնակության տեղերը, և ի՞նչ դիրք են գրավում դրանք»: Պատասխանը Եփեսացիների 1.21-ում է. «Ամեն իշխանությունից և պետությունից և զորությունից և տերությունից վեր, և ամեն անունից վեր, որ անվանվում է, ոչ միայն այս աշխարհում, այլև այն հանդերձյալում»:

Փրկագնված մարդուն, որը ծածկված է Քրիստոսի մեջ, այժմ Հոգու մեջ մի դիրք է տրված, որը շատ բարձր է սատանայի դիրքից: Հիսուսը հստակ ձևով հայտարարեց. «Ահա իշխանությունը տվի ձեզ՝ կոխել օձերի և կարիճների վրա և թշնամու բոլոր զորության վրա, և ձեզ ոչինչ չի վնասի» (Ղուկ. 10.19):

Այժմ մեզ համար հասկանալի է պատվիրանը, որն ասում է «Ուրեմն՝ գնացե՛ք»: Հիսուսը գիտակցում էր, թե ինչ իշխանություն էր վստահում հավատացողներին: Մեր վերստին ծնվելը մեզ իրավունք է տալիս դիրք ունենալ այս երկնավոր տեղերում՝ թշնամու իշխանությունից և զորությունից շատ ավելի բարձր:

Այնպես, ինչպես որ սատանան վարվեց Ադամի հետ Եդեմի պարտեզում, այսօր էլ ջանք չի խնայում մեզ դուրս բերելու հոգու մեջ ունեցած դիրքից, որպեսզի նորից ձեռք բերի այն իշխանությունը, որ Հիսուսը ետ էր վերցրել նրանից: Երբ սատանան կարողանում է գողանալ իշխանությունը կամ այնպես անել, որ անհատները հանձնեն իրենց իշխանության դիրքը, նորից ստանում է գործելու իշխանություն: Պողոսը շատ հասկանալի ձևով ասում է. «Եվ տեղի չտաք սատանային» (Եփես. 4.27): Մենք՝ հավատացյալներս, չպետք է զիջենք հոգու մեջ մեր ունեցած դիրքը:

Ծառայողական դիրք արքայության մեջ

Մենք պետք է հասկանանք, որ Աստծո արքայությունը հենց *թագավորություն* է: Թագավորությունները հիմնվում են ծառայողական դիրքերի և իշխանության վրա: Երկնքի տիրապետությունը բացառություն չէ: Կա ավելի բարձր, ավելի ազդեցիկ դիրք և իշխանություն:

Պարտեզում սատանան ընկած չէր փղի կամ նույնիսկ առյուծի ետևից: Նա հասկանում էր, թե ինչ է իշխանությունը և ընկած էր Աստծո մարդու ետևից: Նա գիտեր, որ եթե հասնի մարդուն, դրանով տիրակալ կդառնա այն ամենի վրա, ինչը մարդը կառավարում կամ պահպանում էր:

Դրա համար էլ, երբ սատանան ընկնում է եկեղեցու ետևից, նրա հիմնական թիրախը ավագներն են:

Վերջերս մի մեծ եկեղեցու հովիվ որոշեց բաժանվել կնոջից: Դրա համար աստվածաշնչյան ոչ մի հիմք չկար, և դա կործանարար եղավ նրա կնոջ ու երեխաների համար: Երբ ավագները նրան հարցրին շարժառիթը, հովիվը պատասխանեց, որ եթե դա նրանց դուր չի գալիս, կարող են հեռանալ:

Նա քմահաճորեն մեղանչում էր՝ խախտելով Աստծո պատվիրանը, և ամենուրեք իր համայնքում արձակում ամուսնալուծության և խաբվածության (հիասթափության) ոգին: Սրանից հետո այդ եկեղեցում շատացան ամուսնալուծության դեպքերը, ամուսնալուծվում էին նույնիսկ ավագները: Շատերն էլ սկսեցին վիատվել: Շփոթված նրանք գնում էին եկեղեցուց եկեղեցի՝ հետաքրքրվելով, թե ում կարող են վստահել: Երբ սատանան հարվածում է *տան պահապանին* և դուրս է գցում նրան իր դիրքից, պահապանի խնամքի տակ գտնվողները ևս դառնում են խոցելի: Ես տեսել եմ, թե ինչպես են ծնողները իրենց քմահաճույքով խախտում Աստծո պատվիրանները: Որոշ ժամանակ հետո նրանց երեխաները հետևում են ծնող-

ների օրինակին: Դու միգուցե դա անեծք անվանես, բայց ինչո՞ւ է դա պատահում: Մեղքի միջոցով ծնողները զիջում են հոգու մեջ ունեցած իշխանության իրենց դիրքը՝ երեխաներին դարձնելով թշնամուց հեշտ խոցելի:

Տալով հնարավորություն Տիրոջ թշնամիներին

Այս սկզբունքը լուսաբանվում է Դավթի կյանքի օրինակով (Բ Թագ. 8-18): Թագավորությունը ուժեղ և ապահով էր Դավթի առաջնորդության տակ: Աստված օրհնել էր նրան մի քանի որդիներով ու դուստրերով: Հետո Դավիթն ինքնակամ վերցրեց այն, ինչ Աստված չէր տվել նրան. Դավիթը շնացավ Բերսաբեի հետ: Բերսաբեն հղիացավ: Իրավիճակն էլ ավելի բարդացավ, քանի որ այդ կնոջ ամուսինը հեռու էր՝ պատերազմի դաշտում կռվում էր Դավթի թագավորության համար:

Դավիթը մարդիկ ուղարկեց նրա ամուսնու՝ Ուրիայի ետևից, հույս ունենալով համոզել նրան, որ գա կնոջ մոտ: Դրանով համոզիչ կդառնար, որ Ուրիան էր երեխայի հայրը: Ուրիան, հավատարիմ լինելով Դավթին և նրա թագավորությանը, որոշեց հրաժարվել իր կնոջ հետ անկողնում քնելուց այն ժամանակ, երբ իր հետ կռվող զինվորները մարտի դաշտում էին: Դավթի՝ իր մեղքը ծածկելու այդ ծրագիրը չգործեց: Նա գիտեր, որ որոշ ժամանակ հետո Ուրիան կիմանար, որ կինը հղի է: Բոլորը կիմանային, որ երեխայի հայրը Դավիթն էր:

Դրա համար էլ Դավիթը ծրագրեց Ուրիայի սպանությունը՝ նրան նորից ետ ուղարկելով մարտի դաշտ: Ուրիային դրեցին կռվի թեժ գոտում: Երբ թշնամին շրջապատեց նրան, Ուրիայի հետ կռվողները թողեցին նրան. այդպիսի հրաման ունեին: Ուրիան ընկավ թշնամու ձեռքով: Դավթի շնությունը դրդեց նրան խորամանկության, ստախոսության և մարդասպանության:

Շուտով Նաթան մարգարեն եկավ Դավթի մոտ բացահայտելու այս մեղքը: Դավիթը խոստովանեց. «Մեղանչել եմ Տիրոջ դեմ»: Հետո Նաթանն ասաց Դավթին. «Տերն էլ ներեց քո մեղքը, չես մեռնի» (Բ Թագ. 12.13):

Դավիթը ապաշխարեց և ներում ստացավ: Աստված ազատեց նրան իր անօրինությունից (Եսայի 43.25,26): Բայց Նաթանը զգուշացրեց Դավթին. «Որովհետև Տիրոջ թշնամիներին առիթ տվիր…» (Բ Թագ. 12.14):

Դավիթը ներում ստացավ, բայց իր կյանքն ու ընտանիքը Աստծո թշնամիների համար հեշտ խոցելի դարձրեց, խոցելի ոչ միայն ֆիզիկական թշնամիների, այլև հոգևորների համար: Նրա ընտանիքն ու Իսրայել ժողովուրդը մեծ տառապանքներ կրեցին:

Դավթի առաջնեկը՝ Բերսաբեից ծնված երեխան, մահացավ: Դավթի ավագ որդին՝ Ամնոնը, որը գահի ժառանգորդ էր, բռնաբարեց իր քրոջը՝ Թամարին: Դավթի որդի և Թամարի եղբայր Աբիսողոմը վրեժով լցվեց ու սպանեց իր եղբայր Ամնոնին: Աբիսողոմը Իսրայելի մարդկանցից շատերի սրտերը ուղղեց Դավթի դեմ և տիրացավ նրա գահին: Նա պղծեց իր հոր հարճերին ու Իսրայելի մարդկանց դուրս ուղարկեց որոնելու և սպանելու Դավթին: Դավադրությունը ձախողվեց, իսկ Աբիսողոմը սպանվեց:

Դավթի որդիներից երեքը մահացան, որովհետև իր մեղքի պատճառով նա բացել էր իր ընտանիքի պաշտպանության դռները Աստծո թշնամիների առաջ:

Ես տեսել եմ ծառայողների երեխաների, որոնք թմրամոլության մեջ են, թշնամաբար են տրամադրված եկեղեցու նկատմամբ, բռնված են կրքի և համասեռամոլության ոգով, որովհետև նրանց ծնողները անօրինության միջոցով զիջել են հոգու մեջ իրենց դիրքերը: Մենք կարիք ունենք լրջորեն վերաբերվելու Աստվածաշնչին, երբ նա ասում է. «Շատ վարդապետներ մի՛ եղեք, եղբայրնե՛ր. գիտենալով, որ մեծ դատաստան պիտի ընդունեք» (Հակոբ. 3.1):

Վարդապետների (հովիվների) ավելի խիստ ձևով դատվելու պատճառն այն է, որ նրանց անհնազանդությունն ավելի մեծ ազդեցություն է թողնելու: Նրանք ոչ միայն իրենց են վնասում, այլև բոլոր նրանց, ովքեր նրանց խնամակալության տակ են: Աստված ներում է նրանց, ինչպես որ ներեց Դավթին: Բայց և այնպես նրանք կհնձեն այն, ինչ ցանել են. թշնամուն *տեղ* է տրված:

Ես հասկանում եմ, որ սրանք ծանր խոսքեր են: Դիմում եմ ձեզ ամենայն խոնարհությամբ և այս խոսքերը գրում եմ երկյուղով ու դողով: Մենք շատ-շատ ողբերգություններ ենք տեսել, մասնավորապես՝ ծառայությունների մեջ: Մենք չպետք է դատապարտենք: Մենք կարիք ունենք ներելու և հասնելու նրանց, ովքեր ձախողվել են: Եթե նրանք ապաշխարեն, Աստված կների նրանց: Բայց ես գրում եմ այս խոսքերը որպես ուսուցում և նախազգուշացում նրանց, որոնց թշնամին թիրախ կդարձնի: Մենք բոլորս պետք է քայլենք խոնարհության և վերականգնման մեջ:

Ունեմ չորս որդի և եկել եմ այն հասկացողությանը, որ մեծ ահով պատասխանատվություն ու պարտավորություն ունեմ նրանց կյանքերի համար: Նրանք Աստծունն են, իսկ ես ուղղակի տնտեսվար եմ դրված նրանց վրա: Ես երբեք չեմ ցանկանում տեսնել նրանց կյանքն ամայացած, քանի որ ինքս սատանային տեղ չեմ տվել:

Երբ ես օգնության ծառայության մեջ էի, հետևում էի որոշ կարևոր բաների, որպեսզի նրանց, ում ծառայում էի, կարողանան իրենց կյանքում ամբողջությամբ իրականացնել Աստծո կոչումը: Ես հետևում էի մաքրությանը, նրանց երեխաներին բերում էի դպրոցից, լվանում էի նրանց ավտոմեքենաները և այլն: Մեկ օր Աստված ինչ որ բան խոսեց ինձ, և դա օգնեց, որ ես լուրջ վերաբերվեմ ծառայությանը. «Որդի՛ս, եթե դու անկարգություն անես այս դիրքիդ մեջ, հեշտ կլինի ուղղվելը, քանի որ գործ ունես ֆիզիկական բաների հետ: Բայց երբ ես դնեմ քեզ ծառայության դիրքի մեջ, դու գործ

կունենաս մարդկանց հետ, իսկ կյանքերի հետ գործ ունենալը բախտախաղ չէ»:

Հանձնած իշխանություն

Այս գլխի նպատակն է, որ պատկերացում կազմես հոգևոր դիրքի և իշխանության մասին: Մենք մի քանի մարդկանց օրինակներ տեսանք, որոնք իրենց իշխանությունը կորցրել էին կամ հանձնել Աստծո թշնամուն: Սատանան շատ ակնհայտորեն կփորձի գողանալ քո իշխանությունը՝ մեղքը քո կյանքի մեջ բերելու միջոցով: Եթե դու վճռականորեն որոշել ես ծառայել Աստծուն քո ողջ սրտով, նա նաև կփորձի քեզ հարվածելով դուրս գցել Քրիստոսի մեջ ունեցած քո դիրքից՝ վախի միջոցով:

Երկչոտությունը կոտրելու առաջին քայլն այն է, որ քո սեփական սրտի մեջ դո՛ւ ջախջախես խանգարող բաները: Հաջորդ գլխում ես կնկարագրեմ՝ ինչպես դա անել:

Հայտնությունն արժեք չունի առանց իմաստության եւ դրանով ապրող բնավորության։

Երկու ծայրահեղություն

Աստծո Հոգին մի քանի ակնթարթում կարող է հայտնության մեծ բաժին լցնել հոգուդ մեջ, բայց այդ հայտնությունն արժեք չունի առանց իմաստության և դրանով ապրող բնավորության:

Երբ Սուրբ Հոգին առաջնորդեց ինձ Աստվածաշնչի խոսքերի միջով, որոնք վախի դեմ պայքարելու մասին էին, Նա ցույց տվեց երկու ծայրահեղություն, որոնք հավատացյալի կյանքը դուրս են բերում հավասարակշռությունից: Առաջին ծայրահեղությունը զորության ետևից գնալն է, երկրորդը՝ կեղծ խոնարհությունը: Ամբողջական հավասարակշռությունը գտնում ենք Տիմոթեոսի կյանքում, որն ավելի շատ մշակում էր աստվածապաշտ բնավորություն, քան կեղծ խոնարհություն, և ավելի շատ բորբոքում էր իր մեջ եղող պարգևը, քան թե գնում էր զորության ետևից:

Մաքուր սիրտ

Պողոս առաքյալն առաջին անգամ Տիմոթեոսին հանդիպեց Լյուստրիայում: Նա մի երիտասարդ էր, որի մայրը քրիստոնյա հրեա էր, իսկ հայրը՝ հույն:

Պողոսը ցանկանում էր, որ Տիմոթեոսն ուղեկցի իրեն և Շիղա-

յին՝ որպես իրենց ճանապարհորդության օգնական: Տիմոթեոսը պետք է հոգար Պողոսի կարիքները (Գործք 19.21):

Որոշ ժամանակ հետո Տիմոթեոսի հավատարմությունը, որպես ծառայողի, ի հայտ եկավ: Տիմոթեոսը բարձրացվեց և նրան վստահեցին որպես Ավետարանի ծառայող, այնուհետև նա հովվեց Եփեսոսի եկեղեցին: Պողոսը Տիմոթեոսին գրած իր երկրորդ նամակում ասում է.

> *«Միտքս բերելով այն անկեղծ հավատքը, որ քեզանում է. առաջ քո Լոիդա տատում և քո Եվնիկե մորում բնակվեց, համոզված եմ, որ քեզանում էլ: Այդ պատճառով միտքդ եմ բերում, որ արծարծես Աստծո այն շնորհքը, որ քեզանում է իմ ձեռքերը քեզ վրա դնելով» (Բ Տիմոթ.1.5,6):*

Ուշադրություն դարձրու, որ Պողոսը հիշատակում է այն փաստը, որ Տիմոթեոսի հավատքն անկեղծ էր: Այս երիտասարդի սիրտը մաքուր էր: Նա կեղծավոր չէր: Մեկ այլ նամակում Պողոսը գովեստի խոսքեր է ասում. «Բայց հույս ունեմ Տեր Հիսուսում, որ Տիմոթեոսին շուտով ուղարկեմ ձեզ մոտ… Վասնզի մեկը չունեմ միասիրտ, որ մտերմաբար հոգս անի ձեզ համար: Վասնզի ամենքն իրանց բաներն են որոնում և ոչ թե Հիսուս Քրիստոսինը: Բայց դուք գիտեք նրա ընտիր լինելը, որ ինչպես մի որդի իր հորը՝ այնպես ինձ հետ ծառայեց Ավետարանին» (Փիլիպ. 2.19-22):

Հասկանալի է, որ Տիմոթեոսի բնավորության հարցը չէր քննարկվում: Որպես քրիստոնյաներ՝ բնավորությունը պետք է մեր առաջնահերթությունն ու ձգտումը լինի: Այն ինչ փնտրում է մեր Հայրը, զորությունը չէ, այլ բնավորությունը: Տխուր փաստ է, որ եկեղեցում շատերն ընկել են Հոգու զորության և օծության ետևից, մինչդեռ խուսափում են որոնել աստվածապաշտ բնավորությունը: Կորնթացիների առաջին թղթի 14.1-ը մեզ սովորեցնում է. «Սերին հետևեք և հոգևոր պարգևներին նախանձավոր եղեք…»: Սակայն

մենք աղավաղել ենք այդ պատվիրանը: Մենք փնտրում ենք պարգևները և օծությունը, իսկ սիրո պտուղը ուղղակի ցանկանում ենք մեր կյանքում: Աստված սեր է, և մինչև մենք չքայլենք սիրո մեջ, ձեռք չենք բերի Աստծո բնույթը:

Ծայրահեղություններից մեկն այն է, երբ զորությանը ավելի ես ձգտում, քան բնավորությանը

Որոշ քրիստոնյաներ կտրում-անցնում են մեծ հեռավորություններ՝ հարյուրավոր մղոններ, որպեսզի գնան հրաշքի, մարգարեական կամ օծված ծառայության, բայց նրանք չեն կամենում իրենց սրտերից թողնել բարկությունը, չներելը կամ դառնությունը: Սա վկայում է, որ նրանց շեշտադրումն ավելի զորության վրա է, քան բնավորության:

Այս ծառայություններում եղող հոգևոր դրսևորումները կարող են Աստծուց լինել, բայց մենք պարտավոր ենք գործ ունենալ նաև մեր ներսի մարդու հետ: Ներսի հետ գործ ունենալու անհոժարությունը դուռ է բացել: Չնայած որ եկեղեցին այս ժամանակներում վերստին վերելք է ապրում, մեղքը պետք է հեռացնել: Հրաշալի է, որ մարդիկ ծարավ են Աստծո զորությանը, բայց եկե՛ք չանտեսենք սրտի մաքրությունը:

Մենք շատ-շատ ծառայողների ենք տեսել, որոնք ընկել են: Բայց նրանք չեն ընկել, երբ արել են անբարոյականության առաջին քայլերը: Ո՛չ, նրանք սկսել են ավելի շուտ ընկնել: Անկումը սկսվել է այն օրվանից, երբ ծառայության մեջ հաջողությունը համարել են ավելի կարևոր, քան Աստծո հետ մտերիմ փոխհարաբերությունը: Մենք սա միայն ծառայողների մեջ չենք տեսել, այլ նաև նրանց համայնքների ներսում:

Հիսուսն ասաց. «Երանի նրանց, որ սրտով մաքուր են, որ նրանք կտեսնեն Աստծուն» (Մաթ. 5.8): Նա չասաց. «Երանի նրանց, ովքեր

հաջողակ ծառայություն կունենան»: Նա ասաց, որ առանց մաքուր սրտի դուք չեք տեսնի Աստծուն: Իհարկե, Հիսուսն է միայն այն Միակը, Ով կարող է մեզ մաքուր սիրտ տալ: Դա ինչ-որ բան չէ, որ մենք կարող ենք վաստակել: Այն և՛ անգին է, և՛ ձրի: Անգին է, քանի որ պահանջեց Աստծո Որդու մահը, և ձրի է, քանի որ առանց վճարի տրվում է բոլոր նրանց, ովքեր կփնտրեն Հիսուսին:

Սովորաբար ես աղոթում էի. «Աստվա՛ծ իմ, օգտագործիր ինձ կորածներին հասնելու, բազմություններին բժշկելու և մարդկային հոգ զանգվածներին ազատագրելու համար»: Ես այսպես աղոթում էի շարունակ, և դա էր Աստծուն փնտրելու իմ չափը: Իմ բարձրագույն նպատակը հաջողակ ծառայող լինելն էր:

Մի օր էլ Հիսուսը ցույց տվեց ինձ, որ այն, ինչի վրա ես շեշտը դնում եմ, սխալ է: Նրա ասածը ցնցեց ինձ. «Ձո՛ն, Հուդան դևեր էր հանում, բժշկում էր հիվանդներին և քարոզում էր Ավետարանը: Նա թողեց իր գործը՝ Իմ աշակերտը դառնալու համար, բայց որտե՞ղ է նա այսօր»: Սա մեկ տոննա աղյուսի պես ասես ընկավ գլխիս: Նա շարունակեց. «Քրիստոնեության բարձրագույն կոչման նպատակը Աստծո զորությունը կամ ծառայությունը չէ, այլ Ինձ ճանաչելն է» (տե՛ս Փիլիպ. 3.10.15): Ավելի ուշ, երբ իմ կինն էր աղոթում, որպեսզի Աստված օգտագործի նրան այդ նույն ցուցակի համաձայն, Հիսուսը հարցնում է նրան. «Լիզա՛, դու երբևիցե օգտագործվե՞լ ես ընկերոջդ կողմից»:

- Այո՛-, պատասխանում է նա:

-Ինչպե՞ս էիր քեզ զգում:

Նա պատասխանում է. «Ես խաբված էի զգում»:

Հիսուսը շարունակում է. «Լիզա՛, Ես չեմ օգտագործում մարդկանց: Ես օծում եմ, բժշկում, ձևափոխում եմ, համապատասխանեցնում եմ նրանց Իմ պատկերին, բայց Ես չեմ օգտագործում նրանց»:

Ինչպե՞ս կբնորոշես այն կնոջը, որի միակ ձգտումը իր ամուսնու

համար երեխաներ ունենալն է: Նա ամուսնուն կմոտենա միայն այն ժամանակ, երբ որոշի ժառանգ ունենալ: Այդպիսի կինը ոչ մի հետաքրքրություն չի ունենա իր ամուսնուն անձնապես ճանաչելու համար:

Ես գիտեմ, որ դա հիմարություն է: Մինչդեռ որքա՜ն է տարբերվում սա Աստծուն ուղղված մեր այն աղաղակից, թե օգտագործիր մեզ՝ մարդկանց փրկելու համար, երբ մենք ինքներս չենք վայելում Նրա հետ փոխհարաբերությունն ու ընկերությունը: Երբ մենք շփվում ենք Աստծո հետ, իրականանում է Նրա այս մտադրությունը. «Բայց իրենց Աստծուն ճանաչողների ժողովուրդը պիտի զորանա և գործի» (Դանիել 11.32): Պողոսի միակ ձգտումը Նրան ճանաչելն էր (Փիլիպ. 3.8-10): Մովսեսն ասում էր. «Ինձ իմացրու Քո ճանապարհները, որ ճանաչեմ Քեզ» (Ելից 33.13): Դավիթն աղաղակում էր. «Մեկ բան եմ խնդրում Տերից. և այն շատ կփափագեի, որ Տիրոջ տանը բնակվեմ իմ կյանքի բոլոր օրերը, որ Տիրոջ գեղեցիկ փառքը տեսնեմ և Նրա տաճարին զննելով մտիկ տամ» (Սաղմ. 27.4): Եվ նորից. «…հոգիս ծարավ է Քեզ համար. մարմինս Քեզ է ցանկանում» (Սաղմ. 63.1):

Աստվածաշնչի այն տղամարդիկ և կանայք, ովքեր ամեն ինչից առավել ցանկանում էին Աստծուն ճանաչել, քան որևէ այլ բան, հավատարիմ մնացին Նրան՝ ավարտելով այն ընթացքը, որ Աստված էր դրել նրանց առաջին: Նրանք սովորեցին ամբողջական զորության գաղտնիքը: Լրջորեն փնտրելով Նրան՝ այդ մարդիկ ճանաչեցին Աստծո սրտի խորությունը:

Որոշ մարդիկ իրենց հոգևոր հասունության չափը գնահատում են մարգարեանալու կամ էլ պարգևների մեջ հոսելու իրենց կարողությամբ: Բայց հիշի՛ր, պարգևները տրվում են, դրանք չեն վաստակում: Մի էշ խոսեց և տեսավ՝ մտնելով հոգու բնագավառ: Մի աքաղաղ կանչեց երեք անգամ և հանդիմանեց Պետրոսին: Արդյո՞ք այս ամենը այդ կենդանիներին հոգևոր դարձրեց:

Հիսուսն ասաց, որ շատերը Նրան Տեր կկոչեն և կակնկալեն մտնել Աստծո արքայությունը, բայց կմերժվեն: Նրանք հրաշքներ կանեն, դևեր կքշեն ու կմարգարեանան Իր անունով: Բայց Նա կպատասխանի. «Ինձանից դե՛ն գնացեք, ով անօրենություն գործողներ» (Մաթ. 7.23):

Օծված լինելը չի նշանակում հավանություն ստանալ Նրանից: Սավուղը մարգարեացավ այն բանից հետո, երբ Աստված արդեն մերժել էր նրան (Ա Թագ. 19.23,24): Կայիափան մարգարեացավ այն ժամանակ, երբ իր միակ նպատակը Աստծո Որդուն սպանելն էր (Հովհ. 11.49-51): Մենք պետք է ունենանք Աստծո սիրտը, որպեսզի կարողանանք հնազանդվել Նրա կամքին: Առանց դրա մենք պարզապես կքայլենք Նրա օծության շուքի ներքո՝ տառապելով օրինապահությունից կամ ցանկասիրությունից: Բաղաամը մարգարեացավ, և նրա մարգարեությունները ճիշտ էին, այդուհանդերձ, նա մահացավ գուշակի մահով (սրով սպանվեց, երբ Իսրայելը նվաճում էր խոստացված երկիրը):

Պողոսը Տիմոթեոսի արժանիքները չափում էր նրա սրտի մաքրությամբ և հավատարիմ ծառայությամբ: Մենք ևս պետք է այս չափանիշը դնենք մեր առաջ և թույլ տանք Սուրբ Հոգուն, որ ճշգրտորեն կշռի մեզ: Այս չափազանց կարևոր նախադրյալը չի կարող շատ շեշտադրվել, երբ մենք մտնում ենք երկչոտության հոգու հետ պայքարի մեջ: Առանց այս բանը նշելու, այս ուղերձի մեջ եղած ճշմարտությունը քեզ չի ազատի և, հնարավոր է, քեզ ավելի վնաս պատճառի, քան բարիք. միայն խոսքերը չեն, որ կրում են ազատելու զորությունը, այլ նրանց ետևում եղող հոգին և էությունը:

Սա բացատրելու համար վերհիշենք այն, ինչ զգուշացրեց Պետրոսը. «Ինչպես մեր սիրելի եղբայր Պողոսն էլ Աստծուց իրեն տրված իմաստության պես գրեց ձեզ: Ինչպես ամեն թղթերում էլ խոսում է այս բաների համար, որոնցում մի քանի դժվարիմաց բաներ կան, որ անուսումները և անհաստատները նրանց ծռում են, ինչպես մյուս գրքերն էլ՝ իրանց անձերի կորստյան համար» (Բ Պետր. 3.15,16):

Շատ կարևոր է, որ մենք ձգտենք Աստծո հետ ճիշտ փոխհարաբերություն ունենալուն, քան Նրա զորությամբ շարժվելու բանաձևին: Սա լուսաբանելու համար քննենք Պողոսի՝ Տիմոթեոսին ուղղած երկրորդ թղթի նախաբանը: Տիմոթեոսի սրտի մաքրությունը հաստատելուց հետո Պողոսը գրել է. «Այդ պատճառով միտքդ եմ բերում, որ արծարծես (անգլերենում՝ «բորբոքես») Աստծո այն շնորհքը...» (Բ Տիմոթ. 1.6): Այսպես Պողոսն ուսուցանում է Տիմոթեոսին, որ նրա կյանքում Աստծո պարգևն արձակելը անվավեր կհամարվեր, եթե Տիմոթեոսի հավատքը անկեղծ չլիներ: Այժմ ե՛կ շարունակենք:

Մյուս ծայրահեղությունը կեղծ խոնարհությունն է

> *«Միտքս բերելով այն անկեղծ հավատքը, որ քեզանում է, որ առաջ քո Լոիդա տատում և քո Եվնիկե մոր մեջ բնակվեց, համոզված եմ, որ քեզանում էլ: Այդ պատճառով միտքդ եմ բերում, որ արծարծես Աստծո այն շնորհքը, որ քեզանում է իմ ձեռքերը քեզ վրա դնելով» (Բ Տիմոթ. 1.5,6):*

«Այդ պատճառով միտքդ եմ բերում»: Տիմոթեոսին ուղղած իր առաջին նամակում Պողոսը կոչ է անում. «Անհոգ մի՛ լինիր քեզանում եղած այն շնորհքի համար, որ քեզ տրվեց մարգարեությունով՝ երիցության ձեռնադրությամբ» (Ա Տիմոթ. 4.14): Պողոսը Տիմոթեոսին շեշտում է Աստծո պարգևը չարհամարհելու կարևորությունը՝ գրելով դրա մասին երկրորդ անգամ, և դարձնում է այն առաջնային բաներից մեկը, որ հիշատակվում է նամակում:

Որպեսզի պարզորոշ գիտակցենք, թե ինչ է նշանակում չարհամարհել «պարգևը», եկ նայենք մի քանի հականիշների: Արհամարհելու հակառակն է՝

> *կատարելը, իրագործելը, հաջողության հասնելը, ուշադիր լինելը, հոգ տանելը, ամբողջացնելը, որոշում կայաց-*

նելը, ուշադրության արժանի համարելը, ավարտին հասցնելը:

Բոլոր այս բառերը իշխանության և գործողության բառեր են: Այս բառերից շատերը և՛ բայական, և՛ գոյականական գործածություն ունեն: Դրանք դրական և վճռական բառեր են: Հետագայում Աստծո խոսքը ավելի լավ հասկանալու համար ե՛կ ուսումնասիրենք, թե ինչ է նշանակում «արհամարհել»: Արհամարհել նշանակում է՝

խախտել, հեռացնել, անտեսել, ուշադրություն չդարձնել, թերագնահատել, վերևից նայել, արժեզրկել, մատների արանքով նայել:

Այս բոլորը բացասական բառեր են, որոնք ցույց են տալիս գործելու վճռականության և իշխանության պակաս: Վտանգավոր և ծանր բան է արհամարհել այն ամենը, ինչ վստահվել է քեզ: Մենք վնաս ենք կրում, երբ արհամարհում ենք:

Զորությունը հետապնդելու ծայրահեղության հակառակ կողմը վերոհիշյալ կեղծ խոնարհության վիճակում ապրելն է: Մարդիկ, որոնք ապրում են այսպիսի վիճակով, ընդունում են Աստծո բնավորությանը նմանվելու կարևորությունը, բայց միայն այդքանը. այդտեղ կանգ են առնում: Նրանք երբեք չեն համարձակվում իրենց կյանքում արձակել Աստծո պարգևները, որովհետև վախենում են: Նրանք խուսափում են ցանկացած պայքարից՝ համարելով, որ դա սիրո կամ քրիստոնյայի բնավորության պակաս է:

Ես այս մարդկանց անվանում եմ «խաղաղապահներ»: Առաջին հայացքից խաղաղապահ լինելը գրավիչ է թվում, բայց Հիսուսը երբեք չասաց. «Երանի խաղաղապահներին»: Ընդհակառակը, Նա ասաց. «Երանի՜ խաղաղություն անողներին, որ նրանք Աստծո որդիներ կկոչվեն» (Մաթ. 5.9): Խաղաղապահը խուսափում է հակամարտությունից, ինչ արժեք էլ այն ունենա: Նա կգնա ցանկացած

ուղով, միայն թե պահպանի անվտանգության կեղծ զգացումը, որը սխալմամբ համարում է խաղաղություն:

Խաղաղություն անողը համառորեն կդիմակայի անկախ նրանից, թե դա ինչ կարժենա իր համար, որովհետև նա չի անհանգստանում իր անձի համար: Փոխարենը նրա գործելու շարժառիթը Աստծո և ճշմարտության համար ունեցած իր սերն է: Միայն այս հանգամանքների մեջ կարող է բարգավաճել ճշմարիտ խաղաղությունը:

Աստծո արքայության մեջ խաղաղություն կա (Հռոմ. 14.17): Բայց և այնպես այս խաղաղությունը չի գալիս հակամարտության բացակայությունից: Քանի որ Հիսուսը մատնանշեց. «...երկնքի արքայությունն ուժով է առնվում, և ուժովները հափշտակում են նրան» (Մաթ. 11.12): Աստծո թագավորության առաջընթացն ուղեկցվում է ուժեղ հակամարտությամբ:

Հաճախ մենք մտածում ենք. «Ես կտեսնեմ պրոբլեմը և այն կհեռանա»: Բայց մենք կարիք ունենք արթնանալու և հասկանալու, որ այն, ինչի դեմ մենք չենք պայքարում, չի փոխվի: Ահա թե ինչու Հուդան համոզում է սրբերին.

> *«Սիրելիներ, որովհետև ամեն ջանք արի, որ գրեմ ձեզ մեր հասարակաց փրկության համար, հարկ եղավ ինձ, որ գրեմ ձեզ և հորդորեմ, որ մրցեք սրբերին միանգամ ավանդված հավատքով» (անգլերենում՝ «լրջորեն պայքարեք հավատքի համար») (Հուդա 3):*

Ուշադի՛ր եղիր, որ նա ասում էր «պայքարել լրջորեն», այլ ոչ թե հուսալ լավագույնի համար: «Պայքարել» նշանակում է «կռվել» կամ «ճակատամարտ վարել»: Քրիստոնեությունը հեշտ ապրելաոճ չէ:

Քանի որ մենք գնում ենք Աստծո ետևից, գոյություն ունի հակամարտություն և դիմադրություն թե՛ ֆիզիկական, թե՛ հոգևոր ոլորտներում:

Պողոսը զորացնում էր Տիմոթեոսին՝ ասելով. «Իսկ դու նեղությունները կրիր ինչպես Քրիստոս Հիսուսի բարի զինվոր: Ոչ մի զինվորություն անող այս աշխարհքի գործերով չի զբաղվում…» (Բ Տիմոթ. 2.3,4):

Այս պատերազմում մենք զբաղված ենք զինվորությամբ, ուստի պարտավոր ենք ունենալ զինվորի կեցվածք: Մենք չենք պարտվում չարից, բայց մենք դրան հաղթում ենք բարու օգնությամբ՝ Աստծո շնորհքով (Հռոմ. 12.21):

Պողոսի նամակները Տիմոթեոսի զինվորական ընթացքի հրահանգներն էին, երբ նա հովիվ էր Եփեսոսում: Տիմոթեոսին մարտահրավերներ էին նետված: Կար մի կեղծ ուսմունք, որը պետք է բացահայտվեր, կային վիճաբանություններ և տարակարծություններ, որոնք պետք է դադարացվեին, պետք է բարձրացվեին ավագներ, որպեսզի դրանով կարողանար ձևավորվել ուժեղ ու հասուն եկեղեցի: Եվ սրանք ընդամենը նվազագույնն էին ակնհայտ պարտավորություններից, որոնց հետ նա պետք է գործ ունենար:

Ես համոզված եմ, որ շատ առիթներ կային հակամարտության համար: Համոզված եմ, որ մեղադրանք ու զրպարտություններ էին շպրտվում Տիմոթեոսի դեմ նրանց կողմից, ովքեր եկեղեցու ներսում էին, ովքեր տհաս և ամբարիշտ էին: Բացի այս ամենից, նա պետք է հաղթահարեր մեկ այլ խոչընդոտ՝ տարիքը: Տիմոթեոսը երիտասարդ տղամարդ էր մի եկեղեցում, որտեղ շատերը մեծահասակ էին: Սա արդեն բավական էր, որ երկչոտության դուռ բացվեր:

Բայց այս ամենի մեջ Պողոսը ուսուցանում էր Տիմոթեոսին, որ ուժեղ մնա՝ չմոռանալով, թե ինչ է փոխանցվել իրեն: Պողոսը մշտապես հիշեցնում էր Տիմոթեոսին կանգնել Աստծուց իրեն տրված իշխանության մեջ: Հավանաբար Տիմոթեոսը մեկ անգամ բացթողում էր արել, դրա համար էլ Պողոսը սովորեցնում էր.

«Այս բաները պատվիրիր և սովորեցրու» (Ա Տիմոթ. 4.11):
«Եվ այս բաները պատվիրիր, որ անարատ լինեն» (Ա

Տիմոթ. 5.7): «Արդ դու՝ իմ որդյակ, զորացիր այն շնորհքով, որ Քրիստոս Հիսուսում է» (Բ Տիմոթ. 2.1):

Միգուցե Տիմոթեոսը նման էր այսօրվա մարդկանցից շատերին, որոնք սիրում են Աստծուն, բայց խուսափում են հակամարտությունից: Հակամարտությունից վախենալը քեզ հեշտությամբ կդարձնի երկչոտության զոհ:

Եթե դու ճանաչեցիր այս վախի ինքնությունը, ուրեմն այս պատգամը ուղարկված է քեզ քաջություն և ազատություն բերելու: Աստված ցանկանում է քեզ ազատագրել, որպեսզի անես և լինես այն ամենը, ինչ Նա պահանջում է քեզանից: Երբ դու երկչոտ ես, չկա ոչ մի ուրախություն, իսկ առանց ուրախության չկա զորություն: Այնտեղ, որտեղ վախ կա, չկա խաղաղություն: Բայց երբ կոտրես այն, ինչը քեզ բռնել է, որպեսզի ետ տանի, կգտնես ուրախություն և խաղաղություն՝ առատությամբ:

Ինչպե՞ս է սա կիրառելի դառնում ինձ համար։

Տրված պարգևներ

Նախորդ գլխում խոսեցինք երկչոտության և եկեղեցում ավագների վրա դրա ազդեցության մասին: Բայց շատ հնարավոր է, որ ձեզանից շատերը այս գիրքը կարդալու ժամանակ ամբողջությամբ ծառայության մեջ չեն: Դու միգուցե հարցնես՝ ինչպե՞ս է սա կիրառելի դառնում ինձ համար:

Աստված հոգու մեջ տեղ կամ դիրք է տալիս յուրաքանչյուր հավատացողի: Հիշե՛ք, Պողոսը բացատրում էր, որ Աստված. «…մեզ հարություն տվեց, և Նրա հետ երկնավորներում նստեցրեց՝ Քրիստոս Հիսուսում» (Եփես. 2.6): Սա է այն տեղը, որտեղ բնակվում են Աստծո փրկանգված զավակները: Այդ դիրքը. «Ամեն իշխանությունից և պետությունից և զորությունից և տերությունից վեր է և ամեն անունից վեր, որ անվանվում է, ոչ միայն այս աշխարհում, այլև այն հանդեձյալում: Եվ ամեն բան հնազանդեցրեց Նրա ոտների տակ և Նրան գլուխ դրեց եկեղեցուն՝ բոլոր բաների վրա: Որ է Նրա մարմինը, այն լրումը, որ ամենն ամենի մեջ լրացնում է» (Եփես. 1.21-23):

Եկեղեցին Քրիստոսի մարմինն է: Ինչպես որ մեր ֆիզիկական մարմիններն են բաղկացած շատ մասերից, որոնք տարբեր են իրենց ֆունկցիաներով և կարողությամբ, այնպես էլ Քրիստոսի մարմնի անդամներն են գործում տարբեր կոչումներով ու պարգևներով: Աստված է որոշում նրանց նպատակն ու գործելակերպը: Ամեն մեկն էլ կարևոր է, և ոչ մեկն էլ անկախ չէ մյուսներից:

Պողոսը հայտարարեց, որ բոլոր դիվային ոգիները դրված են Քրիստոսի ոտքերի տակ: Սա հասկանալիորեն լուսաբանում է, որ ոչ մի դև չի կարող իշխանություն գործադրել հավատացյալի վրա: Եթե դու Քրիստոսի մարմնի ոտքն ես, դևերը մինչև հիմա քո ոտքերի տակ են: Հիսուսն ասաց. «Ահա իշխանությունը տվի ձեզ, կոխել օձերի և կարիճների վրա և թշնամու բոլոր զորության վրա, և ձեզ ոչինչ չի վնասի» (Ղուկ. 10.19): Այնուամենայնիվ, եթե մենք չենք գործում կամ քայլում Աստծուց մեզ տրված իշխանությամբ, ինչ-որ մեկը կվերցնի այն մեզանից և կօգտագործի մեր դեմ: Թշնամին ընկած է հոգու մեջ մեր ունեցած դիրքի ետևից:

Գործել տրված պարգևներով

Եկ շարունակենք Տիմոթեոսին ուղղած Պողոսի նամակի մեր ուսումնասիրությունը:

> *«Այդ պատճառով միտքդ եմ բերում, որ արծարծես (անգլերենում՝ «բորբորքես») Աստծո այն շնորհքը, որ քեզանում է իմ ձեռքերը քեզ վրա դնելով» (Բ Տիմոթ. 1.6):*

Հունարենում «պարգև» բառը *«խարիզմա»* բառն է: Սթրոնգի համաբարբառը այս բառը սահմանում է որպես «հոգևոր նվիրատվություն»: Մեկ այլ սահմանում, որ վերամշակված է Վայնի բառարանից, այսպիսին է. «Շնորհքի պարգև, որը նվիրված է հավատացյալներին՝ Սուրբ Հոգու գործունեությամբ»: Այսպիսով *«խարիզմա»* բառը նկարագրում է այն հոգևոր կարողությունները, որոնցով Աստված հանդերձավորում է հավատացյալներին:

Հոգու թագավորության մեջ ոչ մի բան չի իրագործվում առանց այս *խարիզմայի* կամ Աստծո գերբնական կարողության: Մենք չպետք է քարոզենք, երգենք, մարգարեանանք, առաջնորդենք կամ նույնիսկ ծառայենք առանց դրա: Չկա կյանք առանց այս շնորհքի:

Կյանքից զուրկ կրոնը ծնվել է, երբ մարդը փորձել է իր սեփական ճանապարհով, իր սեփական կարողությամբ ծառայել Աստծուն: Երբ մենք ծառայում ենք ուրիշներին առանց Աստծո պարգևների, իզուր ենք աշխատում: Ուշադրություն դարձրու, որ այս պարգևն արդեն բնակվել էր Տիմոթեոսի ներսում: Երբ Տերը տնկում է Իր պարգևը, այն չի գալիս ու գնում, այլ մնում է ներսում, «որովհետև Աստծո շնորհքը *(խարիզմա)* և կոչումը զղջալ չունի» (Հռոմ. 11.29): Այս պարգևը կամ զորությունը անհրաժեշտ կարողություններ են՝ իրագործելու համար այն կոչումը, որ Աստված նախատեսել է յուրաքանչյուրիս համար: Այս պարգևներով գործելը պետք է լինի բնական և հարմարավետ մեզ համար: Ինչպես որ մեր մարմնի անդամների ֆունկցիաներն ու գործողությունները չեն փոփոխվում կամ գալիս ու գնում, այնպես էլ Աստծուց տրված պարգևները:

Պողոսը գրեց հռոմեացի հավատացյալներին. «Որովհետև շատ եմ ցանկանում ձեզ տեսնել, որ մի հոգևոր շնորհք *(խարիզմա)* հաղորդեմ ձեզ՝ ձեր հաստատվելու համար» (Հռոմ. 1.11): Եկեղեցին չի հաստատվի առանց այս պարգևների. հոգևոր սպառազինությունը հնարավորություն է տալիս Աստծո զավակներին իրականացնելու Նրա կամքը: Ուշադրությամբ կարդա հետևյալ խոսքը.

> *«Ամեն մեկդ ինչպես որ շնորհք (խարիզմա) է ընդունել, այն իրար մատակարարեք. ինչպես Աստծո կերպ-կերպ շնորհաց լավ տնտեսներ» (Ա Պետր. 4.10):*

Այս խոսքում մենք կքննարկենք երեք թեմա

1. Յուրաքանչյուր ոք ստանում է պարգև.
2. Պարգևը մերը չէ, մենք պարզապես դրա տնտեսներն ենք.
3. Պարգևը Աստծո բազմատեսակ շնորհքի մի մասն է:

1. Յուրաքանչյուր ոք ստանում է պարգև

Ուշադրություն դարձրո՛ւ, որ խոսքն ասում է. «Ամեն մեկդ ինչ-

պես որ շնորհք է ընդունել այն իրար մատակարարեք» (անգլերենում՝ «Քանի որ յուրաքանչյուր ոք ստացել է պարգև, իրար ծառայեք դրանով»): Պետրոսը չասաց՝ «քանի որ մի քանի ընտրյալներ ստացել են պարգևներ»: Ո՛չ, եթե դու վերստին ծնված ես և Հոգով լցված, դու ստացել ես Աստծո պարգևը՝ Նրա մարմնի մեջ գործելու համար: Այս մարմնի մեջ չկա ոչ մի հաշմանդամ կամ անօգտակար անդամ:

Պողոսը Եփեսացիների 4.7-ում ասում է. «Բայց մեր ամեն մեկիս տրված է շնորհքը Քրիստոսի պարգևի չափի պես»: Եվ նորից՝ Կորնթացիների առաջին թղթի 7.7-ում ասում է. «Որովհետև կամենում եմ, որ ամեն մարդ ինձ պես լինի, բայց ամեն մարդ իր հատուկ շնորհքն (պարգևը) ունի Աստծուց. մեկն այսպես, և մյուսն այնպես»:

Եթե մենք չգիտենք սրա մասին, մենք անկարող կամ անպետք կմնանք ցանկացած ծառայության համար: Այդպիսով մեր կոչումը դառնում է չիրագործված: Ինչպես որ երեխաներն են սովորում օգտագործել իրենց մարմնի անդամները, այնպես էլ մենք պետք է զարգացնենք և վարժեցնենք այս պարգևները, որոնք Աստծո մարմնին ծառայելու համար են:

Նրա մարմնի ոչ մի անդամ չի գործի այս գերբնական կարողությունից դուրս:

2. Պարգևը մերը չէ, մենք պարզապես դրա տնտեսներն ենք

Ուրեմն քանի որ մենք սեփականատեր չենք, այս պարգևը չի կարող արհամարհված լինել կամ էլ օգտագործվել անձնական նպատակով: Դա մերը չէ, որպեսզի անենք այն, ինչ ցանկանում ենք: Դա տրված է, որ մենք կարողանանք ծառայել ուրիշներին: Մենք պատասխանատու ենք դրա մասին հոգ տանելու համար:

Վերհիշենք քանքարների առակը: Տերը իր ծառաներին քանքարներ բաժանեց. մեկին հինգ քանքար տվեց, մյուսին՝ երկու, և

երրորդին՝ մեկ: Յուրաքանչյուրին իր կարողության չափ (Մաթ. 25.15): Հետո նա գնաց ճանապարհորդության: Առաջին երկու մարդիկ իրենց քանքարները իմաստությամբ օգտագործեցին՝ բազմացրին, մինչդեռ երրորդ մարդը իր քանքարը թաղեց:

Երբ տերը վերադարձավ, առաջին երկուսը հաշիվ տվեցին, թե ինչ էին արել այն քանքարների հետ, որոնք վստահվել էին նրանց: Տերը գովեց նրանցից յուրաքանչյուրին. «Ապրե՛ս, բարի և հավատարիմ ծառա»:

Հետո եկավ երրորդը հաշիվ տալու: Տիրոջ վախից նա թաքցրել էր իր քանքարը, որովհետև հասկացել էր, որ իր տերը չափազանց պահանջկոտ է: Այսպիսով, այս ծառան իր արհամարհանքի, եսասիրության և անփութության մեջ իրեն արդարացած էր զգում: Նա ասաց իր տիրոջը. «Տե՛ս, ահա քեզ այն, ինչ որ քոնն է»:

Երբ տերը տեսավ, թե ինչպես էր ծառան արհամարհել այն, ինչ հանձնարարվել էր իրեն, որպեսզի հոգ տանի, նրան անվանեց «չար և ծույլ»:

Նրա մեկ քանքարը վերցվեց և տրվեց այն մարդուն, ով կրկնապատկել էր իրեն վստահվածը: Հետո այդ անպիտան ծառան դուրս նետվեց:

Մենք հաշիվ կտանք մեզ վստահված պարգևների համար, ինչպես որ բոլոր տնտեսներն են հաշիվ տալիս իրենց տնտեսվարության համար: «Պարգև» բառի համար մեկ այլ բառ էլ կա՝ «կարողություն» բառը: Այն սահմանվում է որպես «ընդունակություն, հնարավորություն, ձիրք կամ զորություն»: Այլ կերպ ասած՝ «տաղանդ»: Այս առակը Աստծուց մեզ վստահված կարողությունը կամ տաղանդը աճեցնելու և զարգացնելու կարևորության վառ օրինակ է:

Պողոսին վստահվել էր սովորեցնելու և առաքյալ լինելու ծառայությունը: Նա ասաց. «Որին ես սպասավոր եղա՝ Աստծո շնորհքի պարգևի պես, որ տրվեց ինձ՝ Նրա զորության ներգործելու

պես»: Ուշադրություն դարձրու այն կարևորությանը, որ Պողոսը տալիս է պարգևին հավատարիմ լինելուն.

> *«Որովհետև, եթե Ավետարանը քարոզեմ, դա ինձ պարծանք չէ, որովհետև դա հարկ է դրված ինձ վրա, և վայ է ինձ, եթե Ավետարանը չքարոզեմ: Որովհետև, եթե հոժար կամքով անեմ այս, վարձք ունեմ, իսկ եթե ակամա՝ տնտեսությունը հանձնված է ինձ» (Ա Կորնթ. 9.16,17):*

Պողոսն ասում է՝ վայ է ինձ: *«Վայ»*-ը շատ խիստ բառ է: Հիսուսն այս բառը օգտագործում էր, երբ զգուշացնում էր որոշ մարդկանց և քաղաքներին սպասվող դատաստանի մասին: Նա «վայ» ասաց Քորազինին և Բեթսայիդային, քաղաքներ, որոնք վաղուց գոյություն չունեն (Մաթ. 11.21,22): Նա «վայ» ասաց դպիրներին և փարիսեցիներին (Մաթ. 23) ու Հուդային (Մաթ. 26.24):

«Վայ» բառն օգտագործում է Հուդան՝ նկարագրելու համար եկեղեցու չար մարդկանց դատաստանը: Հայտնության գրքում այն օգտագործվում է հիշատակելու համար Աստծո դատաստանի տակ գտնվող երկրի բնակիչներին (Հայտն. 8.13): Օգտագործելով «վայ» բառը՝ Պողոսը ցույց է տալիս Աստծո պարգևի նկատմամբ հավատարիմ պատասխանատվության ակնածանքը:

Երբ քրիստոնյան չի գործում իր պարգևի և կոչման համաձայն, վերադառնում է իր հին կյանքին, ինչպես որ մկանն է թուլանում չաշխատելուց: Անգործ հավատացյալը մեկուսացնում է ինքն իրեն՝ դառնալով հեշտ խոցելի թշնամու համար:

Երբ ուսումնասիրում էի Աստծո հզոր տղամարդկանց ու կանանց կյանքերը, ինձ համար պարզեցի, որ ընկել են նրանք, ովքեր դարձել են ծույլ կամ անտարբեր իրենց կոչման մեջ: Հավանաբար նրանք շարունակում էին ծառայել, բայց բնական ճանապարհով էին առաջ գնում՝ հիմնվելով ծառայության մեջ գտնվելու տարիների վրա: Նրանք սկսել էին Աստծո պարգևը օգտագործել իրենց սե-

փական շահի, այլ ոչ թե ուրիշներին պաշտպանելու և ծառայելու համար:

Դավիթ թագավորն ընկավ մեղքի մեջ այն ժամանակ, երբ պարտավոր էր մարտի դաշտում լինել:

> *«Եվ եղավ հետևյալ տարին, որ թագավորները պատերազմի դուրս գալու ժամանակին, Դավիթը Հովաբին և նրա հետ իր ծառաներին և բոլոր Իսրայելին ուղարկեց, որոնք Ամոնացիներին կոտորեցին, և Ռաբբան պաշարեցին, բայց Դավիթը մնացել էր Երուսաղեմում» (Բ Թագ. 11.1):*

Դավիթը թագավոր էր: Աստված էր նրան դարձրել թագավոր, որպեսզի հովվեր ու պաշտպաներ իսրայել ժողովրդին: Նրա համար պատերազմը կռվելու ժամանակ էր, այլ ոչ թե տանը՝ Երուսաղեմում նստելու և միայն անցյալի հաղթանակների պարգևներով բավարարվելու ժամանակ: Դավիթը հանգստանում էր. ապրում էր իր վաղեմի աշխատանքներից քաղած օգուտներով: Ձանձրույթից նա պատշգամբից զմայլվում էր իր կալվածքով և այդ ժամանակ տեսավ Բերսաբեին լողանալուց: Շարունակությունը պատմության մեջ է:

Պետք է նշել, որ մենք այստեղ արձակուրդի մեջ լինելու համար չենք: Նույնիսկ մեր կյանքը մեր սեփականությունը չէ, քանի որ այն գնված և ետ է տրված մեզ տնտեսվարության համար: Մենք պանդուխտներ ենք և ոչ թե մշտական բնակիչներ: Որքա՜ն շատ մարդիկ են գործում այնպես, կարծես այս կյանքը իրենց վերջնական նպատակակետն է:

Հիսուսն ասաց. «Իմ կերակուրն այն է, որ Ինձ ուղարկողի կամքն անեմ և Նրա գործը կատարեմ» (Հովհ. 4.34): Սա նաև պետք է լինի մեր կերակուրը: Հիսուսը գիտեր, թե ինչ էր անհրաժեշտ Իր ուժը պահպանելու համար: Մեր ուժը աճում է և՛ ֆիզիկական, և՛ հոգևոր սննդի հաշվին: Եթե մենք դադարում ենք կատարել Նրա կամքը

մեր անձնական շահի համար, դառնում ենք հոգնեցուցիչ և կորցնում ենք ուժը: Դա նման է այն բանին, որ մենք հրաժարվել ենք ֆիզիկական կերակուրից: Կորցնելով ուժը՝ մենք հեշտությամբ հոսում ենք այս աշխարհի հետ և ոչ թե նրա դեմ. դառնում ենք ինքնակամ, եսակենտրոն, ինքնագետ և ինքներս մեզ ծառայող:

Մենք շատ մեծ պատասխանատվություն ունենք: Մենք չպետք է լինենք միայն եկեղեցի գնացող, մեր կյանքում ոչինչ չկիրառող և Աստծո Խոսքով «գիրացած» մարդիկ: Աստված զգուշացնում է Եզեկիել 34.20-ում. «Դրա համար այսպես է ասում Տեր Եհովան նրանց. «Ահա Ես Ինքս պիտի դատեմ պարարտ ոչխարի և նիհար ոչխարի մեջ»»:

Ովքե՞ր են պարարտ (գեր) ոչխարները: Դրանք այն հավատացյալներն են, ովքեր Աստծո բարի բաներով իրենք իրենց են ծառայում՝ արհամարհելով ուրիշներին: Տե՛ս, թե ինչպես է Աստված նկարագրում գեր ոչխարներին.

> *«Սա քի՞չ է ձեզ համար, որ դուք լավ արոտում եք արածում, ձեր արոտի մնացորդը ձեր ոտքերով կո՞խ եք տալիս և մաքուր ջուրը խմում եք, մնացածը ձեր ոտներով պղտորո՞ւմ եք:*
> *Որովհետև դուք ձեր կողքով հրում եք և ձեր եղջյուրներով հարում եք ամեն տկարներին, մինչև որ նրանց ցիրուցան արիք դրսում: Բայց Ես պիտի փրկեմ Իմ ոչխարներին, և նրանք այլևս պիտի չհափշտակվեն, և պիտի դատեմ ոչխարի և ոչխարի մեջ» (Եզեկիել 34.18, 21,22):*

Աստծո պարգևները մեր ավելցուկի համար չեն: Աստված մեզ ստուգելու է Իր բարությամբ: Մենք պետք է օգտագործենք մեր կյանքում գոյություն ունեցող Աստծո կարողությունը ծառայելու համար նրանց, ովքեր թույլ են, երիտասարդ, անկարող, որպեսզի դրանով մարմինը ամբողջական լինի:

Սխալ մի՛ հասկացեք: Լավ է մեր աշխատանքի պտուղով ուրա-

խանալը: Աստված մեզ տալիս է և՛ հանգիստ, և՛ թարմություն: Բայց երբ մեր բոլոր մտքերը պտտվում են միայն մեր անձի շուրջ, մենք դառնում ենք գեր և անհոգ: Միայն մեզ ծառայող պարգևներն ու տաղանդները չեն բազմանում:

Քո մարմնի յուրաքանչյուր անդամ պատասխանատու է մյուս անդամների համար: Եթե ոտքերդ հրաժարվեն շարժվել, ապա քո ամբողջ մարմինը կտառապի: Եթե քո թոքերն ու սիրտը որոշեն կանգ առնել, քո մյուս անդամները կկործանվեն: Եթե սատանան կարողանա այնպես անել, որ մենք կենտրոնանանք մեզ վրա՝ ուրիշներին ծառայելու փոխարեն, դրանից կտուժի ամբողջ մարմինը:

3. Պարգևը Աստծո բազմատեսակ շնորհքի մի մասն է

Բանալին «բազմատեսակ» կամ «շատ ծալքեր ունեցող» բառերն են: Պետրոսը պարգևները բաժանում է երկու գլխավոր մասերի: Առաջինը ուղերձի կամ խոսելու պարգևն է, երկրորդը՝ ծառայելու պարգևը. «Եթե մեկը խոսում է, թող ինչպես Աստծո հրամաններ խոսի, եթե մեկը մատակարարում է, թող լինի ինչպես այն զորությունից, որ Աստված է շնորհում, որ ամեն բանի մեջ Աստված փառավորվի Հիսուս Քրիստոսի ձեռով…» (Ա Պետր. 4.11):

Պողոսը հետագայում բաժանում է այս երկու դասերը: Հռոմեացիների գրքում Պողոսն ասում է.

> *«Որովհետև ինչպես մեկ մարմնի մեջ շատ անդամներ ունենք, և այն ամեն անդամները միևնույն գործը չունեն: Այնպես էլ շատերս մեկ մարմին ենք Քրիստոսում, բայց ամեն մեկը միմյանց անդամ ենք: Միայն թե զանազան պարգևներ ունենք այն շնորհքի պես, որ մեզ տրված է, թե մարգարեություն՝ հավատքի չափով մարգարեանանք, թե պաշտոն՝ պաշտոնում լինենք, թե մեկը սովորեցնող է՝ վարդապետության մեջ լինի: Թե մխիթարող է՝ մխիթարության մեջ, բաշխողը՝ զվարթությունով, վերակացու դրվածը ջանքով, ողորմողը՝ հոժարությունով» (Հռոմ. 12.4-8):*

Խոսելու դասի մեջ մենք գտնում ենք մարգարեությունը, ուսուցումը, հորդորելը և առաջնորդելը, ծառայության դասի մեջ՝ ծառայելը, տալը և ողորմությունը:

Թույլ տուր ինձ բացատրել այս կետը: Դու չես կարող լինել խոսողի կամ ավագի դիրքում, մինչև չցուցաբերես քո հավատարմությունը որևէ ծառայության մեջ: Կան շատերը, որոնք ցանկանում են առաջնորդել և քարոզել, մինչդեռ չեն խոնարհեցնում իրենց կյանքը ծառայելու համար: Նշանակություն չունի, թե որքան տաղանդավոր են նրանք, ծառայությունը ձախողված կլինի և՛ նրանց, և՛ նրանց խնամակալության տակ գտնվողների համար: Եթե նրանց բնավորությունը չի զարգանում ծառայելու միջոցով, իրենց ավագության դիրքը կօգտագործեն մարդկանց իշխելու համար:

Ես երկու ծայրահեղություն եմ տեսել, որոնք հասկացողության պակասի հետևանք են: Առաջինը կապված է նրանց հետ, ովքեր ավելի մեծ կարծիք ունեն իրենց մասին, քան իրականում կան: Կարծելով, որ խոսելու պարգևը միակն է, նրանք կարծում են, որ դա ծառայության գագաթնակետն է և չեն հավատում, որ գոյություն ունի Աստծուն ծառայելու այլ ճանապարհ:

Սա ճիշտ չէ. «…որովհետև մարմինն էլ մեկ անդամ չէ, այլ շատ… Եթե բոլոր մարմինն աչք լիներ, որտե՞ղ էր լսելիքը, և եթե բոլոր մարմինը լսելիք լիներ, որտեղ էր հոտոտելիքը» (Ա Կորնթ. 12.14,17): Նրանք բոլորը ցանկանում են բերան լինել: Յուրաքանչյուր անդամ կարևոր է: Առանց օգնության ծառայության, խոսելու ծառայությունը սահմանափակ է: Մարդիկ ավելի շատ փորձում են շարժվել այն պարգևով, որ իրենք են *ուզում*, քան նրանով, որ իրենք *ունեն*:

Մյուս ծայրահեղության մեջ նրանք են, ովքեր հավատում են, որ ծառայությունը սահմանափակվում է քարոզիչներով և ծառայողական աշխատակազմով: Այս մտածելակերպը Քրիստոսի մարմնին անակարող է դարձնում լիարժեք գործելու համար: Պողոսը բա-

ցատրում է. «Այլ մանավանդ մարմնի այն անդամները, որ երևում են, թե տկարագույն են, նրանք հարկավոր են: Եվ նրանք, որ կարծում ենք, թե մարմնով շատ անարգված են, նրանց առավել ևս պատիվ ենք անում, և մեր անվայելուչ անդամներն ավելի վայելչություն ունեն» (Ա Կորնթ. 12.22,23):

Սա բարձրացնում է աննկատ անդամների կարևորությունը: Աստված նույնիսկ ավելի վճռական է դարձնում ծածկված անդամների կարևորությունը, քան թե երևացողներինը: Դու առանց ձայնի կարող ես ապրել, բայց ոչ առանց լարդի կամ սրտի. առանց դրանց հնարավոր չէ քայլել կամ զրուցել:

Գործք առաքելոց գիրքը ցույց է տալիս պարգևների նկատմամբ այն վերաբերմունքը, որ կար վաղ եկեղեցում: Առաջին քրիստոնյաները հասկացել էին, որ ծառայության մեջ ավելի շատ բաներ կան, քան քարոզը, բժշկությունը, ազատագրումը և մարգարեությունը: Նույն գրքի 6-րդ գլուխը հիշատակում է, որ որոշ որբևայրիներ արհամարհված էին Երուսաղեմի եկեղեցում: Նրանք կերակրվելու և ամենօրյա այլ կարիքների հարցում օգնության կարիք ունեին:

Երբ սա արժանացավ ավագների ուշադրությանը, նրանք պատասխանեցին. «Հիմա, եղբայրնե՛ր, ձեզանից յոթ վկայված մարդիկ ընտրեք, Սուրբ Հոգով և իմաստությունով լցված, որոնց այս պիտույքի վրա դնենք» (Գործք 6.3):

Նրանք գտան մարդկանց, որոնք ունեին այս հատկությունները և բերեցին առաքյալների առաջ: «Նրանց կանգնեցրին առաքյալների առաջին և աղոթք անելով ձեռք դրին նրանց վրա: Եվ Աստծո խոսքը աճում էր, և աշակերտների թիվը խիստ շատանում էր Երուսաղեմում» (Գործք 6.6,7):

Ի՞նչ տեղի ունեցավ, երբ առաքյալներն իրենց ձեռքերը դրեցին նրանց վրա: Ծառայության պարգևը տրվեց, և հետևանքը եղավ այն, որ Աստծո Խոսքը տարածվեց, իսկ աշակերտները շատանում էին: Այս մարդիկ գործում էին այն պարգևով, որ տրված էր իրենց:

Ինչպիսի՜ ապշեցուցիչ փաստ: Այն մարդիկ, ովքեր ծառայում էին այրիներին, պատճառ դարձան, որպեսզի Աստծո Խոսքը տարածվի և աշակերտները գերբնական ձևով շատանան:

Ես հավատացած եմ, որ հիմնական պատճառներից մեկը, թե ինչու մեր եկեղեցիները չեն աճում ու շատանում, այն է, որ ոչ բոլոր մարդիկ (համայնքները և ավագները) են շարժվում իրենց պարգևներով: Գործք առաքելոց գիրքը նույնիսկ ցույց է տալիս, որ երբ ավագն է գործում պարգևներով, դա սահմանափակ թվով մարդկանց է բերում փրկության, բայց երբ ամբողջ եկեղեցին է ներգրավված պարգևների մեջ, հետևանքները շատ ավելի հզոր են լինում:

Պենտեկոստեի օրվանից ուղիղ մեկ օր անց, երբ Պետրոսը քարոզեց, «այն օրը երեք հազարի չափ հոգի ավելացան» (Գործք 2.41, տե՛ս նաև խոսք 47): Նույնիսկ երբ Պետրոսը քայլում էր Երուսաղեմի փողոցներով բժշկության օծության տակ, «առավել ևս շատանում էին Տիրոջ հավատացյալները, և եղավ մի բազմություն մարդկանց և կանանց» (Գործք 5.14):

Իսկ երբ հավատացյալները սկսցին սովորեցնել ամեն օր՝ յուրաքանչյուր տանը (Գործք 5.42), դրանից հետո եկեղեցին սկսեց «շատանալ» (Գործք 6.1): Հաջորդ աստիճանը հավատացյալների համար ծառայելն էր, որը սկսվեց այրիների ծառայությամբ: Այդ քայլից հետո եկեղեցին «խիստ շատացավ» (Գործք 6.7):

Փաստորեն այսօր հովիվները խնդրում են կամավորների համար: Որքա՜ն տխուր է: Գործք առաքելոց գրքում դու չես տեսնի, որ առաջնորդները կամավորներ փնտրեն: Նրանք այնքան լրջորեն էին մոտենում այս ծառայության պաշտոններին, որ սեղաններին ծառայելու համար փնտրում էին այնպիսի մարդկանց, որոնց որակը հիմնված էր բնավորության, այլ ոչ տաղանդի վրա: Դրանից հետո նոր նրանք նշանակվում էին: Այն, ինչին որ նրանք կարևորություն էին տալիս, այսօր մենք աննշան ենք համարում:

Հավատարիմ լինելու պատասխանատվություն

Ի՞նչ տեղի կունենար, եթե բոլոր հավատացյալները գործեին իրենց դիրքերում: Ինչպիսի՜ հզոր բաներ կտեսնեինք այդ ժամանակ: Արթնությունը քարոզիչների համար չէ, այլ ամբողջ մարմնի, երբ ամեն մի անձ զբաղեցնում է իր դիրքը:

Հիշի՛ր, պարգևը կարողություն է, որ Աստված է տվել մեզ: Մենք պատասխանատու չենք այն բանի համար, որ մեզ վստահված չէ: Ոտքը պատասխանատու չէ տեսողության համար: Նույնիսկ Աստծո կամքը կարող է իրագործվել միայն Հոգու թույլտվությամբ: «Ոչ թե մենք մեզանից բավական ենք մի բան միտք անելու ինչպես մեզանից, այլ մեր բավական լինելն Աստծուց է» (Բ Կորնթ. 3.5):

Այս պարգևների հենց միաբան գործունեությունն է ցանկանում կանգնեցնել սատանան: Նրան կհաջողվի դա, եթե կարողանա խանգարել մեր աճին: Սատանան գիտի, որ չի կարող կանգնեցնել Աստծուն, որպեսզի Նա չտա այս պարգևները: Դրա համար էլ թշնամին ընկած է մեր ազատության ետևից, որպեսզի չօգտագործենք պարգևները: Երկչոտությունը հիմնական միջոցն է, որով նա խանգարում է հավատացյալների աճին:

Բացահայտել երկչոտությունը

Ինչո՞ւ են մեզանից շատերն
այդքան անարդյունավետ։

Հանգած պարգևներ

Ենք հաստատեցինք, որ յուրաքանչյուր հավատացյալ ունի իշխանության դիրք, որը գալիս է Աստծուց տրված տաղանդների կամ պարգևների հետ, և նա գտնվում է Քրիստոս Հիսուսի մեջ՝ բոլոր դիվական իշխանություններից վեր: Այդ դեպքում ինչո՞ւ են մեզանից շատերն այդքան անարդյունավետ: Դրան պատասխանելու համար ե՛կ նորից կարդանք, թե ինչ է հիշեցնում Պողոսը Տիմոթեոսին.

> *«Այդ պատճառով միտքդ եմ բերում, որ արծարծես Աստծո այն շնորհքը, որ քեզանում է՝ իմ ձեռքերը քեզ վրա դնելով» (Բ Տիմոթ. 1.6):*

Հունարենում «արծարծել, բորբոքել» բառը *«անազոպուռեո»* բառն է, որը նշանակում է «բոցավառել նորից կամ պահպանել ամբողջ կրակը» (Վայնի բառարան): Եթե Պողոսը քաջալերում է այս երիտասարդին բորբոքել կամ բոցավառել պարգևը *(խարիզման)*, նշականում է այն կարող է հանգել: Պարգևը ինքնաբերաբար չի գործում: Կրակի նման այն պետք է բոցավառել, բորբոքել և պահպանել:

Կան մաքուր սիրտ և ճիշտ ձգտումներ ունեցող մարդիկ, ովքեր հավատում են, որ եթե Աստված ուզում է, որ ինչ որ բան տեղի ունենա, այն ուղղակի տեղի կունենա: Բայց սա ճիշտ չէ: Էդմունդ Բուրքը 1795 թ-ին գրել է. «Միակ բանը, որ անհրաժեշտ է չարի

հաղթանակի համար, այն է, երբ բարի մարդիկ ոչինչ չեն անում»: Տիմոթեոսը սրտով մաքուր էր: Հիշո՞ւմ ես, թե որքան էր Պողոսը գովում նրա բնավորությունը: «Բայց հույս ունեմ Տեր Հիսուսում, որ Տիմոթեոսին շուտով ուղարկեմ ձեզ մոտ, որ սիրտս էլ հանգստանա, երբ որ ձեր վիճակն իմանամ: Վասնզի մեկը չունեմ միասիրտ, որ մտերմաբար հոգս տանի ձեզ համար: Վասնզի ամենքն իրենց բաներն են որոնում և ոչ թե Հիսուս Քրիստոսինը: Բայց դուք գիտեք նրա ընտիր լինելը, որ ինչպես մի որդի իր հորը՝ այնպես ինձ հետ ծառայեց Ավետարանին» (Փիլիպ. 2.19-22): Մինչդեռ Պողոսը երկու անգամ նրան զգուշացնում է չարհամարհել Աստծո պարգևը, որպեսզի այն հանգած չմնա: Այսպիսով, կա երկու հարց, որոնց մենք կարիք ունենք պատասխանելու. ե՞րբ է պարգևը հանգում, և ինչպե՞ս ենք մենք այն բորբոքում: Երկրորդ հարցին ես կպատասխանեմ հաջորդ գլուխներից մեկում, բայց հիմա եկ անդրադառնանք առաջինին:

Ի՞նչն է պատճառ դառնում, որ Աստծո պարգևը գտնվի հանգած վիճակում:

Պատասխանը հետևյալ խոսքում է.

> *«Այդ պատճառով միտքդ եմ բերում, որ արծարծես Աստծո այն շնորհքը, որ քեզանում է՝ իմ ձեռքերը քեզ վրա դնելով: Որովհետև Աստված չտվեց մեզ երկչոտության հոգի, այլ զորության և սիրո և զգաստության» (Բ Տիմոթ. 1.6,7):*

Այլ կերպ ասած՝ Պողոսը Տիմոթեոսին ասում է. «Աստծուց քեզ տրված պարգևը հանգած է երկչոտության պատճառով»: Առանց իմաստը փոխելու ես կարող եմ ասել. «Տիմոթեո՛ս, Աստծուց քո մեջ դրված պարգևը վախկոտության պատճառով հանգած է մնում»: Երկչոտ հավատացյալները կորցնում են հոգու մեջ ունեցած իրենց իշխանությունը, հետևաբար նրանց պարգևը՝ իրենց մեջ եղած Աստծո կարողությունը, դառնում է ոչ ակտիվ և հանգում է: Չնայած

որ այն նվեր է, սակայն գործողության մեջ չէ:

Երբ Միչիգանի այն ավագն ինձ ասաց, որ փառաբանության և երկրպագության ավագները կարծում էին, որ ես չափազանց շատ եմ ճնշում իրենց, ես սկսեցի վախենալ: Անսպասելիորեն Աստծո պարգևը սկսեց չգործել, և օծության տակ ես չքարոզեցի այնպես, ինչպես անցած տասնութ ծառայություններին:

Ակնհայտ էր, որ Աստծո կյանքը գնացել էր: Սկսվել էր խառնաշփոթությունը, ես կորցրել էի իմ վճռականությունը. չէի ցանկանում հակառակվել մարդկանց: Ինչո՞ւ: Որովհետև ես վախեցած էի և, հետևապես, արգելափակում էի Աստծուց ինձ տրված իշխանությանը:

Երկչոտության բացատրությունը

Այժմ ե՛կ նայենք *«երկչոտություն»* բառի բացատրությունը: *«Օքսֆորդի անգլերեն բառարան»-ը «երկչոտություն»-ը* բացատրում է որպես՝

1. դառնալ ամաչկոտ,
2. ներշնչվել վախով,
3. սարսափել, ահաբեկվել:

«Մերրիամ-Վեբսթերի Ակադեմիական բառարան»-ը (10-րդ հրատ.) *«երկչոտություն»* բառը բացատրում է որպես՝ *սպառնալիքի միջոցով վհատեցնել, ստիպել կամ ճնշել:*

«Օքսֆորդի անգլերեն բառարան»-ը «երկչոտություն» բառը բացատրում է որպես՝

1. վախեցնելու կամ սարսափեցնելու գործողություն,
2. երկչոտ լինելու փաստ կամ իրավիճակ,
3. բռնության և սպառնալիքի միջոցով զսպել և ստիպել որևէ գործողություն չանել:

Երկչոտության խնդիրն է ստիպել քեզ որպեսզի չգործես և վհատեցնելով կամ սպառնալիքով մղել քեզ հպատակության: Երկչոտությունը ուզում է ընկճել քեզ վախի և ստորացված լինելու զգացումով: Եթե ինչ-որ ժամանակ քեզ հնազանդեցրել են, գիտակցաբար կամ չգիտակցված, դու դարձել ես վախեցնողի ծառան:

Դու երկար ժամանակ ազատ չես եղել Աստծո կամքը կատարելու համար, այլ դատապարտված ես եղել կատարել քեզ վախով ստրկացնողի ցանկությունները:

Հետևաբար Աստծո պարգևը՝ քո մեջ Նրա հոգևոր կարողությունը, դարձել է չգործող: Դրանով քո իշխանությունը վերցվել է քեզանից և օգտագործվում է և՛ քո, և՛ քո ազդեցության ոլորտում գտնվողների դեմ:

Երկչոտության ակունքը վախն է, որի արմատն էլ մեր հակառակորդի՝ սատանայի մեջ է: Նա է բոլոր վախերի և երկչոտության ծնունդ տվողը: (Ծննդոց 3.1-10, հատկապես՝ 10 խոսքը) Սատանան կհարձակվի մեզ վրա մտքերի, երևակայությունների կամ տեսիլքների միջոցով, կամ էլ համգամանքներն ու իր ազդեցության տակ գտնվողներին կօգտագործի մեզ սարսափեցնելու համար: Մի խոսքով՝ սատանան ունի մեկ նպատակ՝ վերահսկել և սահմանափակել մեզ:

Եղիան վախեցա՞վ

Եղիա մարգարեն գործում էր ցնցող զորությամբ: Նա համառորեն կանգնեց չար թագավորի առաջ, որը Աստծո երկյուղը չուներ, և հայտարարեց. «Այս տարիներին ցող և անձրև պիտի չլինի, բայց եթե իմ խոսքով» (Գ Թագ. 17.1):

Նա չէր վախենում այդ անաստված թագավորից:

Եղիան հետագա մի քանի տարիներն անցկացրեց հրաշքների մեջ ապրելով: Սկզբում նրան կերակրում էին ագռավները, հետո

նրան պահեց մի որբևայրի, որի ուտելիքն ու յուղը երբեք չվերջացան, չնայած որ շուրջբոլորը երաշտ ու սով էր: Այս որբևայրու որդին հանկարծակի մահացավ, և Աստված լսեց Եղիայի աղոթքը՝ հարություն տալով տղային մեռելներից: Եղիան զորավոր ծառայությամբ մի մարդ էր:

Երկար ժամանակ անց նա նորից կանգնեց թագավորի առաջ: Թագավորը մեղադրեց Եղիային երաշտի պատճառած տառապանքի ու զրկանքների համար և նրան դիմավորեց այս խոսքերով. «Սա դո՞ւ ես, ով Իսրայելի խանգարող» (Գ Թագ. 18.17):

Եղիան համարձակ պատասխանեց. «Ես չեմ խանգարել Իսրայելին, այլ դու և քո հոր տունը, որ, թողելով Տիրոջ պատվերները, գնում ես Բահաղների ետևից» (Գ Թագ. 18.18): Հետո նա հրամայեց թագավորին հավաքել Բահաղի և Աստարովթի 850 մարգարեներին և տանել նրանց Կարմեղոս լեռան վրա՝ Իսրայելի ամբողջ ազգի հետ մեկտեղ:

Հակամարտության այդ օրը ողջ Իսրայելը հավաքվեց տեսնելու, թե ով էր ճշմարիտ Աստվածը: Եղիան համարձակ կոչ արեց Բահաղի և Աստարովթի մարգարեներին զոհ մատուցել իրենց աստվածներին, միևնույն ժամանակ նա էլ պիտի Տիրոջը զոհ մատուցեր: «…Եվ կլինի՝ այն Աստվածը, որ կրակով պատասխան կտա, Նա է Աստվածը» (Գ Թագ. 18.24), հայտարարեց Եղիան:

Տեր Աստված պատասխանեց կրակով, և Իսրայելի ժողովուրդը երեսի վրա ընկավ և դարձավ Աստծուն: Այնուհետև Եղիայի հրամանով նրանք սպանեցին բոլոր 850 կեղծ մարգարեներին:

Այնուհետև Եղիան հռչակեց, որ անձրև կլինի՝ ջերմեռանդ աղոթելով և կանչելով Աստծուն, երբ անձրևի ոչ մի նշան չկար: Ռոպեներ հետո երկինքը սևացավ, և հորդառատ անձրև տեղաց: Երբ Աքաաբը փախավ իր պալատը, Աստծո ձեռքը եկավ Եղիայի վրա, և նա առաջ անցավ Աքաաբի կառքից:

Դա Եղիայի կյանքից ընդամենը մեկ օր էր: Ժողովուրդը դարձի

եկավ, չար մարդիկ սպանվեցին, երկարատև երաշտը ավարտվեց: Եղիան կարողանում էր հստակ լսել Աստծո ձայնը, գործել դրա համաձայն և տեսնել մեծ հրաշքներ:

Հալածված թագավորի կնոջ կողմից

Բայց հենց այդ նույն օրը Աքաաբի կինը՝ Հեզաբելը, լսեց, թե ինչ էր պատահել իր մարգարեներին, և Եղիային պատգամ ուղարկեց. «Աստվածները այսպես անեն և սրանից էլ ավելին անեն, եթե որ էգուց այս ժամանակին քո անձը նրանցից մեկի անձի տեղ չդնեմ» (Գ Թագ. 19.2): Հեզաբելը շատ զայրացած էր Եղիայի վրա, քանի որ նրանք իր մարգարեներն էին, որոնք քարոզում էին իր պատգամը:

Հիմա նայիր Եղիայի արձագանքին.

> *«Եվ այս բանը տեսնելով՝ վեր կացավ գնաց իր անձը ազատելու համար և հասավ Հուդայի Բերսաբեեն ու իր պատանուն թողեց այնտեղ: Բայց ինքը մեկ օրվա ճանապարհի գնաց անապատում և եկավ մի գիհիի տակին նստեց և սրտանց ուզեց, որ մեռնի և ասաց. «Արդեն բավական է, ով Տե՛ր, առ իմ հոգին, որովհետև ես իմ հայրերից լավը չեմ»» (Գ Թագ. 19.3,4):*

Այդ նույն օրը Եղիան մեծ պայքարի մեջ էր. նա փախչում էր իր կյանքից: Եղիան այնքան էր սարսափած և հուսահատված Հեզաբելից, որ ցանկանում էր մեռնել: Հեզաբելի նպատակն էր վախեցնելով խանգարել Եղիային իրականացնել Աստծո նպատակը: Հեզաբելը ցանկանում էր ազգի վրայից հեռացնել Եղիայի ազդեցությունը: Նա ցանկանում էր կործանել և ճանապարհից հեռացնել Եղիային: Չնայած որ Հեզաբելը չէր կարողանում սպանել նրան, շարունակում էր նպատակին հասնել Եղիային վախեցնելու միջոցով, որպեսզի նա փախչեր ու ցանկանար մեռնել: Իր տգիտության պատճառով Եղիան համագործակցում էր նրա ծրագրի հետ: Եթե Եղիան կարողանար ավելի պարզ տեսնել դա, երբեք չէր փախչի:

Երկչոտության ախտանիշները

Շփոթվածությունը, հուսալքվածությունը և հուսախաբությունը կապված են երկչոտության հոգու հետ: Դրա նպատակն է ստիպել քեզ, որ կորցնես հեռանկարդ: Այդ դեպքում ամեն ինչ անհաղթահարելի, դժվար կամ նույնիսկ անհնար կթվա: Ավելի կուժեղանա երկչոտությունը, ավելի կմեծանա վհատությունն ու հուսահատությունը: Եթե անմիջապես չլուծես երկչոտության հարցերը, այն պատճառ կդառնա, որպեսզի դու անես բաներ, որոնք երբեք չէիր անի, եթե չլինեիր վախի ազդեցության տակ: Հենց սա է երկչոտության նպատակը:

Երբ ես քննում եմ երկչոտության հոգու՝ ինձ վրա հարձակում կատարելու դեպքերը, զգում եմ այն, ինչ Եղիան էր զգում: Հասկանալու փոխարեն, թե ինչպես էր գործում երկչոտությունը, ես նստում էի հյուրանոցի իմ սենյակում ու պայքարում էի վհատվածության և հուսահատության դեմ: Ինձ համար հետաքրքիր էր, արածներիս մեջ ի՞նչ բարի բան կար, ո՞վ եմ ես»: Այս մտքերը ես երբեմն ունենում էի նույնիսկ առավոտյան հզոր ծառայությունից հետո:

Կար մի ժամանակ, երբ ես ողջ օրվա ընթացքում բացարձակապես ոչինչ չէի կարող անել: Չէի կարողանում ազատվել ծանրությունից: Ես աղոթում էի, և ինձ թվում էր, որ Աստծո ներկայությունը չկար: Ճիշտ Եղիայի նման կենտրոնացել էի ինձ վրա, միայն ու միայն ինձ վրա:

Ես ինձ անարդյունավետ էի զգում. կարծում էի, որ իմ ծառայությունը արժեք չունի: Ահա թե ինչու էր Եղիան ասում. «Արդեն բավական է, ով Տե՛ր, իմ հոգին առ, որովհետև ես իմ հայրերից լավը չեմ» (Գ Թագ. 19.4):

Այդ հուսահատեցնող օրվա վերջում Աստված ցույց տվեց ինձ, թե ինչպես էր Եղիան սարսափած Հեզաբելից: Վերջապես հասկացա, որ իմ վարքագիծը ճիշտ այնպիսին էր, ինչպիսին ցանկանում

էր երկչոտության, վհատության հոգին: Այդ հոգին ցանկանում էր ինձ ետ պահել այն բանից, որ Աստված էր ուղարկել ինձ անելու: Այդ եկեղեցում կային մարդիկ, որոնց սրտով չէին ապաշխարության և սրբության այն ուղերձները, որոնք Աստծուց բերել էի:

Անմիջապես սկսեցի փնտրել այդ ախտանիշների արմատը, որոնց դեմ պայքարում էի ողջ օրը: Դա երկչոտության հոգին էր: Ես խիզախորեն ճեղքեցի ճնշվածության դիմադրությունը և զգացի, որ ազատ եմ շփոթվածությունից և վհատությունից: Այդ երեկո մենք զորավոր հավաքույթ ունեցանք: Հետագայում ես կբացատրեմ՝ ինչպես հակառակվել վախկոտության հոգուն: Բայց հիմա ե՛կ նորից նայենք Եղիայի կյանքին՝ տեսնելու համար, թե ինչպես կարելի է ճանաչել այդ հոգուն:

Ի՞նչ ես անում այստեղ

Եղիան դուրս էր եկել իր ունեցած իշխանությունից այն ժամանակ, երբ չէր համարձակվել հակառակվել Հեզաբելից եկող վախին: Որպես հետևանք՝ ազգի համար նրա ծառայության պարգևը ճնշվեց, և Եղիան գնում էր մի ուղղությամբ, որն Աստծո ցանկությունը չէր: Նա կարծես բոլորովին ուրիշ մարդ լիներ, որովհետև փախչում էր հակամարտությունից, մինչդեռ նախկինում հակամարտող էր: Նա գնում էր հակառակ ուղղությամբ, թողել էր իր ծառային և քառասուն օր ու գիշեր մեկուսացել էր Քորեբ լեռան վրա: Առաջին բանը, որ նա լսեց Աստծուց, երբ մտավ քարայր, հետևյալն էր. «Ի՞նչ ունես այստեղ, Եղիա՛» (Գ Թագ. 19.9):

Կարո՞ղ ես պատկերացնել: Եղիան հուսալքված էր մահվան աստիճան, հյուծվել էր քառասուն օր փախչելուց և ընկճված վիճակում էր: Իսկ Աստված հարցնում է. «Ի՞նչ ունես այստեղ»: Աստված սրանով ասում էր. «Ինչո՞ւ ես փախել քո դիրքից և թաքնվել այստեղ»:

Միգուցե դու մտածես. «Լա՛վ, չէ՞ որ Աստված ուղարկեց իր հրեշտակին, որ Եղիային երկու նկանակ տար, որպեսզի նա կարողանար վազել քառասուն օր ու գիշեր: Այդ դեպքում ինչո՞ւ էր Աստված հարցնում. «Ի՞նչ ես անում այստեղ»»:

Աստված գիտեր, որ Եղիան որոշել էր փախչել: Երբ մարդն իր սրտում որոշում է ինչ-որ բան անել, հաճախ Աստված թույլ է տալիս նրան անել դա, նույնիսկ եթե դա Իր կատարյալ կամքը չէ:

Աստված նույն ձևով վարվեց Բաղաամի հետ, երբ Մովաբի թագավոր Բաղակը խնդրել էր նրան գալ և անիծել Իսրայելին: Տերը Բաղաամին ասաց, որ չգնա: Բայց Բաղաամը ետ եկավ ու երկրորդ անգամ հարցրեց Աստծուն, և թվում է, թե Աստված փոփոխվող սիրտ ուներ: Նա Բաղաամին ասաց, որ գնա:

Հաջորդ առավոտյան Բաղաամը թամբեց իր էշը, որպեսզի գնա, և Աստվածաշունչն ասում է. «Եվ գնալու համար Աստծո բարկությունը բորբոքվեց» (Թվոց 22.22): Աստծո մի հրեշտակ եկել էր նրան սպանելու:

Ինչո՞ւ Աստված նրան ասաց, որ գնա, իսկ հետո բարկացավ, երբ Բաաղամը գնաց: Աստված թույլ տվեց Բաղաամին գնալ, որովհետև գիտեր նրա սիրտը: Աստված գիտեր, որ Բաղաամը ավելի շատ ցանկանում էր Բաղակի առաջարկած պատիվն ու փողը, քան թե Աստծուն հնազանդվելը: Երբ մարդն իր սրտում հստակ որոշում է ինչ-որ բան անել, Աստված չի կանգնեցնի նրան, եթե նույնիսկ դա Աստծո կատարյալ կամքը չէ:

Նույնը Եղիայի հետ էր կատարվում: Աստված ցանկանում էր, որ նա վերադառնա ու պայքարի Հեզաբելի դեմ, ինչպես որ պայքարեց Բահաղի մարգարեների հետ: Դա կամբողջացներ այն, ինչ սկսվել էր Կարմեղոս սարի վրա: Բայց Եղիան չէր ուզում դեմ առ դեմ հանդիպել Հեզաբելին: Նա ուզում էր դուրս գալ այն ճնշումից, որի տակ գտնվում էր: Դրա համար էլ Աստված մի հրեշտակ ուղարկեց, որպեսզի նրան անհրաժեշտ կերակուր տա իր ճանապարհոր-

դության համար: Աստված սպասում էր և կլուծեր Եղիայի մեջ եղած երկչոտության հարցերը, հենց որ նա հասներ Քորեբ լեռը:

Նա, ով այդ ամենի ետևում է

Այն գործը, որ Աստված սկսել էր Եղիայի միջոցով, ամբողջությամբ չէր կատարվի մինչև որ նա չհակառակվեր Հեզաբելին: Հեզաբելը Իսրայելի խնդիրների հիմնական արմատն էր: Աստվածաշունչն ասում է. «Բնավ չի եղել Աքաաբի պեսը, որ իրան ծախած լիներ Տիրոջ աչքի առաջին չարություն անելու համար, որ նրան մոլորեցրեց իր Հեզաբել կինը» (Գ Թագ. 21.25):

Տերը լինելու էր Եղիայի հետ, ինչպես որ նրա հետ էր Կարմեղոս լեռան վրա, ուստի նա չպետք է փախչեր: Բայց Եղիան վախեցած էր Հեզաբելից և դուրս էր եկել իր ունեցած իշխանությունից: Առաջադրանքն ավարտելու պարգևը հանգել էր:

Հիմա տես, թե Աստված ինչ է ասում Եղիային այն բանից հետո, երբ երկու անգամ հարցրել էր, թե ինչու էր նա այդտեղ:

> *«Եվ տերն ասաց նրան. «Ետ դարձիր գնա քո ճանապարհով անապատով Դամասկոս, և երբոր գաս, Ազայելին ասորիների վրա թագավոր օծիր: Եվ Նամեսսիի որդի Հեուին էլ թագավոր օծիր Իսրայելի վրա, և Աբելմաուլացի Սափատի որդի Եղիսեին էլ մարգարե օծիր քո տեղը: Եվ կլինի, որ Ազայելի սրից ազատվողին Հեուն կմեռցնի, և Հեուի սրից ազատվողին Եղիսեն կմեռցնի»» (Գ Թագ. 19.15-17):*

Ուշադրություն դարձրու, Աստված Եղիային ասաց, որ Եղիսեն իր տեղը մարգարե օծի, իսկ Հեուին թագավոր օծի Իսրայելի վրա: Աստված ուներ երկու ուրիշ մարդիկ, որոնք չէին փախչում Հեզաբելից: Նրանք կկատարեին Եղիայի պարտականությունները:

Եղիայի գործը սկսել էր շեղվել իր նպատակից այն պահից, երբ նա փախավ Հեզաբելի վախից: Հիշի՛ր, որ Հեզաբելը Իսրայելի մեջ

տարածված չարիքի ազդեցության դրդապատճառն էր: Եթե մի առաջնորդի սխալ ազդեցությանը չեն դիմադրում և չեն կանգնեցնում, ապա որոշ ժամանակ անց նրա ազդեցության տակ գտնվող մարդիկ նույնպես կլցվեն չարությամբ:

Հիսուսը սովորեցրեց այս սկզբունքը. «Ոչ ոք չի կարող մի զորավորի տունը մտնելով նրա կարասիքը հափշտակել, եթե առաջ այն զորավորին չկապի և ապա նրա տունը հափշտակի» (Մարկ. 3.27): Զորավոր մարդն ավագն է, տունը նրա ոլորտն է կամ ազդեցության տարածքը, նրա ունեցածը, նրա ազդեցության պտուղը կամ արդյունքը: Այժմ, հենվելով այս բացատրության վրա, նորից կարդա այն, ինչ ասաց Հիսուսը.

> *«Ոչ ոք չի կարող մտնել մի ավագի տարածք և կողոպտել նրա ազդեցության արդյունքները, մինչև որ նախ՝ չկանգնեցնի ավագին: Դրանից հետո նա կկողոպտի ավագի տարածքը» (Մարկ. 3.27 (հեղինակի մեկնաբանությունը)):*

Միգուցե դու ասես՝ բայց չէ որ առաջնորդը Աքաաբն էր, իսկ Եղիան նրանից չէր վախենում: Ե՛վ այո, և՛ ոչ: Աքաաբը ծնվել էր ավագի կոչումով, բայց նա իր իշխանությունը զիջել էր իր կնոջը: Հետևապես հոգու բնագավառում Հեզաբելը «զորավոր մարդ» էր և Իսրայել ժողովրդին պահում էր կռապաշտության մեջ: Նա Բահաղի պաշտամունքի հրահրողն էր: Հեզաբելի ազդեցության պատճառով էր, որ Իսրայել ժողովուրդը, բացառությամբ Աստծո յոթ հազար հավատարիմներից, հեռացավ միակ ճշմարիտ Աստծո պաշտամունքից: Հեզաբելի ազդեցությունը մնաց, քանի որ ուղղակի դիմադրության չհանդիպեց:

Ես այս երևույթին շատ եմ հանդիպել: Կան մարդիկ, ովքեր հովվի կամ ավագի կոչում ունեն, մինչդեռ ենթարկվում են ուրիշների մանիպուլյացիային և վախին, հատկապես այն մարդկանց, ովքեր նրանց ավելի մոտ են՝ իրենց կանանց, գործընկերների, խորհրդի

անդամների, սարկավագների, օգնականների և այսպես շարունակ: Այդ մարդիկ էլ անտեսանելի են գործում՝ բեմի ետևից կառավարելով ավագին:

Սա նաև պատահում է ընտանիքներում: Ծնողները վախեցած են իրենց երեխաներից, ամուսինները վախեցած են իրենց կանանցից: Այդպիսի ամուսիններն իրենց ընտանիքներում գլուխ չեն: Ավագի համար կարևոր է իրեն շրջապատողների հետ խորհրդակցելը՝ թե իր ընտանիքում և թե ծառայության մեջ: Բայց ավելի կարևոր է, որ ավագը մնա իր ունեցած իշխանության մեջ. դրանով նա կկարողանա ծառայել ու պահպանել և ընտանիքը, և ծառայությունը՝ օգտագործելով Աստծուց իրեն տրված պարգևը:

Եթե դու շարունակես կարդալ Եղիայի պատմությունը, կտեսնես թե ինչ պատահեց այն բանից հետո, երբ Եղիան փախավ իր կյանքը փրկելու համար: Եղիայի սկսած գործը աստիճանաբար արժեզրկվում էր: Աքաաբը շարունակում էր իր չարությամբ ճնշել ժողովրդին: Հեզաբելի ազդեցությունը մեծանում էր իր ամուսնու և թագավորության վրա: Բահաղի պաշտամունքը վերականգնվեց, չնայած որ Եղիան պայքարեց Բահաղի մարգարեների դեմ և ողջ ազգին վկայեց Աստծո զորությունը:

Երբ Եղիան փախավ Հեզաբելից, դրանով իր հետ տարավ նաև Իսրայելի ժողովրդի խիզախությունը: Աքաաբը մահացավ, բայց նրա երկու որդիները, որոնք թագավորեցին նրանից հետո, շարունակեցին ազգին առաջնորդել մոլորության և ավելի խորը կռապաշտության մեջ (Գ Թագ. 22.51, Դ Թագ. 9):

Երկու մարդ, որոնք չհանձնեցին իրենց ունեցած իշխանությունը

Եղիան փախչում էր այլասերվածության և կռապաշտության բոլոր ակունքներից: Այդ պատճառով էլ Տերը պատվիրեց նրան օծել երկու մարդու, որոնք գործ կունենային այդ չար կնոջ հետ: Նրանցից մեկը Հեուն էր, որ սպանեց Հեզաբելին (Դ Թագ. 9.30-37): Երբ Հեզաբելը փորձեց իր հսկողության տակ պահել Հեուին, վերջինս հրաժարվեց մտնել նրա վախի ազդեցության տակ: Հեզաբելը միանգամից դիմադրության արժանացավ և կործանվեց, նրա ազդեցությունը նույնպես ընկավ (Դ Թագ. 10):

Հեուն և նրա մարդիկ դրանից հետո սպանեցին Աքաաբի բոլոր յոթանասուն որդիներին: Նա կանչեց ու մեկտեղ հավաքեց Բահաղի բոլոր երկրպագողներին և կոտորեց նրանց: Հեուն մտավ Բահաղի տաճար և այրեց «սուրբ» առարկաները: Նրա մարդիկ կոտրեցին Բահաղի արձանը և քանդեցին տաճարը՝ վերածելով այն աղբատեղի: Հիմա տես, թե Աստվածաշունչն ինչ է ասում Հեուի մասին. «Եվ Հեուն Բահաղին բնաջինջ արեց Իսրայելից» (Դ Թագ. 10.28):

Աստված պարզ ասաց Եղիային. «Հեուի սրից ազատվողին Եղիսեն կմեռցնի» (Գ Թագ. 19.17): Հիմա երկուսից էլ պահանջվում էր ամբողջացնել այն, ինչի համար սկզբում Եղիան էր ուղարկվել: Երբ Աստված Եղիային ասաց, որ Եղիսեին օծի «մարգարե քո տեղը», պատճառն այն էր, որ Եղիան երկչոտության պատճառով հանձնել էր իշխանության իր դիրքը, իսկ Հեուն և Եղիսեն Աստծուց իրենց տրված իշխանությունը չզիջեցին Աքաաբի տնից որևէ մեկին, հետևապես Աստծո պարգևը հանգած չէր, և ազգը ազատագրվեց Բահաղի պաշտամունքից:

Երբ մենք վախենում ենք, դրանով հանձնում ենք իշխանության մեր դիրքը: Հետևաբար Աստծո՝ ծառայելու և պաշտպանելու հա-

մար մեզ տրված պարգևը սկսում է հանգել, և մենք անգիտակցաբար կանգնում ենք՝ պատճառ դառնալով, որ հետագայում էլ վախի մեջ պահեն մեզ:

Հին կտակարանում շատ պատմություններ կան, թե ինչպես են Աստծո մարդիկ նահանջել, երբ զիջել են ճնշումների ժամանակ: Ինչպես Պողոսն էր գրում. «Եվ այն ամենն օրինակի համար էր նրանց հանդիպում, բայց մեզ խրատի համար գրվեց, որոնց դարերի վերջը հասավ» (Ա Կորնթ. 10.11): Եվ նորից՝ հռոմեացիներին ուղղած նամակում. «Նրա համար ինչ որ գրվեց, մեր սովորելու համար գրվեց» (Հռոմ. 15.4): Ես Հին և Նոր կտակարանի շատ պատմություններ եմ մեջբերում այս գրքում, քանի որ մենք չենք կարող ամբողջովին հասկանալ Նոր կտակարանից արված մեջբերումները առանց Հին կտակարանի օրինակների: Հաջորդ գլխում կտեսնենք, թե ինչպես է երկչոտությունը խոչընդոտում Աստծո գործին ոչ միայն ավագի կյանքում, այլև այն մարդկանց, որոնց նա ծառայում է:

Ինչից որ վախենում է մարդը, դրան էլ ավելի է պատվում, բան Աստծուն:

Երկչոտությունից կաթվածահար եղած

Երկչոտությունը մեզ անդամալույծ է դարձնում հոգու բնագավառում: Այն պատճառ է դառնում, որ մենք փոխզիջման գնանք մեր իմացած ճիշտ բանի հարցում, պատճառ է դառնում, որ մենք այլ հանգամանքների ազդեցության տակ թույլ տանք կամ հանդուրժենք այն, ինչը մեզ հաստատակամ չի պահում:

Այս երևույթի մի օրինակ է Հեղիի և նրա որդիների պատմությունը: Մինչև Իսրայելը կդառնար միապետություն, այն կառավարվում էր դատավորների կողմից, որոնց Աստված էր բարձրացնում ազգի պատմության ճգնաժամային ժամանակներում:

Համաձայն Աստվածաշնչի Դեյքի տարբերակի՝ Հեղին Իսրայելի տասնհինգերորդ դատավորն էր: Նա ոչ միայն դատավոր էր, այլև յոթերորդ քահանայապետը: Հեղին Իսրայելում դատավարություն արեց քառասուն տարի: Նրա երկու որդիները՝ Ոփնին և Փենեհեսը ևս քահանաներ էին: Հիմա ե՛կ տեսնենք, թե ինչպիսին էր Իսրայելի հոգևոր մթնոլորտը Հեղիի առաջնորդության տարիներին.

> *«Եվ այն օրերը Տիրոջ խոսքը հազվագյուտ էր՝ հայտնի տեսիլք չկար» (Ա Թագ. 3.1):*

Այստեղ հիշատակված «Տիրոջ խոսքը» գրված Սուրբ գիրքը չէր,

քանի որ իսրայելցիներն ունեին Թորան: Այս խոսքում նկատի է առնվում Աստծուց ներշնչված հայտնությունը, որը Աստծո ճանապարհների և ծրագրերի մեջ է: Եվ մնում էր միայն մի հեռավոր հիշողություն, թե Աստված ինչպես էր բացահայտ խոսում Իր ժողովրդի հետ: Գրքի հեղինակը այդ պահին լռակյաց էր: Աստծո ձայնը հազվադեպ էր լսվում:

Ուրեմն, ինչո՞ւ էր Աստված այդքան լռում: Պատասխանը մենք գտնում ենք Թագավորաց առաջին գրքի 2-րդ գլխում.

> *«Եվ Հեղին շատ ծերացել էր և լսում էր այն ամենն, ինչ որ նրա որդիներն անում էին բոլոր Իսրայելին և ինչպես նրանք ժողովքի խորանի առաջին խմբերով ժողովված կանանց հետ քնում էին» (Ա Թագ. 2.22):*

Հեղիի որդիներ Ոփնին և Փենեհեսը այլասերված էին: Նրանք ոչ միայն պոռնկություն էին անում Իսրայելի կանանց հետ, այլև այնքան համարձակ էին, որ պոռնկություն էին անում նաև այն կանանց հետ, ովքեր գալիս էին խորանում ծառայելու, որտեղ Աստծո ներկայությունն էր բնակվում: Որտե՞ղ էր Աստծո նկատմամբ նրանց երկյուղը: Նրանց անբարոյականությունը չէր սահմանափակվում միայն սեռական բռնությամբ: Հեղիի որդիները նաև ստիպելով մարդկանց վերցնում էին զոհի համար բերած միսը: Այս գործողությունը հակառակ էր օրենքին, և այն կողոպտում էր երկրպագողներին ու Տիրոջը, քանի որ միսը պատկանում էր նրանց: Դա պատճառ դարձավ, որ Իսրայելի ժողովուրդը արհամարհի Տիրոջն արվող զոհաբերությունը: Ոփնին և Փենեհեսը գայթակղության քարեր էին Իսրայելի ժողովրդի համար: Նրանց վարքագիծը պատճառ դարձավ, որ ժողովուրդը զայրանա Աստծո բաների վրա:

Հեղին գիտեր, թե ինչ էին անում իր որդիները, սակայն չէր հեռացնում նրանց, այլ ուղղում էր թույլ հանդիմանությամբ. «Ինչո՞ւ համար եք անում այսպիսի բաները, որովհետև ես այս բոլոր ժո-

ղովրդի բերանից ձեզ համար չար խոսքեր եմ լսում: Չէ, որդի՛ք, որովհետև լավ չէ այն լուրը, որ ես լսում եմ ձեր մասին. դուք Տիրոջ ժողովրդին մոլորեցնում եք» (Ա Թագ. 2.23,24): Նրա որդիներն ավելիին էին արժանի, քան այս պարզ ուղղումը: Ոփնին և Փենեհեսը պետք է հեռացվեին իրենց քահանայական դիրքից, իսկ խորանից՝ ընդհանրապես, քանի որ նրանք չունեին ապաշխարող սիրտ:

Աստծո մի մարգարե եկավ Հեղիի մոտ և ասաց. «Ինչո՞ւ եք անարգում Իմ զոհերը և ընծաները, որ Ես պատվիրեցի Իմ տան համար, և քո որդիներին Ինձանից ավելի ես պատվում… որովհետև Ես ինձ փառավորողներին կփառավորեմ, և Ինձ արհամարհողները կանարգվեն» (Ա Թագ. 2.29,30):

«Փառավորել», «պատվել» նշանակում է «հարգել, մեծարել, ակնածանք ունենալ»: Երբ Հեղին հրաժարվեց դիմակայել և խստությամբ խրատել իր որդիներին, դրանով ցույց տվեց, որ որդիներին ավելի էր հարգում, քան Աստծուն: Հասկանալով կամ առանց հասկանալու այս ամենը, նա հպատակվում է իրեն վախեցնողներին: Եթե Հեղին վախեցած չլիներ, նա իր որդիների հետ այլ կերպ կվարվեր:

Ավելի ուշ Աստված խոսում է Հեղիի մասին Սամուելի հետ. «Եվ իրան իմացրել եմ, որ նրա տունը պիտի դատեմ հավիտյան, որ գիտեմ այն անօրենությունը, որ նրա որդիները իրանց վրա անեծք են բերում, և նա չհանդիմանեց նրանց» (Ա Թագ. 3.13):

Տիրոջ խոսքը հազվադեպ էր, և չարությունը թագավորում էր անմնացորդ, որովհետև դատավորն ու քահանայապետը վախենում էին իրենց որդիներից: Հեղին կորցրել էր իշխանության իր դիրքը, ու արդարությամբ դատելու և Իսրայելին ծառայելու նրա կարողությունը հեռացել էր: Աստծո նպատակը ձախողված էր: Իսրայելի թշնամիները ուժեղանում էին բոլոր կողմերից միաժամանակ, ներսում թագավորում էր կաշառակերությունը: Երբ ավագները թողնում են իրենց իշխանությունը, նրանց խնամակալության տակ գտնվողները տառապում են:

Ծանո՞թ է այս իրավիճակը

Դժբախտություն է, բայց շատ հայրեր վախեցած են իրենց սեփական երեխաներից: Երբ երիտասարդների հովիվ էի, ինձ մոտ գալիս էին քրիստոնյա ընտանիքներ, որոնք հուսահատ օգնություն էին խնդրում: Ես տեսնում էի պատանիների, որոնք արհամարհում էին իրենց ծնողներին, նրանց հետ խոսում էին առանց հարգանքի: Թվում էր, թե ծնողները զայրացնում էին նրանց: Ես շտկում էի երիտասարդներին հենց իրենց ծնողների աչքի առաջ, որովհետև վերջիններս շփոթված էին և վախենում էին նրանց շտկել: Նրանց տներում քաոս էր, թագավորում էր անարխիան: Ծնողներն իրենց իշխանությունը զիջել էին իրենց երեխաներին: Նրանց ընտանիքներում կարգուկանոն հաստատելու և աստվածապաշտ երեխաներ մեծացնելու Աստծո պարգևը և զորությունը հանգել էր:

Այս խնդիրը միայն մեր ընտանիքներում չէ, այն ակնհայտ է նաև մեր եկեղեցիներում: Եղել եմ հարյուրավոր եկեղեցիներում: Ես տագնապած եմ և պետք է խոստովանեմ, որ շատ ավագներ վախեցած են իրենց սեփական ժողովրդից: Նրանց եկեղեցիներում մթնոլորտը չի տարբերվում Հեղիի իշխանության տակ գտնվող Իսրայելի մթնոլորտից. Աստծո ձայնը հազվադեպ է:

Այս ավագները հանձնել են իշխանության իրենց դիրքը, և Աստծո զորությունը հանգել է: Հովիվները քարոզում են ծառայությունների ժամանակ, կա փառաբանություն և երկրպագություն, բայց Աստծո ներկայությունը քիչ է, կամ էլ չկա:

Ծառայողը զգուշորեն պատրաստում է իր ուղերձը, որպեսզի չվիրավորի և չհակառակվի նրանց, ովքեր անհնազանդության մեջ են, կամ էլ նա գոռգոռում և զայրացած խոսում է հուսախաբությունից, խփում է ոչխարներին, որպեսզի ծածկի իր երկչոտությունը: Բայց այս ամենի մեջ ոչ մի հոգևոր կյանք չկա, կամ էլ շատ աննկատ է:

Այդպիսի իրավիճակներում հազվադեպ է Աստծո ներկայության աստվածաշնչյան նկարագրությունը: Կյանքի բռնկումներ լինում են, բայց Աստծո ներկայությունը լիակատար չէ, իսկ Նրա խոսքն ազատ չէ՝ կենդանի ջրերի աղբյուրի պես հոսելու համար:

Եկեղեցի, որը կենդանի դիակ էր

1990 թ-ին ես ծառայում էի մի «Ամբողջ ավետարանի» եկեղեցում: Այդտեղ մարդիկ կարծում էին, որ իրենք կենդանի են և շարժվում են Աստծո հետ: Կիրակի առավոտյան, երբ ես քարոզում էի, զգացի, որ իմ խոսքերը կարծես ետ էին շպրտվում դեմքիս: Ասես դիմացս աղյուսե պատ լիներ: Մթնոլորտը ապստամբությամբ լի էր:

Ես ոչինիչ չէի հասկանում: Հովիվն ու նրա կինը շատ հաճելի մարդիկ էին: Նրանց որդին առաջնորդում էր փառաբանությունն ու երկրպագությունը և սիրված էր: Ես շփոթված էի: Ծառայությունից հետո գնացի նրանց հետ ճաշելու:

Հովիվն ասաց. «Զո՛ն, ես մի հարց ունեմ: Իմ եկեղեցում մի զույգ կա, որը պատրաստվում է ամուսնալուծվել: Նրանք երկուսն էլ շարունակում են գալ ծառայություններին և նստում են իրարից շատ հեռու: Ամուսինը, որը մեր կարգուկանոնի ավագն է, իմ եկեղեցում հանդիպել է մի երիտասարդ կնոջ և սիրահետում է նրան: Այդ կինը տեղափոխվել է նրա մոտ և հիմա նրանք միասին են ապրում: Ես ի՞նչ անեմ»:

Ես չէի հավատում ականջներիս. մի՞թե այդ հարցում նա իմ խորհրդի կարիքն ուներ: Զարմացած հարցրի. «Դու նկատի ունես, որ նրան դեռ չե՞ս հեռացրել եկեղեցուց»:

«Ո՛չ,- պատասխանեց նա,- բայց խնդրել եմ, որ կարգուկանոնի ավագ չլինի»:

Մոտ մեկ ժամ խոսում էի հովվի ու նրա կնոջ հետ: Ես նրանց պատմեցի, թե ինչպես էր Պողոսը գործում Կորնթոսի եկեղեցու

ավագների հետ: Այնտեղ մի մարդ ապրում էր անբարոյականության մեջ: Պողոսը հանդիմանում էր նրանց. «Եվ դուք հպարտացած եք և ավելի սուգ չե՞ք մտնում, որ ձեր միջից վեր առնվի նա, որ այն բանը գործեց» (Ա Կորնթ. 5. 2): Պողոսն ասում էր, որ այդ մարդը պիտի հեռացվի եկեղեցուց, և բացատրում էր, թե ինչու. «Ձեր պարծանքը լավ չէ. չգիտե՞ք, որ մի փոքր խմորը բոլոր զանգվածը խմորեցնում է» (Ա Կորնթ. 5.6): Թթխմորը գործում է խմորի մեջ՝ պատճառ դառնալով, որ ողջ հացը բարձրանալու կարողություն ձեռք բերի: Մեր եկեղեցիներում Պողոսը անզուսպ, անամոթ, քմահաճ մեղքը համեմատում է հացի թթխմորի հետ:

Ես զգուշացրի հովվին. «Դու թույլ ես տվել, որ մեղքը անզուսպ ձևով տարածվի ողջ եկեղեցում: Աստված քեզանից հաշիվ է պահանջելու այն հետևանքի համար, որ լինելու է մյուս ոչխարների հետ: Հովիվը ոչ միայն կերակրում է ոչխարներին, այլև պաշտպանում է նրանց: Դու միայն կերակում ես նրանց, բայց վախենում ես պաշտպանել, քանի որ դու չես սիրում հակառակվել: Երկուսն էլ կարևոր են: Դու պետք է վճռականորեն և սիրո ճանապարհով դիմակայես այդ մարդուն, իսկ եթե նա անմիջապես չապաշխարի, հեռացրու եկեղեցուց»: Եթե մենք չկերակրենք ոչխարներին, նրանք սովամահ կլինեն, բայց եթե չպաշտպանենք նրանց, կկործանվեն:

Հովիվն ու նրա կինը գունատվեցին: Կինն ասաց. «Ես չգիտեմ, այլևս ցանկանում եմ լինել ծառայության մեջ, թե ոչ, բայց, այն ամենը, ինչ ցանկանում եմ անել, մարդկանց սիրելն է»:

Ես պատասխանեցի. «Եթե դու չես պաշտպանում այդ մարդկանց, դա ճշմարիտ սեր չէ, այլ հարմարվող սեր է»:

Նրանք խոստովանեցին, որ վախեցած էին իրենց եկեղեցու որոշ անդամներից: Ամուսիններն անկեղծացան և ինձ պատմեցին այլ պրոբլեմների մասին: Փառաբանության և երկրպագության խմբում երաժիշտներից ոմանք անհարգալից վերաբերմունք էին ցուցաբերում: Ես էլ խոստովանեցի, որ ծառայության ընթացքում ինձ ինչ-որ

բան խանգարում էր, և հիմա ես գիտեի թե ինչու:

Երեկոյան քարոզի ժամանակ մի մարդ խանգարում էր ինձ քարոզել, որպեսզի լեզուներով ուղերձ տար: Ես խնդրեցի նրան կանգ առնել՝ բացատրելով, որ Աստված Ինքն Իրեն չի խանգարում: Այդ մարդը հասկացավ և դադարեց խոսել, բայց երբ նա կանգ առավ, կիթառահարը ցատկեց տեղից, գոռաց ինձ վրա և ասաց. «Ես ոչ մի դեպքում չեմ վախենա դեմ կանգնել ինչ-որ մեկի քարոզին, որը Սուրբ Հոգուն թույլ չի տալիս շարժվել: Ես դուրս եմ գալիս այստեղից»: Նա վերցրեց իր կնոջը և գոռաց բասկիթառահարի վրա՝ հրամայելով հետևել իրեն: Բասկիթառահարը, նրա կինը և մեկ ուրիշը կատաղեցին: Մթնոլորտը լցված էր տագնապով. մարդիկ շփոթված էին:

Ես անմիջապես խնդրեցի Սուրբ Հոգու օգնությունը: Նա ասաց. «Սովորեցրո՛ւ նրանց իշխանության մասին»: Երբ ես քարոզեցի, Աստծո խաղաղությունն իջավ մարդկանց վրա և աստվածային կարգուկանոն հաստատվեց:

Երբ ավարտեցի, Տերը պատվիրեց ինձ. «Ասա՛ այն մարդուն, որը կանգ առավ, որ տա լեզուներով ուղերձը ու մեկնաբանի»:

Մի փոքր վարանելով ես դիմեցի այդ մարդուն.

- Պարո՛ն, եթե Դուք ի վիճակի եք, ես հավատում եմ, Աստված ուզում է, որ Դուք այդ ուղերձը հիմա տաք»:

Նա տվեց լեզուներով ուղերձը ինչպես նաև մեկնաբանեց այն:

Այդ մարդը սկսեց խոսել. «Այսպես է ասում Տերը, Ես տեսել եմ մեղքի բազմությունը այս եկեղեցում: Ես իմ ծառային դրա միայն մի մասն եմ ցույց տվել: Ուշադրություն դարձրեք նրա խոսքերին, քանի որ դրանք Իմ խոսքերն են»:

Ես սկսեցի արտասվել այդ եկեղեցու թույլ տված մեղքի և ապստամբության համար: Մեղքը արագ տարածվում էր, քանի որ ավագները վախեցած էին մի քանիսից, որոնց համար Աստված ուզում էր, որ հոգ տանեին:

Շատ ուրախացա, երբ հետո լսեցի, որ հովիվը դեմ է կանգնել այն տղամարդուն և երիտասարդ կնոջը, որոնք միասին էին ապրում: Նրանք երկուսն էլ ապաշխարել էին և անմիջապես իրարից բաժանվելու որոշում կայացրել:

Մի հովիվ վախեցած էր իր աշխատակազմից

Մի անգամ ես ծառայում էի մեկ այլ եկեղեցում, որտեղ հավաքույթները սկսվել էին կիրակի առավոտյան և նախատեսված էր շարունակել մինչև չորեքշաբթի երեկո: Մենք ունեցանք հիանալի հավաքույթներ, ապաշխարության, բժշկության և ազատագրման դեպքեր: Եկեղեցին ֆինանսական ճեղքում ունեցավ: Եկեղեցի հաճախողները շատանում էին: Բայց երեքշաբթի երեկոյան, մինչև ծառայություն սկսելը, հովիվը սկսեց արտասվել:

- Ի՞նչ է պատահել,- հարցրի ես:

- Ձո՛ն, ես քեզ չեմ նախանձում: Ես ուղղակի չեմ հասկանում, թե ինչու ես երբեք Աստծո շարժը չեմ տեսել: Ես լցված եմ Սուրբ Հոգով, բայց դեռ Հոգու պարգևներից ոչ մեկը չի գործել իմ ծառայություններում: Ոչ մեկը չի բժշկվել կամ ազատագրվել, և ամեն բան այնքան դժվար է թվում:

Ես սկսեցի հարցեր տալ: Պարզվեց, որ հովվի աշխատակազմում կա երկու զույգ, որոնք Սուրբ Հոգով ավելի շուտ էին մկրտվել, քան նա, և նրանք էին հովվին ասում՝ ինչ աներ և ինչպես առաջնորդեր եկեղեցին: Ես բացատրեցի. «Դու պետք է ետ դառնաս Աստծուց քեզ տրված իշխանությանը և ասես նրանց, որ դու ես հովիվը և ոչ թե նրանք»: Հաջորդ օրը նա խոսեց այդ զույգերի հետ: Նրանք վրդովվեցին և վերջնականապես լքեցին եկեղեցին: Հավաքույթները երկարաձգվեցին, և վերջին ծառայության ժամանակ մի խումբ մարդիկ առաջ եկան աղոթելու, բայց Տերն ասաց ինձ. «Դու չպետք է աղոթես այս մարդկանց համար. հովիվը պետք է դա անի»:

Ես նայեցի հովվին և նրա վրա տեսա Աստծո զորությունը: «Հովի՛վ,- ասացի ես, Աստված ասում է, որ դու պետք է աղոթես այս մարդկանց համար»:

Նա սկսեց վազել այդ մարդկանց միջով: Հովիվը պարզապես դիպչում էր նրանց, և մարդիկ ընկնում էին Աստծո զորությունից: Ոմանք ընկնում էին մինչև հովվի դիպչելը: Աստծո զորությունն այնքա՜ն ուժեղ էր:

Մի աղջիկ, որը դիվահար էր, փառավոր ձևով ազատագրվեց: Մի քանի րոպեի ընթացքում այդ խմբի բոլոր մարդիկ ընկած էին գետնին. Սուրբ Հոգին ծառայում էր նրանց: Հովիվը շրջվեց, մի հայացք նետեց ինձ և մեջքի վրա ընկավ հատակին: Ստիպված ծառայությունը փակեց նրա կինը: Կես ժամ հետո երկու մարդ օգնեցին հովվին բարձրանալ: Այդ եկեղեցին նման բան դեռ չէր տեսել:

Աստծո զորությունը հովվի մեջ չէր գործում երկչոտության պատճառով: Դրա հետևանքն այն էր, որ Աստծո զորությունն ու ներկայությունը հազվադեպ էր նրա եկեղեցում: Երկչոտության այս զորությունը կոտրելուց հետո Աստծո պարգևը ազատ արձակվեց:

Նույն պատմությունը, բայց այլ սցենարով

Ես համոզվել եմ, որ մի քանի եկեղեցիներում այս սկզբունքը ճիշտ է այնքան, որքան անհատների կյանքում:

Ես ծառայում էի արտասահմանյան մի եկեղեցում, որտեղ նույնպես հովիվներն ու ավագները գործում էին երկչոտության դեմ պայքարելով: Ողջ շաբաթվա ընթացքում ես քարոզեցի՝ քաջալերելով նրանց ուժեղ մնալ հոգու մեջ և գործադրել Աստծո մեջ ունեցած իրենց բարձր կոչումը: Իմ մեկնելուց չորս ամիս հետո եկեղեցու անդամների թիվը եռապատկվեց: Նրանք տեղափոխվեցին իրենց չորս հարյուր տեղանոց շենքից և գնացին մի լսարան, որն ուներ երկու հազար նստելատեղ: Երբ ես ավելի ուշ վերադարձա

այդ երկիր, հովիվն ինձ ասաց, որ ինքն ու իր եկեղեցին փոխվել են այն պահից, երբ կոտրել են երկչոտությունը:

Ես երեք օրով հրավիրված էի ծառայելու Ատլանտայում: Վերջին օրը քարոզում էի երկչոտության զորությունը կոտրելու մասին: Հովիվը փառավոր ձևով ազատագրվեց իր ժողովրդից ունեցած երկչոտությունից: Նա ասաց. «Դուք պետք է նորից գաք և մեկ շաբաթ մնաք»:

Երեք շաբաթ անց ես վերադարձա, և մենք ունեցանք ինը ծառայություն: Աստծո զորությունն ու ներկայությունը այնքան ուժեղ էր, որ ոմանք մնում էին մինչև կեսգիշեր: Գիշերվա կեսին մարդիկ զանգում էին հովվի տուն և հարցնում, թե ինչ անեն, որովհետև ոմանք դեռ զգում էին Աստծո զորության և ներկայության հպումը: Նրանք երբեք չէին տեսել Աստծո շարժը այդքան զորավոր ձևով:

Դրանից հետո ինը ամիս շարունակ, յուրաքանչյուր շաբաթվա վերջում եկեղեցին ունենում էր արթնության հզոր ծառայություններ: Հովիվը զանգում էր ինձ ու պատմում, թե որքան զորավոր էին ծառայություններն իր եկեղեցում և թե ինչպիսի հզոր բաներ էին տեղի ունենում եկեղեցու անդամների կյանքում: Նա ասում էր, որ հավաքույթներից ոչ մեկը մյուսի նման չէր: Նրանց եկեղեցին աճել էր չորս հարյուրից և հասել էր յոթ հարյուրի: Նա ինձ պատմեց, որ այն երեկոն, երբ ես քարոզում էի երկչոտությունը կոտրելու մասին, շրջադարձային էր իր կյանքի և ծառայության համար:

Ես մեկ ուրիշ «կենդանի հավատքի» եկեղեցում էի: Փառաբանությունից ու երկրպագությունից քունդ տանում էր: Հովիվը վեր կացավ, հայտարարություններ արեց, զոհաբերություն «սովորեցրեց»: Շատ ձանձրալի էր այդ ընթացքը: Երբ մենք ճաշում էինք ծառայությունից հետո, նա խոսում էր միայն ֆուտբոլից: Դա ձանձրալի ճաշկերույթ էր:

Հաջորդ երեկո Աստված մղեց ինձ քարոզել երկչոտությունը կոտրելու մասին: Քարոզի կեսին հովիվն ընկավ հատակին՝ ապաշ-

խարելով այն թուլությունից, որ հանդուրժել էր իր կյանքում և ծառայության մեջ: Ես գիտեի, որ Աստված գործ էր անում նրա կյանքում, բայց ես չէի հասկանում, թե դա ինչքան կտևեր:

Հաջորդ օրը նա զանգեց. «Ձո՛ն, իմ կինը մեկ ժամ է քնել, իսկ ես՝ ընդհանրապես չեմ քնել: Մենք ողջ գիշեր արթուն ենք եղել, ապաշխարել ենք, լացել, հետո ծիծաղել ենք: Հետո այդ ամենը նորից էր կրկնվում՝ ապաշխարություն, լաց և ծիծաղ»: Այդ օրը նա գնացել էր իր օգնականների մոտ և ապաշխարել էր նրանց առաջ՝ ներողություն խնդրելով, որ չի եղել Աստծո այն առաջնորդը, որ կանչված էր լինելու:

Օգնականներից մի քանիսը լքեցին եկեղեցին, երբ հասկացան, որ այլևս չեն կարող ղեկավարել հովվին: Մյուսները միացան նրան և աջակցեցին նրա աճին:

Եկեղեցին և այս մարդը երբեք այսպիսին չէին եղել: Այժմ՝ չորս տարի հետո, փառաբանությունն ու երկրպագությունը կենդանի են: Նրանք վերջին երկու տարվա ընթացքում ամեն շաբաթ արթնության հավաքույթներ էին ունենում: Երբ հովիվը զանգահարեց ինձ, պատմեց, թե ինչպես է Աստված խոսում իր հետ և ինչպիսի հրաշքներ են կատարվում եկեղեցում: Մի քանի անգամ վերադարձել եմ այդ եկեղեցի, և ամեն անգամ վիճակը ավելի է լավանում: Նա նաև ինձ մի քանի անգամ ասել է, որ երկչոտությունից ազատվելու ուղերձը փոխել է իր կյանքն ու ծառայությունը:

Այս ազատագրումը ոչ միայն հովիվների և ավագների, այլև բոլոր հավատացյալների համար է: Մենք ստացել ենք շատ վկայություններ, որ մարդիկ ազատագրվել են կյանքի տարբեր բնագավառներում, երբ կոտրել են երկչոտության կապանքները:

Ծառայություններից մեկի ժամանակ, երբ ես քարոզում էի երկչոտությունը կոտրելու մասին, հավաքույթի ավարտին մի կին վկայեց, որ վախի ճնշում է զգացել և երկչոտությունը դուրս է եկել նրա կյանքից:

Մի քանի օր հետո այդ կնոջն ու նրա դստերը ճանապարհին կանգնեցնում է կրակոցը: Հարձակվողները հափշտակում են կանանց դրամապանակները, և երեք երիտասարդ տղամարդիկ շրջապատում են նրանց:

Մեծ համարձակություն է բարձրանում կնոջ ներսում, և նա սկսում է որքան հնարավոր է բարձրաձայն խոսել լեզուներով: Ատրճանակով երիտասարդը հրամայում է դադարեցնել այն: Կինը չի դադարում: Երիտասարդ տղամարդիկ այնքան են շփոթվում, որ այդ կնոջ աղջիկը կարողանում է վազել տուն և զանգահարել 911: Տղամարդիկ փախչում են՝ տանելով միայն կնոջ դրամապանակը:

Հաջորդ օրը մի քրիստոնյա որոշում է ոտքով գնալ իր մոր տուն և գնում է ոչ սովորական դարձած ճանապարհով: Անտառում նա գտնում է այս կնոջ դրամապանակը և զանգահարում է նրան: Նրանք երկուսով ուրախանում են: Դրամապանակից շատ քիչ գումար էր պակասել, իսկ կնոջ ողջ փաստաթղթերը մնացել էին դրամապանակում:

Նա կնոջս ասել էր, որ այդ քարոզն իրեն տվել էր քաջություն, որը փրկել էր իր կյանքը: Եթե նախկինում նման իրավիճակներում ինքը վախից կընկճվեր, ապա հիմա չունի վախի զգացումը:

Ես Աստծուն եմ տալիս ողջ փառքը բոլոր այս վկայությունների համար: Ես էլ էի կապված վախից, բայց Աստծո շնորհքով հիմա ազատ եմ: Ազատագրման այս իմաստությունն ու զորությունը, որն ազատում է գերվածներին, գալիս է Նրանից:

Մենք բացահայտեցինք վախն ու երկչոտությունը և թե ինչպես դրանք կարող են խանգարել, իսկ շատ հաճախ էլ կանգնեցնել Աստծո պարգևն ու զորությունը: Այնուամենայնիվ մեր նպատակն է ոչ թե պարզապես բացահայտել, այլ ավելին՝ կոտրել նրա մահացու կապանքը:

Հոգեւոր դիմադրությունը պահանջում է
հոգեւոր աջակցություն։

Երկչոտության հոգին

Երկչոտությունը հասկանալու և նրա հետ գործ ունենալու համար մենք պետք է քննարկենք երկու նյութ: Առաջինն այն է, որ վախը կամ երկչոտությունը հոգի է, իսկ երկրորդը, որ դա Աստծուց չէ:

> *«Որովհետև Աստված չտվեց մեզ երկչոտության հոգի» (Բ Տիմոթ. 1.7):*

Այս ուղերձի մեջ *«հոգի»* բառը հունարենում *«պնեումա»* բառն է, որը օգտագործվում է Սուրբ Հոգու համար, մարդու հոգու համար, երբ խոսվում է դևին քշելու մասին (ըստ Սթրոնգի համաբարբառի): Երկչոտությունը դիրք կամ վերաբերմունք չէ. այն *հոգի* է:

Քանի որ երկչոտությունը հոգի է, նշանակում է նրա դեմ չենք կարող պայքարել բանականության կամ կամքի մակարդակով: Մտավոր դրական դիրք ունենալով չես հաղթի երկչոտությանը: Հոգևոր դիմադրությունը պահանջում է հոգևոր աջակցություն. այն հասցեագրված է հոգու բնագավառին:

Հարց է առաջանում՝ ինչո՞ւ խելամիտ և ֆիզիկապես ուժեղ մարդիկ, պայքարելով երկչոտության դեմ, հաճախ վախենում են ինչ-որ մեկից կամ ինչ-որ բանից, որ ավելի թույլ է մարմնով կամ մտքով: Գուցե ամեն ինչ հիանալի է, բայց նրանք ապրում են անփոփոխ սոսկումի մեջ, որ իրենց կյանքում հանգամանքները փոխ-

վելու են ավելի վատի: Նրանք իրենց ողջ ժամանակն ու էներգիան օգտագործում են անհանգստության մեջ և փորձում են իրենց ապահովագրել որոշ բաներից, որոնք, միգուցե, երբեք էլ տեղի չեն ունենա: Նրանք չեն կարողանում ուրախանալ ներկայով, որովհետև շատ վախեցած են իրենց ապագայից: Նշանակություն չունի, թե ինչ կարծիք ունես նրանց մասին, միևնույն է, նրանց վախը մնում է: Այդպիսիք ունեն վախի կամ երկչոտության հոգի և պայքարի մեջ են ոչ թե ֆիզիկական թուլության, այլ հոգևոր թուլության հետ:

Այժմ անդրադառնանք այն մարդկանց, որոնք, թվում է, միշտ հասնում են իրենց ուզածին: Պատճառը նրանց հասակը կամ կրթությունը չէ: Նրանք կարող են ոչ մի դիրք կամ իշխանություն չունենալ, մինչդեռ շրջապատող մարդիկ խոնարհվում ու ենթարկվում են նրանց: Ինչո՞ւ: Դա շատ պարզ է: Նրանք ուրիշներին ղեկավարում են երկչոտության հոգու միջոցով. նրանք սովորել են երկչոտությունն օգտագործել իրենց օգուտի համար:

Ես նախաճաշում էի մի մարդու հետ, որը բարգավաճող բիզնես ուներ: Նա պատմում էր ինձ, թե ինչպես էր ապրում ու ինպես էր գործում իր բիզնեսը մինչև փրկվելը:

-Ես իմ բիզնեսում ցանկացած բանի հասնում էի մարդկանց վախի մեջ պահելով: Ես ուղղակի զգում էի այդ վախի զորությունն ինձ վրա, երբ քայլում էի քաղաքում: Ինձ դուր էր գալիս այն փաստը, որ մարդիկ սարսափում էին ինձանից, և հասնում էի իմ ուզածին նույնիսկ այն դեպքում, եթե ուզածս քաղաքային խորհրդի որոշման հետ էր կապված: Նրա մեջ կար վախեցնող հոգի: Քաղաքի ղեկավարները, չնայած իրենց ունեցած դիրքին և իշխանությանը, չէին համարձակվում դեմ կանգնել նրան:

Վերահսկող հոգի

Եղիան չէր վախենում Իսրայելի ժողովրդից, երբ նրանք նվիրված էին Բահաղի պաշտամունքին: Ինչպիսի՜ մեծ համարձակություն՝ մեկ մարդը դեմ էր կանգնել ողջ ազգին: Նա չվախեցավ, երբ պայքարում էր 850 սուտ մարգարեների դեմ: Ինչպիսի՜ որոշում. մեկ մարգարեն դեմ էր կանգնել մոտ հազար կրոնական առաջնորդներին: Եղիան հոգս չէր անում նույնիսկ այն ժամանակ, երբ Իսրայելի թագավորը բարկացած էր իր վրա: Այս ամենն ավելին էր, քան շատերը կկարողանային անել: Բայց և այնպես Եղիան թույլ տվեց մի կնոջ վախեցնել իրեն այն աստիճան, որ ընտրի փախուստի ճամփան և ցանկանա մեռնել:

Հոգեբանները կարող են ասել, որ նա վախենում էր կանանցից, բայց սա շատ թույլ փաստարկ է, որովհետև Իսրայելի ժողովրդի մեջ միայն տղամարդիկ չէին: Ո՛չ, սա մեծ կարևորություն ունեցող հոգևոր հակամարտություն էր, որում խառնված էին ազգը, թագավորը և կեղծ մարգարեները: Եղիան Հեզաբելի մեջ հանդիպեց սարսափի ուժեղ, վերահսկող հոգուն, որը չունեին թագավորը և կեղծ մարգարեները:

Ե՛կ տեսնենք, թե Աստվածաշունչը ինչ է ասում այս հոգու բնույթի մասին: Ուշադիր եղիր Հեուի և Հեզաբելի որդի Հովրամի զրույցին.

> *«Եվ եղավ, երբ որ Հովրամը Հեուին տեսավ, ասաց՝ խաղաղությո՞ւն է, Հեո՛ւ, և նա ասաց՝ ի՞նչ է խաղաղությունը, մինչև որ կան քո մոր՝ Հեզաբելի պոռնկությունները և նրա շատ կախարդությունները» (Դ Թագ. 9.22):*

Մի՛ գայթակղվիր *«կախարդություն»* բառից: Մի՛ սխալվիր՝ պատկերացնելով կեռ քթով մի կնոջ, որը թռչում է ավելով, կախարդանքներ է անում, թույներ է օգտագործում: Անձը կախարդությամբ

է զբաղվում, երբ նա, լինի կին, թե տղամարդ, վերահսկելու ջանք է անում: Այո՛, կա կախարդության կամ իշխելու ձև, որ կանչում է դիվական ոգիներին: Բայց և այնպես կախարդությունը չի սահմանափակվում միայն սրանով: Պողոսը հանդիմանում է գաղատացիների եկեղեցուն. «Ով անմիտ գաղատացիներ՛, ո՞վ կախարդեց ձեզ, որ ճշմարտությանը չհնազանդվեք» (Գաղատ. 3.1): Այս կախարդելը թույներ օգտագործելու կախարդանք չէր: Պողոսը նկատի ուներ այն ուսուցիչներին, որոնք համոզել էին նրանց չհնազանդվել այն ամենին, ինչն Աստված հասկանալի ձևով հայտնել էր: Այս ուսուցիչները օկուլտիզմի վարպետներ չէին, այլ ունեին վերահսկող հոգի, և դա ազդել էր ողջ եկեղեցու վրա:

Հեզաբելը վերահսկելու և վախեցնելու այնքան ուժեղ հոգի ուներ, որ թագավորը, առաջնորդներն ու Իսրայելի ողջ ժողովուրդը ճանապարհը զիջել էին նրան: Եղիան էլ էր ենթարկվել այդ հոգուն և փախչում էր իր կյանքը փրկելու համար: Երբ դու թույլ ես տալիս, որ վախը մտնի քո սիրտը, դու կկորցնես խաղաղությունը, վստահությունը, քաջությունը, համբերությունը, հերոսությունը, վճռականությունը և անվտանգությունը: Այս ցուցակը կարելի է շարունակել:

Ես նկատել եմ, թե ինչպես են մարդիկ փորձում դրական մտքերի միջոցով ազատվել վախի չարչարանքից: Նրանք չեն ազատվում, քանի որ գործ ունեն ոչ թե վախի հետևանքների, այլ արմատի հետ: Դու կարող ես պոկել ծառի պտուղը և ինչ-որ մի ժամանակ այն անպտուղ կդառնա, բայց վերջին հաշվով պտուղը նորից աճելու է: Ծառը կշարունակի պտուղ տալ այնքան ժամանակ, քանի դեռ արմատները ամուր են: Եթե փորձես այսպես կոտրել երկչոտության զորությունը, ստիպված կլինես ընկնել դրա ետևում եղող հոգևոր ուժի ետևից:

Վերահսկելու և վախեցնելու հոգիները եկեղեցում

Մեր եկեղեցիներում կան մարդիկ, որոնց սիրտն ուղիղ չէ Աստծո առաջ: Նրանք վախեցնում են ավագներին, որպեսզի հասնեն իրենց ուզածին: Նրանք հնազանդ են այնքան ժամանակ, քանի դեռ ամեն բան իրենց ուզածով է: Այդպիսի մարդիկ վազում են այնպիսի եկեղեցիներ, որտեղ ավագները թույլ են:

Տարբեր եկեղեցիներում հաճախ ես հանդիպում էի երկչոտությանը և չգիտեի, թե ինչու եմ պայքարում դրա դեմ, կամ որտեղից է գալիս այն: Պատճառը հետևյալն է. «Երկչոտությունը մի հոգի է, որն իրեն դրսևորում է ցանկացած անձի միջոցով, ով կենթարկվի իրեն, նույնիսկ հավատացյալի միջոցով: Աստվածաշունչը հավատացյալներին զգուշացնում է տեղ չտալ սատանային (Եփես. 4.27):

Ուզում եմ ձեզ հետ կիսվել որոշ փորձառություններով: Ես համարձակվում եմ սա անել՝ շատ լավ հասկանալով, որ ինձ կարող են կպցնել «գերհոգևորի» կամ «դև որսացողի» պիտակ: Հասկացել եմ, որ որոշ մարդիկ իրենց հանդիպած ամեն մի խնդրի մեջ դև են փնտրում: Եթե դու կարող ես ամեն ինչում մեղադրել սատանային, ուրեմն քո արածների համար պատասխանատվություն չես կրի: Այդպիսով դու ավելի շատ կենտրոնանում ես դևերի, քան թե Հիսուսի վրա: Աստվածաշունչը սովորեցնում է մեր աչքերը հառել Հիսուսի վրա, այլ ոչ թե դևերի: Նա է մեր հավատքի հեղինակն ու ավարտը (Եբր. 12.2):

Ես հասկանում եմ այն, որ մենք պարտավոր ենք ապրել մեր ուշադրությունը կենտրոնացնելով Հիսուսի վրա, և եթե մի հոգի դուրս գա մեր ճանապարհին, մենք պետք է ոչնչացնենք նրան Աստծո Խոսքով ու շարունակենք հետևել Հիսուսին: Ալելուիա՜: Այնուամենայնիվ, որպեսզի արդյունավետ ձևով կոտրենք երկչոտությունը, պետք է իմանանք, որ այն մի հոգի է, որը չի հեռանա պարզապես անտեսված լինելուց:

Հարձակում

Ես կպատմեմ այն բազմաթիվ դեպքերից մեկը, որը հաստատում է, որ երկչոտությունը հոգի է: Ես քարոզում էի Հարավի մի եկեղեցու հերթական հավաքույթներից մեկի ժամանակ: Առաջին հավաքույթը կիրակի առավոտյան էր, և այն շատ զորավոր էր: (Չորս տարի շարունակ մենք օգտագործում ենք այդ ծառայության տեսաերիզը): Ծառայությունից հետո ոչ մեկը վախեցած կամ բացասական որևէ բան չասաց: Փաստորեն իմ շուրջ գտնվող մարդիկ շատ դրական էին տրամադրված: Բայց կեսօրից հետո ես հայտնաբերեցի, որ պայքարում եմ հիասթափության և շփոթվածության դեմ: Հասկանում էի, որ ինչ-որ բան ճիշտ չէ, բայց չգիտեի, թե դա որտեղից էր գալիս: Ես ճանաչեցի այս ախտանիշները. դրանք նույնն էին, երբ ես պայքարում էի երկչոտության դեմ: Այդ գիշեր Տերը կարգադրեց ինձ, որ եկեղեցում քարոզեմ իշխանությամբ: Այդպես ծառայեցի շատերին:

Ծառայությունից հետո հովիվն ինձ տարավ իր գրասենյակ: Նա ասաց. «Դու չգիտես, թե ինչ նշան էիր բռնել այս երեկո՝ քարոզի ժամանակ»: Նա շարունակեց պատմել ինձ, որ եկեղեցուց մի կին կեսօրին կանչել էր իրեն և ասել. «Հովի՛վ, ես գիտեմ, որ դու համաձայն չես այս մարդու քարոզի հետ: Նա շատ է ճնշում ժողովրդին: Ես գիտեմ, որ դու կդադարեցնես հավաքույթները այս երեկոյից հետո, որովհետև դու նրա նման չես: Ես չեմ պատրաստվում այս երեկո գալ ծառայության, ես կմնամ տանը և կաղոթեմ այդ մարդու դեմ»:

Ինձ համար պարզ դարձավ, թե որտեղից էր գալիս վիճատությունը: Ես հարցրի հովվին, թե նա ուղղե՞ց այդ կնոջը: Հովիվը շատ ողորմած մարդ էր և ասաց, որ այդպես չէր արել, պարզապես ասել էր, որ դա հանձնի Տիրոջ ձեռքերի մեջ: Եթե այս հովիվը ուղղեր կնոջը և մնար իր իշխանության դիրքում, ես վստահ եմ, որ կեսօ-

րից հետո պատկերն այլ կլիներ: Այն ինչի դեմ մենք չենք կանգնում, երբեք չի փոխվի: Երբ չարը անտեսվում է, դրանով այն ավելի ուժեղ է դառնում: Մենք երկուսով դաս առանք այս դեպքից: Տերն օգտագործեց այս փորձառությունը, որպեսզի ցույց տա ինձ, թե ինչպես մնամ իմ հոգևոր իշխանության մեջ և ծնկի չգամ երկչոտության հոգու առաջ:

Շնորհակալություն Աստծուն Սուրբ Հոգու համար, Որը գիտեր, թե ինչ էր տեղի ունենում և օգնեց ինձ բեմի վրայից հակառակվել այդ հոգուն, հակառակվել անկախ այն հանգամանքից, որ ես չգիտեի, թե ինչ էր տեղի ունենում: Հովիվը հասկացավ, և դա բացեց նրա աչքերը: Այդ հավաքույթները դարձան ամբողջ տարվա ամենազորավոր հավաքույթները: Ես էլի եմ եղել այդ եկեղեցում, և հովիվն ու ես հիմա լավ ընկերներ ենք:

Մեկ ուրիշ ընդհարում վախեցնող և վերահսկող հոգու հետ

Մի անգամ ինձ խնդրել էին քարոզել արտասահմանի մի հանգստավայրում, որտեղ գրեթե հազար մարդ էր հանգստանում: Յուրաքանչյուր օր պետք է երեք հավաքույթ լիներ, երկուսը՝ առավոտյան և մեկը՝ երեկոյան: Առաջին երկու ծառայությունները շատ զորավոր էին: Մինչդեռ ես անընդհատ դիմադրություն էի զգում մթնոլորտում: Երկրորդ ծառայությունից հետո ողջ կեսօրը անցկացրի իմ սենյակում՝ կռվելով ծանրության և հուսալքվածության դեմ: Ես գիտեի, որ դա մի վախեցնող, վերահսկող հոգի էր, սակայն այս անգամ ոչ մեկը ինձ հակառակ որևէ բան չէր ասել: Բայց ես արդեն սովորել էի, որ կռվում եմ ոչ թե մարմնի և արյան, այլ չար հոգիների դեմ:

Հավատացյալները կարիք ունեն սովորելու, թե ինչպես ապրեն Հոգու մեջ: Աստծո Հոգին քեզ կհայտնի, թե ինչին դեմ լինես:

Առանց թշնամուն զինաթափելու մենք մեր ուշադրությունը կկենտրոնացնենք կողմնակի ազդեցությունների վրա: Երբ ես չէի հասկանում, թե ինչի հետ գործ ունեմ, ինձ համար հետաքրքիր էր իմանալ, թե ինչո՞ւ եմ կռվում ընկճվածության դեմ, արդյոք կընդունե՞ն ինձ, ինչո՞ւ եմ հեռու իմ կնոջից ու երեխաներից, վրիպե՞լ եմ իմ կոչման մեջ, ժամանակը չէ՞ արդյոք վերջ տալու ճանապարհորդություններին… Եթե ես շարունակեի մտքերի այս շարանը, պիտանի չէի լինի ծառայության համար, իսկ վախեցնող, վերահսկող հոգին էլ հենց դա էր ուզում: Ես կենտրոնացել էի ինձ վրա և ոչ թե այն բանի վրա, որ Աստված ուներ այդ մարդկանց համար:

Կեսօրն անցավ պայքարի մեջ: Երբ ինձ կանչեցին երեկոյան ծառայության, իմ թարգմանչին ասացի, որ ողջ կեսօրին պայքարի մեջ եմ եղել երկչոտության հետ: Նա աղաղակեց. «Ե՛ս նույնպես»: Մենք հայտնաբերեցինք, որ պայքարել ենք միևնույն ախտանիշի դեմ: Այդ երեկո ես քարոզեցի երկչոտության հոգու դեմ, և շատերն ազատագրվեցին:

Հաջորդ առավոտ, երբ ես մոտեցա ամբիոնին, զգացի, որ օծություն չկար: Թվում էր, թե Աստված լուռ էր: Մի քանի րոպե կանգնել էի բեմահարթակին, սպասում էի Տիրոջ խոսքին: Ես աղոթեցի և ժողովրդին էլ մղեցի աղոթելու, բայց դեռ ոչ մի առաջնորդություն, օծություն կամ ասելիք չկար, որպեսզի որևէ բան անեի: Իմ սրտի խորքում ես գիտեի, որ պայքարի մեջ եմ: Ես հասկանում էի, որ այս հարձակումն իմ դեմ էր ուղղված: Գիտեի, որ պետք է քանդեմ այն խոսքերը, որոնք խոսվել էին իմ դեմ: Աստծո Խոսքն ասում է.

> *«Բոլոր քեզ դեմ շինած գործիքը պիտի չհաջողվի, և ամեն լեզու, որ վեր կենա քեզ դեմ դատաստանի, պիտի դատապարտվի. սա է Տիրոջ ծառաների ժառանգությունը, և նրանց արդարությունը Ինձանից է, ասում է Տերը» (Եսայի 54.17):*

Ես սկսեցի կոտրել վախը: Հրամայեցի, որ իմ դեմ ասված ամեն խոսք դատապարտվի: Ինձ չէր հետաքրքրում, թե մարդիկ ինչ կմտածեին: Ես սովորել էի լսել իմ սրտին, որտեղ Հոգին էր խոսում:

Տիրոջ խոսքը հրազենի կրակոցի նման եկավ ինձ: Աստված ինձ ճշգրտորեն ասաց, թե ժողովուրդը ինչ պետք է աներ: Աստծո զորությունն իջավ երկու կամ երեք րոպեի ընթացքում: Մարդիկ այնքան լցվեցին Սուրբ Հոգով, որ սկսեցին անզուսպ ձևով ծիծաղել: Աստծո Հոգու շարժն այնքան ուժեղ էր, որ ես նույնիսկ չէի կարողանում քարոզել: Մարդկանց ձայները չէին դադարում մինչև կեսօրվա ժամը երեքը: Հզոր ճեղքում էր տեղի ունենում, և իմ սիրտը ուրախանում էր: Եթե ես չհակառակվեի այդ հոգուն, այս ամենը տեղի չէր ունենա:

Հետո թարգմանչից իմացա, որ հավաքույթների ժամանակ մի ծառայող կին, որը դուրս էր եկել ծառայությունից, մոտեցել էր ծառայության ավագին և ասել. «Մարդիկ ինչո՞ւ պետք է լսեն միայն Ջոն Բիվերին, որը քարոզում է այստեղ անցկացվող բոլոր ծառայություններին: Մենք ունենք նաև ուրիշ ծառայողների քարոզի կարիքը»: Այդ կինն ինքն էր ցանկանում ծառայել:

Ուրիշ անսովոր վկայություններ էլ լսեցի այս կնոջ մասին: Ծառայությունների ժամանակ նա ոչ աստվածաշնչյան սկզբունքներով «ազատագրման» փորձ էր արել: Օրինակ՝ օգտագործել էր աչքի կաթիլներ և հիվանդ մարդու մաշկը շփել էր գինիով: Նրան երբեք չէին կանգնեցրել: Փաստորեն ավագը, որոշակի սահմանափակումներով, այդ կնոջը թույլ էր տվել ծառայել:

Ցավալի է ասել, բայց ավագները հաճախ ավելի շատ նախընտրում են փոխզիջման գնալը, քան հակառակվելը, որովհետև կարծում են, թե փոխզիջման գնալն ավելի հեշտ է: Բայց փոխզիջման գնալը երբեք էլ հեշտ չէ, հաճախ այն թանկ արժե:

Հավաքույթներից հետո ես խոսեցի այդ ավագի հետ և հարցրի, թե արդյո՞ք ճիշտ են այդ կնոջ մասին վկայությունները: Նա ասաց,

որ ճիշտ են: Ավագի հետ կիսվեցի ինձ մտահոգող այն հարցի մասին, որ այդ կինը նրանից բացատրություն էր պահանջել իմ քարոզելու վերաբերյալ, երբ արդեն կար ավագի՝ Աստծո խոսքը քարոզելու որոշումը:

Ես ասացի ավագին, որ հավանաբար այդ կինը ուզում էր վերահսկել իրեն (կինը ոչ ավագ էր և ոչ էլ եկեղեցու անդամ):

-Ինչո՞ւ ես թույլ տվել այդ կնոջը, որ ծառայի:

-Զո՛ն, ես ասել եմ նրան, որ չկիրառի իր փորձերը:

-Դու կարող ես կանգնեցնել նրան, որպեսզի ոչ աստվածաշնչյան մեթոդներ չկիրառի, բայց դրանց ետևում եղող հոգին դեռ եկեղեցում է: Կնոջ սրտի դիրքը չի փոխվել: Որպես ավագ՝ դու ուզում էիր պահպանել խաղաղություն և, հետևաբար, դու վերահսկող, վախեցնող հոգի ունեցող մի անձնավորության դրել էիր ծառայության ու իշխանության դիրքի վրա: Դա երկչոտության հոգուն օրինական իրավունք տվեց իմ դեմ կռվելու ու նաև ցանկացած մեկի, ով համաձայն չէր լինի նրա ուզածի հետ:

Որպեսզի օգնեմ ավագին տեսնել, թե ինչ էր տեղի ունենում, նրա հետ կիսվեցի իմ կյանքից մի դեպքի մասին:

Ես որպես հովիվ ծառայում էի քոլեջում: Մենք մի գիշեր ունեցանք փառաբանության և երկրպագության զորավոր ծառայություն: Արցունքները հոսում էին շատ երիտասարդների աչքերից: Աստծո խաղաղությունն ու ներկայությունը լցրել էր սենյակը: Մենք երկրպագության մեջ էինք գրեթե քառասուն րոպե: Այդ պահին բոլորը լուռ էին, բացի մի քանիսից, ովքեր կամաց լաց էին լինում:

Հանկարծ մի երիտասարդ մարդ, որին նախկինում երբեք չէի տեսել, խոսեց մի անծանոթ լեզվով: Դրանից հետո մի խանգարող, արտասովոր զգացողությունով լցվեց սենյակի մթնոլորտը: Հետո նրա կողքի երիտասարդ կինը, որին ես նույնպես երբեք չէի տեսել, առաջ եկավ մի տարօրինակ մեկնաբանությամբ:

Ես զգաստացա և ոչինչ չասացի, քանի որ վայելել էի Տիրոջ

ներկայությունը մեր փառաբանության և երկրպագության ժամանակ:

Երբ կինը վերջացրեց, մթնոլորտն արդեն փոխված էր: Չկար Տիրոջ ներկայությունը: Ես նկատեցի, որ արդեն ուշ էր որևէ բան ասելու համար. վնասն արդեն հասցվել էր: Հետո ես բոլորին խնդրեցի նստել, կարճ հայտարարություններ արեցի և հավաքեցի զոհաբերությունը: Դրանից հետո սկսեցի քարոզել:

Երբ քարոզում էի, մտածում էի. «Որտե՞ղ է կյանքը: Ու՞ր եմ գնում: Ինչո՞ւ դա ասացի»: Ոչ մի օծություն չկար քարոզելու համար, և ես զգում էի, որ ինչ-որ բան կռվում է ինձ հետ: Չէի հասկանում, թե ինչու էր Աստծո պարգևը հանգել, դրա համար էլ բոլորին խնդրեցի աղոթել: Տերը խոսեց. «Ես ուզում եմ, որ դու դեմ կանգնես այդ տղամարդուն ու կնոջը»:

Ես մտածեցի, որ արդեն անցել է քսան րոպե, ես չեմ կարող դա անել: Այդպիսով ես մի կողմ դրեցի այն, ինչ Աստված էր ասել, և մտածեցի, որ մի քիչ երկար կաղոթեմ: Մենք շարունակեցինք աղոթել և նորից հոգևոր դիմադրության հանդիպեցինք:

Անցավ ևս մի քանի րոպե: Հուսահատված ասացի. «Աստվա՛ծ իմ, ինչ է կատարվում»:

Իմ հոգում նորից լսեցի Աստծո ձայնը. «Ես ուզում եմ, որ դու դեմ կանգնես նրանց»:

Հիմա դա ավելի երկար տևեց: Իմ ներսում ես ասում էի՝ ո՛չ մի դեպքում: Մարդիկ սկսեցին մտածել, որ ես տարօրինակ եմ: Մենք ևս տասը րոպե աղոթեցինք, և ոչ մի փոփոխություն չեղավ: Ես հուսահատված ավարտեցի ծառայությունը:

Այդ գիշեր տուն գնացի ճնշված սրտով: Ես նույնիսկ չէի ուզում Աստծուց հարցնել տեղի ունեցածի մասին: Ուղղակի անկողին մտա: Հաջորդ առավոտ արթնացա ավելի ծանրացած հոգով: Դուրս եկա աղոթելու:

Ես հարցրի. «Աստվա՛ծ իմ, ի՞նչ տեղի ունեցավ անցած երեկո»:

Նա պատասխանեց. «Ձո՛ն, ես քեզ ասացի, որ դեմ կանգնես այդ մարդուն և կնոջը»: Նա շարունակեց. «Եթե ես քեզ դրել եմ ավագության դիրքի մեջ, դու պատասխանատու ես ծառայության մեջ կարգուկանոնն ու իշխանությունը պահպանելու համար: Ես դա չեմ անի, որովհետև դա քեզ եմ վստահել: Երբ ես Ադամին դրեցի պարտեզի մեջ, ասացի նրան, որ պահպաներ այն: Երբ սատանան եկավ կործանելու, չնայած որ ես գիտեի այն դաժան հետևանքի մասին, որը կլիներ ոչ միայն Ադամի, այլև ողջ մարդկային ցեղի համար, ես չիջա և նրա ձեռքին չխփեցի՝ պտուղը վերցնելու համար: Ես չեմ վերցնում այն, ինչ տալիս եմ. ես նրան էի տվել այդ պատասխանատվությունը: Այդ կինն ու տղամարդը, որոնց համար ասացի, որ դեմ կանգնես, ունեին ապստամբ հոգի: Երբ դու դեմ չկանգնեցիր նրանց, այդ հոգին ծառայությունը ղեկավարելու իրավունք ստացավ: Երբ դա տեղի ունեցավ, Իմ Հոգին հեռացավ, որովհետև դու հանձնեցիր քո իշխանությունը»:

Ես անմիջապես ապաշխարեցի՝ որոշելով, որ երբեք թույլ չեմ տա, որ դա նորից տեղի ունենա:

Այն բանից հետո, երբ այս պատմությունը պատմեցի հովվին, նա հասկացավ, թե ինչու պետք է դեմ կանգներ ապստամբ ծառայողին: Նրա դեմքը պայծառացավ, երբ Աստծո իմաստության լույսը մտավ նրա սրտի մեջ: Ես քաջալերեցի նրան. «Որպես այս ժողովրդի հովիվ՝ դու ոչ միայն կանչված ես նրանց կերակրելու, այլ նաև նրանց պաշտպանելու: Պաշտպանել նշանակում է դիմադրել»:

Ես հարցրի նրան. «Դու եղե՞լ ես այնպիսի իրավիճակներում, երբ մարդիկ քեզանից ինչ-որ բան են խնդրել, և քո սրտում իմացել ես, որ պետք է «ոչ» ասես, բայց խաղաղությունը պահպանելու համար ասել ես՝ այո»:

Նա պատասխանեց. «Այո՛, Ձո՛ն, ես այդպես արել եմ»: Հետո նա մի պահ խորհեց և մտածկոտ հայացքով նայեց ինձ. «Դա կեղծավորություն է, այնպես չէ՞»:

Ես համաձայնեցի. «Դու ճիշտ ասացիր, իսկ կեղծավորությունն

ու փոխզիջումը ծնվում են երկչոտությունից»:

Նա ապաշխարեց երկչոտության հոգի ունենալու համար և անմիջապես հեռացավ, որպեսզի լուծեր խնդիրները նրանց հետ, ովքեր վախեցրել են իրեն: Հաջորդ անգամ, երբ տեսա նրան, դեմքին ժպիտ կար: Նա իր ուրախությունը բացատրեց՝ ասելով. «Ես ազա՜տ եմ»:

Հասկացի՛ր, որ ոչ լիարժեք պայքարի այս օրինակները ներկայացնում են մի քանի ծայրահեղ իրավիճակներ: Ես քարոզել եմ գրեթե հարյուրավոր ծառայությունների ժամանակ, որոնց ժամանակ ոչ մի դիմադրություն չի եղել, եղել է հզոր ազատություն: Ազատությունը բնական է, դիմադրությունը՝ բացառություն: Բայց ես զգում եմ, որ այս մի քանի օրինակները մանրակրկիտ ներկայացնելը ձեր օգտի համար է:

Չնայած որ այս օրինակները կապ ունեն ծառայության հետ, բայց սկզբունքները կիրառելի են կյանքի ցանկացած բնագավառում: Երկչոտությունը հոգի է և գործելու է ըստ իրավիճակի: Եթե փորձենք հոգևոր պատերազմում կռվել մարմնավոր զենքերով, վերքեր կստանանք ու կտապալվենք:

> *«Որովհետև թեև մարմնով ենք վարվում, բայց մարմնավորապես չենք զինվորություն անում: Որովհետև մեր զինվորության զենքերը մարմնավոր չեն, այլ Աստծով զորավոր՝ բերդեր քանդելու, խորհուրդներ ենք քանդում, և ամեն բարձրություն, որ գոռոզանում է Աստծո գիտության դեմ, և գերի ենք բռնում ամեն միտք՝ Քրիստոսին հնազանդեցնելու համար» (Բ Կորնթ. 10.3-5):*

Վախի միջոցով թշնամին հարձակվում է մեր շնչի վրա: Այն չի հեռանում հոգեբանության և դրական մտքերի միջոցով: Երկչոտության դեմ մեր զենքը Հոգու սուրն է՝ Աստծո Խոսքի վրա հաստատ կանգնելը (Եփես. 6.17): Հաջորդ գլխում մենք կխոսենք այն մասին, որ երբ հակառակվենք երկչոտությանը, մեր ներսում կարթնացնենք Աստծո պարգևը:

Կոտրել երկչոտությունը

«Տերն է իմ օգնականը, ես չեմ վախենա,
ի՞նչ կարող է անել ինձ մարդը»:

Բորբոքիր պարգեւը

Երկչոտության նպատակն է մեզ դարձնել այնպիսին, որ հանձնենք իշխանությունը՝ մեր պարգևները դարձնելով չգործող: Դրանից հետո մենք գործում ենք մեր սահմանափակ ուժով և կարողությամբ: Սա սովորաբար հարձակվողից մեր դիրքը փոխում է պաշտպանվողի: Այնուհետև գիտակցելով, որ անպաշտպան ենք, մենք ապաստան ենք գտնում այնտեղ, որտեղ հարմարավետ է և ապահով:

Արթնացրո՛ւ պարգևը

Այսպիսով, եթե երկչոտությունը քնեցնում է պարգևը, ապա ի՞նչը կարթնացնի այն:

Համարձակությունը: Երկչոտությունը պատճառ է դառնում, որ անձը նահանջի, մինչդեռ համարձակությունը միշտ մղում է առաջ, նույնիսկ դիմադրության ժամանակ: Ինչպե՞ս կարող է երկչոտ մարդն ըմբռնել համարձակությունը:

> *«Որովհետև Աստված չտվեց մեզ երկչոտության հոգի, այլ զորության, սիրո և զգաստության» (Բ Տիմոթ. 1.7):*

Համարձակությունը գալիս է առողջ մտքի, սիրո և զորության շնորհիվ: Համարձակությունը ինքն իրենով արժանիք չէ: Մենք բոլորս էլ ճանաչում ենք մարդկանց, որոնք անպատկառ ու համար-

ձակ են եղել: Ճշմարիտ համարձակությունը գալիս է Աստծուց և գործում է աստվածային առաքինությամբ: Համարձակությունը, որը գործում է Աստծո բնավորությամբ, մեր կյանքում արթնացնում է պարգևները:

Որոշ մարդիկ իրենց համարձակության ետևում չունեն առաքինություն: Նրանք գիտեն ճիշտ բաներ խոսել և գործել վստահությամբ, երբ չեն հանդիպում դիմադրության կամ էլ երբ դիմադրություն ընդհանրապես չկա: Բայց նրանց համարձակությունը երկար չի մնում. այն մակերեսային է: Այդպիսի մարդկանց համարձակ դեմքին գոռոզության կամ տգիտության դիմակ է: Նրանց արմատները խորը չեն, և, վերջիվերջո, մի ուժեղ փոթորիկ կտապալի նրանց: Երբ եղանակը պարզ է, դու չես կարող նկատել, թե որքան խորն է ծառի արմատը, բայց ձախորդության քամիների դեպքում ծառը կա՛մ արմատախիլ է լինում, կա՛մ էլ ապացուցում է իր կանգուն լինելը:

Ո՞վ է ավելի ուժեղ

Դավիթն ասում էր. «Տերն է իմ կյանքի զորությունը, ես ո՞ւմից պիտի սարսափեմ» (Սաղմ. 27.1): Նա հռչակեց Տիրոջը իր ուժի և զորության աղբյուր: Իմանալով, որ գոյություն չունի Աստծուց հզոր մեկը, Դավիթն առանց վախի կարողանում էր հայտարարել՝ ես ոչ մեկից չեմ վախենում:

Նա ոչ միայն համարձակորեն հայտարարում էր իր վստահության մասին, այլև ապրում էր այդ վստահությամբ: Դավիթը գիտեր Աստծո զորությունը, որովհետև նա ճանաչում էր Աստծուն: Համարձակությունը Դավթին կարողություն էր տալիս տնօրինելու իր ճակատագիրը և կառավարելու արդար ձևով: Ե՛կ նայենք Դավթի երիտասարդ տարիներին:

Դավիթը Հեսսեի ութերորդ որդին էր: Նրա երեք ավագ եղբայր-

ները ծառայում էին Սավուղ թագավորի բանակում: Փղշտացիները հավաքել էին իրենց բանակը Իսրայելի դեմ: Ամեն օր նրանց հերոս Գողիաթը մարտահրավեր էր նետում իսրայելցի զինվորներին. «Ձեր միջից մի մարդ ընտրեք, որ իջնի ինձ մոտ: Եթե նա կարողանա ինձ հետ մենամարտել և ինձ մեռցնել, այն ժամանակ մենք ձեր ծառաները լինենք, բայց եթե ես հաղթեմ և նրան մեռցնեմ, այն ժամանակ դուք մեր ծառաները լինեք և մեզ ծառայեք» (Ա Թագ. 17.8,9):

Ըստ կարգի՝ իսրայելցիները պետք է պատերազմի ընտրություն անեին, բայց Գողիաթը սովորական զինվոր չէր: Ըստ որոշ հաշվարկների՝ նա ուներ տասնմեկ ու կես ոտնաչափ հասակ (մոտ 3,5 մետր): Պատկերացնելու համար վերցնենք բասկետբոլի զամբյուղը: Գողիաթի գլուխը մոտ հիսուն սանտիմետրով բարձր էր այդ զամբյուղից: Նա ոչ միայն հսկա էր, այլև փորձառու պատերազմող: Գողիաթի նիզակի միայն տեգը կշռում էր մոտ յոթ կիլոգրամ: Նրա սաղավարտը բրոնզից էր, զրահապատված և կշռում էր մոտ հիսունյոթ կիլոգրամ: Գողիաթի զրահը, նիզակը և վահանը միասին մոտ հարյուր կիլոգրամ էր (հավանաբար Դավթի մարմնի քաշից շատ ավելին): Անկասկած նա շատ սարսափազդու էր: Աստվածաշունչն ասում է. «Եվ երբ որ Սավուղն ու բոլոր Իսրայելը լսեցին փղշտացու այս խոսքերը, զարհուրեցին և շատ վախեցան»

(Ա Թագ. 17.11):

Դավթին, որը ոչխարներ էր արածեցնում, հայրն ուղարկել էր երեք ավագ եղբայրների համար սնունդ տանելու և տեսնելու, թե ինչպես են նրանք: Սնունդը պահապանին տալուց հետո Դավիթը վազեց հանդիպելու եղբայրներին: Շուտով՝ քառասուներորդ օրը, հերոս Գողիաթը դուրս եկավ իսրայելցիներին ծաղրելու:

Դավիթը ապշած էր տեսածից Նա զարմացել էր ոչ թե Գողիաթի արածից, այլ իր եղբայրների և համաերկրացիների պահվածքից. «Եվ Իսրայելի բոլոր մարդիկ, երբ որ այն մարդին տեսան, նրա երե-

սից փախան և շատ վախեցան» (Ա Թագ. 17.24): Դավթին հետաքրքրում էր. «Նրանք մոռացե՞լ են, թե Ով է մեր կողմից: Նա մեզ չէ մարտահրավեր նետում: Նա Աստծուն է մարտահրավեր նետում»:

Այնպես որ Դավիթը համարձակորեն հարցրեց. «Այս անթլպատ փղշտացին ո՞վ է, որ կենդանի Աստծո զորքերին նախատի» (Ա Թագ. 17.26): Օդը լցված էր հակամարտությամբ: Նրա ավագ եղբայրներն իրենց մերկ զգացին, երբ Դավիթը բացահայտեց նրանց երկչոտությունը: Նրանք չէին ցանկանում լսել իրենց փոքր եղբոր հայտարարությունը. դա բացահայտում էր եղբայրների թուլությունը, որին այդ ժամանակ նրանք չէին ուզում դեմ առ դեմ հանդիպել:

Եղբայրները բարկացան Դավթի վրա՝ մտածելով, որ եթե հուսահատեցնեն նրան, դրանով կծածկեն իրենց ամոթը: Ավագ եղբայրը, որը սարսափած էր Գողիաթից, փորձեց վախեցնել փոքր եղբորը.

> *«Եվ նրա մեծ եղբայր Եղիաբը, երբ որ լսեց նրա խոսելն այն մարդկանց հետ, Դավթի վրա բորբոքվեց և ասաց. «Դու ինչո՞ւ իջար այստեղ և այն մի քանի ոչխարները անապատում որի՞ հանձնեցիր: Ես քո հպարտությունը և քո սրտի չարությունը գիտեմ: Անտարակույս դու իջել ես պատերազմը տեսնելու»» (Ա Թագ. 17.28):*

Այդ պահին Եղիաբը խիզախ էր, խիզախ էր բարկությամբ: Նա հարձակվեց Դավթի բնավորության վրա, այլ ոչ թե Իսրայելին հանդիպած պրոբլեմի վրա: Երբ անձը վախեցած է, նա փախուստ է փնտրում, փնտրում է ազատվել ճնշումից:

Եթե անձը թույլ է, նա ներումներ կշնորհի, իսկ եթե ուժեղ է, հաճախ կհարձակվի նրանց վրա, ովքեր հակառակվել են իրեն՝ մեղադրելով նրանց:

Ուշադիր եղիր, որ Եղիաբը Դավթին մեղադրում էր մեծամտության և չարության մեջ: Քանի որ Եղիաբը միայն իր մասին էր մտածում, նա ենթադրում էր, որ Դավիթն էլ էր այդպիսին: Բայց Դավիթն

այդպիսին չէր: Նա Աստծո սրտի համեմատ մարդ էր: Նա հպարտ չէր, այլ խոնարհ էր Տիրոջ առաջ:

Այն մարդիկ, ովքեր ուժեղ անհատականություններ են, կօգտագործեն վախը սուտը ճշմարտության նման դարձնելու համար: Դու պետք է մնաս Հոգու մեջ, որպեսզի հաղթես այդպիսի հարձակումների ժամանակ:

Միգուցե Եղիաբը նախանձ էր: Սամվելը Դավթին էր թագավոր օծել, չնայած որ Եղիաբն էր ավագը: Թվում էր, թե նա ուներ հզոր առաջնորդի և պատերազմողի առանձնահատկություններ: Նույնիսկ Սամվելը, երբ տեսավ Եղիաբին, մտածեց. «Իսկապես Տիրոջ օծյալն է իմ առջև»: Բայց Աստված օգտագործեց սա Սամվելին դաս տալու համար. «Բայց Տերը Սամվելին ասաց. «Նրա երևույթին և հասակի երկայնությանը մի նայիր, որովհետև նրան անարգեցի այն պատճառով, որ այն չէ բանը, որ տեսնում է մարդը, որովհետև մարդը տեսնում է աչքի առաջինը, բայց Տերը սրտին է նայում»» (Ա Թագ. 16.7):

Այսպիսով, ո՞ւմ սիրտն էր հպարտ: Աստված հայտնեց Սամվելին, որ Ինքը չի ընտրի Եղիաբին նրա հասակին ու երևույթին նայելով, ոչ էլ նրան մերժում է այս գործոնների համար: Աստված սիրտն է քննում: Երբ Աստված սրտում հպարտություն է գտնում, հակառակվում է այդ անձին (Հակոբ. 4.6):

Աստված մերժեց Եղիաբին, որովհետև նա հպարտ էր իր սրտում: Այնպես որ Եղիաբի մեջ կար այն, ինչում նա մեղադրում էր Դավթին՝ հպարտությունը:

Սովորաբար երկչոտությունը մեղադրում է քեզ անգամ ամենաթույլ բաների մեջ, որոնց ետևում ինքն է ջանում թաքնվել: Նրանք, ովքեր արտաքինից մաքուր են գործում, բայց ունեն անմաքուր սիրտ, միշտ կհարձակվեն սրտով մաքուրների վրա: Հիշի՛ր, որ մաքուր սիրտ ունեցող Տիմոթեոսը վախեցած էր: Ես վստահ եմ, որ Եփեսոսի եկեղեցում կային տղամարդիկ և կանայք, որոնց սրտերը

Եղիաբի նման այլասերված էին:

Հիսուսը հաճախ էր դեմ առ դեմ հանդիպում երկչոտությանը: Անմաքուր փարիսեցիները և դպիրները փորձում էին հուսահատեցնել Նրան կամ բռնել Հիսուսին Իր խոսքերով: Եթե նրանք կարողանային վախեցնել Հիսուսին, կարող էին նաև վերահսկել Նրան: Այսպես, նրանք ասում էին, որ Հիսուսը դավաճան էր, որկրամոլ, հարբեցող և իր մեջ դև ունեցող մեղավոր: Սրանք այն առանձնահատկություններն էին, որ նրանցից շատերն ունեին: Մերժելով նրանց վերահսկողությունը՝ Հիսուսը բացահայտում էր նրանց սրտերը:

Ինչո՞ւ են անմաքուր սիրտ ունեցողները ջանում վախեցնել մաքուր սիրտ ունեցողներին: Դրանով նրանք ուզում են իրենց ազատել դատապարտումից և պահպանել վերահսկումը: Եթե դա նրանց հաջողվում է, ապա իրենց սրտերը նրանք չեն քննում ու չեն ապաշխարում: Եղիաբը գիտեր, որ իր հուսահատեցնող և վախեցնող հարձակումը իր եղբայր Դավթին կստիպի հպատակվել իրեն և կազատվի իր ճնշումներից:

Դավիթն այն միակն էր, որին դեմ կանգնեցին: Նա հարձակման տակ էր, և նրա մեծ եղբայրը շատ ավելի խոշորամարմին էր, քան ինքը: Հիշի՛ր, մեծ եղբայրները կարող են անախորժություններ ստեղծել փոքրերի համար: Եթե Դավիթը չաներ Եղիաբի ուզածը, հետո շատ դժվարություններ կունենար տանը: Նրանից շատ ժամանակ կպահանջվեր ճշմարտությունը պաշտպանելու համար: Արժե՞ր արդյոք:

Դա միակ ճնշումը չէր Դավթի վրա: Մյուսներն աջակցում էին Եղիաբին: Նրանք երբեք չէին ցանկանում, որ մի կարմրաթուշ երեխայի միջոցով բացահայտվեր իրենց վախը: Դավթի համար ավելի հեշտ կլիներ նահանջել և այլևս չհետապնդել: Սա հենց այն էր, ինչ ցանկանում էին Եղիաբը և մյուսները:

Դավիթն ընտրեց Աստծո կողմն անցնելը՝ կոտրելով իր դեմ

ուղղված երկչոտությունը: Նա հարցրեց Եղիաբին. «Հիմա ես ի՞նչ եմ արել. այս բան չէ՞» (Ա Թագ. 17.29): Իրականում նա ասում էր. «Մի՞թե այն, ինչ ես ասացի, ճիշտ չէ: Որտեղ է ձեր խիզախությունը: Ես չեմ վախենում: Ակնհայտ է, որ այն պահից, երբ բոլորդ վախեցել եք քառասուն օր շարունակ, Աստված պետք է ինչ-որ մեկին գտներ, ով չէր վախենա և ով կկռվեր այս անթլպատ փղշտացու դեմ: Ահա սրա պատճառով է, որ ես այստեղ եմ»:

Հետո Դավթին տարան թագավորի առաջ: Սավուղը, որը նույնպես վախեցած էր Գողիաթից, համոզում էր Դավթին՝ ասելով. «Դու չես կարող այն փղշտացու վրա գնալ և նրա հետ մարտնչել, որովհետև դու երիտասարդ ես, բայց նա իր մանկությունից ի վեր պատերազմի մարդ է» (Ա Թագ. 17.33): Սրանք մեղադրանքի խոսքեր չէին մեծ եղբոր հայտարարության համեմատ, այլ վախեցած թագավորի կողմից արված ոչ կարևոր դիտողություն:

Դավիթը թագավորին այսպես պատասխանեց.

> *«Ծառադ իր հոր ոչխարները արածեցնում էր, և առյուծը կամ արջը գալիս էր և հոտերից ոչխար էր տանում: Ես նրա ետևից գնում էի, նրան զարկում և նրա բերանից ազատում էի: Եվ երբ նա վեր էր կենում ինձ վրա, մորուքից բռնում էի, զարկում և մեռցնում: Ծառադ առյուծ էլ է մեռցրել՝ արջ էլ, և այս անթլպատ փղշտացուն էլ թող նրանց մեկի պես լինի, որովհետև կենդանի Աստծո զորքերին նախատեց: Եվ Դավիթն ասաց. «Եհովան, որ առյուծի և արջի ձեռքից ինձ ազատեց, այս փղշտացու ձեռքից էլ կազատի»» (Ա Թագ. 17.34-37):*

Իր եղբայրների և զինվորների հետ խոսելիս Դավիթը շատ համարձակ էր և դիմադրող: Այնուամենայնիվ, երբ նա խոսում էր թագավորի հետ, գիտեր, որ դիմում է մեկին, ով իշխանություն ուներ իր վրա:

Նա աղերսում էր թագավորին այնպես, ինչպես որդին հորը: Նա

ներկայացրեց իր փորձառությունը և վկայում էր, որ Տերն էր իր Ազատողը՝ հավատալով, որ թագավորը ճիշտ որոշում կկայացնի:

Այս որոշման պարտավորությունն ու պատասխանատվությունը ընկած էր թագավորի վրա: Եթե ճակատամարտում պարտվեին, ազգը կգնար ստրկության: Դավիթը գիտեր, որ եթե ինքը որոշեր կռվել, Աստված կփոխեր թագավորի սիրտը: Շատ կարևոր է, որ գործելու այս կարգի մեջ մենք գործենք նրանց հետ, ովքեր իշխանություն ունեն մեզ վրա: Դավթի խոսքից հետո Սավուղը համաձայնեց թույլ տալ նրան կռվել: Նա ասաց. «Գնա՛, և Տերը քեզ հետ լինի»:

Դավիթը մերժեց Սավուղի տված հանդերձները՝ զենքն ու զրահը, որովհետև սովոր չէր դրանք կրել, վերցրեց իր ցուպն ու պարսատիկը և գնաց դեպի վտակը՝ հինգ ողորկ քարեր վերցնելու: Երբ փղշտացին մոտեցավ, Դավիթը դեմ առ դեմ հանդիպեց նրա հաղթական վախի ամենամեծ մարտահրավերին: Եթե Դավիթը վախենար, դա ոչ միայն պատճառ կդառնար, որ Աստծո պարգևը հանգեր, այլև նա կկորցներ իր կյանքը և երկիրը կտաներ ստրկության:

> *«Եվ երբ փղշտացին նայեց և Դավթին տեսավ, արհամարհեց նրան, որովհետև նա կարմիր գույնով և գեղեցկադեմ պատանի էր: Եվ փղշտացին ասաց Դավթին. «Մի՞թե ես շուն եմ, որ ինձ վրա ցուպով ես գալիս»: Եվ փղշտացին նզովեց Դավթին իր աստվածներով: Եվ փղշտացին ասաց Դավթին. «Եկ ինձ մոտ, և ես քո մամինը երկնքի թռչուններին և դաշտի գազաններին տամ»» (Ա Թագ. 17.42-44):*

Գողիաթը փորձում էր Դավթին վախեցնել ոչ միայն իր չափերով, այլև իր խոսքերով: Դավթին անիծելուց հետո այս հսկան նկարագրեց մի ազդեցիկ պատկեր, թե ինչ էր մտադրվել անել Դավթի հետ:

Շատ լավ հասկանալով սա, Դավիթը երբեք չկասկածեց իր ուժի և զորության Աղբյուրի վրա:

«Եվ Դավիթն ասաց Փղշտացուն. «Դու սրով, նիզակով և գեղարդով ես գալիս ինձ վրա, բայց ես գալիս եմ քեզ վրա Զորաց Տիրոջ՝ Իսրայելի զորքերի Աստծո անունով, Որին դու նախատեցիր: Այսօր Տերը քեզ իմ ձեռքը կմատնի, ու ես քեզ կմեռցնեմ և քո վրայից գլուխդ կառնեմ և փղշտացիների բանակի դիակներն այսօր երկնքի թռչուններին և երկրի գազաններին կտամ, որպեսզի բոլոր երկիրը իմանա, որ Իսրայելը Աստված ունի: Եվ այս բոլոր ժողովքը իմանան, որ Տերը սրով և նիզակով չէ ազատում, որովհետև պատերազմը Տիրոջն է, և Նա ձեզ մեր ձեռքը կմատնի»» (Ա Թագ. 17.45-47):

Դավիթը համարձակորեն հռչակեց Աստծո հավատարմությունը: Իսրայելի մարդիկ միայն տեսել էին, թե որքան մեծ էր այդ հսկան, բայց Դավիթը տեսնում էր, թե որքան մեծ է Աստված: Իսրայելի մարդիկ տեսան, երբ Դավիթը վազեց Աստծո թշնամու վրա, ոչ միայն նրա համարձակ խոսելը տեսան, այլև համարձակ գործելը:

«Եվ Դավիթն իր ձեռքը իր մախաղի մեջ կոխեց և այնտեղից մի քար առավ, պարսով շպրտեց և փղշտացու ճակատին զարկեց, և քարը նրա ճակատի մեջ փորվեց, և նա երեսի վրա գետինն ընկավ» (Ա Թագ. 17.49):

Դավթի համարձակությունը վարակիչ էր, և Իսրայելի հույսը վերականգվեց: Աստված նրանց կողմից էր, մինչդեռ փղշտացիներն ունեին միայն մեկ մեռած հերոս: Իսրայելցիները հարձակվեցին և հետապնդեցին փղշտացիներին՝ հաղթելով նրանց:

Այս պայքարի ընթացքում Դավիթը երեք անգամ դեմ առ դեմ հանդիպեց երկչոտությանը: Առաջինը այն ժամանակ էր, երբ նրա եղբայրներն ու զինվոր ընկերները փորձում էին ամեն ինչ անել Դավթին ստորացնելու, զրպարտելու և հուսահատեցնելու համար: Եթե նա մտներ նրանց վախի իշխանության տակ, դրանով ետ կկանգներ Աստծուց իր սրտի մեջ դրվածը իրականացնելուց: Դավիթը կշրջվեր ու կգնար տուն, իսկ Աստծո պարգևը կհանգեր:

Հետևանքներն այլ կլինեին: Հսկան չէր սպանվի Դավթի կողմից: Գողիաթը կշարունակեր ճնշել ազգին, իսկ Աստված էլ կփնտրեր մեկ ուրիշին՝ Իր գործն անելու համար:

Երկրորդ անգամ, Դավիթը վախեցավ, երբ դեմ առ դեմ հանդիպեց թագավորի հուսահատեցնող և նսեմացնող հայտարարություններին: Եթե Դավիթը նահանջեր, ապա Աստծո պարգևը քնած կմնար, բայց նա մերժեց նույնիսկ թագավորից վախենալը: Դավիթը պահեց իր հարգանքը ազգի առաջնորդի նկատմամբ, բայց կարողացավ համոզել թագավորին, որ թույլ տա իրեն կռվել:

Երրորդ անգամ, երբ Դավիթը դեմ առ դեմ հանդիպեց փղշտացի հսկային, նրա մեջ կրկին վախ առաջացավ: Ոչ միայն նրա հասակն էր անհաղթահարելի, այլև այս մարդը շատ համարձակ էր: Գողիաթը փորձում էր այնպես անել, որ Դավիթը իրեն զգար մի փոքրիկ կենդանուց էլ թույլ ու աննշան: Եթե Դավիթը մնար նրա վախի ազդեցության տակ, Աստծո պագևը դարձյալ քնած կմնար, և Դավիթը կկորցներ կյանքը:

Դավիթն այնքան համարձակ էր Աստծո զորությամբ, որ ընդունակ եղավ իր կյանքը վտանգի ենթարկել: Նրա մեջ այս համարձակությունն արթնացրեց Աստծո պարգևը, և Դավիթը հաղթեց հսկային, որը քառասուն օր շարունակ վախեցնում ու ճնշում էր ողջ բանակին:

Նոր ուխտի զորությունը

Պողոսը Կորնթոսի եկեղեցուն ուղղած իր նամակում համեմատություն էր անում մահվան ծառայության փառքի (Հին ուխտի) և Հոգու ծառայության փառքի (Նոր ուխտի, Բ Կորնթ. 3.7,8) միջև: Պողոսն ասում էր, որ եթե Հին ուխտն այնքան փառավոր էր, որ Իսրայելի որդիները չէին կարող մշտապես նայել Մովսեսի դեմքին, ուրեմն որքա՜ն ավելի զորավոր է Նոր և կյանք տվող ուխտի ծառայությունը:

Պողոսն այս «նորը» նկարագրում էր այսպես. «Բայց այս անձն ունենք հողի անոթներում, որ զորության գերազանցությունը Աստծունը լինի և ոչ թե մեզանից» (Բ Կորնթ. 4.7): Ահա մի մարդ, ով գիտի իր Աստծուն և գիտակցում է, որ այդ ուժն ու զորությունը իրենից չէ:

Պողոսը շարունակում է.

> *«Որովհետև, եթե այն խափանվողը փառքով էր, որքա՞ն ավելի փառքով է հաստատ մնացողը: Արդ, այսպիսի հույս ունենալով, շատ համարձակությամբ ենք վարվում» (Բ Կորնթ. 3.11,12):*

Զորությունը ծնում է համարձակություն: Դու կգտնես մեծ համարձակություն այն հավատացյալների մեջ, որոնք չեն վստահում իրենց սեփական ուժին: Նրանք չեն վախենում հանգամանքից, մարդուց կամ սատանայից, քանի որ Աստված է իրենց հետ: Սա մեր խոստումն է Եբրայեցիների 13.5,6-ում.

> *«Որովհետև Ինքն ասաց, թե չեմ թողնի քեզ և երեսից չեմ գցի: Այնպես որ համարձակ ենք ասելու՝ Տերն է իմ օգնականը, և ես չեմ վախենա, ի՞նչ կանի ինձ մարդը»:*

Մենք կարիք ունենք համարձակորեն հայտարարելու՝ *ի՞նչ կարող է անել ինձ մարդը:*

Այս նույն համարձակությունը կա յուրաքանչյուր հավատացյալի մեջ: Ինչո՞ւ ենք մենք կոչվում հավատացյալներ, եթե չենք հավատում: Իսկ ինչի՞ն հավատալ: Հավատա՛ Աստծուն: Ո՛չ մարդը, ոչ էլ սատանան իրավունք չունեն վախեցնելու ճշմարիտ հավատացյալին: Ինչո՞ւ: Հիսուսի պատճառով: Ո՛չ մի անուն բարձր չէ, ոչ մի զորություն մեծ չէ: Իր հետևյալ խոսքերում Հիսուսն ասում է. «Ահա՛ իշխանությունը տվի ձեզ՝ կոխել օձերի և կարիճների վրա, և թշնա-

մու բոլոր զորության վրա, և ձեզ ոչինչ չի վնասի» (Ղուկ. 10.19):

Մի՞թե ավելի պարզ չէ: Հիսուսն Իր ժողովրդին զորություն է տվել բոլոր այն բաների վրա, որ թշնամին ունի: Երկչոտությունն էլ է թշնամի: Այն խաբում է քեզ և ասում. «Ես ավելի իշխանություն կամ զորություն ունեմ, քան դու: Ավելի լավ է, որ դու նահանջես և անես այն, ինչ ես եմ ասում, իսկ եթե ոչ՝ հետևանքները վատ կլինեն»:

Եթե մենք հավատանք այս վախեցնող ստերին, Աստծո պարգևը կհանգի, և մենք կապրենք ճնշված վիճակում: Բայց երբ մենք ճանաչում ենք այն Մեկին, Ով խոստացել է հավատարիմ լինել, կհենվենք այն զորության վրա, որ բարձր է բոլոր զորություններից, և Դավթի նման մեծ համարձակությամբ դուրս կգանք մեր վախի հսկայի դեմ:

Մի՞թե քո հավատքն այնքան բարդ է, որ չես կարող հավատալ

Այս ճշմարտությունները հասկանալը դժվար չէ: Փաստորեն դրանք պարզ են: Ճշմարիտ Ավետարանը բարդ և խճճված չէ: Մարդիկ իրենց նպատակին չեն հասնում անհավատության պատճառով:

Այս հարցը տուր ինքդ քեզ և պատասխանիր անկեղծորեն. «Արդյո՞ք քո վստահությունը հիմնված է Աստծո ասածի վրա, թե քո տեսածի և փորձառության վրա»: Եթե դու ամեն ինչ չափում ես քո անցյալում կատարվածով, ապա դրանից ավել դու երբեք չես աճի:

Դու հիմնո՞ւմ ես քո հավատքն այն բաների վրա, ինչ տեսել ես ուրիշների կյանքում կատարված: Արդյո՞ք քո վստահության մակարդակը չափվում է ուրիշների հավատարմությամբ:

Եթե դու «այո» ես պատասխանում այս հարցերին, ուրեմն ավելի խորը քննիր սիրտդ: Բարդացրե՞լ ես ամեն ինչ՝ փորձելով բա-

ցատրել քո կամ ուրիշների անցյալի ձախողումները: Բարդ հավատքը չի սպանում հսկաներին: Այն մեզ բանտարկում է «հրաշքների» երկրի մեջ, որտեղ մենք փորձում ենք հասկանալ, թե ինչը չենք կարող փոխել և տատանվում ենք քայլ անելու հարցում:

Ինչո՞ւ մենք՝ հավատացյալներս, չենք կարող ուղղակի հավատալ: Ինչո՞ւ ենք թույլ տալիս, որ մեր կասկածները բարդացնեն Ավետարանը:

Ուզում եմ քեզ մի դեպք պատմել, որը երբեք չեմ մոռանա: 1980-ական թվականն էր: Ես ուսանող էի ու ապրում էի Հյուսիսային Կարոլինայում: Մի օր ես արթնացա առավոտյան ժամը չորսին իմ սեփական ձայնից. իմ ձայնը բղավում էր. «Ես ուղղակի փնտրում եմ ինչ-որ մեկին, ով կհավատա»:

Դա ցնցեց ինձ: Անկողինս քրտինքից թրջվել էր: Ես հասկացա, որ Աստված էր խոսել ինձ հետ մի անսովոր և գերբնական ձևով: Այդ պահին մտածում էի. «Որքա՜ն պարզորոշ էր լսվում Աստծո ձայնը: Ինչո՞ւ Նա ինձ ինչ-որ խորհրդաստ բան չասաց: Իհարկե ես գիտեմ, որ Նա կարիք ունի հավատացող մարդկանց»:

Հաջորդ առավոտ այդ բառերը պտտվում էին իմ գլխում: Ժամանակ առ ժամանակ ականջիս հասնում էր նույն շշուկը. «Ես ուղղակի փնտրում եմ մեկին, ով կհավատա: Ես ուղղակի փնտրում եմ ինչ-որ մեկին, ով կհավատա»: Երբ ես նորից ու նորից լսեցի, հասկացա, որ Նա ինչ-որ աննշան բան չէր ցույց տվել ինձ, այլ Աստծո հետ քայլելու միակ բանալին:

Ուշադրությամբ ուսումնասիրեցի Ավետարանները: Հիսուսը միայն վշտանում ու վհատվում էր մարդկանց անհավատությունից: Երբ աշակերտները չկարողացան դուրս քշել դևին մի երիտասարդի միջից, Հիսուսը խստորեն հանդիմանեց նրանց:

> *«Հիսուսն էլ պատասխանեց և ասաց. «Ո՛վ անհավատ և խոտորյալ ազգ, մինչև ե՞րբ պիտի ձեզ համբերեմ, նրան Ինձ մոտ բերեք»» (Մաթ. 17.16):*

Նախատինքի ինչպիսի՞ խոսքեր սեփական աշակերտների հասցեին: Հիսուսը թուլություն չուներ այսօրվա շատ ավագների պես: Նա աշակերտներին հասկացրեց, որ Աստծո պարգևը հանգած կմնա նրանց մեջ, եթե նրանք չկարողանան հավատալ: Հիսուսն ուզում էր, որ աշակերտները իմանային, որ Ինքը վշտացած էր:

Ես նաև ուշադրություն եմ դարձրել, թե ինչն էր հիացնում Հիսուսին: Նրանք ովքեր հավատում էին առանց հարցեր տալու, հիացնում էին Հիսուսին: Մի հեթանոս հռոմեացի զինվորական ավելի շատ ուշադրության արժանացավ իր հավատքի համար, քան մեկ ուրիշը Իսրայելում: Այս հռոմեացին ասաց Հիսուսին, որ կարիք չկա, որ Նա իր տուն գա. Նրա մի խոսքն էլ բավական է, որ իր ծառան բժշկվի. «Եվ երբ Հիսուսը լսեց, զարմացավ և ասաց ետևից եկողներին. «Ճշմարիտ ասում եմ ձեզ, Իսրայելի մեջ էլ այսպիսի հավատք չգտա»» (Մաթ. 8.10):

Մենք ուզում ենք, որ Հիսուսը գա մեր տուն, բայց պետք է հարցնենք Նրան, թե երբ կանի դա: Մենք հավատքը դժվար հասկանալի ենք դարձնում: Այսպիսով, ի՞նչ է հավատքը: Աստծուն հավատալը կանի այն, ինչ Նա է ասել, որ կանի:

Հիսուսն ասաց, որ Նա մեզ զորություն և իշխանություն է տվել թշնամու ողջ զորության վրա: Ամենը, ինչ պետք է անենք, Նրան հավատալն է և հետո այդ զորության և իշխանության մեջ քայլելը: Մենք կարիք չունենք մեր ընթացքը բարդացնել վախի, կասկածի կամ մեր անցյալի թերությունների ու ձախողումների հիշողություններով: Եթե այդպես վարվենք, կզրկվենք մեր համարձակությունից ու անընդունակ կդառնանք Աստծո կարողությամբ քայլելու համար: Աստծո պարգևը կհանգի մեր մեջ:

Նախքան մեր նավակից դեպի կյանքի ալեկոծված ջրեր համարձակորեն քայլ անելը, պետք է իմանանք մեր սրտի շարժառիթները, որպեսզի չսուզվենք: Հաջորդ գլխում կխոսենք այն բանի մասին, որ տարբերություն կա քեզ կանգնեցնելու համար օգնող և քեզ սուզող շարժառիթների միջև:

Հեշտ է համարձակ լինել այն ժամանակ, երբ Աստված անում է այն, ինչ մենք ակնկալում ենք։

Երկչոտության արմատը

Կենսուրախ, շփվող լինելը չի ապացուցում, որ ապրում ես երկչոտությունից ազատ: Ես ճանաչել եմ շատ կենսուրախ մարդկանց, ովքեր պայքարում էին երկչոտության դեմ: Իրականում, երբեմն նրանց կենսուրախությունը պարզապես երկչոտությունը թաքցնելու ծածկոց է, որի դեմ նրանք կռվում են իրենց ներսում: Լռակյացությունը երկչոտության միակ ախտանիշը չէ: Որոշ մարդիկ, որոնք շփոթված վիճակում են, ավելի շատ են խոսում:

Նշանակություն չունի, թե ինչքան օծված ես դու: Դու էլ կարող ես երկչոտ լինել: Ես ճանաչել եմ մարդկանց, որոնք զորավոր են եղել ծառայության մեջ, մինչդեռ պայքարի մեջ են եղել երկչոտության հետ: Երբ նրանց վրա օծություն էր իջնում, նրանք դառնում էին անվախ. նրանց թուլությունը ծածկվում էր Աստծո օծության մեջ: Բայց երբ օծության ծածկոցը հեռանում էր, դառնում էին վախի և անապահովության հետ պայքարող մարդիկ: Մարդկանց հետ շփվելիս նրանց ամաչկոտությունը անթաքույց է: Ինչի՞ց գիտեմ, որ այս ամենը ճիշտ է: Որովհետև ես ինքս այդպիսին էի:

Դու կարող ես կենսուրախ, ուժեղ, համարձակ, նույնիսկ օծված լինել և, միևնույն ժամանակ, շարունակել պայքարել երկչոտության դեմ: Երբ ճնշումը բավականին ուժեղանում է, բացահայտ-

վում է քո իրական էությունը: Երկչոտության հոգի ունենալը կապ չունի անհատականության, ֆիզիկական ուժի կամ օծության պակասի հետ: Այսպիսով, ի՞նչն է մարդկանց դարձնում երկչոտության գերի:

Արտաքին երևույթը հակառակ է ճշմարտությանը

Պատասխանի համար նայիր Սիմոն-Պետրոսին: Նա կենսուրախ էր, երբեք չէր ամաչում բարձրաձայն ասել իր կարծիքը: Պետրոսը համարձակ էր: Արտաքուստ նա ուժեղ կամք ունեցող ու անվախ մարդ էր: Թվում էր, թե ոչինչ չէր կարող վախեցնել Պետրոսին, բայց, այնուամենայնիվ, ինչ որ բան վախեցրեց նրան: Մեռնելու վախը պատճառ դարձավ, որ Պետրոսը երեք անգամ ուրանար Հիսուսին: Այնպես որ երկչոտությունից ազատ լինելու կարողությունն ուժեղ անհատականություն ունենալու մեջ չէ: Ավելի քիչ հավանական էր Պետրոսի՝ Հիսուսին ուրանալը, քանի որ նա Հիսուսին շատ հավատարիմ էր:

Ոմանք մեղադրում են Սիմոն-Պետրոսին՝ պատճառաբանելով, որ երբ եկավ գործելու ժամանակը, այդ պահին Պետրոսը իսկական «հավ» էր: Սրան ես պատասխանում եմ հարցով. «Իսկ որքա՞ն «հավեր» համարձակություն կունենային կանգնել զինված ամբոխի դեմ և հարձակման անցնել»: Պետրոսը համարձակորեն արեց դա: Հովհաննեսի 18.3,10-ում գրված է.

> *«Եվ Հուդան, զինվորների գունդը և քահանայապետերից և փարիսեցիներից սպասավորներ առնելով, եկավ այնտեղ ջահերով և լապտերներով և զենքերով... Բայց Սիմոն-Պետրոսը, որ սուր ուներ, քաշեց նրան և քահանայապետի ծառային զարկեց և նրա աջ ականջը կտրեց գցեց»:*

Սա ինձ համար հավի արարք չէ: Այսպիսով, ինչո՞ւ Սիմոն-Պետ-

րոսը արհամարհեց զինվորներին և վախեցավ մի աղախնից: Այո՛, դա ճիշտ է, նա վախեցավ: Մի աղախին վախեցրեց նրան: «Եվ Պետրոսը դուրսը նստած էր սրահում, և մեկ աղախին եկավ նրա մոտ և ասաց. «Դու էլ Գալիլեացի Հիսուսի հետ էիր»: Նա էլ բոլորի առաջին ուրացավ և ասաց. «Ես չեմ իմանում, թե դու ինչ ես ասում»» (Մաթ. 26.69,70):

Ինչո՞ւ փոխվեց նա:

Ցուցադրական համարձակություն

Պատասխանելու համար ե՛կ վերադառնանք այդ երեկո կատարվածին: Բոլոր աշակերտները միասին տոնում էին Զատիկը: Հիսուսը զգուշացրեց նրանց. «Դուք ամենքդ այս գիշեր կգայթակղվեք Ինձանից» (Մաթ. 26.31): Բայց Պետրոսը իրեն բացառեց և համարձակորեն հայտարարեց. «Թեև ամենքը գայթակղվեն Քեզանից, ես երբեք չեմ գայթակղվի» (Մաթ. 26.33): Քաջալերանքի ինչպիսի՜ համարձակ ցուցաբերում: Թվում է, թե Հիսուսը սխալվել էր, երբ Պետրոսին էլ էր ներառել այդ մարդկանց մեջ:

Բայց Հիսուսը ուղիղ նայեց Պետրոսի հոգու մեջ և, ուղղելով նրան, ասաց. «Ճշմարիտ ասում եմ քեզ, այս գիշեր՝ դեռ հավը չխոսած, երեք անգամ կուրանաս Ինձ» (Մաթ. 26.34): Ինչպիսի՜ հարված Պետրոսի վստահությանը: Հիսուսը Պետրոսին ասաց, որ ոչ միայն կգայթակղվի, այլև կուրանա Իրեն:

Թույլ մարդը սրա պատճառով կարող է նահանջել: Միգուցե Վարդապետը սխալվո՞ւմ էր: Բայց Պետրոսը մինչև վերջ պաշտպանեց իր դիրքը. «Եթե Քեզ հետ մեռնելու էլ լինեմ, չեմ ուրանա Քեզ» (35 խոսք): Փաստորեն այս համարձակ հայտարարությունը մյուսներին էլ ոգեշնչեց համաձայնվել. «…այնպես էլ բոլոր աշակերտներն էին ասում» (35 խոսք):

Շարժառիթները կարող են տարբեր լինել արտաքին երևույթներից

Թվում էր, որ այս մարդիկ ունեին մեծ խիզախություն և ճիշտ շարժառիթներ: Ավելի խորը քննելով մենք հայտնաբերում ենք ոչ թե դրդապատճառ հանդիսացող Աստծո սերը, այլ մեկ ուրիշ բան:

Մինչև աշակերտներին զգուշացնելը՝ Հիսուսը կիսվեց նրանց հետ. «Սակայն ահա Իմ մատնողի ձեռքն Ինձ հետ սեղանի վրա է» (Ղուկ. 22.21): Որքան սարսափելի էր, որքան ահավոր, որ նրանցից մեկը կարող էր մատնել Հիսուսին: Մեկը, որը ապրել և քայլել էր Նրա հետ, մեկը, որի համար Նա հոգ էր տարել, հիմա պետք է իր ձեռքը բարձրացներ Նրա՝ Մեսիայի վրա:

Չնայած որ Հիսուսը գիտեր և հենց սկզբից էլ իմացել էր, թե ով էր նա և ինչ էր անելու, Նրա աշակերտները առաջին անգամ էին լսում սրա մասին: Կարո՞ղ ես պատկերացնել այն սոսկումն ու կասկածը, որ տարածվեց սենյակում այս հայտարարությունից հետո. «Եվ նրանք սկսեցին հարցուփորձ անել իրենց մեջ, թե իրենցից ո՞վ է արդյոք նա, որ այն բանը գործելու է» (Ղուկ. 22.23): Աշակերտները շփոթված էին և չէին հավատում, որ իրենցից որևէ մեկը ընդունակ կլինի անհավանական չարություն անելու: Ուրեմն ի՞նչն էր նրանց քննարկման շարժառիթը: Անկասկած այն պետք է լիներ Հիսուսի համար անհանգստանալը: Բայց արդյո՞ք դա այդպես էր: Աշակերտների զրույցը մատնեց նրանց: Նայենք հաջորդ խոսքը.

> *«Նրանց միջում մի վեճ էլ եղավ, թե իրանցից ո՞վ պիտի մեծ համարվի» (Ղուկ. 22.24):*

Ինչպես պարզ տեսնում ենք, նրանց պարզաբանման հիմքը եսասիրությունն ու հպարտությունն էր: Հիսուսն աշակերտներին ասաց, որ Ինքը մատնվելու էր քահանայապետերին՝ մահվան դատապարտվելու համար, իսկ աշակերտները սկսեցին ձգտել իշխա-

նության ու դիրքի: Ինչպիսի՜ եսասիրություն:

Մենք կարող ենք կռահել, թե ով էր առաջնորդում վեճը: Ավելի հավանական է, որ դա Սիմոն-Պետրոսն էր, որն անցյալում ունեցել էր ավագ լինելու ձգտում և իշխող անհատականություն էր, իսկ հիմա գործում էր այդ հիմքից դրդված:

Հավանաբար նա շտապում էր մյուսներին հիշեցնել, որ Ինքն այն միակն էր, որ բավականին խիզախ էր ջրի վրա քայլելու համար (Մաթ. 14.28-31): Միգուցե Պետրոսը թարմացնում էր ընկերների հիշողությունը, որ ինքը մատնանշեց, թե իրականում Ով էր Հիսուսը (Մաթ. 16.15,16), կամ էլ թե ինչպես նա ունեցավ իր փորձառությունը այլակերպության սարի վրա Հիսուսի, Մովսեսի և Եղիայի հետ (Մաթ. 17.1-8):

Պետրոսը բավական համարձակ էր ապացուցելու համար, որ ինքը ամենամեծն էր տասներկուսի մեջ: Բայց արդյո՞ք այս համարձակությունն արմատավորված էր սիրո վրա: Ես վստահ եմ, որ Պետրոսը մտածում էր, թե արդեն իր կարևորությունը հիշեցնելու ժամանակն էր: Մինչդեռ հետո պարզվելու էր, որ իրականությունն այլ էր լինելու: Նրա համարձակությունը հիմնված էր հպարտության և եսասիրության վրա:

Մտապահելով այս ամենը՝ շարժվենք առաջ:

Ձիթհան

«Այն ժամանակ Հիսուսը նրանց հետ մի տեղ եկավ՝ անունը Գեթսեմանի, և ասաց աշակերտներին. «Այդտեղ նստեք, մինչև որ Ես գնամ աղոթք անեմ այնտեղ»» (Մաթ. 26.36):

«Գեթսեմանի» բառը բառացի նշանակում է «ձիթհան» (ձեթ հանող): Ձիթհանը ձիթապտղից ձեթ է քամում: Ձիթապտուղն ինքն իրենից ձեթ չի արտազատում: Միայն երբ մեծ ճնշում է գործադրվում, ձեթը դուրս է գալիս ձիթապտղի ներսից: Գեթսեմանին այդ-

պիսի ճնշման վայր է, ոչ թե ձիթապտուղների, այլև սրտերի: Ուժգին ճնշման տակ մեր ներսում եղածը դուրս կգա՝ հաճախ անակնկալի բերելով մեզ: Այլ կերպ ասած՝ քո սրտի շարժառիթները փորձվում և բացահայտվում են, երբ գալիս են փորձությունները (ճնշումները):

Երբ Հիսուսը Պետրոսի, Հակոբոսի և Հովհաննեսի հետ գնաց Գեթսեմանի, սկսեց տրտմել և վշտանալ (Մաթ. 26.37): Հիսուսի անձը «չափազանց վշտացած» էր, որովհետև Նա ձիթհանի մեջ էր: Նա Իր ամենամեծ ճակատամարտի՝ Հոր կամքը այլ ձևով իրագործելու փորձության մեջ էր, որով Նա կփրկեր Ինքն Իրեն:

Որոշ մարդիկ չեն հավատում, որ Հիսուսը հնարավորություն ուներ մեղք գործելու: Մենք պետք է հիշենք, որ Հիսուսը փորձվեց «ամեն բանով... մեր նմանությամբ, բայց առանց մեղքի» (Եբր. 4.15): Փորձված լինել նշանակում է պայքարել ինչ-որ բանի դեմ: Հիսուսն Իրեն չէր պաշտպանում պայքարներից և միշտ հաղթանակած դուրս գալու ապահովության մասին չէր մտածում: Ինչո՞ւ: Որովհետև Իր սեփական կամքը չէր կատարում: Եթե Հիսուսի համար անհնար լիներ մեղք գործելը, ապա նաև անհնար կլիներ փորձվելը: Սա չի պակասեցնում Հիսուսի փառքը, այլ ավելին, ընդգծում է, թե որքան արժանավոր է Նա, որովհետև մեղք չգործեց: Ալելուիա՜:

Հիսուսը պարտեզում խնդրում էր. «Իմ Հա՛յր, եթե կարելի է, թող այս բաժակն Ինձանից անցնի, սակայն ոչ թե ինչպես Ես եմ կամենում, այլ ինչպես Դու» (Մաթ. 26.39):

Այս պայքարի ճնշումը մոլեգնում էր Հիսուսի Հոգու մեջ: Երևում էր, որ միայն մեկ բան կարող էր Նրան ետ մղել. Նա կարող է ընտրել Հոր կամքն իրագործելու մեկ այլ տարբերակ և դրանով կփրկեր Ինքն Իրեն: Ավելի վաղ Հիսուսն ասել էր փարիսեցիներին, որ Ինքը իշխանություն ունի Իր կյանքը դնելու (Հովհ. 10.17,18): Աստված չստիպեց Նրան անել դա, դրա համար էլ Նա մենակ էր պայքարում:

Հիսուսը գիտեր, որ այս պայքարը կար Իրենից առաջ՝ մինչև Գեթսեմանի պարտեզում Իր ծնկի գալը: Սրա մասին Հիսուսը կիսվեց Իր աշակերտների հետ երեք անգամ՝ մինչև նրանց Երուսաղեմ գալը: Հիսուսը նրանց ասաց, որ Իր Հոր կամքն էր, որ Ինքը չարչարվեր, մահանար և մեռելներից հարություն առներ:

Խաչելությունից մի քանի օր առաջ Հիսուսը գաղտնիքը վստահեց Իր աշակերտներին՝ ասելով. «Հիմա Իմ անձը խռոված է, և ի՞նչ ասեմ՝ Հա՛յր, ազատի՞ր Ինձ այս ժամից, սակայն սրա համար եկա այս ժամի մեջ: Հա՛յր, փառավորիր Քո անունը» (Հովհ. 12.27,28):

Հիսուսը պետք է Իր կյանքը զոհեր, որպեսզի դրանով Հոր անունը փառավորվեր: Նա այս սկզբունքի մասին հենց նոր էր կիսվել Իր աշակերտների հետ: «Իր անձը սիրողը՝ կկորցնի նրան, և իր անձն ատողը այս աշխարհում հավիտենական կյանքի մեջ կպահի նրան» (Հովհ. 12.25):

Այս խոսքը տալիս է երկու հարցի պատասխան: Առաջինն այն է, թե ինչու Պետրոսը չկարողացավ հետևել իր տված երդումին, և երկրորդը՝ թե ինչու Հիսուսը կարողացավ: Հիսուսը Հորն Իր սեփական կյանքից ավելի էր սիրում, դրա համար էլ Նա կարողացավ զոհել Իր կյանքը: Պետրոսը կարծում էր, որ ինքը Հիսուսին իր սեփական կյանքից ավելի էր սիրում, բայց Գեթսեմանիի «ձիթհանը» բացահայտեց նրա շարժառիթները:

Պարտեզում բավական չէր միայն այն, որ Հիսուսը գիտեր Հոր կամքը: Հիմա Նա պետք է կատարեր այդ կամքը: Սա այնքան դժվար էր, որ Նա խնդրում էր Հորը, թե արդյոք հնարավոր չէ՞ր մեկ այլ ձևով իրականացնել կամքը: Աղոթքի մեջ Հիսուսը պայքարում էր ինքնապահպանման այս փորձության դեմ և դիմադրում էր արյան քրտինք թափելու աստիճան (Ղուկ. 22.44):

Փորձությունը հաղթելու Հիսուսի զորությունը արմատավորված էր Հոր նկատմամբ սիրո և Իր անձը չսիրելու վրա: Հիսուսն Իր անձը կորցրեց Իր Հոր հանդեպ ունեցած սիրուց ելնելով (Հովհ.

14.31): Այս սերը հաղթում է նրան, ինչին ոչ մի մարդ նախկինում չէր հաղթել՝ անձի նկատմամբ ունեցած սիրուն: Ձեթը դուրս եկավ՝ ապացուցելով Հոր հանդեպ Հիսուսի սերը ոչ միայն խոսքով, այլև զոհաբերությամբ և հնազանդությամբ:

Հիմա տե՛ս, թե ինչ ազդեցություն ունեցավ այդ «ձիթհանը» կամ ճնշումը Պետրոսի և մյուս աշակերտների վրա:

Հոժար հոգի, տկար մարմին

Մոտ մեկ ժամ Իր կամքի հետ պայքարելուց հետո Հիսուսը վեր կացավ, գնաց Իր աշակերտների մոտ և «նրանց գտավ տրտմությունից քնած» (Ղուկ. 22.45): Աշակերտները երկար չքննարկեցին, թե ով էր ամենամեծը: Նրանք ծանրացան վշտից և տխրությունից: Հիսուսը միակը չէր, որ ճնշման տակ էր: Նրա աշակերտները ևս «ձիթհանի» մեջ էին:

Աշակերտները դեմ առ դեմ հանդիպել էին իրենց անձերը փրկելու փորձությանը: Նրանք այլևս ուժ չունեին դիմանալու, որովհետև կենտրոնացած էին իրենց սեփական կամքի, այլ ոչ թե Հոր կամքի վրա: Ի տարբերություն Հիսուսի՝ նրանք չէին ցանկանում իրենց կամքը հնազանդեցնել Աստծո կամքին: Եթե մենք մտածենք, որ մեր սեփական կյանքը թանկ է, մենք չենք պայքարի այն դնելու կարողության համար:

Մտածի՛ր սրա վրա: Այն ժամանակ, երբ Հիսուսը պայքարի մեջ էր Իր կյանքը կորցնելու մտքի հետ, աշակերտները քնելով խուսափեցին պայքարից: Հիսուսը հատկապես Պետրոսի հետ խոսեց. «Այդպես, մեկ ժամ է՞լ չկարողացաք Ինձ հետ արթուն մնալ: Արթուն կացե՛ք և աղոթք արե՛ք, որ փորձության մեջ չմտնեք. հոգին հոժար է, բայց մարմինը տկար» (Մաթ. 26.40,41):

Ահա Պետրոսը, որը համարձակ խոստումներով մարդ էր, աղոթելու փոխարեն քնել էր: Նա դեռ չէր սովորել հենվել մի ուժի վրա,

որն իր սեփականը չէր: Քնելով նա պաշտպանեց իր կարծեցյալ ուժը:

Մեր հոգիները կամ սրտերը կարող են հոժար լինել, բայց մեր մարմինը միշտ կփնտրի ինքն իրեն պաշտպանելը: Հետևաբար, եթե մեր մարմինը խաչված չէ, մենք նրան կտանք այն, ինչ նա ցանկանում է: Պետրոսն ուզում էր հավատարիմ լինել Հիսուսին, բայց չկարողացավ, որովհետև մարմինը իշխանություն ուներ նրա վրա: Պետրոսն ավելի շատ սիրում էր իր կյանքը, քան ցանկանում էր Աստծո կամքը: Նա չճանաչեց իր սրտի իրական վիճակը: Պետրոսը լուրջ էր վերաբերում իր ասածին և ճշմարտապես հավատում էր, որ իր կյանքը կզոհի Հիսուսի համար: Այնուամենայնիվ այս «ճնշումից» հետո բացահայտվեց այն, ինչը նախօրոք դրսևորվել էր Վերջին Ընթրիքի ժամանակ, այսինքն՝ եսասիրությունն ու հպարտությունը:

Երկու տարբեր արդյունքներ

Այն բանից հետո, երբ Հիսուսը աշակերտներին քնած գտավ, գնաց երկրորդ անգամ աղոթելու: Երբ Նա վերադառձավ, աշակերտներին նորից քնած գտավ, քանի որ «նրանց աչքերը ծանրացել էին» (Մաթ. 26.43): Նույնիսկ երբ Հիսուսը զգուշացրեց նրանց, դրանից հետո էլ աշակերտներն արթուն չմնացին:

«Նրանց թողեց՝ դարձյալ գնաց, և երրորդ անգամ աղոթք արեց և միևնույն խոսքն ասաց: Այն ժամանակ գալիս է Իր աշակերտների մոտ և նրանց ասում. «Այսուհետև քնեք և հանգստացեք, որ ահա հասել է ժամը»» (Մաթ. 26.44,45):

Հիսուսը երեք ժամ այնքան աղոթեց, մինչև իմացավ, որ հաղթել է պայքարի մեջ: Նրա կամքն ամբողջապես մեկ էր Հոր կամքի հետ: Այժմ Հիսուսը պատրաստ էր դեմ առ դեմ կանգնել հրեա առաջնորդների և հռոմեացի զինվորներից եկած թշնամու վախին:

Հիսուսի ամուր կանգնելու կարողությունը նույնիսկ հալածանքի այդ հնոցի մեջ ապշեցրեց հռոմեացի կառավարչին: «Եվ երբ որ քահանայապետերից և ծերերից ամբաստանվում էր, ոչինչ չպատասխանեց: Այն ժամանակ Պիղատոսը ասաց Նրան. «Չե՞ս լսում՝ որչա՞փ բաներ են վկայում Քեզ հակառակ»: Եվ Նա նրան ոչ մեկ բան էլ չպատասխանեց, մինչ որ կուսակալն էլ շատ զարմացավ» (Մաթ. 27.12-14):

Համարձակությունն այն չէ, թե որքան բարձր կամ որքան շատ ենք մենք խոսում: Այն գտնում ենք նաև լռության մեջ: Դու լռում ես այնքան ժամանակ, քանի դեռ սուտ մեղադրանքներ են շպրտում երեսիդ: Հիսուսը մնում էր Իր իշխանության մեջ՝ չարձագանքելով մեղադրանքներին: Նա գիտեր, որ նրանք ոչ մի իշխանություն չունեին Իր վրա: Արձագանքելը ցույց կտար, որ նրանք ունեն այդ իշխանությունը: Քահանայապետերը ու ծերերը փորձում էին վերահսկել Հիսուսին իրենց մեղադրանքներով, սպառնալիքներով և զորավոր պաշտոններով: Նրանց պատասխանելը հիմարություն կլիներ, քանի որ քահանայապետերն ու ծերերը անհանգստացած չէին ճշմարտության համար: Հիսուսը գիտեր, որ նրանք չէին կարող Իր կյանքը վերցնել, որովհետև Նա արդեն այն տվել էր Հորը:

Երբ Հիսուսը հանդիպեց Իրեն մեղադրողներին, Պետրոսն իր համար դրսում՝ կրակի մոտ տաքանում էր: Վախենալով այդ առաջնորդների ծառաներից՝ Պետրոսն ուրացավ, թե նույնիսկ չի ճանաչում Հիսուսին (Մաթ. 26. 69-75): Չնայած որ Պետրոսն ասում էր, թե կմեռնի, բայց չի ուրանա Հիսուսին, այնուամենայնիվ վախեցավ և արեց այն, ինչ ասել էր, որ չի անի: Պատճառն այն էր, որ Պետրոսը սիրեց իր սեփական կյանքը:

Հիսուսին ուղղված նրա խոսքերը ցույց էին տալիս, որ Պետրոսը մեծ սեր էր տածում Հիսուսի հանդեպ, բայց այս գործերը այլ բան էին վկայում: Իր անձի հանդեպ սերն էր Պետրոսի վախի արմատը: Այն լավ թաքնված էր վաղ ժամանակ արված խիզախ հայ-

տարարությունների և գործողությունների ետևում, բայց «ձիթհանի» շնորհիվ բացահայտվեց Պետրոսի երկչոտ հոգին:

Վախի և երկչոտության արմատը եսասիրությունն է: Կատարյալ սերը քշում է վախը և մեզ տալիս է համարձակություն: Սիրուց ծնված համարձակությունը կոտրում է երկչոտության ճնշումը: Անկատար սերը կամ եսասիրությունը դուռ է բացում երկչոտության համար:

> *«Սրանում է սերը կատարյալ մեզ հետ, որ համարձակություն ունենք դատաստանի օրում... Վախ չկա սիրո մեջ, այլ կատարյալ սերը հեռացնում է վախը, որովհետև վախը տանջանք ունի, բայց նա, որ վախենում է, կատարյալ չէ սերի մեջ» (Ա Հովհ. 4.17,18):*

Վախը և երկչոտությունը հզորանում են, երբ մենք կենտրոնանում ենք մեզ վրա՝ ասելով. «Իսկ ե՞ս, ի՞նչ կպատահի ինձ հետ»: Սրանք տանջանքի ճիչեր են:

Հիսուսն ասաց. «Ոչ ով Նրանից ավելի մեծ սեր չունի, որ մեկն իր անձը դնի իր բարեկամների համար» (Հովհ. 15.13): Երբ մենք ճշմարտապես մեր կյանքը դնում ենք Հիսուսի սիրո համար, այլևս չենք մտահոգվի, թե ինչ կպատահի մեզ հետ, որովհետև գիտենք, որ Նա է հոգ տանում մեզ համար: Դրանից հետո մենք մահացած և ծածկված ենք Նրա մեջ: Մենք կարիք չունենք անհանգստանալու մեր կյանքերի համար ինչ էլ որ պատահի մեզ հետ. դրա մասին Հիսուսն է հոգում: Մենք ուղղակի պետք է սիրենք և հնազանդվենք:

Վախն այլևս չի տանջի մեզ, քանի որ մեռած մարդը չի կարող տանջվել: Դու կարող ես հրազենով նշան բռնել դագաղի մեջ պառկած մարդու վրա և սպառնալ նրան, բայց նա նույնիսկ աչքն էլ չի թարթի:

Ի՞նչ պատահեց մյուսների հետ

Ի՞նչ պատահեց մյուս աշակերտների հետ: Նախքան Հիսուսին ուրանալը, նրանք միացել էին Պետրոսին և պնդում էին, որ կմեռնեն, բայց չեն ուրանա: Ինչպե՞ս վարվեցին նրանք «ձիթհանի» ճնշման մեջ: Նրանք փախան նույնիսկ մինչև Պետրոսի ուրանալը: Աստվածաշունչը պատմում է, որ երբ նրանք տեսան, թե ինչպես զինվորները բռնեցին Հիսուսին, «բոլոր աշակերտները Նրան թողեցին-փախան» (Մաթ. 26.56):

Աշակերտները բոլորն էլ վախենում էին իրենց անձերի համար: Նրանք ավելի շատ քնել էին ուզում, քան աղոթել: Հիսուսի հետ ունեցած վերջին ճաշկերույթի ժամանակ աշակերտները կռվում էին իրենց մեջ, թե ով է ամենամեծը: Նրանք կարծես թե չէին լսում կամ էլ չէին կարող լսել: Նրանց միայն մի բան էր հետաքրքրում. «Ի՞նչ կպատահի ինձ հետ»: Աշակերտների եսասիրությունը բացահայտվեց «ձիթհանի» ճնշման մեջ:

Նրանց շարժառիթները չէին տարբերվում Պետրոսի շարժառիթներից: Պարզապես Պետրոսն ավելի դժվար իրավիճակում էր, որովհետև նա հետևեց զինվորներին մինչև այն տեղը, ուր Հիսուսին տարան:

Ամեն համարձակություն չէ, որ սիրուց է դրդված

Միգուցե քեզ մինչև հիմա հետաքրքրում է, թե ինչ տվեց Պետրոսին այն համարձակությունը, որով նա սուրը ձեռքին կանգնեց մի փոքր բանակի առջև: Ես հավատում եմ, որ Պետրոսի համարձակությունը գալիս էր մյուսների հավանությանն արժանանալու ցանկությունից: Նա գնաց այդ քայլին՝ ուրիշների վրա ազդեցություն թողնելու համար: Մտածի՛ր սրա մասին: Աշակերտները հենց նոր վեճ էին ունեցել, թե ով էր ամենամեծը: (Այս թեման առաջին անգամ

չէ, որ շոշափվում էր: Աշակերտները մշտապես մրցակցության մեջ էին): Սրա մասին Պետրոսը դեռ չէր մոռացել, և հիմա նրան հնարավորություն էր ընձեռվել ապացուցելու իր մեծ հավատարմությունը:

Բայց երբ նա քահանայապետերի ծառաների հետ նստեց կրակի մոտ, այլևս շրջապատված չէր իր հավատակիցներով: Նրա իրական ապահովությունը մակերեսային էր: Վախը, որը թաքնված էր նրա արտաքին հանգստության մեջ, բացահայտվեց:

Նախորդ դեպքերը ևս բացահայտում էին Պետրոսի տատանվող համարձակությունը: Մեկը այն ժամանակ էր, երբ Պետրոսը քայլում էր ջրի վրայով: Երբ մյուս աշակերտները շփոթված էին, Պետրոսը աղաղակեց. «Տե՛ր, եթե Դու ես, հրամայի՛ր ինձ, որ ջրերի վրայով Քեզ մոտ գամ» (Մաթ. 14.28): Պետրոսը դուրս եկավ նավակից և քայլեց ծովի վրայով: Հավանաբար նա համարձակություն էր ստացել աշակերտների վրա տպավորություն թողնելու ցանկությունից: Բայց և այնպես, երբ Պետրոսը մենակ հայտնվեց մոլեգնած ծովի մեջ, աղաղակեց Հիսուսին, որ փրկի իրեն: Երբ նա քայլում էր ալիքների վրայով, հասկացավ, որ իր մրցակիցներից ոչ մեկն էլ իր հետ չէր: Վախի ճնշման տակ նա կանչեց Հիսուսին, որպեսզի փրկեր իրեն:

Շատ հնարավոր է, որ Պետրոսը մտածում էր, թե Հիսուսը կազատեր իրեն պարտեզում կատարված դեպքից, ինչպես որ արել էր շատ անգամներ: Եվ նա ճիշտ էր: Պետրոսն ու մյուսները չէին պատկերացնում, որ Հիսուսին ձերբակալված կտեսնեն: Չնայած որ Հիսուսը բազմաթիվ անգամ ասել էր նրանց, որ դա տեղի կունենա, նրանք շարունակում էին հավատալ, որ Նա կհաստատի Իր թագավորությունը երկրի վրա հենց այդ ժամանակ (Գործք 16.21):

Հեշտ է շարունակ վստահ լինել նրանում, ինչ մենք ենք ակնկալում, որ Աստված կանի: Բայց երբ Նա անակնկալի է բերում, մենք կարող ենք տատանվել: Երբ ինչ-որ բան է տեղի ունենում մեր կյանքում կամ ծառայությունների մեջ՝ որսալով մեզ մեր տգիտու-

թյան պատճառով, մենք կորցնում ենք մեր համարձակությունը: Հաճախ մենք նախապատրաստված չենք լինում չարչարանք, հալածանք կամ փորձություններ կրելու համար: Երեխաների նման մեզ հարմարավետ է մեր առօրյա կյանքը և մեր սեփական ճանապարհը: Երբ մենք չենք հասնում մեր ցանկացածին և մեր ուզած ճանապարհին, մեր սրտերը ստուգվում են: Եթե մենք հաղթանակում ենք փորձությունների մեջ, մեր սրտերը զորանում են: Մենք կարող ենք համարձակ երևալ, երբ Աստված մեզ ճշգրտորեն տալիս է այն, ինչ մենք ուզում ենք, կամ էլ երբ կյանքը կանխատեսելի է, բայց երբ ամեն ինչ այլ ձևով է ընթանում, հայտնի են դառնում մեր իրական շարժառիթները: Հիսուսը նկարագրում է այս իրավիճակը.

> *«Նույնպես էլ քարքարոտ տեղը սերմվածները նրանք են, որոնք, երբ որ խոսքը լսում են, շուտով ուրախությունով ընդունում են նրան: Եվ իրենց մեջ արմատ չունեն, այլ առժամանակյա են: Հետո երբ որ այն խոսքի համար նեղություն կամ հալածանք է լինում, շուտով գայթակղվում են» (Մարկ. 4.16,17):*

Ուշադրություն դարձրու, որ աշակերտները դիմացկուն չէին, որովհետև արմատներ չունեին: Ինչպե՞ս զարգացնենք արմատները, որպեսզի մեզ հաստատուն պահեն: Մենք ինչի՞ մեջ պետք է արմատավորված լինենք: Եփեսացիների 3.17-ն ասում է, որ մենք պետք է արմատ գցենք և հաստատվենք Քրիստոսի համար մեր ունեցած սիրո մեջ: Ճշմարիտ սերն իրենը չի փնտրում: Այն մարդիկ, որոնց սերը արմատներ չունի, կհամբերեն այնքան, որքան որ իրենց համար հեշտ կլինի: Նրանք չեն խաչվել Քրիստոսի հետ, այլ եկել են Հիսուսի մոտ ինչ-որ բան ստանալու համար և ոչ թե այն բանի համար, թե ով է Նա:

Նրանք, ովքեր ճշմարտապես են սիրում, ոչինչ չեն փնտրի, բա-

ցի իրենց Սիրելիից և այն, ինչը հաճեցնում է Նրան: Այդպիսի սերն իր մեջ սպասումներ չունի: Ընդհակառակը, այն տվող է: Նման շարժառիթը ոչ մի ազդեցության չի ենթակվի, երբ ամեն բան իր սպասածի պես չի լինում: Սերը չի հուսահատվում, դրա համար էլ չի վախենում:

Համարձակությունը, որով կոտրում ենք երկչոտության զորությունը, պետք է բոցավառվի Աստծո հանդեպ մեր ունեցած սիրուց: «Որովհետև Աստված չտվեց մեզ երկչոտության հոգի, այլ զորության և սիրո և զգաստության» (Բ Տիմոթ. 1.7): Զորությունը երկչոտությունը կոտրելու մի մասն է, բայց դա դեռ բավարար չէ: Ինչպես արդեն ասել եմ, ես տեսել եմ օծված մարդկանց, որոնք կծկվել են երկչոտությունից, երբ ճնշումներ են եղել:

Զգաստությունը ևս բավարար չէ: Սուրբ Հոգին հենց Պետրոսին հայտնեց, որ Հիսուսը Մեսիան է (Մաթ. 16.13-18): Միայն այն ժամանակ, երբ Պետրոսը լցվեց Աստծո սիրով, իրապես դրեց իր կյանքը: Մենք սա կդիտարկենք հաջորդ գլխում:

Երկչոտությունը հաղթահարելու
միակ հանապարհը անձդ կորցնելն է:

Ցանկությունը բավական չէ

Բարի մտադրությունները բավական չեն: Պետրոսը ցանկացավ ցույց տալ, որ ինքը կարող էր հավատարիմ լինել, նույնիսկ եթե դրա համար պետք է զոհեր կյանքը: Բայց այս ցանկության ուժը բավական չէր այն պահպանելու համար: Պետրոսի սրտում եղած վախը հաղթեց Վարդապետի նկատմամբ ունեցած իր սիրուն: Հիսուսն անդրադարձավ սրան Իր հարությունից հետո:

Հովհաննեսի Ավետարանի 21-րդ գլուխը պատմում է մեզ, որ Հիսուսը հայտնվեց Իր աշակերտներին և նրանց նախաճաշի համար ձուկ և հաց էր պատրաստում: Հետո Նա Պետրոսին երեք անգամ հարցրեց. «Դու սիրո՞ւմ ես Ինձ»: Առաջին երկու անգամները Հիսուսն օգտագործեց *«ագապաո»* բառը, որը նշանակում է սիրուց դրդված գործողություն: Բայց Պետրոսն ամեն անգամ պատասխանում էր հունարեն *«ֆիլեո»* բառով: Այս բառը սահմանափակվում է զգացմունքային սիրով՝ առանց գործողության:

Պետրոսը վշտացավ, երբ Հիսուսը նրան երրորդ անգամ հարց տվեց: Երրորդ անգամ Հիսուսն օգտագործեց *«ֆիլեո»* բառը: Հիսուսը հարցի մեջ սերը գործողության մակարդակից իջեցրեց զգացմունքային մակարդակի: Վհատության մեջ Պետրոսը պատասխանեց . «Տե՛ր, Դու ամեն բան գիտես, Դու գիտես, որ ես սի-

ում եմ Քեզ» (Հովհ. 21.17), ինչը նշանակում է. «Դու գիտես, որ ես ջերմ զգացմունքներ ունեմ Քո նկատմամբ»:

Հիսուսն ավելի կոնկրետացրեց հարցը. «Դու սիրո՞ւմ ես Ինձ այնքան, որ կյանքդ դնես Ինձ համար»: Սա խոսում է այն սիրո մասին, որը նկարագրված է *«ագապաո»* բառով: Պետրոսը ճշմարտությամբ և խոնարհաբար պատասխանեց, որ իր սերը զգացմունքային կամ քնքուշ սեր էր: Հիշի՛ր, որ նա հենց նոր էր ուրացել Հիսուսին: Պետրոսն ընդունում էր իր սեփական թուլությունը: Նրա քնքուշ, մտերիմ սերն այնքան ուժեղ չէր, որ թույլ տար դնել սեփական կյանքը:

Վերջում Հիսուսը հարցրեց Պետրոսին. «Դու սիրո՞ւմ ես Ինձ ջերմ զգացմունքներով»: Հիսուսը գիտեր, որ հիմա Պետրոսը կոտրված մարդ էր և դեռ ընդունակ չէր *«ագապաո»* սիրուն:

Հիսուսը, ցանկանալով բացատրել Պետրոսին, թե ինչ նկատի ուներ Ինքը, երբ հարցրեց նրան առաջին երկու անգամները, ասաց. «Ճշմարիտ, ճշմարիտ ասում եմ քեզ, երբ որ պատանի էիր, ինքդ էիր գոտիդ կապում և ման գալիս որտեղ որ ուզում էիր, բայց երբ որ կծերանաս, ձեռքերդ կմեկնես, և ուրիշը գոտի կկապի և կտանի՝ որտեղ որ չես ուզի: Սա ասաց ցույց տալով, թե նա ինչ մահով կփառավորի Աստծուն, և սա ասելուց հետո նրան ասաց՝ Իմ ետևից եկ» (Հովհ. 21.18,19):

Ես կարծում եմ, որ Հիսուսը Պետրոսին այս խոսքերն ասելով նկատի ուներ հետևյալը. «Նախկինում դու ձախողվեցիր՝ ապրելով զգացմունքային սիրո ուժով, բայց օրեր կգան, երբ դու դեմ առ դեմ կհանդիպես քո ամենամեծ վախին, և դու կհաղթես կատարյալ սիրո զորությամբ»: Մինչև այդ պահը Պետրոսը սիրել էր մարդկային լավագույն կարողությամբ, բայց դա ձախողել էր նրան: Եթե Պետրոսը հետևեր Հիսուսին, սպառազինված կլիներ *«ագապաո»* սիրով: Սիրո այդ տեսակը չի ծնվում մարդկային ցանկությունից, այլ Հորից է ծնվում մեր սրտերի մեջ (Հռոմ. 5.5): Աստծո սերը (*ագապե*

կամ ագապաո) չի վախենում մեռնել ուրիշի համար: Հիսուսը քաջալերեց Պետրոսին՝ ասելով նրան, որ երբ Պետրոսը կրկին հանդիպի «ճնշման», հաղթանակած դուրս կգա: Նա ընդունակ կլինի իրականացնելու այն, ինչի համար նախկինում երդվել էր ինքնավստահությամբ: Նա կարող էր մեռնել մինչև Հիսուսին ուրանալը, իսկ եթե ազատվեր վախի և երկչոտության ճնշումից, կդառնար փոխված մարդ:

Աստված սա անում է մեր օգուտի համար: Նա ուժեղացնում է մեզ, երբ վախեցած ենք: Նա թույլ կտա, որ մենք այնքան ժամանակ դեմ առ դեմ հանդիպենք այն ամենին, ինչից վախենում ենք, մինչև որ հաղթող լինենք: Երբ սպառում ենք մեր հնարավորությունները, պետք է աղաղակենք Նրան: Այդ զորության մեջ մենք չենք կարող ձախողվել, որովհետև սերը երբեք չի ձախողվում

(Ա Կորնթ. 13.8):

Աստված չի ցանկանում, որ մենք փախչենք մեր թույլ ոլորտներից: Նա ցանկանում է, որ մենք դեմ առ դեմ հանդիպենք դրանց առանց վախենալու:

«Խնդրում եմ, հեռացրո՛ւ սա»

Պողոսն այս ամենը լավ գիտեր. «Եվ որ հայտնությունների առավելությամբ չհպարտանամ, մարմնիս համար խայթ տրվեց ինձ՝ սատանայի հրեշտակ, որ ինձ բռունցքով ծեծի, որ չգոռոզանամ» (Բ Կորնթ. 12.7):

Ես կարծում եմ, որ այս խոսքում վկայված է մի չար հրեշտակի մասին, որին սատանան ուղարկել էր Պողոսին հարվածելու: Այս հրեշտակը Պողոսի համար խնդիրներ էր ստեղծում ամենուր, որտեղ որ նա գնում էր: Կորնթացիների երկրորդ թղթի 11.24-27-ը պատմում է որոշ խնդիրների մասին, որոնց հանդիպել էր Պողոսը.

«Հրեաներից հինգ անգամ՝ քառասունից մեկը պակաս ծեծ ընդունեցի: Երեք անգամ ձաղկով ծեծվեցի, մեկ անգամ քարկոծվեցի, երեք անգամ նավակոծ եղա, մի ցերեկ ու գիշեր անդունդում մնացի: Շատ անգամ ճանապարհներում, գետերից վտանգներ, հեթանոսներից վտանգներ, քաղաքի մեջ վտանգներ, անապատի մեջ վտանգներ, ծովի մեջ վտանգներ, սուտ եղբայրներից վտանգներ: Ջանքի և աշխատանքի մեջ՝ շատ անգամ, արթնությունների մեջ, սովի և ծարավի մեջ, շատ անգամ ծովի մեջ, ցրտի և մերկության մեջ»:

Ամեն տեղ, որտեղ Պողոսը քարոզում էր, Ավետարանի համար ընկնում էր ուժեղ հալածանքի մեջ: Շղթաներ ու փորձանքներ էին սպասվում նրան յուրաքանչյուր քաղաքում: Պողոսը մտրակվում էր, ճիպոտով ծեծվում, քարկոծվում էր, նավաբեկության էր ենթարկվում և շատ այլ բաներ: Այսպիսով, նա գնաց Աստծո մոտ սրա համար:

«Սրա համար երեք անգամ աղաչեցի Տիրոջը, որ նրան հեռացնի ինձանից» (Բ Կորնթ. 12.8):

Հասկանալի է, որ Պողոսն ուզում էր ազատ լինել այս դիմադրությունից և հալածանքից: Աստված պատասխանեց.

«Բավական է քեզ Իմ շնորհքը, որովհետև Իմ զորությունը տկարության մեջ է կատարվում» (Բ Կորնթ. 12.9ա):

Տերը դրանով ասում էր. «Պողո՛ս, մի՛ խնդրիր Ինձ, որ հեռացնեմ այս ամենը, բայց ավելի խնդրիր, որ Իմ շնորհքն ու զորությունը քեզ բարձրացնեն այն բաներից վեր, որոնց ինքդ չես կարող հաղթել: Պողո՛ս, որտեղ որ չկան խոչընդոտներ, այնտեղ չկա և զորության կարիք: Հաղթանակը տեղի է ունենում այն ժամանակ, երբ կա պայքար: Որքան մեծ է պայքարը, այնքան մեծ է հաղթանակը: Ճշմարիտ զինվորը չի փախչում հակամարտությունից, այլ վազում է

դրան ընդառաջ»: Պայքարի թեժ պահին պետք չէ խնդրել Աստծուն, որ մեզ դուրս բերի պատերազմից: Դա հենց այն պահն է, երբ պետք է աղոթենք Աստծո շնորհքի համար, որպեսզի կարողանանք հաղթել: Աստված փառավորվում է այն ժամանակ, երբ մենք դեմ առ դեմ հանդիպում ենք ինչ-որ բանի, որը մեր մարդկային ուժերով անհնար է հաղթահարել: Դրանից հետո է, որ Նրա զորությունը գալիս է մեզ վրա, և բոլորը կարող են տեսնել դա: Աստծո շնորհքը հաղթում է ամեն տեսակի վախի և խոչընդոտի, որին հանդիպում ենք: Ինքդ քեզ քաջալերի՛ր Աստծո այս մի քանի հորդորներով.

> *«Բայց շնորհակալություն Աստծուն, որ ամեն ժամանակ մեզ հաղթող է անում Քրիստոսում» (Բ Կորնթ. 2.14):*

> *«Բայց շնորհակալություն Աստծուն, որ տվեց մեզ հաղթություն մեր Տեր Հիսուս Քրիստոսի ձեռով» (Ա Կորնթ. 15.57):*

> *«Ապա ո՞վ կբաժանի մեզ Քրիստոսի սիրուց. տառապա՞նք, թե նեղությո՞ւն, թե հալածա՞նք, թե սո՞վ, թե մերկությո՞ւն, թե վտա՞նգ, թե սո՞ւր: Ինչպես գրված է, թե Քեզ համար մեռցվում ենք բոլոր օրը և մորթվելու ոչխարի պես համարվեցինք: Բայց այս ամեն բաներում առավել ևս հաղթում ենք Նրա միջոցով, որ մեզ սիրեց» (Հռոմ. 8.35-37):*

Հաղթողը հակառակվում է դիմադրությանը, հաղթում է և հաղթանակած դուրս է գալիս պայքարի միջից: Պողոսն ամուր բռնվեց սրանից, և նրա անհանգստությունը վերածվեց հույսի: Նա գրեց.

> *«Արդ ավելի հոժարությամբ իմ տկարություններով կպարծենամ, որ Քրիստոսի զորությունը բնակվի ինձանում: Որովհետև հավանել եմ տկարությունների, թշնամանքների, վիշտերի, հալածանքների և նեղությունների Քրիստոսի համար, որ երբ տկարանում եմ, այն ժամանակ զորանում եմ» (Բ Կորնթ. 9,10):*

Ուշադրություն դարձրու, որ նա ասում է՝ «հավանել եմ»: Որքա՞ն հաճախ ենք մենք տեսնում մարդկանց, որոնց դուր է գալիս հանդիմանությունների, կարիքների, հալածանքների և վշտերի մեջ լինելը: Դա միայն այն անձնավորությունն է, ով ծածկված է Քրիստոսի մեջ (Գաղատ. 2.20), միայն նա կարող է հաճույք ստանալ այսպիսի բաներից: Այդպիսի մեկն ապրում է Քրիստոսին բարձրացնելու համար: Պողոսը գիտեր, որ կարող է վստահել Աստծո շնորհքին, որն իրեն կպահեր այնքան, մինչև Քրիստոսը մեծարվեր:

Պողոսը Հիսուսին ավելի շատ էր սիրում, քան իր սեփական կյանքը: Նա պատրաստ էր մեռնել, բայց ավելի ցանկանում էր ապրել Նրա համար: Ավելի ուշադիր նայիր փիլիպեցիներին ուղղած նամակին.

> *«Իմ ակնկալության և հույսի համեմատ ոչ մի բանով ամոթ չեմ լինի, այլ բոլոր համարձակությունով, ինչպես ամեն ժամանակ, հիմա էլ Քրիստոսը փառավորվի իմ մարմնում, թե՛ կյանքով, և թե՛ մահով» (Փիլիպ. 1.20):*

Պողոսի համար նշանակություն չուներ կյանքով կփառավորեր Քրիստոսին, թե մահով: Նրա համար կարևորն այն էր, որ միայն թե Քրիստոսը փառավորված լիներ: Պողոսը նկատի չուներ այն մահը, որը լինում է տկարության կամ հիվանդության պատճառով: Հիսուսն այդ մահը կրել է մեզ համար՝ խաչի վրա: Տկարությունը, հիվանդությունը Նրան փառք չեն բերում: Հավատալ, թե մենք փառավորում ենք Քրիստոսին հիվանդությունից մեռնելով, այնքան սխալ է, որքան հավատալը, թե Հիսուսը փառավորվում է, եթե մենք մեռնեինք մեղքի ստրկության մեջ: Հիսուսը երկուսն էլ կրեց խաչի վրա (Եսայի 53.4,5): Սաղմոս 103.2,3-ն ասում է. «Օրհնիր Տիրոջը, ո՛վ իմ անձ, և մի մոռացիր Նրա բոլոր բարիքները, որ ներում է քո բոլոր մեղքերը, բժշկում է քո ամեն ցավերը»: Ինչպես տեսնում ենք, Պո-

ղոսը չէր խոսում տկարության կամ հիվանդության մասին: Մեր վերաբերմունքը պետք է լինի այսպիսին. «Տե՛ր, կարևորը Դու փառավորված լինես, որ Քո կամքը կատարվի, և սատանան բաժին չունենա»: Պողոսի՝ եսասիրությունից զուրկ սերը ծնունդ տվեց մի համարձակության, որի դեպքում ոչ մի երկչոտություն չէր կարող ներս թափանցել (կրկին՝ Փիլիպ. 1.20): Իմանալով, որ յուրաքանչյուր քաղաքում կհանդիպի հալածանքի և սպառնալիքի, նա ճեղքելով առաջ էր գնում: Պողոսը ոչ մի մարդուց չէր վախենում: Նա կիսվում էր Եփեսոսի երեցների հետ՝ ասելով.

> *«Եվ հիմա ահա ես Հոգով կապված գնում եմ Երուսաղեմ և չգիտեմ, թե այնտեղ ինչ պիտի պատահի ինձ: Միայն թե Սուրբ Հոգին քաղաքից քաղաք վկայում է և ասում, թե կապանքներ և նեղություններ են սպասում ինձ» (Գործք 20.22,23):*

Օ՜, ինչպիսի՜ մարգարեական խոսք: Ինձ համար հետաքրքիր է, թե քանի՞սը այսօր կվազեն դեսուդեն այսպիսի խոսքի համար: Ո՛չ, նրանք չեն էլ ցանկանա այսպիսի բան լսել: Մենք բոլորս սիրում ենք լավ բաներ լսել, բայց Աստված նաև զգուշացնում է զրկանքի համար, դրա հետ մեկտեղ բերում է և հույս, և քաջություն: Պողոսը քաջալերում էր նորադարձներին՝ ասելով. «Շատ նեղություններով պետք է մեզ մտնել Աստծո արքայությունը» (Գործք 14.22):

Հետաքրքիր է, թե ինչպես մենք կարծագանքենք, եթե ստանանք մի մարգարեական խոսք, որ ամեն անգամ մեզ սպասվում են հալածանքներ և դիմադրություն: Իհարկե, ես չեմ ասում, որ Աստծուց ստացած ամեն մի խոսք պետք է լինի այս բնույթի:

Խնդիրն այն է, որ մեզ տրված շատ խոսքեր մարդկանց դրդում են սխալ բաներ փնտրել: Դրանք գեղեցիկ, հաճելի խոսքեր են այն մասին, որ մարդիկ պետք է բարգավաճեն բիզնեսի կամ ծառայության մեջ, որ ամեն բան լավ է լինելու նրանց համար: Հաճախ մար-

դիկ Աստծուն փնտրում ու ծառայում են միայն այն բանի համար, թե ինչ կարող է Նա անել իրենց կյանքում: Նրանց սերը դեռևս հետաքրքրված չէ Աստծուն կյանքով կամ մահով մեծարելով: Նայենք, թե ինչպես է Պողոսն արձագանքում կապանքների և փորձանքների մասին մարգարեական այս խոսքին.

> *«Բայց ես մի բանի տեղ չեմ դնում և իմ անձն էլ պատվական չեմ համարում, որ ուրախությամբ կատարեմ իմ ընթացքը, և այն պաշտոնը, որ Տեր Հիսուսից առա, որ Աստծո շնորհաց Ավետարանին վկայեմ» (Գործք 20.24):*

Պողոսի համարձակության բանալին այն էր, որ նա իր կյանքը թանկ բան չէր համարում: Նա նաև հասկացել էր, որ Աստծո ծրագիրն իր կյանքի համար ներառում էր նաև հանդիպող փորձություններն ու հալածանքները: Հիսուսի հանդեպ Պողոսի սերն ավելի մեծ էր իր կյանքի նկատմամբ ունեցած սիրուց: Պողոսի կյանքը ցույց է տալիս մրցավազքն ավարտելու գաղտնիքը: Ցած դիր քո կյանքը և վերցրու Քրիստոսի կյանքը: Հաճախ սա նշանակում է, որ մենք պետք է ցած դնենք այն, ինչը հարմարավետ է, և վերցնենք ոչ հարմարավետը՝ խաչը:

Դու համոզված ես, որ այս Ավետարանը ամերիկյա՞ն է

Ես գիտեմ, որ սա հոգեհարազատ չէ ժամանակակից՝ արևմտյան քրիստոնեությանը: Այն բավական տարբեր է 1980-ականներին և 1990-ականներին մեր ապրածից և քարոզածից: Ես առաջիններից եմ, որ խոստովանում եմ, թե ինքս էլ եմ սխալվել: Անցած տասը տարիների ընթացքում ես հանդիպել եմ «ձիթհանի» իրավիճակների՝ սրտումս եղածը բացահայտելու համար: Պետրոսի նման վշտանում էի, երբ տեսնում էի իմ դատարկ խոստումները և սրտիս իրական վիճակը: Շատ դեպքերում ես աղաղակում էի Տիրոջը՝

խնդրելով Նրան փոխել իմ սիրտը: Ես սովորել էի երախտապարտ լինել ինձ ուժեղացնող փորձությունների համար (Ա Պետր. 1.6,7): Ես շատ լավ հասկացել եմ Աստվածաշնչի հետևյալ խոսքերը.

> *«Արդ Քրիստոսը, որ մարմնով մեզ համար չարչարվեց, դուք էլ նույն մտքով զինվորվեք, որ մարմնով չարչարվողը մեղքից դադարեց: Որ այլևս ոչ թե մարդկանց ցանկությունների պես, այլ Աստծո կամքի պես ապրեք մարմնում մնացած ժամանակ» (Ա Պետր 4.1,2):*

Չարչարանքների մեջ մենք հասունանում ենք: Ես չեմ խոսում չարչարանքի կրոնական հասկացողության մասին, ըստ որի պետք է ընդունել հիվանդությունն ու աղքատությունը, քանի որ դրանցով արժանանում ես Աստծո գնահատանքին: Եվ ոչ էլ նկատի ունեմ այն չարչարանքը, որը լինում է տգիտության և սխալ, անաստված վարքագծի պատճառով: Աստված չի փառավորվում դրանով: Չարչարանքները, որոնց մենք պետք է հանդիպենք, այն չարչարանքներն են, որոնց փորձառությունը ունեցել է Քրիստոսը. փորձվել է ամեն ձևով, մինչդեռ առանց մեղքի (Եբր. 4.15): Չարչարանքը, որ նկարագրում է Պետրոսը, մարդուն հանդիպած այն դիմադրությունն է, երբ սեփական մարմինն ու շրջապատի մարդիկ ստիպում են նրան գնալ ոչ թե Աստծո կամքով, այլ այն ճանապարհով, որով իրենք են ուզում: Այս դեպքում երկչոտությունը գլուխ կբարձրացնի, եթե մենք արմատավորված չլինենք Հիսուսի նկատմամբ ունեցած սիրո մեջ:

Պետրոսի նման ես ցանկանում եմ հետևել Հիսուսին ոչ թե մինչև այնտեղ, որտեղ ես պարզապես կասեմ, թե Նրա համար կդնեմ իմ կյանքը, այլ այնտեղ, որտեղ ես կընդունեմ իմ սեփական կյանքի և ցանկությունների մահը: Թույլ տուր, որ միայն Նա փառավորվի: Սա իրագործվում է Նրա շնորհքով: Նա Իր շնորհքը տալիս է խոնարհներին (Հակոբ. 4.6): Ահա թե ինչու հալածանքին հան-

դիպելիս Պողոսը կարող էր ասել. «Ես հավանել եմ»: Տե՛ս, թե ինչ էր ասում Հովհաննես առաքյալը նրանց մասին, ովքեր հաղթեցին սատանային.

> *«Եվ նրանք հաղթեցին նրան՝ Գառի արյունով և իրենց վկայության խոսքով, և չսիրեցին իրենց հոգին մինչև ի մահ» (Հայտն. 12.11):*

Ես շատ շատ անգամ էի լսել այս խոսքը, բայց միայն դրա մի մասը: Շատերը շատ շուտ են կանգ առնում. նրանք բաց են թողնում խոսքի վերջին մասը: Սա էլ հենց այն բաժինն է, որը մեր՝ արևմտյան մշակույթի մեջ հանրաճանաչ չէ: Մենք չենք հաղթի երկչոտության դեմ մղվող պայքարում այնքան ժամանակ, մինչև չմերժենք սիրել մեր կյանքը մինչև մահ: Եթե մենք սիրենք մեր կյանքը, ապա ճանապարհներ կփնտրենք այն փրկելու համար:

Աստծո տղամարդի՛կ և կանա՛յք, հիմա դուք գիտեք ճշմարտությունը. «Երկչոտությունը հաղթելու միակ ճանապարհը կյանքդ կորցնելն է»: Աղաղակի՛ր Աստծուն, երբ կարդում ես: Մի՛ նահանջիր, այլ համարձակվիր հավատալ: Խնդրի՛ր Նրան, որ լցնի սիրտդ Իր սիրով, որը երբեք չի նահանջում: Խնդրի՛ր Նրանից Իր շնորհքը, որով կհաղթես քեզ հանդիպող իրավիճակներին: Խնդրի՛ր Նրան, որ քեզ արտոնություն տա դժվար տեղերով գնալու համար: Աղոթի՛ր, որ լինես այն գործերի կենտրոնում, որոնք Նա անում է երկրի մեջ: Մի՛ խնդրիր հեշտ կյանք: Դրա փոխարեն խնդրիր կյանք, որը փառավորում է Նրան:

«Բայց ի՞նչ կասես այս մարդու մասին»

Ե՛կ վերադառնանք այն պահին, երբ Հիսուսն Իր հարությունից հետո նախաճաշ էր պատրաստում աշակերտների համար: Նախաճաշից հետո Հիսուսը Պետրոսին չտվեց մի «օրհնված»

մարգարեություն: Մինչդեռ Հիսուսի խոսքերը կրում էին այն խոստումը, որ Պետրոսը պիտի հաղթեր իր ամենամեծ վախին և իր սեփական ցանկությունները չիրականացներ մարդկային ուժով: Հիսուսն ասաց Պետրոսին, որ Իր հանդեպ ունեցած հավատարմության պատճառով կնահատակվի: Պետրոսը կհաղթեր մի բանի, ինչին նախկինում չէր կարող հանդիպել: Նա տեսնում էր նոր Պետրոսին: Հիսուսը տեսավ վերջնական աշխատանքը:

Պետրոսը դեռ պատրաստ չէր: Լսելով, թե ինչ է տեղի ունենալու, Պետրոսը շրջվեց և տեսավ Հովհաննես առաքյալին և հարցրեց Հիսուսին. «Բայց Տե՛ր, ի՞նչ կասես այս մարդու մասին» (բառացի թարգմանություն անգլերենից) (Հովհ. 21.21): Պետրոսն իրեն դեռ համեմատում էր ուրիշների հետ: Ըստ էության նա ասում էր. «Եթե ես պետք է գնամ սրա միջով, իսկ նա ի՞նչ պիտի անի»:

Հիսուսը պատասխանեց. «Եթե Ես կամենում եմ, որ դա կենա, մինչև Ես գամ, քեզ ի՞նչ, դու Իմ ետևից եկ» (Հովհ. 21.22):

Այլ կերպ ասած՝ դա կարևոր չէ. մի՛ համեմատիր քեզ ուրիշների հետ, ուղղակի հետևիր Ինձ: Շատերն են չափում իրենց կյանքն ու ծառայությունները ուրիշների արածի և ասածի հետ: Դու չես ցանկանում քեզ չափել սխալ չափանիշով: Գոյություն ունի մեծ տարբերություն սանտիմետրի և կիլոմետրի միջև: Մեր եկեղեցիներում մարդկանց մեծ մասն իրենց կյանքն ապրում են ինչպես կամենում են՝ հարմարավետության մեջ: Երբ մենք մեզ համեմատում ենք մյուսների հետ, թվում է, թե մեր մոտ ամեն ինչ լավ է (և շատ գոլ): Կեղծ մխիթարություն է ասելը, թե ես լավ եմ այնքան, որքան մյուսները: Սա ինքնախաբեություն է. մարդիկ հավատում են, որ եթե դիմացինի կյանքում ամեն ինչ լավ է, ապա իրենց մոտ էլ է ամեն ինչ լավ: Բայց և այնպես, մենք ունենք մեկ չափանիշ, չափման մեկ ընդհանուր միավոր: Մենք ոչ մյուս քարոզիչներին կամ եկեղեցիներին, ոչ էլ մեր քույրերին ու

եղբայրներին մեզ համար չափանիշ չենք համարում: Մեր չափանիշը Հիսուսն է: Հիսուսը Պետրոսին չասաց, որ հետևի Հովհաննեսին: Նա ասաց. «Հետևի՛ր Ինձ»:

Հիսուսի անցած ուղին անձնուրացության ուղի էր: Բավարար չէ Հիսուսին պարզապես հետևել ցանկանալը կամ փափագելը: Մենք պետք է հետևենք: Կարդա հետևյալը.

> *«Եվ Նա ժողովուրդն Իր աշակերտների հետ իրեն մոտ կանչեց և նրանց ասաց.*
> *«Ով որ ուզում է Իմ ետևից գա, թող իր անձն ուրանա և իր խաչը վերցնի և Իմ ետևից գա: Որովհետև, ով որ կամենա իր անձն ապրեցնել՝ կկորցնի նրան»» (Մարկ. 8.34,35ա):*

Ուշադրություն դարձրու, որ Հիսուսն ասաց՝ եթե քո ցանկությունն է ամեն ինչ անել կյանքդ փրկելու համար, ապա դու կկորցնես այն: Ա՜յ քեզ բան: Եթե ցանկանաս այն բաները, որ այս աշխարհն է ցանկանում, (նույնիսկ եթե երբեք չես ունենա), կկորցնես քո կյանքը: Բայց և այնպես ուշադիր նայիր, թե Հիսուսն ինչ է ասում շարունակությամ մեջ:

> *«Բայց ով որ իր անձն Ինձ համար և Ավետարանի համար կկորցնի, նա կապրեցնի նրան» (Մարկ. 8.35բ):*

Ուշադրություն դարձրու, որ Հիսուսը չասաց, թե ով որ ցանկանա կորցնել իր կյանքը Ինձ համար: Ցանկությունը բավարար չէ: Պետրոսն էլ ցանկացավ հետևել Հիսուսին և հենց այդ գիշեր ուրացավ Նրան: Բայց նրա շարժառիթի ետևում չկար ոչ Աստծո սերը, ոչ Նրա զորությունը: Դա պատճառ դարձավ, որ նա պարտվի:

Ստուգիր քո սիրտը

Մինչ կարդում ես այս գիրքը, ստուգիր քո շարժառիթները: Արդյո՞ք դու Հիսուս Քրիստոսի ճշմարիտ աշակերտն ես, թե ցանկանում ես հետևել Նրան միայն քո պայմաններով: Արդյո՞ք դու մնում ես քո սահմանների մեջ՝ հեռու լինելով անձնազոհությունից:

Հնարավո՞ր է, որ այդ սահմանները պահպանեն քեզ Հիսուսի անցած ուղիներից և վերջիվերջո որակազրկեն քեզ (տե՛ս Բ Կորնթ. 13.5): Հիսուսին հետևելու որոշում կայացնելուց առաջ, մենք նախևառաջ պետք է իմանանք դրա գինը: Այո՛, դա ճիշտ է: Դա արժեք ունի: Այն պահանջում է ոչ պակաս, քան քո ամբողջ կյանքը: Լսի՛ր, թե ինչպես Հիսուսը բացատրեց սա Իրեն հետևել ցանկացող բազմությանը:

> *«Եվ շատ ժողովուրդներ գնում էին Նրա հետ, և դարձավ նրանց ասաց. «Եթե մեկն Ինձ մոտ գա, և չատի իր հորը և մորը, կնոջը և որդիներին, և եղբայրներին և քույրերին և հենց իր անձն էլ, նա չի կարող Իմ աշակերտը լինել: Եվ ով որ իր խաչը վեր չառնի և Իմ ետևից գա, նա չի կարող Իմ աշակերտը լինել: Որովհետև ձեզանից ով է, որ կամենա աշտարակ շինել և առաջ չնստի և ծախսը հաշվի, թե ավարտելու համար բավական բան ունի՞: Որ միգուցե, երբ որ հիմքը դնի և չկարողանա ավարտել, ամեն տեսնողները սկսեն ծաղր անել նրան: Եվ ասել, թե այս մարդը սկսեց շինել և չկարողացավ ավարտել... Արդ այդպես էլ ձեզանից ամեն մեկը, որ իր բոլոր ինչքից չհրաժարվի, չի կարող Ինձ աշակերտ լինել» (Ղուկ. 14.25-30,33):*

Ահա թե ինչ արժե մինչև վերջ համբերելը: Մենք մի քիչ առաջ Հայտնության գրքում կարդացինք, որ նրանք, ովքեր հաղթեցին, չսիրեցին իրենց կյանքը մինչ ի մահ: Դժբախտաբար սա չի կարող լինել այսօրվա Ամերիկայի եկեղեցու ճշգրիտ նկարագրությունը:

Ես կարող եմ շատ օրինակներ բերել քրիստոնյա տղամարդ-

կանց և կանանց կյանքից, որոնք շարունակում են իրենց կյանքի սեփականատերերը լինել: Երբ ես հովիվ էի, մի երիտասարդ կին մոտեցավ ինձ և դժգոհելով ասաց. «Հովիվ Ջո՛ն, ես այնքան սարսափելի կարծիք ունեմ իմ մասին: Խնդրում եմ, աղոթիր, որպեսզի կարծիքս փոխվի»: Ես նայեցի նրան և ասացի. «Դա քո խնդիրն է»:

Կինը շփոթվեց: Նա ակնկալում էր երկարաժամ խրատներ լսել և վերջում էլ՝ աղոթք: Կինը սպասում էր, որ ես բարեհաճ կգտնվեմ և քաղցր խոսքեր կասեմ, որպեսզի նա իրեն լավ զգար: Իմ պատասխանը ցնցեց նրան: Բայց ճշմարտությունն է մեզ ազատում, այլ ոչ թե մեր խնդիրների մասին խոսելը՝ առանց դրանց արմատների հարցերը լուծելու:

Ես հարցրի կնոջը. «Աստվածաշնչում դու որտե՞ղ ես գտնում վկայություններ ինքնամեծարման կամ ինքդ քո մասին լավ կարծիք ունենալու մասին: Հիսուսն ասաց, որ Իրեն հետևելու համար դու պետք է մեռնես: Երբևէ դու տեսել ես մի մեռած մարդու, որը նստած է դագաղի մեջ և ասում է՝ հե՜յ, ինչո՞ւ եք ինձ այսպես հագցրել, դա ինձ դուր չի գալիս, ինչո՞ւ եք իմ մազերն այսպես հարդարել, ի՞նչ կմտածեն մարդիկ»:

Ես ուզում էի ցույց տալ կնոջը, որ Աստվածաշնչին համապատասխան չեն ինքնամեծարումն ու քո մասին լավ կարծիք ունենալը: Հիսուսին հետևելու և սիրելու համար ինքդ քո մասին լավ կարծիք ունենալը պարտադիր չէ: Այդ կինը կենտրոնացած էր ժամանակավորի և ոչ թե հավիտենականի վրա:

Մենք չենք կարող Աստծուն ծառայել, երբ միայն լավ կարծիք ունենք մեր մասին, երբ մենք ոգևորված ենք, կամ էլ երբ ամեն ինչ ընթանում է մեր ուզած ձևով: Մարդկանց, ովքեր այսպես են վարվում, մենք անվանում էինք «լավ օրերի ընկերներ»: Լինում են նաև «լավ օրերի քրիստոնյաներ»: Նրանք իմաստուն չեն: Վերջիվերջո նրանք կհանդիպեն ինչ-որ բանի, որը չի համապատասխանի իրենց պատկերացումներին: Այն կարող է պատահել նրանց ըն-

թացքի ցանկացած փուլում: Եթե նրանք պատրաստված չեն, ապա կհանձնվեն: Հնարավոր է, որ նրանք գնան եկեղեցի, տասանորդ վճարեն և զոհաբերություններ տան, խոսեն լեզուներով և ասեն ճիշտ բաներ, բայց իրենց սրտերում հրաժարվեն որոնել Աստծուն: Աստծո սերը ոչ մի սահմանափակում չունի: Եթե մենք իրոք ցանկանում ենք քայլել Նրա հետ, մենք պետք է հեռացնենք մեր սահմանափակումները:

Փոխված մարդ

Երբ մենք նայում ենք Պետրոսին Գործք առաքելոց գրքում, դժվար է հավատալ, որ նա այն նույն մարդն է, ով վախեցավ և ուրացավ Քրիստոսին ծառաների առաջ:

Սուրբ Հոգով լցվելուց հետո նա համարձակորեն, առանց վախի ողջ Երուսաղեմո՛վ մեկ հռչակում էր, որ Հիսուսը Տերն է ու Մեսիան: Պետրոսը ձերբակալվեց և բերվեց առաջնորդների առաջ, այն քահանաների, ովքեր խաչել էին Հիսուսին: Այժմ Պետրոսը կանգնած էր ոչ թե ծառաների, այլ հենց նույն խորհրդի առաջ, որը դատապարտեց Հիսուսին: Պետրոսը նայեց նրանց և մեծ համարձակությամբ հայտարարեց. «Դո՛ւք էիք, որ խաչեցիք Հիսուս Քրիստոսին՝ Մեսիային, և ուրիշ ոչ մեկով էլ փրկություն չկա, բացի Նրանից» (տե՛ս Գործք 4.8-12):

Պետրոսի և Հովհաննեսի համարձակությունը ապշեցրեց խորհրդին, և նրանք չկարողացան որևէ բան ասել այն գործի դեմ, որ Աստված էր անում: Այդ մարդիկ վերահսկելու վարպետներ էին և դիմեցին վախեցնելու միջոցին: Նրանք ասացին միմյանց. «Այլ որպեսզի ավելի չտարածվի ժողովրդի մեջ, սաստիկ սպառնանք նրանց, որ այլևս այն անունով չխոսեն մարդկանց ոչ մեկի հետ» (Գործք 4.17):

Հիշի՛ր, որ այս առաջնորդները հենց նոր էին խաչել Հիսուսին:

Իսկ Հիսուսը Պետրոսին արդեն ասել էր, որ նա կմահանա այնպես, ինչպես Ինքը մահացավ: Սրանք դատարկ սպառնալիքներ չէին: Մինչդեռ, նույնիսկ հնարավոր մահվան առաջ կանգնած, Պետրոսն ու Հովհաննեսը համարձակորեն հաստատեցին. «Եթե արժան է Աստծո առաջին, որ ձեզ ավելի ականջ դնենք, քան թե Աստծուն, դուք դատեք: Որովհետև մենք չենք կարող այն, որ տեսանք և լսեցինք, չխոսել» (Գործք 4.19,20):

Երբ Պետրոսը կանգնած էր խորհրդի առաջ, միայն Հովհաննեսն էր նրա հետ: Չկար մեկը, որի վրա տպավորություն թողնելու կամ ազդելու կարիք լիներ: Հիմա Պետրոսը այլ համարձակություն ուներ: Այդ համարձակությունը բոցավառվել էր Հիսուսի նկատմամբ ունեցած սիրուց: Նա և Հովհաննեսը ազատ արձակվեցին ու նորից միացան աշակերտներին՝ պատմելով, թե ինչ էր տեղի ունեցել և այն սպառնալիքների մասին, որ արվեցին: Հիմա տե՛ս, թե այս մարդիկ ինչ են խնդրում Աստծուն անել.

> *«Եվ հիմա, Տե՛ր, նայիր նրանց սպառնալիքին և տուր Քո ծառաներին, բոլոր համարձակությունով Քո խոսքը խոսել, որ Քո ձեռքը մեկնես, որ բժշկություն, և նշաններ, և հրաշքներ լինեն, Քո սուրբ Որդի Հիսուսի անունով» (Գործք 4.29,30):*

Այս մարդիկ Աստծուց ավելին էին խնդրում, քան պրոբլեմների մեջ չընկնելը: Նրանք գիտեին, որ Ավետարանը քարոզելով իրենց կյանքերը վտանգի տակ են դնում: Բայց շարունակում էին քարոզել, իսկ Աստված հավատարիմ էր հզոր հրաշքներ կատարելու համար: Աշակերտները թույլ չտվեցին, որ երկչոտության պատճառով Աստծո պարգևը հանգչի իրենց մեջ: Փաստորեն, Աստծո զորությունն այնքան ուժեղ էր, որ հիվանդներին դուրս էին բերում Երուսաղեմի փողոցների վրա, և մարդիկ բժշկվում էին, երբ Պետրոսի շուքն ընկնում էր նրանց վրա (Գործք 5.15):

Քահանայապետը և խորհուրդը իրականացրին իրենց սպառնալիքները: Նրանք աշակերտներին ձերբակալեցին և նետեցին բանտ: Քահանայապետն ասաց. «Չէ՞ որ պատվիրելով պատվիրեցինք ձեզ, որ չսովորեցնեք այդ անունով, և ահա Երուսաղեմը լցրիք ձեր ուսմունքով և կամենում եք այն մարդի արյունը մեզ վրա բերել» (Գործք 5.28):

Պետրոսը նորից համարձակորեն պատասխանեց.

> *«Աստծուն պետք է ավելի հնազանդել, քան թե մարդկանց: Մեր հայրերի Աստվածը հարություն տվեց Հիսուսին՝ Որին դուք փայտից կախած սպանեցիք: Աստված Նրան Առաջնորդ և Փրկիչ բարձրացրեց Իր աջով, որ Իսրայելին ապաշխարություն և մեղքերի թողություն տա: Եվ մենք Նրա վկաներն ենք այս բաների համար, և Սուրբ Հոգին էլ, որ Աստված Իրեն հնազանդվողներին տվեց» (Գործք 5.29-32):*

Ինչպիսի՜ խիզախություն և համարձակություն: Աշակերտները վախեցած չէին: Պետրոսը արդեն երկար ժամանակ էր, որ չէր ձգտում պահպանել իր կյանքը: Նա ազատ էր եսասիրությունից և լցված էր Աստծո Սուրբ Հոգով: Աստծո սերը առատությամբ լցված էր նրա սրտում: Ինչպես Հռոմեացիների 5.5-ն ասում է. «Որովհետև Աստծո սերը փռված է մեր սրտերի մեջ Սուրբ Հոգու ձեռով, որ տրվեց մեզ»:

Հասկանալի է, որ Սուրբ Հոգին բերում է Աստծո սերը մեր կյանքերի մեջ: Բայց Պետրոսի օրինակից նաև հասկանալի է, որ Սուրբ Հոգին տրվում է նրանց, ովքեր *հնազանդվում են*: Շա՜տ-շա՜տ քրիստոնյաներ ուզում են սերն ունենալ առանց հնազանդության:

Լեզուներով խոսելը երաշխիք չէ, որ Աստծո սերը կմնա քո սրտում: Սուրբ Հոգով լցված լինելը մեկ անգամյա փորձառություն չէ: Նշանակություն չունի, թե որքան լավ գիտես Սուրբ գիրքը և թե որքան լավ ես խոսում լեզուներով: Եթե դու Աստծո առաջ հնազանդ

կյանքով չես ապրում, քո սերը սկսում է սառել: Յուրաքանչյուր անհնազանդություն կարող է պակասեցնել այդ սերը:

Հիսուսն ասաց, որ վերջին օրերի նշաններից մեկն այն է, որ քրիստոնյաների սրտերում Աստծո սերը կսկսի սառել անօրենության կամ անհնազանդության պատճառով (Մաթ. 24.12): Հիսուսի ասած սերը *ագապե* սերն է: Ովքեր ընդունել են Հիսուսին, միայն նրանք են կրում այս սերը: Հնարավոր է, որ լցված լինես Հոգով, բայց Հոգու իսկական սերը բացակայի:

Պետրոսի ու Հովհաննեսի հնազանդությունը նրանց համարձակություն բերեց և սրտերը լցրեց սիրով:

> *«Եվ առաքյալներին կանչեցին՝ ծեծեցին, ու պատվեր տվին, որ չխոսեն Հիսուսի անունով, և արձակեցին նրանց: Իսկ նրանք ուրախանալով գնացին ատյանի երեսից, որովհետև արժանի եղան Նրա անունի համար անարգվել» (Գործք 5.40,41):*

Պետրոսն ու Հովհաննեսը վախեցած չէին առաջնորդներից. նրանք լցված էին ուրախությամբ: Սրանք շատ էին տարբերվում այն աշակերտներից, որոնք քնել էին պարտեզում: Նրանք ուրախանում էին, որ հալածվեցին ու առիթ ունեցան ցույց տալու իրենց սերն ու հավատարմությունը: Պետրոսը հիմա ոչ միայն զգացմունքային ձևով էր սիրում, այլև իր ողջ էությամբ:

Ֆոուքսի «Աշխարհի քրիստոնյա նահատակները» գրքում պատմվում է, որ Պետրոսը նահատակվեց այնպես, ինչպես Հիսուսն էր ասել: Երբ Պետրոսին պատրաստվում էին խաչել, նա ասաց. «Ես արժանի չեմ մեռնելու այնպես, ինչպես իմ Տերը մահացավ»: Դրա համար էլ նրան խաչեցին գլխիվայր: Պետրոսը հեռացավ այս աշխարհից որպես հաղթող: Ալելուիա՜:

Ումից որ վախենում ես, նրան
էլ կծառայես։

Աստծո երկյո՞ւղ, թե՞ մարդու վախ

Այն ամենը, ինչ մենք կարդացինք և ուսումնասիրեցինք մինչև հիմա, կառաջնորդի մեզ երկչոտության դեմ պայքարի ամենավճռական պահին: Սա կարևոր է ոչ միայն այն ժամանակ, երբ դեմ առ դեմ հանդիպում ենք երկչոտությանը, այլև կյանքի յուրաքանչյուր ոլորտի համար: Ես խոսելու եմ Տիրոջ երկյուղի մասին:

Եկեղեցին չի հասկանում Տիրոջ երկյուղը: Սա դժբախտություն է, որովհետև դա հաղթական քրիստոնեական կյանքի համար կարևոր նախապայման է: Եսային մարգարեացավ Հիսուսի մասին. «Եվ Նրա ախորժանքը Տիրոջ երկյուղն է» (Եսայի 11.3): Նրա նույն հաճությունը (ախորժանքը) պետք է նաև մենք ունենանք:

Այն մարդը, ով երկյուղ ունի Տիրոջից, կառաջնորդվի Աստծո ճանապարհներով (Սաղմ. 25.12): Այդպիսի մարդու «անձը բարության մեջ կբնակվի, և նրա սերունդը երկիրը կժառանգի» (Սաղմ. 25.13):

Մեզ ասվել է, որ Տիրոջ երկյուղը իմաստության և Նրան ճանաչելու սկիզբն է (Առակ. 9.10,1.7,2.5): Տիրոջ երկյուղը կերկարացնի մեր օրերը (Առակ. 10.27): Մեզ զգուշացված է, որ առանց սրբության ոչ ոք չի տեսնի Տիրոջը, քանի որ սրբությունը կատարելագործվում է Տիրոջ երկյուղով (Եբր. 12.14, Բ Կորնթ. 7.1): Եվ սրանք

օրինակներից մի քանիսն են, ինչ Աստվածաշունչն ասում է Տիրոջ երկյուղի մասին:

Երկչոտությունից ամբողջապես ազատ ապրելու միակ ճանապարհը Տիրոջ երկյուղի մեջ քայլելն է: Աստվածաշունչն ասում է. «Տիրոջ վախում զորեղ վստահություն կա, և Նրա որդկանց համար ապավեն պիտի լինի» (Առակ. 14.26): Ուժեղ վստահությունը առաջ է բերում համարձակություն, որը մեզ անհրաժեշտ է, որպեսզի կարողանանք քայլել Աստծո ճանապարհներով, այլ ոչ թե մարդկային:

Եկ քննենք Աստծո երկյուղի և մարդու վախի միջև եղած տարբերությունները:

Աստծո երկյուղի և մարդու վախի տարբերությունները

Նախ քննենք, թե ո՞րն է Աստծո երկյուղը: Այն ներառում է Նրա նկատմամբ հարգանքը, բայց ավելին է քան դա: Աստծուց երկյուղ ունենալը նշանակում է Նրան տալ այն պատիվը, փառքը, հարգանքը, գոհությունը, փառաբանությունը և լավագույնը, որին Նա արժանի է: (Ուշադիր եղիր, որ դա այն է, ինչին Նա արժանի է, այլ ոչ թե, որ մենք ենք կարծում, թե Նա արժանի է): Աստված այս դիրքն ունենում է մեր կյանքում, երբ մենք հարգում ենք Նրան և Նրա ցանկությունները վեր ենք դասում մեր սեփականից: Այդ դեպքում մենք կատենք այն, ինչ Աստված է ատում և կսիրենք այն, ինչ Նա է սիրում, ակնածանք կունենանք Նրա ներկայության և խոսքի հանդեպ:

Երկրորդ՝ եկ քննենք մարդու վախը: Երբ վախենում ես մարդուց, միշտ լինում ես խուճապի, անհանգստության, սոսկումի և կասկածի մեջ՝ վախենալով մահկանացու մարդուց:

Երբ ընկնում ենք վախի այս ծուղակի մեջ, ապրում ենք փախուստի մեջ, թաքնվում ենք վնասից ու մեղադրանքից, մշտապես

խուսափում ենք մերժվածությունից և հակամարտությունից: Մենք զբաղված ենք լինում մեզ պաշտպանելով և մարդկանց ծառայելով, Աստծուն ծառայելու մեջ դառնում ենք անարդյունավետ: Վախենալով այն բանից, թե ինչ կարող է անել մեզ մարդը, մենք չենք տա Աստծուն այն, ինչին Նա արժանի է:

Աստվածաշունչն ասում է մեզ. «Մարդի վախը որոգայթի մեջ կգցի» (Առակ. 29.25): Որոգայթը ծուղակ է: Մարդու նկատմամբ վախը գողանում է քեզ տրված Աստծո իշխանությունը: Այնուհետև քո մեջ հանգում է Աստծո պարգևը: Դու անզոր ես քեզ զգում ճիշտ գործելու համար, որովհետև Աստծո զորությունը չի գործում քո մեջ: Եսայի 51.7-13-ը խրատում է. «Լսե՛ք Ինձ, ով արդարություն ճանաչողնե՛ր, ով ա՛զգ, որ Իմ օրենքն ունես սրտումդ, մի՛ վախեցեք մարդկանց նախատինքից և նրանց բամբասանքից մի զարհուրեք... դու ո՞վ ես, որ վախենում ես մահկանացու մարդից և մարդու որդուց, որ խոտի նման է շինված, և մոռանում ես քեզ ստեղծող Տիրոջը»:

Երբ մենք հաճեցնում ենք մարդկանց՝ խուսափելով նրանց հակառակվելուց, դրանով մոռանում ենք Տիրոջը: Մենք հեռանում ենք Նրա ծառայությունից: «Եթե տակավին մարդկանց հաճո լինեի, Քրիստոսի ծառա չէի լինի» (Գաղատ. 1.10):

Դու կծառայես և կհնազանդվես նրան, ումից վախենում ես: Եթե դու վախենաս մարդուց, դու կծառայես նրան: Եթե դու վախենաս Աստծուց, դու կծառայես Նրան: Դու չես կարող Աստծո երկյուղն ունենալ, եթե վախենում ես մարդուց, որովհետև դու չես կարող ծառայել երկու տերերի (Մաթ. 6.24): Մյուս կողմից՝ դու չես վախենա մարդուց, եթե ունես Աստծո երկյուղը:

Արդյո՞ք պետք է, որ Նոր կտակարանի հավատացյալները Աստծուց վախենան՝ Նրա երկյուղն ունենան

Աստծո երկյուղը մեռած, Հին կտակարանի ուսմունք չէ: Այն ապրելաձև է: Եթե դու սիրում ես Աստծուն, դու կվախենաս միայն Նրանից: Աստծո նկատմամբ եղած քո երկյուղը «կուլ կտա» բոլոր մանր վախերին:

Ես վշտանում եմ, երբ լսում եմ մարդկանց, որոնք Աստծո մասին խոսում են այնպես, կարծես Նա այդ մարդկանց հանձնարարությունը կատարող մի պատանի է: Եթե մի անձնավորություն Նրա մասին այս կարծիքն ունի, նշանակում է նա ճշմարտապես չի ճանաչում Տիրոջը: Նույնիսկ Հիսուսի ամենամտերիմ աշակերտները Նրան Տեր և Վարդապետ էին անվանում (Հովհ. 20.28): Եթե մենք Տիրոջ հետ սովորականի պես ենք վարվում, կորցնում ենք Նրա իրական դիրքի նկատմամբ ողջախոհությունը:

Այսպիսի վերաբերմունքը պատճառ կլինի, որ մենք անհարգալից վարվենք: Այս երևույթը տեսնում ենք և՛ եկեղեցում, և՛ «հավատացյալների» անձնական կյանքերում: Նրանք իրենց անվանում են «հավատացյալներ», բայց արդյո՞ք նրանց ապրելաոճը դա է ցույց տալիս: Հաճախ ես վշտանում եմ, երբ տեսնում եմ, թե մարդիկ ինչպես են գործում եկեղեցում: Մինչև ծառայությունը նրանք, մեկը մյուսից առաջ ընկնելով, տեղ են գրավում և վրդովվում են, եթե ինչ-որ մեկը նստած է լինում իրենց տեղում: Նրանք անդադար զրուցում են ծառայության ընթացքում: Հետո վեր են կենում ու հեռանում են, եթե մտածում են, որ ծառայությունը շատ երկարեց, կամ էլ, եթե նրանց դուր չի գալիս լսածը:

Տագնապեցնող է իրենց հովիվների նկատմամբ նրանց հարգանքի բացահայտ պակասը տեսնելը: Նրանք Աստծո ծառայողների մասին խոսում են այնպես, ինչպես լրատվամիջոցները՝ քաղաքական գործիչների մասին: Հավանաբար շատ ծառայողներ ավե-

լի քաղաքական գործիչների պես են գործել, քան Աստծո մարդկանց: Բայց, միևնույն է, նրանք Աստծո ծառաներն են, և Նրանն է դատաստանը: Երբ մենք վախենում ենք Աստծուց, հարգանք կունենանք նաև Նրա տան, ինչպես նաև Նրա նշանակած ծառաների նկատմամբ: Դավիթը ձեռք չբարձրացրեց Աստծո օծված թագավորի՝ Սավուղի վրա նույնիսկ այն բանից հետո, երբ Սավուղը սպանել էր Տիրոջ ութսունհինգ քահանաներին (Ա Թագ. 22.11-23): Դավիթն ուներ Աստծո երկյուղը:

Ես վշտացած եմ շատ բաներից, ինչ հավատացյալները լսում, դիտում և կարդում են: Ոմանց տներն այցելելիս ինձ համար հետաքրքիր է եղել, թե արդյո՞ք կա որևէ տարբերություն նրանց ապրելաձևի և աշխարհիկ մարդու ապրած կյանքի միջև: Հավասարակշռված, նորմալ և ճանաչված լինելու իրենց որոնման մեջ նրանք մոռացել են, որ Աստված «նորմալ» չի անվանում այն, ինչ աշխարհն է «նորմալ» համարում: Երբ դու ճշմարտապես սիրում ես Աստծուն ու միայն Նրանից ես երկյուղում, կապրես սուրբ և ոչ աշխարհիկ կյանքով:

Պետրոսը հորդորում էր.

> *«Ձեզ կանչող Սուրբի պես դուք էլ սուրբ եղեք ձեր բոլոր վարքերում, որովհետև գրված է՝ սուրբ եղեք, որ Ես սուրբ եմ: Եվ եթե Հայր եք կանչում Նրան, որ առանց աչառության դատաստան է անում ամեն մեկի գործի պես, ապա ձեր պանդխտության ժամանակը վախով վարվեք»*
> *(Ա Պետր. 1.15-17):*

Աստծո երկյուղը մեծ դրդապատճառ է մեզ անաստվածությունից պահպանելու համար:

Եկեղեցին վախենո՞ւմ է

Գործք առաքելոց 2-րդ գլխում աշակերտները լցվեցին Սուրբ Հոգով և խոսում էին լեզուներով ու մարգարեանում: Նրանք այնքան լցված էին, որ կարծես հարբած լինեին: Ծիծաղն ու ուրախությունը հորդում էր այս նոր հավատացյալներից: Աստված զորացնում ու թարմացնում էր նրանց: Սա Աստծուն հաճույք էր պատճառում: Նա վրեժխնդիր Աստված չէ, որ հաճույք ստանա վիատությունից. Նա հաճույք է ստանում սիրո, ողորմության, արդարության, խաղաղության և ուրախության մեջ:

Աշակերտները տեսան շատ մարդկանց, որոնք փրկվեցին հաջորդ մի քանի օրերում: Բայց այս նորադարձներից ոմանք Աստծուն եկել էին ավելի շատ օրհնություններ ստանալու, քան հենց Նրա համար: Այդ պատճառով էլ նրանք Աստծուն չտվեցին արժանի հարգանքը: Աստիճանաբար նրանք սկսեցին շատ «սովորական» վարվել Տիրոջ հետ: Սա էլ պատճառ դարձավ, որ Աստծուն վերաբերող բաները դարձան սովորական: Նրանք ակնածանք չունեին Տիրոջ ներկայության և խոսքի նկատմամբ: Մենք սրա վկայությունը տեսնում ենք Գործք առաքելոց 5-րդ գլխում:

Մի մարդ ու կին իրենց վաճառած հողամասից զոհաբերություն բերեցին: Դա վաճառքից ստացած ամբողջ գումարը չէր: Բայց դրանով ամուսիններն ուզում էին լավ երևալ մյուս հավատացյալների աչքին: Նրանք ավելի պատվեցին աչքի երևույթը, քան ճշմարտությունը, և ավելի վախեցան մարդուց, քան թե Աստծուց:

Ամուսինները բերեցին զոհաբերությունը, խաբեցին (շատերը սա կհամարեին արդարացված սուտ) և ընկան մահացած:

Նրանք մահացան, որովհետև սուտ խոսեցին Աստծո փառքի ներկայության մեջ: Ես մտածում էի այսպես (վստահ եմ, որ դու էլ ես մտածել). «Շատերն են այս օրերին նույնը արել քարոզիչների ներկայությամբ և չեն մահացել: Ինչո՞ւ»:

Ես կարծում եմ, որ դրա պատճառն այն է, որ Գործք առաքելոց գրքի ժամանակաշրջանում Աստծո ներկայությունն ավելի զորավոր էր, քան այսօր: Օրինակ, Գործք առաքելոց գիրքը պատմում է, որ հիվանդները բժշկվում էին, երբ Պետրոսի շուքը ընկնում էր նրանց վրա (Գործք 5.15): Այսօր մենք այս կարգի հրաշքներ չենք տեսնում:

Ես կարծում եմ, որ երբ Տիրոջ ներկայությունն ու փառքը շատանա, կլինեն այն նույն հրաշքները, որոնցից մեկն էլ նկարագրվում է Գործք առաքելոց գրքի 5-րդ գլխում: Ուշադրություն դարձրու, թե ինչ տեղի ունեցավ նրանց մահից հետո.

> *«Եվ մեծ ահ եղավ բոլոր եկեղեցու վրա և ամենքի վրա, որ այս լսեցին» (Գործք 5.11):*

Վերականգնվեց Տիրոջ նկատմամբ ակնածանքն ու հարգանքը: Նրանք հասկացան, որ կարիք ունեին վերանայելու Աստծո ներկայության և օծության նկատմամբ իրենց վերաբերմունքը: Հիշիր, թե Աստված ինչ է ասել.

> *«Ինձ մոտեցողներով պիտի սրբվեմ, և բոլոր ժողովրդի առաջին պիտի փառավորվեմ» (Ղևտացիների 10.3):*

Երբ Աստված լուռ է, բացահայտվում են մեր սրտերը

Աստված պահել է Իր փառքը մեզ փորձելու և պատրաստելու համար: Արդյո՞ք մենք հարգալից կլինենք նույնիսկ այն ժամանակ, երբ Նրա ներկայությունը չի դրսևորվում: Հաճախ շատ հարցերում ժամանակակից եկեղեցին վարվում է Իսրայելի որդիների նման: Փաստորեն Պողոսն ասաց, որ նրանց փորձառությունները գրվեցին որպես օրինակներ մեզ համար (Ա Կորնթ. 10.6):

Իսրայելցիները ոգևորվում էին, երբ Աստված օրհնում էր նրանց և հրաշքներ էր անում: Երբ Աստված բացեց Կարմիր ծովը, անց-

կացրեց նրանց չոր գետնի վրայով և հետո խորտակեց իսրայելցիներին հետապնդող թշնամիներին, նրանք երգում, պարում և աղաղակում էին հաղթանակի համար (Ելից 15.1-21): Այնուամենայնիվ, մի քանի օր անց, երբ Աստծո ամենակարող զորությունը բացահայտ չէր, իսկ սննդի պաշարները վերջանում էին, նրանք տրտնջացին Աստծո դեմ (Ելից 15.22):

Ավելի ուշ Մովսեսը ժողովրդին բերեց Սինա լեռան մոտ, որպեսզի սրբացներ նրանց՝ Աստծուն ներկայանալու համար: Աստված Իր բոլոր ժողովրդի աչքի առաջ իջավ լեռան վրա: Դա բավականին սարսռեցնող էր. ամպրոպ ու կայծակ, լեռան վրա ամպի մի խիտ շերտ: Հետո Մովսեսը ժողովրդին դուրս բերեց ճամբարից Աստծուն հանդիպելու համար, բայց «ժողովուրդը տեսավ և ետ քաշվեց ու հեռու կանգնեց» (Ելից 20.10-18): Նրանք ահաբեկված ետ քաշվեցին ոչ թե Աստծուց վախենալով, այլ իրենց կյանքի համար եղած վախի պատճառով: Երբ Աստված իջավ, բացահայտվեց, որ նրանք իրենց կյանքերն ավելի շատ էին սիրում, քան Աստծուն:

Ժողովուրդն ասաց Մովսեսին. «Դու խոսիր մեզ հետ, և մենք կլսենք, բայց Աստված թող չխոսի մեզ հետ, որ չմեռնենք: Եվ Մովսեսն ասաց ժողովրդին. «Մի՛ վախեցեք, որովհետև Աստված ձեզ փորձելու համար է եկել, այնպես որ Նրա վախը ձեր առաջին լինի, որ չմեղանչեք» (Ելից 20.19,20):

Ուշադրություն դարձրու, որ Աստծո երկյուղը քեզ զորություն է տալիս մեղքի մեջ չընկնելու համար: Առակաց 16.6-ն ասում է. «Տիրոջ վախով մարդ կհեռանա չարից»:

Ելից 20.21-ը շարունակում է պատմությունը. «Եվ ժողովուրդը հեռու կանգնեց, և Մովսեսը մոտեցավ այն թանձր խավարին, ուր որ Աստված է: Մովսեսն ասաց Աստծուն, թե ինչ էին նրանք ասել և թե ինչպես էին վախեցել: Աստված պատասխանեց. «Այս ժողովրդի՝ Քեզ ասած խոսքերի ձայնը լսեցի: Նրանց ամեն ասածը լավ է: Երանի թե նրանց սիրտն էլ այնպես լիներ, որ Ինձնից վախենալով

Իմ բոլոր պատվիրանները պահեին ամեն ժամանակ, որպեսզի իրենց համար բարի լիներ և իրենց որդկանցն էլ՝ հավիտյան»» (Երկր. օր. 5.28,29):

Ուշադրություն դարձրու, որ ժողովուրդը ետ քաշվեց, մինչդեռ Մովսեսն ավելի մոտեցավ: Սա ցույց է տալիս տարբերությունը Մովսեսի և Իսրայելի միջև: Մովսեսը երկյուղ ուներ Աստծուց, այդ պատճառով էլ նա անվախ էր: Մարդիկ երկյուղ չունեին Աստծուց, դրա համար էլ նրանք վախեցան: Աստծո երկյուղը քեզ ոչ թե հեռացնում, այլ ձգում, տանում է Աստծո ներկայության մեջ: Այնուամենայնիվ, մարդու նկատմամբ եղող վախը պատճառ է դառնում, որ դու ետ քաշվես Աստծուց և Նրա փառքից:

Երբ մենք կապված ենք մարդու վախով, ավելի հարմարավետ կզգանք մարդկանց ներկայության մեջ, քան թե Աստծո (նույնիսկ եկեղեցում): Պատճառն այն է, որ Աստծո ներկայությունը բացում է մեր սրտերը և բերում է հանդիմանություն:

Ոչ թե Սինան, այլ՝ Սիոնը

Որպեսզի ապացուցենք, որ Աստծո երկյուղը Նոր կտակարանի իրականություն է, դառնանք Եբրայեցիների գրքի այս ուղերձին.

> *«Որովհետև դուք չեք մոտեցել շոշափելի սարին, որ կրակով վառված էր, և այն մեգին, և խավարին, և մրրիկին, և փողի հնչումին, և խոսքերի ձայնին, որից հրաժարվեցին լսողները, որ խոսքը չշարունակվի նրանց, որովհետև չէին դիմանում այն հրամանին՝ եթե մի անասուն էլ մոտենա սարին, քարկոծվի կամ նետով սպանվի: Եվ այնպես ահավոր էր տեսիլքը, որ Մովսեսն ասում էր, թե զարհուրում եմ և դողում: Այլ մոտեցել եք Սիոն սարին…» (Եբր. 12.18-22):*

Առաջինը մեզ հիշեցնում է, թե ինչ տեղի ունացավ Սինա լեռան

մոտ: Այնուհետև մեզ ասվում է Սիոն լեռան մասին, որին մենք մոտեցել ենք: Երկրի վրա Աստված խոսեց Սինա լեռի մասին: Այժմ նույն Աստված խոսում է երկնքից նոր լեռան՝ Սիոնի մասին:

> *«Զգույշ եղեք, որ չմերժեք Նրան, որ խոսեց, որովհետև եթե չկարողացան պրծնել երկրի վրա պատգամ Տվողին մերժողները, ապա որքա՜ն ավելի մենք, եթե երկնքից խոսողին մերժենք» (Եբր. 12.25):*

Ուշադրություն դարձրու «որքա՜ն ավելի» բառերին: Մեր դատաստանը շատ ավելի դաժան է լինում, երբ մենք չենք լսում և չենք հնազանդվում Աստծո ձայնին: Այն շնորհքը, որ մեզ տրված է Նոր ուխտի շնորհիվ, նրա համար չէ, որ այն օգտագործենք մեր ուզած ձևով ապրելու համար: Ինչո՞ւ իսրայելցիներն ուշադրություն չդարձրին Նրա ձայնին. նրանք Աստծուց երկյուղ չունեին: Մինչ շարունակում ես կարդալ, սա պահի՛ր քո մտքում և հստակ կտեսնես, որ Նոր կտակարանում մարդիկ չէին լսում այս նույն պատճառով:

> *«Ուստի անշարժ թագավորություն ընդունած լինելով՝ պինդ բռնենք այն շնորհքը, որով պաշտում ենք հաճությամբ Աստծուն, ահով և երկյուղածությամբ, որովհետև մեր Աստված փչացնող կրակ է» (Եբր. 12.28):*

Ուշադրություն դարձրու, որ ասվում է «ահով և երկյուղածությամբ» (անգլերենում՝ «հարգանքով և աստվածային երկյուղով»): Եթե Աստծո երկյուղը սահմանափակվեր միայն հարգանքով (ահով), հեղինակը չէր առանձնացնի աստվածային երկյուղը (երկյուղածությունը): Ուշադրություն դարձրու նաև, որ հեղինակը չէր եզրակացնում, թե «Աստված սիրող Աստված է», այլ ավելին՝ «Աստված փչացնող կրակ է»: Աստծո մասին այս հայտարարությունը բացատրում է, թե ինչու Իսրայելի որդիները ետ քաշվեցին Նրա ներկայությունից: «Այս մեծ կրակը մեզ սպառելու է, եթե մենք մեր

Եհովա Աստծո ձայնը կրկին լսելու լինենք, կմեռնենք» (Երկր. օր. 5.25):

Այո՛, Աստված սեր է, բայց Նա նաև մաշեցնող կրակ է: Մեր եկեղեցիներում մենք շեշտել ենք Աստծո սերը և շատ քիչ ենք լսել Աստծո երկյուղի մասին. մեզ չի քարոզվել Աստծո ամբողջական խորհուրդը, մեր պատկերացումը սիրո մասին աղավաղված է:

Մեր քարոզած սերը թույլ սեր է: Այն չի կարող մեզ առաջնորդել սուրբ կյանքի: Այն ջուր է լցնում մեր կրակի վրա և մեզ գոլ է դարձնում: Մենք դարձել ենք երես առած երեխաների նման, որոնք հարգանք չունեն իրենց հոր նկատմամբ: Եթե մենք չենք աճում Աստծո երկյուղի մեջ, վտանգ կա, որ Աստված և այն բաները, որոնք Նա սուրբ է համարում, սովորական կդառնան մեզ համար:

Ուշադրություն դարձրու նաև այս խոսքին. «Պինդ բռնենք այն շնորհքը, որով հաճությամբ պաշտում ենք Աստծուն, ահով և երկյուղածությամբ» (Եբր.12.28): Շնորհքը մեզ տրված չի պարզապես Աստծո նկատմամբ մեր անարգանքն ու մեղքը ծածկելու համար: Այն մեզ կարողություն է տալիս Աստծուն արժանի ձևով ծառայելու համար: Արժանի ձևով ծառայել նշանակում է ծառայել սիրով, հարգանքով և երկյուղով:

Պողոսը նաև ավելացնում է. «Ահով և դողալով գործե՛ք ձեր անձերի փրկությունը» (Փիլիպ. 2.12): Որտե՞ղ է մեր ահն ու դողը: Մենք մոռացել ենք, որ Նա արդար Դատավոր է: Մենք մոռացե՞լ ենք Նրա դատաստանը: Ուշադրությամբ կարդա հետևյալ հորդորը.

> *«Մի՛ ամբարտավանա, այլ վախեցիր: Որովհետև եթե Աստված բնական ճյուղերին չխնայեց, միգուցե քեզ էլ չխնայի: Արդ տես Աստծո քաղցրությունը և սաստկությունը, կործանվածների վրա սաստկությունը և քեզ վրա քաղցրությունը, եթե այն քաղցրությունով կենաս, ապա թե ոչ, դու էլ կկտրվես» (Հռոմ. 11.20բ-22):*

Մենք լավ գիտենք Աստծո բարության մասին, այնուամենայնիվ

մենք չպետք է հաշվի առնենք միայն Նրա բարությունը: Մենք պետք է հասկանանք նաև Աստծո խստությունը: Աստծո բարությունը մոտեցնում է մեզ Նրա սրտին, իսկ Նրա խստությունը մեզ պահպանում է հպարտությունից և բոլոր տեսակի մեղքերից: Եթե մարդը հաշվի է առնում միայն բարությունը, դրանով մերժում է երկյուղը, որը պահպանում է հպարտությունից և աշխարհիկ լինելուց: Նմանապես, եթե մարդը միայն հաշվի է առնում Աստծո խստությունը, հեշտությամբ կընկնի օրինապահության ծուղակի մեջ: Երկուսն էլ՝ և՛ Աստծո սերը, և՛ Աստծո երկյուղը պահում են մեզ այս կյանքի նեղ արահետում:

Հուսով եմ, որ հասկանում ես, որ ես մտածված շեշտում եմ Աստծո երկյուղը, որն այնքան անտեսված է մեր ժամանակակից եկեղեցում: Ես անսահման սիրով սիրում եմ Աստծուն և ուրախ եմ Նրա զավակը լինելու ու Նրան ծառայելու արտոնության համար: Ես գիտեմ, որ հենց Աստծո բարությունն է մեզ տանում ապաշխարության (Հռոմ. 2.4): Ես գիտեմ նաև, որ հենց Աստծո երկյուղն ու Նրա դատաստանն է մեզ պահում գիտակցված մեղք գործելուց:

> *«Որովհետև եթե մենք ճշմարտության գիտությունն ընդունելուց հետո հոժար կամքով մեղք գործենք, այլևս նրանից հետո մեղքերի համար զոհ չի մնում, այլ դատաստանի ահավոր սպասելը և կրակի զայրույթը, որ հակառակողներին կլափի: Մեկը, որ Մովսեսի օրենքն անարգում էր առանց ողորմության, երկու կամ երեք վկայի խոսքով, մեռնում էր: Էլ որքա՞ն ավելի, կարծում եք, սաստիկ պատժի կարժանանա նա, որ Աստծո Որդուն ոտքի տակ կոխեց, և ուխտի արյունը պիղծ համարեց, որով նա սրբվեց, և շնորհքի Հոգուն նախատեց: Որովհետև գիտենք Նրան, որ ասաց՝ Իմն է վրեժխնդրությունը, ես հատուցումը կտամ,- ասում է Տերը, և դարձյալ, թե Տերը կդատի Իր ժողովրդին: Սարսափելի բան է կենդանի Աստծո ձեռքն ընկնելը» (Եբր. 10.26-31):*

Մարդը մեղքի մեջ է ընկնում, երբ նա հասարակ կամ սովորական է համարում այն, ինչ Աստված համարում է սուրբ: Շատ հաճախ թեթևամիտ ենք վարվում այն բաների հետ, որոնց Աստված լրջորեն է վերաբերվում, և, հակառակը, լրջորեն ենք վերաբերվում այն բաներին, որոնց Աստված բնավ կարևորություն չի տալիս: Մեզ համար կարևորն այն է, որ մարդկանց հանդեպ հարգալից երևանք, մինչդեռ դա այդքան կարևոր չէ Աստծո համար, որքան մեր սրտի շարժառիթները:

Ես ճանաչել եմ մարդկանց, ովքեր գտնվում էին մեղքի ծուղակի մեջ և ամեն հարմար առիթի ասում էին, թե սիրում են Հիսուսին: Նրանք իրենց հոգևոր վիճակը չափում էին նրանով, թե ինչ էին զգում Հիսուսի հանդեպ: Բայց արդյո՞ք նրանք Հիսուսին սիրում էին այն աստիճան, որ պատրաստ էին մեռնել իրենց գերող մեղքի համար: Ո՛չ, նրանք չունեին Աստծո երկյուղը:

Մի անգամ գնացի բանտ մի ծառայողի այցելելու, որն ընկել էր կաշառակերության, սեռական անբարոյականության մեջ: Նա ասաց ինձ. «Զո՛ն, ես միշտ սիրում էի Հիսուսին, նույնիսկ այն ժամանակ, երբ խաբված էի: Հիսուսն իմ Փրկիչն էր, բայց ոչ իմ Տերը»: Նա որոշումներ էր կայացրել մարդու վախից դրդված: Նա ցանկացել էր հաճեցնել մարդկանց: Այդ ծառայողը ցանկացել էր փառավորվել մարդկանցից: Սա բերել էր նրան չարաշահումների: Բանտում Աստված ցույց տվեց նրան Իր սերն ու ողորմությունը և սովորեցրեց Տիրոջ երկյուղը: Հիմա նա ունի Տիրոջ երկյուղը և վերականգնվել է:

Մերժելով Աստծո հրավերը

Վերադառնալով Սինա լեռան օրինակին՝ ես ուզում եմ ցույց տալ մի բան, որը շատ մարդիկ չեն նկատում: Աստված և՛ Մովսեսին, և՛ Ահարոնին ասաց բարձրանալ լեռը (Ելից 19.24): Մովսեսը

բարձրացավ, բայց որոշ պատճառներով մենք Ահարոնին կրկին տեսնում ենք ներքևում (Ելից 32.1): Ես կարծում եմ, որ Ահարոնը վերադարձավ ժողովրդի մոտ, որովհետև նա իրեն ավելի հարմարավետ էր զգում մյուս «հավատացյալների» հետ, քան Աստծո ներկայության մեջ: Մի՞թե մենք այսօր այսպիսին չենք մեր եկեղեցիներում: Մեզ համար եկեղեցի հաճախելը, ուրիշ քրիստոնյաների հետ ընկերությունը, ծառայողական պարտականություններում զբաղված լինելն ավելի հարմարավետ են, քան Տիրոջ հետ լինելը: Մենք խուսափում ենք Տիրոջ հետ մենակ լինելուց, փոխարենը մեզ շրջապատում ենք մարդկանցով և գործերով՝ հույս ունենալով, որ սա կծածկի մեր դատարկությունը:

Մյուս կողմից, Հեսուն Աստծո ուզած սիրտն ուներ: Նա ուզում էր որքան հնարավոր է շատ լինել Աստծո ներկայության մեջ: Մինչ Մովսեսն Աստծո հետ էր, Հեսուն քառասուն օր մնաց լեռան ստորոտում (Ելից 32.17): Նա մոտեցավ Աստծուն այնքան, որքան կարող էր, բայց չգնաց այնտեղ, որտեղ միայն Մովսեսն ու Ահարոնն էին հրավիրված: Հեսուն իր մեջ այնքան երկյուղ ուներ Աստծուց, որ մեծամիտ չէր կարող լինել:

Մինչ Հեսուն սպասում էր լեռան ստորոտում, ժողովուրդը գնալով անհանգիստ էր դառնում: Նրանք արտասովոր վայրում էին. նրանց առաջնորդը մեկ ամսից ավել է գնացել էր, իսկ Աստված մինչև հիմա Իրեն չէր հայտնել: Մարդիկ սկսեցին կասկածել Աստծուն և Մովսեսին.

> *«Եվ ժողովուրդը տեսավ, որ Մովսեսը ուշացավ սարիցն իջնելու, և Ահարոնի մոտ ժողովվեցին ժողովուրդը և ասացին նրան. «Վեր կաց, մեզ համար աստվածներ շինիր, որ մեր առաջին գնան, որովհետև այդ Մովսես մարդը, որ մեզ Եգիպտոսի երկրից հանեց, չգիտենք, թե ինչ եղավ նրան»» (Ելից 32.1):*

Նրանք ցույց էին տալիս, թե հարգում են Աստծուն և վախենում

Նրանից: Մարդիկ դժգոհում էին. «Օ՜, Մովսես: Նա շատ ահեղ է: Դու Նրա հետ խոսիր և հայտնիր մեզ, թե Նա ինչ ասաց: Մենք կլսենք ու կհնազանդվենք»: Նրանք հենց նոր էին տեսել, թե որքան զորավոր էր Աստված, մինչդեռ երկյուղ չունեին Նրանից, քանի որ իրենց համար կուռքեր էին շինել: Այժմ, երբ Աստված լռեց, նրանց իրական բնույթը հայտնի դարձավ:

Երբ Աստված հրաշքներ էր անում և ցույց էր տալիս Իր զորությունը, այդ ժամանակ հեշտ էր վախենալ Աստծուց: Բայց Աստված փնտրում է նրանց, ովքեր կհարգեն և կվախենան Իրենից նաև այն դեպքում, երբ չեն զգա Նրա ներկայությունը կամ զորությունը. փնտրում է նրանց, ովքեր նման են այն երեխաներին, ովքեր հնազանդ են նույնիսկ այն ժամանակ, երբ հայրը չի հետևում նրանց: Ճշմարիտ հնազանդությունը ցուցադրելու համար չէ:

Աստված ասաց Իսրայելին. «Չէ՞ որ Ես լռել եմ և այն էլ վաղուց ի վեր, և դու Ինձանից չես վախենում» (Եսայի 57.11): Նրա համար կարևոր էր այս հարցը. «Ինչո՞ւ Իմ ժողովուրդը չի վախենում Ինձանից»: Հետո Նա պատասխանեց Իր տված հարցին՝ բացատրելով, որ ժողովուրդը չէր վախենում Իրենից, որովհետև Նա որոշ ժամանակ չէր հայտնել Իրեն ահեղ զորությամբ: Այլ կերպ ասած՝ երբ մարդիկ չէին տեսնում Նրա հզոր գործերը, իրենց պահում էին այնպես, կարծես Նա այդտեղ չէր: Աստծո լռությունը բացահայտում է մարդկանց սրտերի իրական շարժառիթները:

Ճշմարիտ հավատացյալը երևում է անապատում՝ փորձությունների ժամանակ, այլ ոչ թե օծված զորավոր ծառայությունների ժամանակ: Ինչպես որ մարդը դրսևորում է իրեն «ճնշման» ժամանակ, այդպիսին էլ նա կա իրականում: Տե՛ս, թե ինչ արեց Ահարոնը ճնշման տակ.

> *«Եվ Ահարոնն ասաց նրանց. «Ձեր կանանց, ձեր որդիների և ձեր աղջկերանց ականջներին եղած ոսկի օղերը հանեք և ինձ մոտ բերեք»: Եվ բոլոր ժողովուրդն իրենց*

ականջների եղած ոսկի օղերը հանեցին և Ահարոնի մոտ բերին: Եվ նա առավ նրանց ձեռքից և քանդակագործելով ձևակերպեց նրան և շինեց մի ձուլածո հորթ: Եվ ասացին. «Սրանք են քո աստվածները, ով Իսրայե՛լ, որ քեզ Եգիպտոսի երկրից հանեցին»» (Ելից 32.2-4):

Նրանք Աստծո օրհնությունից՝ Եգիպտոսի ավարից մի կուռք շինեցին: Բայց ավելի շատ ահավորն այն էր, որ Ահարոնը, որը չպետք է բարձրանար լեռը, կուռք շինեց: Նա եղել էր Մովսեսի խոսնակը: Ահարոնը կանգնել էր նրա կողքին և տեսել բոլոր մեծ հրաշքները և աղետները: Բայց հիմա նա վախեցավ մարդկանցից և տվեց նրանց այն, ինչ ուզում էին: Ահարոնը մարդուց ավելի շատ էր վախենում, քան Աստծուց, դրա համար էլ նա հեշտությամբ վախեցավ մարդկանցից: Ահարոնի մեջ ոչ մի համարձակություն չկար. Աստծո պարգևը հանգել էր: Սա էլ նրան դարձրեց թույլ առաջնորդ: Երբ Մովսեսը հանդիմանեց Ահարոնին, վերջինս մեղադրեց ժողովրդին, որից վախեցած էր:

«Եվ Ահարոնն ասաց. «Թող իմ տիրոջ բարկությունը չբորբոքվի, դու գիտես այս ժողովրդին, որ չարամիտ է: Եվ ինձ ասացին, թե մեզ համար աստվածներ շինիր, որ մեր առաջին գնան, որովհետև այս Մովսես մարդը՝ մեզ Եգիպտոսի երկրից հանողը, չգիտենք, թե նրան ինչ եղավ: Եվ ես ասացի նրանց. «Ով որ ոսկի ունի, թող հանեն և բերեն ինձ մոտ, և ես կրակը գցեցի այն և դուրս եկավ այս հորթը»» (Ելից 32.22-24):

Ահարոնը պատասխանատվություն չվերցրեց իր արածի համար: Այո՛, նրա գնահատականը ժողովրդի համար ճիշտ էր: Դա նրանց գաղափարն էր և ոչ թե Ահարոնի: Բայց քանի որ Ահարոնը վախենում էր նրանցից, նա այնքան ուժեղ չէր, որ կոտրեր ամբոխից եկող վախը և ճիշտ ձևով առաջնորդեր նրանց: Ահարոնը գայթակղվեց մարդկանց վախից:

Աստծո երկյուղ, թե՞ մարդու վախ

Այն առաջնորդները, որոնք մարդկանցից վախենում են, կնահանջեն և մարդկանց կտան ոչ թե այն, ինչի կարիքը նրանք ունեն, այլ այն, ինչ նրանք են ուզում: Նրանք հեշտությամբ դառնում են երկչոտության զոհը: Նշանակություն չունի, թե առաջնորդի խոսքերով որքան է ինքը սիրում Աստծուն և Նրա ժողովրդին: Քանի դեռ առաջնորդը վախենում է մարդուց, նա չի տեսնի իրական առաջընթաց ո՛չ իր և ո՛չ էլ իր առաջնորդած ժողովրդի մեջ:

Այն մարդը, որը երկյուղ ունի Աստծուց, նրան մտահոգում է միայն այն, թե ինչ է Աստված ասում Իր մասին: Այն մարդը, որը վախենում է մարդկանցից, ավելի մտահոգված է, թե ինչ կարծիք ունեն մարդիկ իր մասին, քան թե Աստված: Մարդկանց չանարգելու համար, նա անարգում է Աստծուն:

Ես տեսել եմ առաջնորդների, ովքեր որոշել են մարդկանց տալ այն, ինչ նրանք են ուզում: Նրանց շարժառիթը մարդկանց մեջ հանրահայտ մնալն է: Իհարկե, նրանք երբեք չեն ընդունի սա: Նրանք արդարացնում էին իրենց որոշումները բերելով հետևյալ պատճառաբանությունները. «Մենք չենք ուզում վիրավորել մարդկանց», «Սա լավագույն միջոցն է, որ բավարարում է բոլորին», «Այսպես վարվելով շատ մարդկանց կարող ենք ծառայել»: Աստծո արքայությունը ժողովրդավարություն (դեմոկրատիա) չէ. այն թագավորություն է: Հանրահայտ լինելը կարևոր չէ: Նրանք չէին պատկերացնում, որ իրենք վախից և երկչոտությունից դրդված էին գործում: Նրանց գործողությունները արմատավորված էին ոչ թե մարդկանց հանդեպ ունեցած սիրո մեջ, այլ իրենց անձնասիրության:

Ի՞նչ է տեղի ունենում, երբ մենք չենք վախենում Աստծուց

Աստված ասաց Մովսեսին. «Երանի թե նրանց սիրտն էլ այնպես լիներ, որ Ինձանից վախենալով Իմ բոլոր պատվիրանները պահեին» (Երկր. օր. 5.29): Բայց մարդիկ չվախեցան, և տեսեք, թե ինչ տեղի ունեցավ: Տերն ասաց Մովսեսին. «Մարդիկ ուղարկիր, որ լրտեսեն Քանանի երկիրը, որ Ես Իսրայելի որդկանց պիտի տամ» (Թվոց 13.3): Ուշադիր եղի՛ր, որ Աստված ասաց. «Ես... պիտի տամ»: Նա չասաց՝ լրտեսեն երկիրը և տեսնեն, թե կարո՞ղ են այն վերցնել:

Այսպիսով, Մովսեսը ուղարկեց նրանց: Քառասուն օր նրանք հետախուզեցին երկիրը և հայտնաբերեցին, որ բնակիչները հաստատված էին այս երկրում, իսկ քաղաքները շատ մեծ էին և լավ պաշտպանված:

Բոլոր տասներկու լրտեսները տեսան նույն մարդկանց, միևնույն բանակները, նույն ամուր քաղաքները և նույն հսկաներին: Հեսուն և Քաղեբը պատրաստ էին միանգամից գնալ և վերցնել այն, ինչ Աստված խոստացել էր: Սակայն մյուս տասը լրտեսները վախեցած էին իրենց տեսածից: Նրանք տեսան միայն մեծ բանակները և հսկաներին, մինչդեռ Հեսուն ու Քաղեբը տեսան, թե որքան բարի և հավատարիմ էր Աստված:

Տասը լրտեսները պատմեցին ժողովրդին, որ անհնար է վերցնել այդ երկիրը: Նրանք ավելի քան չորս հազար տարի ստրուկ էին եղել և պատերազմի մեջ հմուտ չէին այդ երկրում իրենց տեսած բանակների նման: Ժողովուրդն անմիջապես վախեցավ և սկսեց դժգոհել.

> *«Եվ ինչո՞ւ համար Եհովան մեզ այս երկիրը բերեց, որ սրով ընկնե՞նք և մեր կանայք ու մեր որդիները հափշտակվե՞ն, լավ չէ՞ մեզ համար Եգիպտոս դառնանք» (Թվոց14.3):*

Այս խոսքում մենք տեսնում ենք մարդկանց վախի արմատը. «Ի՞նչ է, այդ երկրում ավելի լավ չի լինելո՞ւ մեզ համար»: Այս մարդիկ վախեցած էին, որովհետև մտածում էին միայն իրենց մասին: Նրանք չասացին՝ Աստծո ասածն ամենալավն է: Փոխարենը նրանք հարցնում էին. «Ի՞նչն է մեզ համար լավագույնը»:

Ինչպե՞ս սա հասկանալ: Մարդու վախի արմատը եսասիրությունն է: Երբ դու սիրում ես քո կյանքը, ջանում ես փրկել այն: Դու կվախենաս այն ամենից, ինչը սպառնում է կյանքիդ: Աստված այս մարդկանց բերեց մի տեղ, որտեղ նրանք ոչ մի ընտրություն չունեին, այլ պետք է վստահեին Իրեն: Մարդկանց թվում էր, թե այս նոր երկրի բնակիչները կկոտորեն իրենց: Աստծուն վստահելու փոխարեն նրանք այնպես էին իրենց պահում, կարծես Աստված նրանց եգիպտացիներից փրկել էր միայն այն բանի համար, որ քանանացիներից սպանվեին: Իհարկե սա անհեթեթ է հնչում, բայց երբեմն մեզանից պահանջվում է հետևելով Տիրոջը մտնել այնպիսի իրավիճակների մեջ, որոնք մեր կյանքի համար վտանգավոր և վնասակար են թվում:

Այդպիսի պայմաններում մենք Տիրոջը կարող ենք հետևել միայն այն դեպքում, երբ մեր սրտերում համոզված ենք, որ Աստված բարի է: Նրա մեջ ամեն բան բարի է: Նա երբեք որևէ բան չի անի միայն Իր օգուտի համար, որը կվնասի մեզ: Մենք պետք է հիշենք, որ Աստված ամեն ինչ դատում է հավիտենականության տեսանկյունից, իսկ մարդը՝ յոթանասուն կամ ութսուն տարիների:

Աստծո մերժո՞ւմը, թե՞ մարդու

Քաղեբն ու Հեսուն ընտրեցին դժվարին ուղին: Աստված ասաց, որ նրանք իրենց մեջ ուրիշ հոգի ունեին և Իրեն ամբողջությամբ էին հետևում: Մնացած բոլորը չէին ուզում իրենց բարեկեցությունը վտանգի ենթարկել Աստծուն հնազանդվելով: Աստված հավատա-

րիմ էր Քաղեբին ու Հեսուին: Նրանք այդ սերնդի միակ մարդիկ էին, ովքեր մտան խոստացված երկիրը (տե՛ս Թվոց 14.24.30):

Նրանք, ովքեր ձգտեցին փրկել իրենց կյանքը, կորցրին այն: Աստված խոսեց նրանց ապագայի մասին՝ ասելով. «Բայց ձեր դիակներն այս անապատում կընկնեն... և կճանաչեք Իմ մերժումը» (Թվոց 14.32,34): Երբ հասկանում ես, որ շատերը կմերժվեն Աստծուց, որովհետև նրանք վախենում են մերժվել մարդուց, սթափեցնում է քեզ:

Ես աղոթում եմ, որ մենք բոլորս սովորենք հաճույք ստանալ Տիրոջ երկյուղից, քանի որ «Տիրոջ երկյուղը կենաց աղբյուր է մահվան որոգայթներից խույս տալու համար» (Առակ. 14.27):

Հաջորդ գլխում դու կտեսնես, թե ինչպես Տիրոջ երկյուղը կօգնի քեզ երկչոտության ժամանակ ընթանալ Աստծո կամքի մեջ:

Տիրոջ երկյուղը բերում է վստահություն եւ համարձակություն։

Գործե՞լ, թ՞ե արձագանքել

Երկչոտությունը կարող է գալ հանգամանքների, մտքերի կամ մարդկանց միջոցով: Շատ մարդիկ պայքարում են այն երկչոտության դեմ, որը գալիս է ուրիշ մարդկանց միջոցով: Մարդու վախը այս տեսակի ճնշման ճշգրիտ նկարագրություն է:

Մարդու նկատմամբ վախը ստիպում է, որ մենք խուսափենք մարդուց մերժված, վիրավորված և հանդիմանված լինելուց՝ հաշվի չառնելով, որ դրանով իսկ մերժում ենք Աստծուն: Եթե մի անձնավորություն վախենում է մարդուց, նա դրանով վիրավորում (անարգում) է այն Մեկին, Ում չի կարող տեսնել, որպեսզի չվիրավորի նրան, ում կարող է տեսնել:

Հիսուսը հորդորում է մեզ. «Բայց ասում եմ ձեզ՝ Իմ բարեկամներին, մի վախեցեք նրանցից, որ մարմինը սպանում են, և նրանցից հետո ավելի բան չունեն, որ անեն: Բայց ցույց տամ ձեզ, թե Ումից պետք է վախենաք, որ սպանելուց հետո իշխանություն ունի գեհենի մեջ գցելու. այո՛, ասում եմ ձեզ, Նրանից վախեցե՛ք» (Ղուկ. 12.4,5):

Եթե դու վախենում ես մարդկանցից, երբ Աստված քեզ առաջնորդում է դժվարության կամ նեղության մեջ, դու կփորձես պաշտպանել ու պահպանել ինքդ քեզ, Աստծո կամքը փնտրելու փոխարեն, դու կփորձես անել քոնը: Սակայն եթե դու երկյուղ ունես Աստ-

ծուց, կարող ես անցնել ցանկացած դժվարության միջով և դրանով պատվել Աստծուն:

Այդ դեպքում դու հասկանում ես, որ միայն Նա կարող է պահպանել քեզ: Դու վստահ կլինես, որ Աստված գիտի, թե ինչն է լավագույնը հավիտենական արժեքների համակարգում:

Տիրոջ երկյուղի մասին մի զորավոր խոստում կա Առակաց գրքում.

> *«Տիրոջ վախում զորեղ վստահություն կա, և Նրա որդկանց համար ապավեն պիտի լինի: Տիրոջ երկյուղը կենաց աղբյուր է մահվան որոգայթներից խույս տալու համար» (Առակ. 14. 26,27):*

Մյուս կողմից՝ Սուրբ գիրքը պարզ ասում է.

> *«Մարդու վախը որոգայթի մեջ կգցի» (Առակ. 29.25):*

Երկչոտությունը որոգայթ է կամ ծուղակ, բայց Տիրոջ երկյուղը բերում է վստահություն և համարձակություն: Սրանք հենց այն միջոցներն են, որոնցով ազատվում ենք երկչոտության ծուղակից:

Ճնշումը բացահայտում է

Ես ուզում եմ համեմատել երկու թագավորների: Նրանք երկուսն էլ կառավարում էին նույն թագավորությունը, երկուսն էլ պաշտում էին նույն Աստծուն: Նրանցից մեկը մերժվեց Աստծուց, իսկ մյուսին Աստված հարգում էր որպես Իր սրտի համեմատ մարդու: Համեմատելով այս մարդկանց կյանքերը՝ մեզ համար պարզ և հասկանալի է դառնում Աստծո երկյուղի ու մարդու վախի միջև տարբերությունը: Եկ նայենք Սավուղի կյանքի ամենադրամատիկ և ամենաքիչ ուսումնասիրված դեպքերից մեկը: Պատմությունը սա է:

Սավուղն արդեն թագավորում էր երկու տարի: Ինչպես շատ

դեպքերում է լինում, այս «մեղրամսի» ընթացքում չբացահայտվեց նրա իրական բնավորությունը: Որոշ ժամանակ անց նրա շարժառիթներն ի հայտ եկան:

Մինչ Սավուղն իր ամենալավ մարտիկների հետ գտնվում էր Մաքմասում, փղշտացիները միասին հավաքվեցին նրա դեմ պատերազմելու (Ա Թագ. 13. 5-15): Սա ամենաուժեղ բանակն էր, որին հանդիպեց Սավուղը: Թշնամին ուներ երեսուն հազար կառք և վեց հազար ձիավոր, իսկ զինվորների բազմությունը համեմատվում էր ծովեզրի ավազի հետ: Անկասկած սա մի վիթխարի բանակ էր: Երեսուն հազար կառքի դեմ կանգնելը նույնն է, ինչ երեսուն հազար տանկի դեմ կանգնելը: Դրա հետ մեկտեղ բանակն այնքան մեծ էր, որ հնարավոր չէր հաշվել: Իսրայելի բանակի համար սա շատ սարսափեցնող տեսարան էր:

Սավուղի ահաբեկված զինվորները թաքնվեցին թփերի, փոսերի, քարանձավների մեջ և ժայռերի ետևում: Նրանք ընկճված էին: Ոմանք փախան ոտքով, անցան Հորդանանը, մտան Գադի և Գաղաադի երկիր, մինչդեռ մյուսները, ովքեր շարունակում էին հետևել Սավուղին, դողում էին վախից:

Ճակատամարտից առաջ Իսրայելը պետք է ողջակեզ աներ Տիրոջ առաջ: Սամվելը Տիրոջ կողմից պատվիրել էր Սավուղին՝ ասելով, որ որոշված ժամանակին ինքը կներկայանա՝ Տիրոջը ողջակեզ մատուցելու համար: Սավուղը «Սամվելի որոշած ժամանակի չափ յոթ օր սպասեց, բայց Սամվելը Գաղգաղա չեկավ, և ժողովուրդը նրա մոտից ցրվեց» (Ա Թագ. 13.8):

Ճնշման տակ Սավուղն ասաց. «Ողջակեզը և խաղաղության զոհը ինձ մոտ բերեք»: Նա ողջակեզ արեց և հենց նոր էր վերջացրել այն, երբ Սամվելը եկավ:

Սամվելը հարցրեց Սավուղին, թե ինչ է նա արել: Ուշադրություն դարձրու Սավուղի պատասխանին.

«Տեսա, որ ժողովուրդն իմ մոտից ցրվում է, և դու քո որոշած օրերիդ չեկար, և փղշտացիները ժողովված են Մաքմասի մեջ: Այն ժամանակ ասացի. «Փղշտացիները հիմա ինձ վրա կիջնեն Գաղգաղա, և ես տակավին Տիրոջ առաջին աղոթք չեմ արել, և ես ինձ ստիպելով ողջակեզ մատուցեցի»» (Ա Թագ. 13.11,12):

Սամվելը հանդիմանեց Սավուղին՝ ասելով, որ նա հիմարություն է արել՝ չպահելով Տիրոջ պատվիրանը:

Այսպիսով, քանի որ մենք տեսանք, թե ինչ տեղի ունեցավ, պատկերացրու քեզ Սավուղի փոխարեն: Դու առաջնորդ ես: Դու և քո մարդիկ յոթ օր է, որ հանդիպել եք մի մեծ բանակի: Թշնամին թվով գերազանցում է, և օրըստօրե թշնամու շարքերն ավելի են մեծանում, իսկ քո բանակը նվազում է: Քո մարդիկ վախենում են թշնամուց և ինքնակամ լքում են բանակը: Եվ մի քանիսը, որ մնացել են, ահաբեկված են: Դու շարունակում ես սպասել Աստծո մարգարեին, իսկ նա ժամանակին չի հայտնվում ողջակեզ անելու համար:

Վիթխարի ճնշում կա քեզ վրա: Սա մի «ձիթհանի» իրավիճակ է: Քո շուրջ գտնվողները շտապեցնում են քեզ. «Մի բան արա՛, թե չէ բոլորս կմեռնենք»: Դու կսպասե՞ս, ինչպես Տերն է պատվիրել, թե՞ քայլ կանես քեզ փրկելու համար:

Ահա սա էր այն իրավիճակը, որին հանդիպել էր Սավուղ թագավորը (տե՛ս Ա Թագ. 13.1-8): Դժբախտաբար նա ճնշման տակ կոտրվեց: Չնհնազանդվելով նա ինքը զոհաբերություն արեց: Տե՛ս Սավուղի արդարացումը. «Փղշտացիները հիմա ինձ վրա կիջնեն… ես ինձ ստիպելով (անգլերենում՝ ստիպված) ողջակեզ մատուցեցի» (Ա Թագ. 13.12): Նա զոհաբերություն արեց մարդկանց աչքին լավ երևալու համար, իսկ հետո փորձեց հոգևոր երևալ Սամվելի աչքին՝ ասելով. «Ես ինձ ստիպեցի»: Իրականում նա ընկավ մարդկանց ազդեցության տակ և հայտնվեց երկչոտության ծուղակի մեջ:

Ինչ-որ բան արա

Շատերը հաճախ են հանդիպում այսպիսի իրավիճակի: Դու երբևէ մտածել ես այսպես. «Ես գիտեմ, որ Աստված ինձ ասում է, որ սպասեմ, բայց ես ստիպված քայլ պիտի անեմ՝ փոխելու համար այն իրավիճակը, որի մեջ կամ»:

Ես եղել եմ այնպիսի իրավիճակներում, երբ ընկերներս կամ նրանք, ովքեր իմ իշխանության տակ են եղել, խնդրել են ինձ՝ համոզելով. «Զո՛ն, դու պետք է ինչ-որ բան անես»: Մինչդեռ իմ սրտում ես իմացել եմ, որ Աստված նույնը չի ասում: Նա լուռ է եղել:

Ամենածանր բաներից մեկը, որ պետք է անես, Աստծուն սպասելն է, հատկապես այն ժամանակ, երբ Նա ոչինչ չի ասում: Այդպես պետք է անել նաև այսօր: Ամերիկայում մեր հսկայական միջոցների և փողի հետ մեկտեղ, մենք սովորաբար կարող ենք ինչ-որ բան անել նույնիսկ այն դեպքերում, երբ Աստված չի շարժվում: Մեր ձիրքերով և կարողությամբ, բայց առանց Աստծո, մենք կարող ենք ինչ-որ բան ստեղծել՝ ցույց տալով, թե դա Աստծուց է:

Երբ գալիս է որոշումներ կայացնելու պահը, մենք հաճախ չենք կարողանում գտնել Աստվածաշնչից մի գլուխ կամ խոսք, որը մեզ ուղորդի ինչ անել: Մենք պարտավոր ենք իմանալ, թե Աստված ինչ է ասում մեզ յուրաքանչյուր վայրկյան: Բայց երբ թվում է, թե Աստված չի խոսում, Նա իրականում խոսում է: Նա ասում է. «Ճշգրտորեն շարունակիր անել այն, ինչ քեզ ասել եմ, որ անես: Ոչինչ չի՛ փոխվել»: Սա հատկապես ավելի դժվար է դառնում, երբ մենք գտնվում ենք երկչոտության ազդեցության տակ:

Ես ուզում եմ կիսվել մի խոսքով, որ Տերը տվեց ինձ Նոր տարվա օրերին: Ես արտասահմանում էի: Խորը քնած էի. ուժասպառ էի եղել քառասունվեց ժամ տևած ճանապարհորդությունից և օրը երկու անգամ անցկացրած ծառայություններից:

Գիշերվա ժամը երկուսին հանկարծ արթնացա խորը քնից: Ես

գիտեի, որ միայն Տերը կարող էր ինձ արթնացնել այս ձևով, որովհետև ընդամենը երեք ժամ քնելուց հետո բավականին առույգ էի: Տերն ինձ մի խոսք տվեց, որի մասին սովորաբար ես չէի խոսի, որովհետև այն անձնական էր: Բայց ես հավատում եմ, որ Տերը թույլ է տալիս ինձ խոսել դրա մասին, որպեսզի լուսաբանեմ այս կետը: Ես հավատում եմ, որ ձեզանից շատերին, ովքեր նմանատիպ իրավիճակներում են, այն կզորացնի: Ահա մի հատված այդ խոսքից.

> *«Դու եղել ես անորոշ վիճակում՝ առանց կենտրոնացման, և դրանով դու ստուգվել ես: Ես քեզ թույլ չեմ տվել կենտրոնանալ, որպեսզի ստուգեմ քեզ, թե արդյո՞ք դու քայլեր կձեռնարկես առանց Իմ առաջնորդության: Ինձ շատ է հաճեցրել այն, որ դու ոչինչ չես ձեռնարկել Իմ լռության ընթացքում: Քանի որ դու ոչինչ չես արել, որովհետև Ես չեմ ասել, և քանի որ դու չես կատարել քո սեփական ծրագրերը՝ հուսալով, որ դրանք Իմն են, հիմա դու կունենաս մեծ կենտրոնացում: Ես քեզ և քո կնոջը կտամ մեծ և յուրահատուկ ծրագրեր, որոնք երկուսիդ էլ կբերեն մեծ ուրախություն»:*

Տերը խոսեց ինձ հետ այն ժամանակ, երբ ես ու կինս մեր կյանքում լճացում էինք զգում: Մենք ցանկություններ և անձնական կարիքներ ունեինք, որոնք չէին իրականանում: Մենք երկուսս էլ մի քանի տարի ապրում էինք ծայրահեղ ճնշման տակ: Մեզ համար անկեղծորեն հոգ տանող մեր ընկերները խորհուրդ էին տալիս մեզ որոշ քայլեր անել, բայց մենք չէինք զգում, որ դա Տիրոջ խոսքն է: Նրանք սխալ չէին, երբ մեզ այս բաներն ասում էին: Նրանք ընդամենը արձագանքում էին այն իրավիճակին, որի մեջ մեզ տեսնում էին: Աստված ստուգում էր մեզ:

Կային փոփոխություններ, որոնք մենք կարող էինք անել՝ թեթևացնելու համար այն ճնշումը, որի տակ գտնվում էինք: Մենք

կարող էինք կռվել մեր կասկածների դեմ, բայց հետաքրքիր էր՝ արդյո՞ք մենք չէինք անտեսի Աստծուն: Մինչդեռ մեր սրտի խորքում մենք երկուսս էլ գիտեինք, որ Աստված չէր ասել մեզ որևէ քայլ անել:

Նախքան այդ Նոր տարվա առաջին ամսվա ավարտը, մենք տեսանք, որ Աստված մեր բոլոր սպասումներից վեր բաներ է անում: Ես չգիտեմ, թե երբևէ էլ կտեսնեմ այդքան շատ բան, որ եղան այդ մեկ ամսվա ընթացքում: Երևում էր, որ Աստված այդ ամսում ավելի շատ բան արեց, քան անցած հինգ տարիների ընթացքում:

Կարևորն այն է, որ մենք ազդեցության տակ չընկնենք ճնշումների ժամանակ: Մենք պարտավոր ենք գործել Տիրոջ Խոսքի համաձայն:

Աստծո սրտի համեմատ մարդ

Սավուղը վախեցած էր: Նրա համբավը, կյանքը և թագավորությունը վտանգված էին, դրա համար էլ նա շարժվեց, երբ Աստված պատվիրել էր սպասել: Սամվելը հանդիմանեց Սավուղին և հրապարակեց նրա դատավճիռը.

> *«Բայց հիմա քո թագավորությունը հաստատ չի լինելու: Տերն Իր համար Իր սրտի համեմատ մի մարդ է ուզում, որին իշխան նշանակի Տերը Իր ժողովրդի վրա, որովհետև դու չպահեցիր ինչ որ Տերը քեզ պատվիրել էր» (Ա Թագ. 13.14):*

Սավուղը միայն մեկ անգամ չէ որ տեղ էր տվել երկչոտությանը: Նրա կյանքում մի շարք այլ դեպքեր էին տեղի ունեցել, երբ ուժեղ ճնշումների ազդեցության տակ անհնազանդ էր եղել Տիրոջը: Մի անգամ նա ենթարկվել էր մարդկանց ցանկությանը՝ վերցնելով ավարը այն քաղաքից, որ Աստված ասել էր ամբողջովին կործանել: Նա չէր ուզում կորցնել մարդկանց բարեհաճությունը: Երբ

հանդիմանվեց Սամվելի կողմից, Սավուղը խոստովանեց. «Մեղք գործեցի, որ Տիրոջ հրամանները և քո խոսքերը զանց արեցի, որովհետև ժողովրդից վախեցա և նրանց խոսքերը լսեցի» (Ա Թագ. 15.24):

Սավուղի հաջորդ հայտարարությունը ցույց է տալիս, որ նա ավելի անհանգստացած էր իր համբավի, քան իր հնազանդության համար: Սամվելին ասած խոսքերը բացահայտեցին նրա սրտում եղածը. «Մեղք գործեցի: Աղաչում եմ, հիմա ժողովրդի ծերերի առաջին ու Իսրայելի առաջին ինձ պատվիր» (Ա Թագ. 15.30):

Սավուղը շարունակ մեղանչում էր, որովհետև վախենում էր մարդուց: Որքան շատ էր նա վախենում, այնքան դաժան էր դառնում: Սա հաճախ պատահում է այն առաջնորդների հետ, ովքեր իրենց անվստահ են զգում: Նրանք դաժան են վարվում ժողովրդի հետ, որպեսզի դրանով ցույց տան, որ իրենք հսկում են իրավիճակը, մինչդեռ իրականում դրանով փորձում են ծածկել իրենց սեփական երկչոտությունն ու վախը:

Սամվելը Սավուղին ասաց, որ Աստված թագավորությունը տալու է մի մարդու, ով կպահի Իր պատվիրանները (Ա Թագ. 13.14): Այդ մարդը Դավիթն էր: Ես լսել եմ, թե ինչպես որոշ մարդիկ ասում են, որ իրենք Աստծո սրտի համեմատ մարդ են, բայց ես ուզում եմ լսել Աստծուն, Որը կասի այն, ինչ ասաց Դավթին. «Դու Իմ սրտի համեմատ մարդ ես»: Ես գիտեմ, որ սա Աստծուն սիրող յուրաքանչյուր հավատացյալի ցանկությունն է: Ես ուշադրությամբ ուսումնասիրել եմ Դավթի կյանքը՝ ցանկանալով իմանալ, թե ինչն էր պատճառը, որ Տերն Իրեն Դավթի հետ հավասար էր դասել:

Ես նկատեցի, որ Դավիթը ուշադիր էր հետևյալի մեջ. նա ոչ մի դեպքում ոչինչ չէր անում, մինչև չլսեր Աստծուն: Շատ հաճախ, մեծ ճնշումների մեջ Դավիթը դիմում էր Աստծո խորհրդին (Ա Թագ. 20.31): Ե՛կ նայենք մի չափազանց դաժան իրավիճակի:

Կարո՞ղ է ավելի վատ լինել

Սավուղի թագավորելու վերջին տարվա ընթացքում Դավիթն ու իր մարդիկ ապաստան էին գտել փղշտացիների երկրում: Հանգամանքների բերումով Դավիթն ու իր մարդիկ գնացին միանալու փղշտացիներին, երբ նրանց բանակը հավաքվում էր իսրայելցիների դեմ: Այնուամենայնիվ, փղշտացի զորապետերը բարկացան, երբ տեսան, որ հրեա տղամարդիկ պատրաստվում են պատերազմել իրենց հետ: Դրա համար էլ զորապետերն էլ մերժեցին Դավթին ու նրա մարդկանց և թույլ չտվեցին, որ կռվեն իրենց հետ:

Հաջորդ առավոտ Դավթի զորքը հեռացավ՝ վերադառնալով իրենց կանանց ու երեխաների մոտ, որոնք գտնվում էին Սիկելակ քաղաքում: Կարճատև ճամփորդությունը դեպի մարտադաշտ ձախողվել էր, և Դավիթն ու նրա մարդիկ իրենց ոչ պիտանի էին զգում: Նրանք մերժված էին ոչ միայն իրենց սեփական թագավորից ու երկրից, այլ նաև այն ազգից, որի մեջ ապաստան էին գտել: Դավիթը կարող էր իրեն շատ միայնակ զգալ: Բայց սա ոչինչ էր համեմատած այն բանի հետ, ինչին որ նա հանդիպեց: Ուշադիր կարդա՛, թե ինչ էր տեղի ունեցել, երբ նա վերադարձավ իր ընտանիքի մոտ, և պատկերացրու, թե ինչպես էր նա զգում իրեն.

> *«Եվ երբ որ Դավիթը և իր մարդիկ երրորդ օրը մտան Սիկելակ, ահա ամաղեկացիները հարձակվել էին հարավային երկրի և Սիկելակի վրա և Սիկելակը զարկելով՝ նրան կրակով այրել էին: Եվ այնտեղի կանայք գերի էին առել՝ փոքրից մինչև մեծը, մեկ մարդ չէին մեռցրել, այլ իրենց հետ տանելով՝ գնացել էին իրենց ճանապարհը: Եվ երբ որ Դավիթը և իր մարդիկ քաղաք հասան, ահա կրակով այրված էր նա, և իրենց կանայք, տղերքը և աղջկերքը գերի էին տարված: Եվ Դավիթը և իր հետ եղող ժողովուրդն իրենց ձայները բարձրացրին և լաց եղան, մինչև որ նրանց վրա ուժ չմնաց լացելու: Եվ Դավթի երկու կանայք՝ հեզաբելացի Աքինոմը և Կարմելայի Նաբաղի կինը՝ Աբիգեան էլ էր գերի տարված» (Ա Թագ. 30.1-5):*

Կարո՞ղ ես պատկերացնել այն ցավը, որ զգում էր Դավիթը: Նրա ընտանիքը գերության մեջ էր, հափշտակել էին թանկարժեք ամեն բան, իսկ մնացածն այրված էր: Նա ոչ միայն անհանգստացած էր իր ընտանիքի, այլև իր մարդկանց ընտանիքների համար: Նրանք մնացել էին առանց երկրի, հետո էլ վերադարձան և իրենց տները գտան ծխի մեջ, իսկ բոլոր սիրելիները չկային: Սա դեռ ամենը չէր.

> *«Եվ Դավիթը մեծ տագնապի մեջ էր, որովհետև ժողովուրդը նրան ուզում էր քարկոծել նրա համար, որ բոլոր ժողովրդից ամեն մեկի սիրտը կսկծում էր իր տղերանց ու աղջկանց համար» (Ա Թագ. 30.6):*

Այժմ այն մարդիկ, ովքեր գնացել էին նրա հետ պատերազմելու, պատրաստ էին քարկոծել Դավթին՝ իրենց կանանց ու երեխաներին անպաշտպան թողնելու համար: Սրանից վատ չէր կարող լինել: Սա նույնիսկ ավելի դժվար է, քան այն, ինչին հանդիպել էր Սավուղը: Սավուղը գոնե ուներ վախկոտ բանակ և ընտանիք, և նրա մարդիկ չսպառնացին քարկոծել:

Շատ հավատացյալներ իրենց կյանքում ունենում են այնպիսի պահեր, երբ իրենց բոլորովին միայնակ են զգում: Ես կարծում եմ, որ Աստված թույլ է տալիս, որ դա պատահի: Աստված չէ դրա պատճառը, քանի որ Նա չէ չարի հեղինակը: Բայց Աստված չի միջամտում, որովհետև այդ հուսահատված ժամանակների համար Նա ունի Իր նպատակը: Դավիթը կարող էր հանձնվել, եթե սկսեր հետապնդել թշնամուն կամ մեկ այլ ուղի փնտրեր իր մարդկանց հանգստացնելու համար: Բայց տե՛ս, թե փոխարենը ինչ արեց նա.

> *«Բայց Դավիթը զորացավ իր Տեր Աստծով: Եվ Դավիթը Աքիմելեքի որդի Աբիաթար քահանային ասաց. «Եփուդ մոտեցրու ինձ»: Եվ Աբիաթարը եփուդը Դավթին մոտեցրեց: Եվ Դավիթը Տիրոջը հարցրեց և ասաց. «Այս գունդի ետևից հալածե՞մ, նրանց կհասնե՞մ»: Եվ Նա ասաց. «Հալածի՛ր, որովհետև անպատճառ կհասնես և բոլորին կազատես»» (Ա Թագ. 30.6-8):*

Նույնիսկ վիթխարի ճնշման տակ Դավիթը քայլ չարեց, մինչև որ ստացավ Տիրոջ խորհուրդը: Նա զորացավ, երբ դիմեց Տիրոջը: Դավիթն ինքն իրեն հիշեցրեց Աստծո հավատարմությունն ու ուխտը: Դրանից հետո նա իմացավ, թե ինչ պետք է աներ: Աստված ասաց. «Հալածի՛ր»:

Դավիթը հետապնդեց թշնամուն: «Եվ Դավիթն ամաղեկացիների առած բոլոր բաները ազատեց և Դավիթն իր երկու կանանցն էլ ազատեց: Եվ իրենց մեկ բանը պակաս չէր՝ փոքրից մինչև մեծը, թե՛ տղա, թե՛ աղջիկ և թե՛ ավար, ինչ որ նրանք առել-տարել էին, Դավիթն ամենն էլ ետ բերեց» (Ա Թագ. 30.18,19):

Ինչը որ անհույս էր թվում, վերածվեց մեծ հաղթանակի: Ոչ մի բան դժվար չէ մեր Աստծո համար: Դավիթն ավելի շատ վախենում էր Աստծուց, քան մարդկանցից: Եվ միայն սա էր, որ նրան վստահություն տվեց առաջինը դիմելու Աստծուն: Սա շատ էր տարբերվում ճնշման ժամանակ Սավուղի արձագանքից:

Դավիթը *գործեց*, մինչդեռ Սավուղը միայն *արձագանքեց* իրավիճակի պահանջներին: Դավիթը կարողացավ գործել և ոչ թե արձագանքել իրավիճակի թելադրանքին, որովհետև իմացավ, թե Աստված ինչ է ասում: Երբ մենք ունենում ենք Քրիստոսի միտքը, համարձակվում ենք գործել, այլ ոչ թե արձագանքել:

Զգաստություն

Նախորդ գլուխներից մեկում մենք հայտնաբերեցինք, որ երկչոտությունը կոտրելու համար համարձակություն է պետք: Սա բնական համարձակություն չէ, այլ այնպիսի համարձակություն, որը գալիս է աստվածային զորության, սիրո և առողջ բանականության շնորհիվ: Սա է մեր բանալի խոսքը.

«Այդ պատճառով միտքդ եմ բերում, որ արծարծես Աստծո այն շնորհքը, որ քեզանում է իմ ձեռքերը քեզ վրա դնելով:

Որովհետև Աստված չտվեց մեզ երկչոտության հոգի, այլ զորության և սիրո և զգաստության» (Բ Տիմոթ. 1.6,7):*

Տեսնենք, թե ինչպես այս երեք բաները Դավթի մեջ համարձակություն առաջացրին, որով նա հակառակվեց երկչոտությանը:

1. Զորություն: Դավիթը ճանաչում էր Աստծուն և նա գիտեր, որ Աստված ավելի մեծ և ավելի զորավոր է, քան իրեն հանդիպած որևէ բան:

2. Սեր: Դավիթն Աստծուն ավելի էր սիրում, քան իրեն:

3. Զգաստություն: Դավիթը քայլ չարեց, մինչև Տիրոջ խոսքը կամ միտքը չունեցավ: Կարևորություն չտվեց, թե որքան մեծ էր ճնշումը:

Երբ մեր հոգիները լցված են Տիրոջ զորությամբ, սիրով և Խոսքով, մենք չենք դառնում երկչոտության զոհ: Ոչ թե այս երեք առաքինություններից մեկը, այլ այս երեքի համակցությունն է պետք մեզ: Եթե այդ ամբողջը պետք չլիներ, Պողոսը կհիշատակեր միայն մեկը: Աստվածային համարձակութան մեջ քայլելու համար երեքն էլ անհրաժեշտ են:

Մենք արդեն մանրամասնությամբ ուսումնասիրեցինք զորությունն ու սերը: Ե՛կ շարունակենք առաջ գնալ և հասկանանք Տիրոջ միտքը:

---

* Հունարեն բնագրում զգաստություն բառի փոխարեն օգտագործվում է sofronismos բառը, որն ունի հետևյալ իմաստները. զգաստություն, զգոնություն, առողջ միտք, ինքնակառավարում, ինքնահսկողություն (հայերեն հրատարակչի կողմից):

Զգաստությունն այն է, որ իմանաս, թե հենց հիմա
Աստված ինչ է ասում եւ անում:

Զգաստության հոգին

Ոչ մի բան այնքան շատ վախեցնող չէ, որքան տգիտությունը: Տգիտությունը գիտության պակասն է: Գիտության արժեքի մասին հաճախ է խոսվում Աստվածաշնչում: Առակաց 24.5 ասում է. «Իմաստուն մարդը զորավոր կլինի, և գիտուն մարդը իր ուժը կավելացնի»: Իսկ Առակաց 11.9-ը մեզ հիշեցնում է, որ «արդարները կազատվեն գիտությունով»: Գիտությունը քեզ ուժ է տալիս երկչոտության թակարդից խուսափելու համար:

Հասկացի՛ր, որ կա բնական գիտություն և հոգևոր գիտություն: Հոգևոր գիտությունն ու իմաստությունն ավելի բարձր են բնական գիտությունից և իմաստությունից: Ահա թե ինչու ենք մենք այն կոչում «գերբնական». այն գերադաս է բնականից:

Տիմոթեոսի երկրորդ թղթի 1.6,7-ում Պողոսը Տիմոթեոսին հիշեցնում է այն երեք կարևոր հիմունքները, որոնք անհրաժեշտ են վախին (երկչոտությանը) հաղթելու համար: Դրանք են՝ սերը, զորությունը և զգաստությունը: Այս գլխում կխոսենք վերջին հիմունքի՝ զգաստության հոգու մասին:

Ի՞նչ է զգաստությունը: Արդյո՞ք այն Սուրբ գրքի իմացությունն է: Աշակերտները համարվում էին տգետ ձկնորսներ, մինչդեռ Իսրայելի ամենակիրթ մարդկանց խումբը՝ Սինեդրիոնը (հրեաների բարձրագույն ժողովը), շփոթված էր նրանց իմաստությունից և համարձակությունից:

«Եվ Պետրոսի և Հովհաննեսի համարձակությունը տես-

նելով և գիտենալով, որ առանց ուսմունքի և տգետ մարդիկ են, զարմանում էին, միայն ճանաչում էին նրանց, որ Հիսուսի հետ էին» (Գործք 4.13):

Ստեփաննոս անունով մի մարդ, որը որբևայրիների սեղանի սպասավոր էր, փակեց ժողովարանի կրթված առաջնորդների բերանը: Աստվածաշունչը պատմում է. «Եվ չէին կարողանում դեմ կանգնել այն իմաստությանը և այն հոգուն, որով նա խոսում էր» (Գործք 6.10):

Անմիջապես տեսնում ենք, որ զգաստության հոգին չի ծնվում բնական իմաստությունից կամ Սուրբ գրքի հատուկ դասընթացներից: Այսպիսով, որտեղի՞ց է գալիս զգաստության հոգին:

Ունենալ հայտնություն

Զգաստությունը գալիս է Քրիստոսի միտքը իմանալուց: Միայն Գրվածքն իմանալը չի նշանակում իմանալ Քրիստոսի միտքը: Մեզ ասված է, որ «գիրը սպանում է, Հոգին կենդանացնում» (Բ Կորնթ. 3.6):

Փարիսեցիները Գրքերի իմացության հարցում տգետ չէին, նրանք չգիտեին դրանց հոգին, այդ պատճառով էլ նրանց ծառայությունը մահ էր բերում: Այն ավելի հեռացնում էր մարդկանց Աստծո սրտից, քան մոտեցնում էր Նրան: Նրանք մարդկանց բաժանում էին Աստծուց իրենց օրինապահ գիտությամբ, ներկայացնում էին Աստծուն այնպես, ինչպես իրենք էին հասկանում՝ գլխով և ոչ թե սրտով: Հիսուսը հայտարարեց. «Ոչ միայն հացով կապրի մարդ, այլ ամեն խոսքով, որ դուրս է գալիս Աստծո բերանից» (Մաթ. 4.4): Ուշադրություն դարձրու, որ Հիսուսը չասաց՝ դուրս եկավ: Դա կլիներ ոչ թե անցյալ ժամանակով, այլ միայն գրված խոսքով: Միայն Աստվածաշունչն է, որ դուրս է եկել Աստծո բերանից: Հիսուսն ասաց. «դուրս է գալիս», որը ներկա ժամանակով է: Մենք պետք է

ճանաչենք Գրվածքի Տիրոջը, որպեսզի իմանանք, թե այսօր ինչ է դուրս գալիս Նրա բերանից:

Հիսուսը Հովհաննեսի 16.13,14-ում ասաց. «Բայց երբ որ Նա՝ Ճշմարտության Հոգին կգա, Նա կառաջնորդի ձեզ ամեն Ճշմարտության մեջ, որովհետև Իր անձից չի խոսի, այլ ինչ որ կլսի՝ կխոսի, և գալու բաները կպատմի ձեզ: Նա Ինձ կփառավորի, որովհետև Իմից կառնի և կպատմի ձեզ»: Ուշադրություն դարձրու, որ Հիսուսն ասաց՝ ինչ որ լսի, այլ ոչ թե՝ ինչ որ լսեց: Սուրբ Հոգու օգնությամբ մենք կարող ենք իմանալ, թե ինչ է ասում Հիսուսը հիմա:

Այդ դեպքում դու կարող ես հարցնել. «Ի՞նչ օգուտ Սուրբ գրքից»: Դա մեզ օգնելու և առաջնորդելու ուղեցույց է: Դա Աստծուց է ներշնչված: Երբ Սուրբ Հոգին կենդանացնում է այն, խոսքերը կենդանի են դառնում մեր սրտերում և ոչ թե միայն մեր գլուխներում: Աստվածաշունչն այն չափանիշն է, որ մենք օգտագործում ենք հաստատելու համար այն, ինչը լսել ենք Աստծո Հոգուց: Սուրբ Հոգին երբեք Աստվածաշնչին հակառակ չի խոսում: Բայց մենք կարող ենք ինքներս մեզ խանգարել: Մենք կարող ենք մեր հասկացողությամբ սահմանափակել այն, ինչ կարող է ասել կամ անել Սուրբ Հոգին: Սա էր փարիսեցիների սխալը:

Աստվածաշնչի գլուխների և խոսքերի տեղն իմանալը բավարար չէ

Փարիսեցիները շատ գիտելիքներ ունեին: Փաստորեն նրանք անգիր գիտեին Հին կտակարանի առաջին հինգ գրքերը: Նրանք հետազոտում էին Գրվածքը և անհամբեր սպասում էին Մեսիային: Մինչդեռ փարիսեցիները Նրան սպասում էին Գրվածքի մասին եղած իրենց հասկացողությամբ: Նրանք գիտեին, որ Եսային այսպես մարգարեացավ.

«Որովհետև մեզ համար մի Մանուկ ծնվեց, մեզ մի Որդի

տրվեց, և իշխանությունը կլինի Նրա ուսի վրա, և Նրա անունը կկոչվի Սքանչելի, Խորհրդական, Հզոր Աստված, Հավիտենականության Հայր, Խաղաղության Իշխան: Իշխանությունը շատացնելուն և խաղաղությանը վերջ չկա Դավթի աթոռի վրա և Նրա թագավորության վրա, որ Նրան հաստատի և պնդացնի Նրան իրավունքով և արդարությունով հիմիկվանից մինչև հավիտյան: Զորաց Տիրոջ նախանձը պիտի անի այս» (Եսայի 9.6,7):

Ըստ փարիսեցիների՝ Մեսիան հաստատելու էր Իր երկրային թագավորությունը, ազատագրելու էր նրանց Հռոմի լծից և նստելու էր Դավթի գահի վրա: Դրա համար էլ, երբ Հիսուսը եկավ որպես հյուսն՝ Գալիլեայի Նազարեթ քաղաքից, իսկ Նրան ուղեկցող աշակերտներն անկիրթ ձկնորսներ և մաքսավորներ էին, փարիսեցիները գայթակղվեցին:

Այս փարիսեցիները մշտապես հակառակվում էին Հիսուսին այնպիսի թեմաներով, որոնք իրենք էին հնարել՝ ելնելով Սուրբ գրքի իրենց հասկացողությունից: Նրանք էին որոշել, որ Մեսիան լինելու է հզոր ազգային առաջնորդ: Դրա համար էլ հակառակվելով Հիսուսին նրանք այսպիսի հարցեր էին տալիս. «Եթե Դու ես Մեսիան, ո՞ւր է Քո թագավորությունը, որ ենթադրում ես հաստատել: Ինչո՞ւ չես նստում Դավթի գահին»:

Հիսուսը պատասխանում էր. «Աստծո արքայությունը դրսի նշանով չի գա: Ոչ էլ կասեն, թե ահա այստեղ է, կամ ահա այնտեղ է, որովհետև ահա Աստծո արքայությունը հենց ձեր ներսում է» (Ղուկ. 17.20,21): Այսօր մենք կարող ենք սա հասկանալ, որովհետև արտոնություն ունենք իմանալու, որ Հիսուսը մահացավ և հարություն առավ, բայց այդ մարդիկ վստահ էին, որ իրենք ճիշտ են: Այնուամենայնիվ, փարիսեցիների վստահությունը գալիս էր Սուրբ գրքի իրենց հասկացողությունից: Նրանք չունեին Հոգու հասկացողությունը:

Հոգուց ստացած հայտնություն

Սիմեոն անունով մի մարդ նույնպես սպասում էր Մեսիային: Նա այնքան գիտելիքներ չուներ, որքան փարիսեցիները: Բայց տես, թե Աստվածաշունչն ինչ է ասում նրա մասին.

> *«Եվ այս մարդը արդար և աստվածավախ էր և սպասում էր Իսրայելի մխիթարությանը, և Սուրբ Հոգի կար նրա վրա: Եվ նրան պատգամ էր եղած Սուրբ Հոգուց, որ մահ չի տեսնի, մինչև որ Տիրոջը՝ Քրիստոսին կտեսնի: Եվ Հոգով եկավ տաճար, և երբ որ ծնողները Հիսուս երեխային բերին, որ օրենքի սովորության պես Նրա վրա անեն, նա էլ առավ Նրան, ընդունեց իր գիրկը և Աստծուն օրհնեց և ասաց. Հիմա արձակում ես Քո ծառային, ով Տե՛ր, Քո խոսքի պես խաղաղությունով: Որովհետև իմ աչքերը տեսան Քո փրկությունը... Եվ Հովսեփը և Նրա մայրը զարմացել էին այն բաների վրա, որ Նրա համար խոսվում էին» (Ղուկ. 2.25-30, 33):*

Երբ Հիսուսին բերեցին Տիրոջը նվիրելու, Նա մոտավորապես վեց ամսականից մինչև երկու տարեկան հասակում էր: Տաճարը հսկայական էր, նրա տարածքի մեջ մտնում էին մի քանի շինություններ: Այնտեղ սովորաբար լինում էին հարյուրավոր, նույնիսկ հազարավոր մարդիկ:

Փորձենք մտովի տեսնել այդ տեսարանը: Գալիլեայից գալիս է մի հյուսն իր կնոջ հետ, որի գրկին մոտ վեց ամսական մի երեխա է: Նրանք տաճարում ամբոխի մեջ են, երբ այս մարդը՝ Սիմեոնը, վազում է վերցնելու մանկանը և մարգարեանում է. «Ահա՛, Մեսիան»: Հիմա կարո՞ղ եք հասկանալ, թե ինչու էին Հովսեփն ու Մարիամը զարմացած:

Ուշադրություն դարձրո՛ւ, որ Սիմեոնը չբացահայտեց Մեսիայի գալը՝ կարդալով մի գիրք, ասենք՝ *«101 պատճառներ, թե ինչու Մեսիան պիտի գա Ք. ա. 4թ-ին»* վերնագրով: Նա այս տեղեկությունը

չստացավ Սուրբ գրքերն ուսումնասիրելով: Սուրբ Հոգու հայտնությամբ Սիմեոնն իմացավ, որ Մեսիան գալիս էր: Նա տաճար եկավ Սուրբ Հոգու ցուցումով և առաջնորդությամբ:

Ահա մի ապշեցուցիչ փաստ, որը մտածել է տալիս: Այս մարդը, որը օրենքի փորձագետ չէր, ընդունեց Հիսուսին որպես Մեսիայի, երբ Նա մոտ վեց ամսական էր, մինչդեռ երեսուն տարի անց փարիսեցիները չճանաչեցին Մեսիային, երբ Նա դևեր էր հանում, բժշկում էր հիվանդներին, բացում էր կույրի աչքերը և հարություն էր տալիս մեռելներին: Ահա տարբերությունը Տիրոջ միտքն ունենալու և Գրվածքը մտքով հասկանալու միջև:

Կարո՞ղ է պատահել, որ մենք Նոր կտակարանի հետ վարվենք այնպես, ինչպես փարիսեցիներն էին վարվում Հին կտակարանի հետ: Արդյո՞ք սահմանափակել ենք Աստծո մասին մեր գիտությունը մեր վարդապետությամբ և Գրքերի մեր իմացությամբ: Վարդապետությունը չի ստեղծում փոխհարաբերություն Աստծո հետ, այն միայն բացատրում է դա: Երբ ես ասացի՝ այո՛ իմ ամուսնության ժամանակ, դրանով ամուսնության մասին ձեռնարկ չստացա: Ես սկսեցի անձնական փոխհարաբերություններ ձևավորել իմ կնոջ հետ:

Ուրեմն պետք է, որ մենք դադարե՞նք կարդալ մեր Աստվածաշունչը: Իհարկե՝ ո՛չ: Մենք պետք է այն կարդանք այլ կերպ: Երբ ես վերցնում եմ ձեռքս իմ Աստվածաշունչը, միշտ աղոթում եմ՝ խնդրելով Սուրբ Հոգուն, որ հայտնի ինձ Տիրոջ խոսքը: Երբ ես կարդում եմ, ճշմարտությունները պոռթկում են իմ սրտում: Այդ ճշմարտություններն այն խոսքերն են, որոնցով ես պետք է ապրեմ:

Ձգաստությունն այն է, որ իմանաս, թե հենց հիմա Աստված ինչ է ասում և անում: Միայն Աստծո Հոգին կարող է բացահայտել սա: Նա կարող է հաղորդակցվել Աստվածաշնչի միջոցով, կամ խոսել իմ սրտի հետ Իր մեղմ, հանգիստ ձայնով:

Երբ մենք գիտենք, թե Աստված ինչ է ասում, մենք հաստատվում ենք անսասան ժայռի վրա:

Հիսուսը իշխանությամբ է խոսում

Ավետարանները շարունակ պատմում են, թե ինչպես էր Հիսուսը իշխանությամբ խոսում: Նայիր այդպիսի մի դեպքի:

> *«Եվ եղավ, երբ որ Հիսուսը այս խոսքերը վերջացրեց, ժողովուրդները զարմանում էին Նրա վարդապետության վրա, որովհետև իշխանություն ունեցողի պես էր սովորեցնում նրանց և ոչ թե դպիրների պես» (Մաթ. 7.28,29):*

Նա ոչ միայն խոսում էր իշխանությամբ, այլև շարժվում էր իշխանությամբ: Տե՛ս մեկ այլ դեպք.

> *«Եվ զարմանք եղավ ամենքի վրա, և իրար հետ խոսում էին և ասում. «Սա ի՞նչ բան է, որ իշխանությունով և զորությունով պիղծ ոգիներին սաստում է, և նրանք դուրս են գալիս»» (Ղուկ. 4.36):*

Հիսուսն ապրում և շարժվում էր այնպիսի իշխանությամբ, որը ճանաչեց հռոմեացի մի հարյուրապետ: Նա Հիսուսին ասաց, որ եթե Նա մի խոսք ասի, իր ծառան կբժշկվի (Մաթ. 8.5-10): Այս հռոմեացին հասկացել էր Հիսուսի իշխանության աղբյուրը: Հիսուսի իշխանությունը չէր սահմանափակվում Իրենով, այլ դա Աստված էր մատակարարում: Դա այդպես էր, որովհետև Հիսուսն ամբողջությամբ հնազանդվում էր Սուրբ Հոգուն, Որը հայտնում էր Հոր կամքը Իրեն:

Հարյուրապետն ասաց. «Քանի որ ես նույնպես մի մարդ եմ, որ իշխանության տակ է, և իմ իշխանության տակ էլ զինվորներ ունեմ»: Հիսուսը զարմացավ, երբ լսեց սա: Այս հրամանատարը հասկացել էր, որ իշխանություն ունենալու միակ ճանապարհը իշխանության տակ լինելն է: Հիսուսը գործում էր իշխանությամբ, որովհետև Նա իշխանության տակ էր: Նա ամբողջությա՛մբ հնազանդ-

վում էր Սուրբ Հոգուն, Որը հայտնում էր Հոր կամքը: Նա ասաց.

> *«Որովհետև Ես Իմ անձից չխոսեցի, բայց Ինձ ուղարկող Հայրը, Նա պատվեր տվեց Ինձ, թե ինչ պիտի ասեմ և ինչ պիտի խոսեմ» (Հովհ. 12.49):*

Եվ նորից.

> *«Ես Ինձանից չեմ կարող ոչինչ անել. ինչպես լսում եմ, այնպես եմ դատում, և Իմ դատաստանն արդար է, որովհետև Իմ կամքը չեմ որոնում, այլ Ինձ ուղարկող Հոր կամքը» (Հովհ. 5.30):*

Հիսուսը հստակ բացատրեց, որ Իր իշխանությունը Հորից է գալիս.

> *«Չե՞ս հավատում, որ Ես Հոր մեջ եմ, և Հայրն Ինձանում է. այն բանը, որ Ես խոսում եմ ձեզ հետ, Իմ անձից չեմ խոսում, բայց Հայրը, որ Ինձանում բնակված է, Նա է գործում այդ գործերը» (Հովհ. 14.10):*

> *«Ճշմարիտ, ճշմարիտ ասում եմ ձեզ, թե Որդին Իրենից չի կարող ոչինչ անել, թե որ չտեսնի Հորն անելիս, որովհետև ինչ որ Նա անում է, հենց Որդին էլ այն բանը Նրա նման է անում» (Հովհ. 5.19):*

Հիշի՛ր, նույնիսկ չնայած որ Նա Աստծո Որդին է, Նա ապրեց որպես Սուրբ Հոգով լցված մի մարդ: Նա Իրեն ազատեց աստվածային բոլոր արտոնություններից, մինչդեռ հրամայում էր այնպիսի իշխանությամբ, որը ապշեցնում էր մարդկանց: Դա նրանից էր, որ Նա խոսում և գործում էր միայն այնպես, ինչպես Աստծո Հոգին էր առաջնորդում: Հիսուսը երբեք չվախեցավ, որովհետև Աստված երբեք չի վախենում կամ սարսափում: Աստծուց բացի չկա մեկը ավելի զորավոր, ամենակարող և իմաստությամբ լի:

Հիսուսը մնում էր Իր իշխանության մեջ նույնիսկ այն ժամանակ, երբ փարիսեցիները փորձում էին վախեցնել Նրան իրենց կրոնական և խորամանկ հարցերով: Նրանք ջանում էին Հիսուսին թակարդը գցել Իր իսկ խոսքերով՝ փորձելով վարկաբեկել Նրան: Բայց նշանակություն չուներ, թե որքան հմտորեն էր լարած նրանց ծուղակը. Հիսուսը միշտ պատասխանում էր Սուրբ Հոգով՝ կոտրելով նրանցից եկող երկչոտությունը: Նա շփոթեցնում էր փարիսեցիներին իմաստությամբ, մինչև որ վերջիններս հուսախաբված հրաժարվում էին Հիսուսին վախեցնելու իրենց փորձից.

> *«Եվ ոչ ոք չէր կարողանում մի բան պատասխան տալ Նրան, և այն օրից հետո էլ մեկը չէր համարձակվում Նրանից մի բան հարցնել» (Մաթ. 22.46):*

Ինչպես որ Հայրը ուղարկեց Ինձ...

Այժմ հիասքանչ լուրը. «Ինչպես Իմ Հայրն Ինձ ուղարկեց, Ես էլ ձեզ եմ ուղարկում» (Հովհ. 20.21): Մենք պետք է ապրենք, խոսենք և շարժվենք այնպես, ինչպես Նա էր անում: Ահա թե ինչու է Նա քաջալերում մեզ.

> *«Արդ ձեր սրտի մեջ դրեք, որ առաջուց հոգս չանեք պատասխանելու համար: Որովհետև Ես բերան և իմաստություն կտամ ձեզ, որին չեն կարողանա հակառակ խոսել և ոչ ընդդիմանալ ձեր բոլոր հակառակորդները» (Ղուկ. 21.14,15):*

Պատճառը, թե ինչու են ոմանք խոսում, սովորեցնում կամ քարոզում առանց իշխանության, այն է, որ նրանք Աստվածաշնչից մի ուղերձ են ուսումնասիրում, հետո այդ սուրբգրային խոսքերին խառնում են իրենց հասկացողությունը: Նրանք խոսում են այն մասին, թե Աստված ինչ ասաց և արեց անցյալում, այլ ոչ թե ինչ է

ասում ու անում հիմա: Միայն Աստծո Հոգով խոսելու դեպքում մենք կխոսենք իշխանությամբ:

> *«Որովհետև Ինքն ասաց, թե չեմ թողի քեզ և երեսից չեմ գցի: Այնպես որ համարձակ ենք ասելու՝ Տերն է իմ օգնականը, և ես չեմ վախենա, ի՞նչ կանի ինձ մարդը» (Եբր. 13.5,6):*

Ուշադրությամբ մեկ անգամ ևս նայիր այս խոսքերին: Մենք կարող ենք խոսել համարձակությամբ և իշխանությամբ, երբ գիտենք, թե ինչ է Նա ասում: Աստծո Խոսքի նկատմամբ եղած համոզվածությունը տալիս է մեզ համարձակություն: Աստված հավաստիացնում է մեզ, որ երբ մենք գիտենք, թե ինչ է Նա ասում, և երբ մենք հավատում ենք, որ Նա միշտ մեզ հետ է, կարող ենք համարձակորեն հայտարարել՝ ի՞նչ կարող է անել ինձ մարդը: Երբ մենք ապրում ենք այս վստահությամբ, մեզ չեն կարող վախեցնել:

Ժամանակակից փարիսեցիները

Ես առիթ եմ ունեցել հանդիպելու մարդկանց, որոնց ես անվանում եմ ժամանակակից փարիսեցիներ, որոնք չունեն Հոգին (նրանք կարող են պնդել, որ լեզուներով են խոսում, բայց դեռևս չունեն Աստծո Հոգին): Նրանք ավելի արագ են մեջբերումներ անում Աստվածաշնչի որևէ գլխից կամ խոսքից, քան շատերը:

Այս մարդիկ հակառակվում էին ինձ հարցերով, որոնք վերաբերում էին իմ քարոզածին կամ էլ, հավանաբար, ինչ-որ բանի, որ գրել էի:

Ես նկատի չունեմ, որ մարդիկ հարցեր էին տալիս սովորելու համար կամ որովհետև չէին հասկանում: Ո՛չ, ես խոսում եմ նրանց մասին, ովքեր ամեն ինչ անցկացնում են իրենց կրոնական չափանիշների միջով՝ մերժելով ցանկացած մեկին կամ ցանկացած բան,

որը չի համապատասխանում իրենց վարդապետական «արկղի» պարունակությանը:

Ես ուշադրություն եմ դարձրել, որ զրույցը կարող է գնալ երկու ուղղությամբ: Առաջինն այն է, որ ես կարող եմ մտնել նրանց հետ Սուրբ գրքին վերաբերող բանավեճի մեջ և դուրս գալ պարտված հատկապես այն դեպքում, երբ նրանք շատ լավ գիտեն այդ թեմայի վերաբերյալ աստվածաշնչյան համարները, որի հարցում փորձում են համոզել: Նրանք կհաղթեն, իսկ ես շփոթված կմնամ: Ես սովորել եմ չընկնել սրա մեջ:

Մյուս ճանապարհն այն է, որ նայեմ Սուրբ Հոգուն և խոսեմ այն, ինչ ես լսում եմ իմ սրտում: Այդ ժամանակ կգա Աստծո իմաստությունը և նրանց փաստարկներից հետք անգամ չի մնա: Աստծո իմաստությունը միշտ գալիս է Աստվածաշնչից, բայց Սուրբ Հոգին է տալիս կենդանության շունչ:

Տարիներ առաջ ես մի ծառայողի հետ օդանավի մեջ էի: Մենք ծանոթացանք մի հրեա կնոջ հետ, որը շատ խելացի էր և շփվող: Նրա հետ թեժ զրույց ունեցանք Տեր Հիսուսի մասին: Մենք բորբոքված, մեկս մյուսին հերթ չտալով փորձում էինք ապացուցել, որ Հիսուսն է Մեսիան: Ողջ զրույցի ընթացքում կինը փորձեց ապացուցել, որ Հիսուսի ասածները սուտ են:

Հետո հանկարծ ես հասկացա, թե ինչ էի անում: Ես գիտեի, որ այս բանավեճը ոչ մի բանի չի բերի: Այնպես որ ես այդ ընթացքում փնտրեցի Սուրբ Հոգու առաջնորդությունը, և Նա հայտնեց, թե ինչ պիտի խոսեի: Ես նայեցի կնոջը և կիսվեցի այն խոսքերով, որոնք Սուրբ Հոգին տվել էր ինձ: Դրանից հետո իմ ձայնը փոխվեց, և ես խոսեցի իշխանությամբ: Երբ կինը լսեց այդ խոսքերը, նրա բիբերը լայնացան, և նա լռեց: Մեր ողջ վիճաբանությունը չօգնեց նրան: Բայց երբ Տիրոջ խոսքը եկավ, այն անմիջապես ազդեց այդ կնոջ վրա:

Օդանավից դուրս գալուց հետո ծառայողը, որի հետ ճամփոր-

դում էի, ասաց. «Ձո՛ն, ես զգացի Տիրոջ ներկայությունը, երբ դու խոսում էիր այդ խոսքերը: Դու նկատեցի՞ր, որ նա այլևս ոչինչ չկարողացավ ասել»: Մի՛ տրվիր անպտուղ բանավեճերին, որոնք հիմնված են Աստվածաշնչի մտային հասկացողության վրա: Դրա փոխարեն թույլ տուր Սուրբ Հոգուն, որ առաջնորդի քեզ հոգևոր իմաստության մեջ:

> *«Որն էլ խոսում ենք ոչ թե մարդկային իմաստության սովորած խոսքերով, այլ Սուրբ Հոգու սովորացրածներով՝ հոգևորները հոգևորների հետ համեմատելով... Բայց հոգևոր մարդը ամեն բան քննում է և ինքը ոչ ոքից չի քննվում: Որովհետև ո՞վ գիտի Տիրոջ միտքը, որ բան սովորեցնի Նրան, բայց մենք Քրիստոսի միտքն ունենք» (Ա Կորնթ. 2.13,15,16):*

Ոչ ոք չի կարող քննել (անգլերենում՝ դատապարտել) կամ վախեցնել նրան, ով ունի Քրիստոսի միտքը: Ես կարող եմ պատմել բազմաթիվ դեպքեր, որոնց ժամանակ վախեցած կլինեի, եթե չդիմեի Աստծո Հոգուն:

Մեզ խորհուրդ է տրվում ապրել այնպես, ինչպես Հիսուսն էր ապրում (Ա Հովհ. 2.6): Հիսուսն անում էր միայն այն, ինչ տեսնում էր Սուրբ Հոգուն անելուց: Եթե մենք այդպես անենք, կունենանք զգաստություն և ձեռք կբերենք համարձակություն երկչոտությունն ու վերահսկողությունը հաղթելու համար:

Տե՛ր, ես ի՞նչ պետք է անեմ

Հաճախ մենք դեմ առ դեմ հանդիպում ենք իրավիճակների, որոնք կարող են անդամալույծ անել մեզ: Դրա պատճառով չենք կարողանում ամբողջությամբ անել այն, ինչ Աստված դրել է մեր առաջ: Դա լինում է այն դեպքում, երբ չունենք Քրիստոսի միտքը: Ես այսպիսի մի խնդրի առաջ կանգնեցի Մեքսիկայում:

Մեծ ավետարանչական ծառայության համար հրավիրված էի Մեքսիկայի Մոնթերեի քաղաքը: Ես հրավիրված էի միայն մեկ ծառայություն անցկացնելու համար և ինքս էի հոգացել իմ ծախսերը: Օրվա առաջին կեսը անցկացրի աղոթքի մեջ: Երբ աղոթում էի, տեսա մի սև ամպ, որը կախված էր այն շենքի վրա, որտեղ մենք պետք է հավաքվեինք: Ես հարցրի Տիրոջը, թե դա ի՞նչ էր: Նա բացատրեց. «Զո՛ն, դա այն խավարն է, որ կռվում է այս ծառայության դեմ: Շարունակի՛ր աղոթել»:

Շատ ուժեղ օծություն եկավ՝ զորացնելով ինձ աղոթքի մեջ: Երեսուն րոպեի ընթացքում ես էլի ինչ որ բան տեսա: Լույսի մի ճառագայթ երկնքից ուղիղ իջնում էր շենքի տանիքի վրա: Կրկին ես հարցրի Տիրոջը, թե դա ի՞նչ էր: Նա ասաց իմ հոգուն. «Դա Իմ անխոչընդոտ փառքն է, որ այս երեկո գալու է ծառայության ժամանակ»: Ես այնքան հուզված էի:

Ծառայությունը պետք է սկսվեր ժամը 18^{00}-ին: Մենք մի փոքր շուտ եկանք: Մեզ ասացին, որ մի պաշտոնյա ուզում է տեսնել ծառայությունը կազմակերպող հովվին: Այդ պաշտոնյային ուղեկցում էին համազգեստ հագած երկու սպաներ:

Հովիվն ու ես գնացինք հանդիպելու նրան: Պաշտոնյան հովվի հետ խոսեց իսպաներենով, հետո շրջվեց և հարցրեց ինձ անգլերենով. «Դուք խոսո՞ւմ եք իսպաներեն»: «Ո՛չ, պարո՛ն»,- պատասխանեցի ես:

Հետո նա կարգադրեց ինձ՝ ասելով. «Այս երեկո դուք ոչինչ չպետք է խոսեք ժողովրդի հետ, բացի տուրիզմի հետ կապված հարցերից»:

Հետո նա շրջվեց դեպի հովիվը և խոսեց նրա հետ: Ես նայում էի հովվին: Նա ուրախ չէր: Փաստորեն հովիվը բավականին վախեցած էր:

Երբ պաշտոնյան վերջացրեց, նա և երկու զինվորականները հեռացան: Հովիվն ինձ մի կողմ քաշեց և ասաց. «Զո՛ն, այս մարդը

կառավարական պաշտոնյա է, և նա ասում է, որ դու չես կարող քարոզել: Մեքսիկայում կա մի օրենք, ըստ որի դու չես կարող քարոզել առանց թույլտվության, եթե քաղաքացի չես»: Նա շարունակեց՝ ասելով. «Դա մի օրենք է, որը սովորաբար հարկադրող չէ, բայց ակնհայտ է, որ այս մարդը չի ուզում քեզ տեսնել այստեղ, և նա ուզում է կիրառել այդ օրենքը: Նա նաև ասաց, որ ուզում է տեսնել քեզ իր գրասենյակում, երկուշաբթի օրը՝ առավոտյան ժամը իններին»:

Ես չէի կարող հավատալ իմ լսածին: Անմիջապես ասացի հովվին. «Լսի՛ր, ես ամբողջ ճանապարհը չկտրեցի-անցա, որ այստեղ չքարոզեմ: Եթե դու միայն ինձ համար ես անհանգստացած, ապա թույլ տուր ինձ քարոզել»:

Հովիվն ասա. «Զո՛ն, դա կարող է նաև իմ եկեղեցու վրա ազդեցություն թողնել. նա կարող է շատ խնդիրներ առաջացնել: Նա բարձր դիրք ունեցող պաշտոնյա է: Լավ կլինի, որ չքարոզես»: Այս հովիվը վախեցած էր, և ես ոչինչ չէի կարող անել, բացի աղոթելուց, որովհետև նա ուներ իշխանություն այդ ծառայության վրա:

Ես դուրս եկա շենքից: Դա Մոնթերեի կենտրոնում գտնվող մի մարզադահլիճ էր: Դահլիճի դիմաց կար մի դրոշի ծող, և ես սկսեցի քայլել դրա շուրջ: Ես գիտեի, որ Աստված ցույց էր տվել ինձ աղոթքի մեջ, որ Իր փառքը հայտնվելու է այս ծառայության ժամանակ, բայց չգիտեի, թե ինչ պետք է անեի այդ պահին: Միտքս անհանգիստ էր. «Մի՞թե այս վախեցնող պաշտոնյան պիտի ետ պահի ինձ այն բանից, որ Աստված է ուղարկել անելու»: Հետո ես եկա այն եզրակացության, որ այս մարդը չի կարող կանգնեցնել այն, ինչ Աստված է ցույց տվել ինձ աղոթքի մեջ: Ետ ու առաջ գնալով ես պայքարում էի. «Ի՞նչ անեմ»: Հետո ասացի. «Հա՛յր, ես չգիտեմ ինչ անել, բայց Դու անակնկալի չեկար սրանից: Դու արդեն գիտեիր, որ սա պատահելու է: Այնպես որ, այս իրավիճակի համար ես կարիք ունեմ Քո իմաստությանն ու խորհրդին»: Սկսեցի Հոգով աղոթել: Ես խոսք ստացա.

Զգաստության հոգին

«Խոր ջրեր է մարդի սրտի խորհուրդը, բայց խելոք մարդը նրան կհանի» (Առակ. 20.5):

Հիսուսն ասաց, որ Իրեն հավատացողների փորից կենդանի ջրերի գետեր կբխեն (Հովհ. 7.38): Ես Աստծո խորհրդի գետի կարիքն ունեի: Ես Քրիստոսի մտքի կարիքն ունեի: Լեզուներով աղոթելը կօգնի այդ հարցում:

Աղոթքից հետո, միտքս բավականին հանդարտվեց ավելին լսելու համար: Եվ հանկարծ սրտումս այս միտքը ծագեց. «Մարդկանց պատմիր երբևիցե Մեքսիկա եկած ամենամեծ զբոսաշրջիկի մասին»: Ես բարձրաձայն գոռացի. «Գտա՜: Այդ մարդն ասաց, որ ես կարող եմ խոսել տուրիզմի մասին: Ես էլ կպատմեմ Մեքսիկա երբևիցե այցելած ամենամեծ զբոսաշրջիկի՝ Հիսուս Քրիստոսի մասին»: Ուրախությունը պայթեց իմ ներսում, և ես սկսեցի ծիծաղել:

Վազքով վերադարձա շենք: Ես զարմացա. Աստված արդեն աշխատանք էր տարել հովվի հետ: Նա ասաց. «Աստված խոսեց ինձ հետ և ասաց, որպեսզի ասեմ քեզ, որ անես այն, ինչ Նա ասում է»:

Ես սկսեցի ծառայությունը՝ ասելով. «Ինձ ասել են, որ ձեզ հետ խոսեմ միայն զբոսաշրջության հետ կապված թեմաներով: Այնպես որ, այս երեկո ես ձեզ կպատմեմ ամենամեծ զբոսաշրջիկի մասին, որը երևիցե եկել է Մեքսիկա»:

Մեկ ժամ քարոզեցի Հիսուսի մասին՝ որպես Տեր և Փրկիչ: Շատերն արձագանքեցին Հիսուս Քրիստոսին որպես Տեր ընդունելու կոչին: Այս խմբի մեջ մի հաշմանդամ մարդ կար: Այն բանից հետո, երբ ես աղոթեցի մարդկանց համար, որ ընդունեն Հիսուսին, Տերը խոսեց ինձ հետ. «Ես ուզում եմ բժշկել այդ մարդուն»:

Ես նայեցի այդ մարդուն և ասացի. «Պարո՛ն, Աստծո Հոգին ասաց, որ ուզում է Ձեզ բժշկել»: Ես ձեռքերս դրեցի նրա վրա և աղոթեցի: Հետո բռնեցի նրա ձեռքից, և մենք սկսեցինք քայլել: Նա

սկզբից շատ զգույշ էր քայլում: Հետո նա շարժվեց ավելի ու ավելի արագ: Շուտով այդ մարդն ազատ քայլում էր, իսկ հետո մենք միասին վազեցինք: Վերջում ես բաց թողեցի նրա ձեռքը, և նա ինքնուրույն վազեց:

Բազմությունը բռնկվեց: Բոլոր տեսակի տկարություններով և հիվանդություններով մարդիկ վազեցին առաջ:

Խառնաշփոթի մեջ ես կորցրի թարգմանչիս: Մոտ երկու հարյուր մարդ փոթորկի պես մոտեցան բեմին: Շատերը բժշկվեցին, որոնց մեջ կար մի կին, որի մեկ ականջը ծնված օրից ամբողջովին խուլ էր, իսկ մյուս ականջով հազիվ էր լսում: Այդ կինն այնքան էր արտասվել, որ վերնաշապիկն արցունքներից ամբողջովին թրջվել էր: Դա հրաշալի՜ էր:

Ես տեղյակ չէի, որ այդ կառավարական պաշտոնյան իր երկու մարդկանց ուղարկել էր ծառայության, որպեսզի ձերբակալեին ինձ, եթե քարոզեմ: Նրանք հասել էին այն ժամանակ, երբ ես աղոթում էի հաշմանդամ մարդու համար: Կարգուկանոնի ծառայողներից մեկը նկատել էր նրանց և լսել էր, թե ինչ էին ասել. «Նախքան նրան ձերբակալելը՝ եկ տեսնենք, թե ինչ է նա անում»:

Երբ նրանք տեսել էին, որ հաշմանդամ մարդը բժշկվել է, մեկը հարցրել էր մյուսին. «Դու կարծում ես, որ սա իրակա՞ն է»: Նրանք ավելի էին մոտեցել բեմին և շարունակել էին հետևել, թե ինչ էր Աստված անում:

Երբ նրանք տեսան, թե ինչպես բժշկվեց խուլ կինը և ինչպես էր լաց լինում, նրանցից մեկն ասեց. «Ես կարծում եմ, որ սա իրական է»: Հետո Աստծո զորությունից մի հինգ տարեկան տղա էր ընկել հատակին: Տեսնելով այս ամենը՝ նրանք համոզվում են. «Սա իրակա՜ն է»: Եվ այս երկու մարդիկ, որոնք ուղարկվել էին ինձ ձերբակալելու, եկան առաջ աղոթքի համար: Ալելուիա՜:

Հաջորդ օրը ես լքեցի Մեքսիկան: Չէի անհանգստանում, որ պաշտոնյայի հետ չհանդիպեցի: Հաջորդ շաբաթ Մեքսիկայի հովի-

վը եկավ Միացյալ Նահանգներ՝ իր հետ բերելով Մոնթերեի ամսագրի մի օրինակ: Նա առաջին էջից կարդաց մի հոդված մեր ծառայության մասին:

Ամսագիրը տեղեկացնում էր, որ կառավարական պաշտոնյան ասել է, թե ես խաբեբա եմ, ու այն ամենը, ինչ ուզում էի, փողն էր: Ես առաջնորդվել էի, որ ոչ մի փեննի էլ չվերցնեմ այդ երկրից, և ինքս էի հոգացել իմ ծախսերը: Սա լսելուց հետո ես հասկացա, թե ինչու: Բայց և այնպես ամսագիրը շարունակում էր՝ հաստատելով, որ իրենց լրագրողները տեսել էին, որ մարդիկ իսկապես բժշկվում էին: Փա՜ռք Աստծուն:

Կառավարական պաշտոնյան փորձեց կանգնեցնել ինձ իր սպառնալիքներով: Եթե հովիվը և ես ընկնեինք այդ սպառնալիքների ազդեցության տակ, Աստծո պարգևը մեր կյանքում հանգած կլիներ: Ոչ ոք չէր փրկվի, ու ոչ մեկի համար էլ ծառայություն չէր լինի այդ երեկո: Այն խոսքը, որ Նա խոսեց ինձ Իր Հոգով, ինձ համարձակություն էր տվել՝ կոտրելու երկչոտությունը, որը արձակված էր իմ դեմ: Ահա դա է զգաստության զորությունը:

Այն, ինչ մարդը աննշան է համարում, Աստված օգտագործում է անհնարինն անելու համար։

Զգտիր առաջ

Նեեմիան մի հրեա էր, որն ապրում էր այն ժամանակ, երբ Իսրայելը գերության մեջ էր: Մի քանի տարի առաջ բաբելոնացիները եկել և ամբողջությամբ կործանել էին Երուսաղեմը: Նրանք սպանել կամ գերի էին վերցրել քաղաքի բնակիչներից շատերին: Պարիսպներն այրված և փլված էին, քաղաքը թողել էին ավերակների մեջ:

Աստված Նեեմիայի սրտի մեջ դրել էր վերադառնալ Երուսաղեմ և վերակառուցել պարիսպներն ու քաղաքը: Նեեմիան օտար թագավորին ծառայել էր հավատարմորեն և արժանացել էր նրա բարեհաճությանը: Թագավորը նրան թույլ տվեց գնալ և իրականացնել այն ամենը, ինչ Աստված դրել էր նրա սրտում: Նեեմիան անմիջապես գնաց Երուսաղեմ և հավաքեց ողջ մնացածներին՝ քաջալերելով նրանց վերականգնել այն ամենը, ինչ թշնամին կործանել էր: Նրանք հանդիպեցին վիթխարի դիմադրության: Տեղացի երեք պաշտոնյաներ՝ Սանաբաղատը, Տուբիան և Գեսամը չէին ցանկանում, որ պարիսպները վերակառուցվեն: Նրանք դեմ էին Իսրայելի բարգավաճմանը և վճռել էին կանգնեցնել Նեեմիային ու Աստծո ժողովրդի մնացորդին և ամեն տեսակի դավեր էին նյութում նրանց վախեցնելու համար:

Երբ այս առաջնորդներն իմացան Նեեմիայի ծրագրերի մասին, ինչպես Նեեմիան է պատմում, ծաղր արին և արհամարհեցին (Նեեմիա 2.19): Նրանք ոչ միայն փորձում էին հուսահատեցնել Նեե-

միային և նրա մարդկանց, այլև փորձում էին հիմարացնել նրանց ժողովրդի աչքերում, ծաղրում էին ստորացնող խոսքերով. «Եթե նրանց շինածի վրա մի աղվես էլ վեր ելնի, նրանց քարի պարիսպը կքանդի» (Նեեմիա 4.3):

Հաճախ մարդիկ փորձում են վախեցնել քեզ՝ ծիծաղելով քեզ վրա կամ էլ մատնացույց անելով այն, ինչ անում ես: Նրանք կարող են ծաղրել քեզ կամ կասկածել քո կարողության վրա, որով կատարում ես այն ամենը, ինչ Աստված դրել է քո սրտում: Այս ամենը կարող են անել առերես կամ էլ կասկածներ և ծաղրանք սերմանելով ուրիշների մեջ: Հնարավոր է նաև, որ մարդիկ չեն հակառակվում քեզ, այլ դու կռվում ես քո սեփական մտքի հետ, քանի որ այն ռմբակոծվում է այնպիսի մտքերով, ինչպիսիք են՝ ի՞նչ կմտածեն մարդիկ, նրանք կծիծաղեն ինձ վրա, իսկ եթե ձախողվե՞մ:

Այսպիսի իրավիճակներում կարևոր է, որ մենք իմանանք, թե Աստված ինչ է պատվիրում մեզ անել: Հիշենք, որ Նա «աշխարհի տկարներին ընտրեց, որ ամաչեցնի զորավորներին» (Ա Կորնթ. 1.27): Այն, ինչ մարդն աննշան է համարում, Աստված օգտագործում է անհնարինն անելու համար: Դրանից հետո Նա է առնելու ողջ փառքը:

Նեեմիան ծոմ պահեց և աղոթեց այնքան, մինչև որ ունեցավ Տիրոջ միտքը: Դրանից հետո նա կարողացավ համարձակորեն հակառակվել իր թշնամիներին:

«Երկնքի Աստվածն Ինքը մեզ հաջողություն է տալու, և մենք՝ նրա ծառաներս, վեր ենք կենալու, որ շինենք, իսկ դուք բաժին, իրավունք և հիշատակ չունեք Երուսաղեմում» (Նեեմիա 2.20):

Երբ նրանք հասկացան, որ չէին կարող կանգնեցնել Նեեմիային, իսկ իսրայելցիները առաջընթաց ունեին իրենց գործի մեջ, շատ բարկացան: Այլևս չէին ծիծաղում, քանի որ իրավիճակը ծիծաղելի չէր: Նրանք դավ նյութեցին և կարծում էին, որ քաղաքի վրա հարձակվելով կարող էին խառնաշփոթության մեջ գցել ամբողջ ծրագիրը (Նեեմիա 4.7,8):

Բարկությունը երկչոտության մեկ այլ զենք է: Այն կօգտագործվի քո դեմ, որպեսզի քեզ կանգնեցնի կամ հուսահատեցնի: Բարկությունից կարող են գալ թե՛ ակնհայտ, թե՛ աննկատ սպառնալիքներ: Այս հարձակումը արդյունավետ միջոց է քեզ վախեցնելու համար: Ես հաճախ եմ տեսել, թե ինչպես են մարդիկ ուրիշների զայրույթից խուսափելու համար հրաժարվել անել այն, ինչը գիտեն, որ ճիշտ է: Նրանք հատուկ զիջումներ են անում՝ կեղծ խաղաղություն պահպանելու համար:

Ճնշում դրսից և ներսից

Նեեմիան ոչ միայն հարձակման հանդիպեց անաստվածների կողմից, այլև խնդիրներ ուներ իր մարդկանց հետ, որոնք անհանգստացած էին ստեղծված իրավիճակից: Հաճախ, երբ Աստված մեզ ինչ-որ բան է հանձնարարում, մենք դիմադրության ու հակառակության ենք հանդիպում և՛ դրսից, և՛ ներսից:

Նեեմիայի մարդիկ ձանձրացել էին: Աղբն այնքան շատ էր, որ գործը առաջ չէր գնում (Նեեմիա 4.10): Մեկ ուրիշ խնդիր էլ կար: Նրա հարուստ աշխատողները ֆինանսական ճնշում էին գործադրում այն ընտանիքների վրա, որոնք պարտքի մեջ էին. նրանցից մեծ եկամտահարկ էին պահանջում մշակած դաշտերի համար (Նեեմիա 5.1-8): Սա հուսահատեցնում էր այն մարդկանց, որոնց ընտանիքները նեղության մեջ էին: Այս ներքին խնդիրներն ավելի էին դժվարացնում թշնամու կողմից եկող ճնշմանն ու հուսահատությանը դիմադրելը:

Վախ ամեն կողմից

Ես եղել եմ այսպիսի իրավիճակներում: Երբ առաջին անգամ սկսեցի ճանապարհորդել, ինձ խնդրել էին օգնել մի եկեղեցու, որը կորցրել էր իր հովվին: Եկեղեցին մի փոքր քաղաքում էր, որտեղ ապրում էր ութ հարյուր մարդ: Երկու ծառայությունից հետո եկեղեցու բոլոր պատանիներն ու մեծերը ապաշխարհեցին և վերապրեցին Աստծո զորությունը: Աստծո շարժի հետևանքով եկեղեցու անդամների թիվը հասավ հարյուրի: Իմ կինը և ես այնքան շատ կարեկցանք ունեինք այդ մարդկանց հանդեպ, որ հետաձգեցինք հաջորդ վեց շաբաթների մեր ծառայությունները: Մենք որոշեցինք մնալ, որպեսզի ուժեղ հիմք դնենք այս եկեղեցում և պատրաստենք այն նոր հովվի համար:

Ավագներից շատերին դուր չէր գալիս այն, ինչ ես քարոզում էի: Մի մարդ վրդովվեց, որովհետև, երբ մտավ երրորդ ծառայությանը, բոլոր պատանիները եկեղեցում նստած էին առաջին երկու շարքերում, որտեղ սովորաբար ինքն ու իր կինն էին նստում (Այս եկեղեցում տղաներն ու աղջիկները միշտ վերջին շարքերում էին նստում):

Ուրիշներն էլ ասում էին, որ ես չափն անցնում եմ: Պատճառն այն էր, որ նրանք ուզում էին վերահսկել ինձ և եկեղեցին առաջ տանել իրենց ուզած ձևով: Նրանց հետ մի քանի հավաքույթ անցկացնելուց հետո վերջապես ասացի. «Ես այստեղ իշխանություն ունեմ վեց շաբաթ, դրանից հետո ձեր նոր հովիվը կծառայի: Միայն այսպես է լինելու: Դուք որոշեք»:

Այն օրը, երբ նրանք պետք է տեղեկացնեին ինձ իրենց որոշման մասին, զանգահարեց տեղացի մի թմրամոլ, որի կինը գալիս էր ծառայություններին: Կինն ամուսնուն խոստովանել էր, որ շնություն էր արել նրա լավագույն ընկերոջ հետ: Այդ մարդը որոշել էր իր բարկությունը թափել իմ և եկեղեցու վրա: Նա ասաց, որ այդ երեկո ես խնդիրներ կունենամ:

Ես ուշադրություն չդարձրի նրա սպառնալիքի վրա: Մի քանի ժամ հետո ավագներից մեկը, որն օգնում էր մեզ, տեղեկացրեց ինձ, որ այդ մարդը զանգահարել էր իրեն և սպառնացել, որ կպայթեցնի դահլիճը:

Ես հանձնարարեցի նրան զանգահարել ոստիկանություն և խնդրել, որ հետևեն այդ տղամարդուն:

Մի քանի ժամ անց ես զանգ ստացա ոստիկանությունից: Մի սպա ասաց. «Պարո՛ն Բիվեր, խնդրում եմ եկեք ոստիկանության բաժին և ստորագրեք մի փաստաթուղթ, որ համաձայն եք այս մարդու ձերբակալության հետ»:

-Պարո՛ն սպա, ես չեմ ցանկանում այդ մարդուն ձերբակալված տեսնել: Նա կոտրված է: Միակ բանը, որ խնդրում եմ, այն է, որ այս երեկո ապահովեք շենքի պաշտպանությունը:

-Իմ հերթապահությունն ավարտվում է չորս ժամից, իսկ ոստիկանության մոտակա բաժինը երեսունհինգ մղոնի վրա է (մոտ հիսունյոթ կիլոմետր):

Այս երեկո նրանք չեն հասցնի որևէ մեկին ուղարկել,- ասաց նա:

-Ես չեմ ցանկանում այդ մարդու ձերբակալումը,- պատասխանեցի ես:

-Պարո՛ն Բիվեր, որքա՞ն ժամանակ եք ապրում այստեղ:

Ես ասացի նրան, որ այդ քաղաքից չեմ:

-Պարո՛ն Բիվեր, ես ճանաչում եմ այդ մարդուն: Նա այստեղ «հեղինակություն» է: Նա թմրամոլ է: Եթե նա մի քիչ էլ գարեջուր խմի, ես էլ ոչինչ չեմ կարող անել:

Ես չէի հավատում լսածիս: Ոստիկանն ասաց, որ այդ մարդը վտանգավոր էր, այնպես որ համոզվեցի, որ իրականում նա այդպիսին էր: Բայց դեռ զգում էի, որ չպետք է ստորագրեմ փաստաթուղթը: Ես նրան մերժեցի և շնորհակալություն հայտնեցի:

Ես ոչ միայն գործ ունեի այդ մարդու սպառնալիքների հետ, այլև խնդիրներ ունեի ավագների հետ: Մտածեցի. «Սա անհեթեթ է:

Ավագներն ինձ համար դժվարություններ են ստեղծում. չեն ուզում, որ ես այստեղ լինեմ: Հիմա էլ ինձ և իմ ընտանիքին սպառնում է մի մոլագար»:

Իմ ներսում մի ձայն ասում էր, որ ես թափ տամ ոտքերիս փոշին և մինչև մայրամուտ ընտանիքս դուրս բերեմ այդ քաղաքից: Եթե ես չիմանայի, որ Աստված էր ուղարկել ինձ, կհեռանայի հանուն իմ ընտանիքի: Այնուամենայնիվ իմ սիրտը թույլ չէր տալիս ինձ գնալ երեք պատճառով: Առաջինն այն էր, որ Աստված էր ուղարկել ինձ, և ես Նրանից չէի լսել, որ կարող եմ հեռանալ: Երկրորդը՝ ես չէի ուզում հրաժարվել այն մարդկանցից, որոնք Տիրոջ հպումն էին զգացել, և երրորդը՝ եթե դու մի անգամ փախչես վախի պատճառով, ավելի հեշտ կլինի փախչել հաջորդ անգամ:

Ես ունեի Տիրոջ միտքը և որոշեցի մնալ, եթե դա կհամապատասխաներ ավագների կայացրած որոշմանը: Մի քանի ժամ անցկացրի աղոթքի մեջ: Դա աղոթքի ամենաուժեղ ժամանակներից մեկն էր, որ ես երբևիցե ունեցել էի: Աստծո պարգևն իմ մեջ զորացավ: Ես պատրաստ էի երեկոյան ծառայությանը:

Երբ հասա եկեղեցի, իմացա, որ չպետք է մնայի. ավագները ծառայությունից առաջ հավաքվել էին: Երեցներից մեկը տեղեկացրեց, որ քվեարկել են և որոշել, որ ես պետք է հեռանամ: Այդ երեկո իմ վերջին ծառայությունն էր:

Ես վշտացա, բայց որոշեցի պարզապես կենտրոնանալ այն բանի վրա, թե այդ երեկո Աստված ինչ էր ուզում անել ժողովրդի համար: Ես մի զորավոր ուղերձ քարոզեցի, և Աստծո զորությունն այնքան ուժեղ էր, որ բոլոր մարդիկ հատակին էին ընկել:

Շատերը, որոնք հեռացել էին Աստծուց, իրենց կյանքերը հանձնեցին Տիրոջը: Այն մարդը, որը սպառնում էր, նույնիսկ չերևաց: Ծառայության վերջում ես ստիպված էի հայտարարել, որ ավագները չեն ցանկանում, որ ես մնամ: Ժողովուրդը դժգոհության ձայն բարձրացրեց: Քանի որ ես չէի եկել բաժանություն բերելու, դրա

համար էլ հեռանում էի խաղաղ:

Անցավ մեկ շաբաթ: Այդ նույն ավագներն ընտրեցին մի հովվի, որը, ինչպես հետո բացահայտվեց, համասեռամոլ էր: Հաջորդ տարվա ընթացքում նրանք չորս հովիվ փոխեցին:

Երկչոտության հոգին, որ գործում էր այդ եկեղեցու ավագների մեջ, լուրջ վնաս հասցրեց այդ համայնքին:

Մնա՛ ուժեղ և կենտրոնացած

Հենց նոր էր Նեեմիան լուծել իր և իր մարդկանց միջև ծագած ներքին խնդիրները, երբ վախեցնելու մի ուրիշ ալիք եկավ:

> *«Այն ժամանակ Սանաբաղատը և Գեսամը մարդ ուղարկեցին ինձ մոտ և ասացին՝ եկ միասին տեսակցվենք Ովնովի դաշտում՝ գյուղերում, բայց նրանք մտածում էին, որ ինձ չարություն անեն: Եվ ես նրանց մոտ պատգամավորներ ուղարկեցի՝ ասելով. «Ես մեծ գործով զբաղված եմ և չեմ կարող իջնել: Ինչո՞ւ գործը դադարի, երբոր ես թողնեմ նրան և իջնեմ ձեզ մոտ»: Բայց նրանք այս բանով չորս անգամ ինձ մոտ ուղարկեցին, և ես նրանց նույն խոսքը պատասխանեցի» (Նեեմիա 6.2-4):*

Սանաբաղատը և Գեսամը համառում էին՝ փորձելով շեղել Նեեմիայի ուշադրությունը: Բայց Նեեմիան ուժեղ մնաց՝ կենտրոնանալով այն բանի վրա, որ Աստված էր պատվիրել նրան անել: Նեեմիան չէր ցանկանում, որ իրեն խանգարեն կատարել հանձնարարությունը:

Թշնամին միշտ ցանկանում է շեղել մեր ուշադրությունը, որպեսզի մեզ անարդյունավետ դարձնի մեր գործի մեջ: Սատանան միայն մեկ անգամ չէ, որ կփորձի այդպես անել. սատանան համառ է: Մենք ավելի ուժեղ պետք է լինենք մեր որոշման մեջ, քան նա: Ահա թե ինչու է Աստվածաշունչն ասում. «Որին հակառակ կացեք հա-

վատքով հաստատված…» (Ա Պետր. 5.9): «Հաստատված» բառը նշանակում է «ուժեղ, հաստատակամ և անշարժ»: Շատ մարդիկ հանձնվում են թշնամու մի քանի հարվածից հետո, այնինչ պետք է ավելի անշարժ մնան այնքան, մինչև որ հաղթանակն ամբողջական լինի:

Սանաբաղատն իր ծառային հինգերորդ անգամ ուղարկեց Նեեմիայի մոտ, այս անգամ՝ մի նամակով, որում մեղադրում էր նրան ապստամբ լինելու և ինքն իրեն Հուդայում թագավոր դնելու մեջ (Նեեմիա 6.5-7): Սուտ մեղադրանք:

Նեեմիան շարունակում էր աշխատանքը: Նա շատ կենտրոնացած էր և ուշադրությունը չէր շեղում զրպարտության պատճառով: Շատ հաճախ մենք մեր ընթացքից ընկնում ենք՝ փորձելով լուծել թշնամու հետ կապված հարցերը, թշնամու, որը փորձում է վախեցնել մեզ:

Ես նայել եմ շատերի աչքերին ու ասել. «Ինչո՞ւ եք թույլ տալիս, որ մարդկանց ստերը ազդեն այն բանի վրա, ինչի համար Աստված կանչել է ձեզ: Հենց այն, որ ինչ-որ մեկը մեղադրում է ձեզ, դա չի նշանակում, որ նա ճիշտ է կամ էլ ճշմարտությունն է ցանկանում: Դուք պետք է իմանաք այն, ինչ Աստված ասում է ձեր մասին և որն է Նրա ծրագիրը ձեզ համար:

Ինչո՞ւ եք ուշադրություն դարձնում հիմարության վրա: Աստվածաշունչն ասում է. «Մի՛ պատասխանիր հիմարին նրա տխմարության համեմատ, միգուցե դու էլ նրան նմանվես» (Առակ. 26.4):

Վերջին մարդը, որ փորձում էր կանգնեցնել Նեեմիային, եկավ ու մարգարեացավ, թե Նեեմիան պետք է թաքնվի տաճարում, որովհետև թշնամին գալիս է, որ սպանի նրան (Նեեմիա 6.10): Բայց եթե Նեեմիան գործը թողներ, դա կթուլացներ մարդկանց, և գործը ավարտին չէր հասնի:

Նեեմիան արձագանքեց. «Մի՞թե ինձ նման մարդը կփախչի և ինձ նման ո՞րը կգնա տաճարը, որ ողջ մնա. ես չեմ գնա» (Նեեմիա

6.11): Նեեմիան հետո հասկացավ, որ բոլորովին էլ Աստված չէր ուղարկել այդ մարդուն: Նա մարգարեացավ Նեեմիայի դեմ, որովհետև Տուբիան և Սանաբաղատը վարձել էին նրան: Այժմ տե՛ս, թե Նեեմիան ինչ ասաց սրանից հետո.

> *«Նրա համար էր նա վարձել, որպեսզի ես վախենամ և այնպես անեմ ու հանցավոր լինեմ և սա նրանց համար առիթ լինի իմ անունը վատաբանելու, որ ինձ նախատեն» (Նեեմիա 6.13):*

Թշնամին կվատաբանի քո անունը, որ վախենաս ու պաշտպանես ինքդ քեզ: Նեեմիան ուներ Տիրոջ միտքը, դրա համար էլ նա կարող էր զանազանել մաքուրն ու ճիշտը չարությունից և խաբեությունից:

Սանաբաղատի, Գեսեմի և Տուբիայի պատրաստած խարդավանքները Նեեմիան գնահատեց այսպես.

> *«Որովհետև նրանք ամենքը մեզ վախեցնում էին ասելով՝ նրանց ձեռքերը կթուլանա այդ գործից և չի կատարվի: Բայց Դո՛ւ, ով Աստվա՛ծ, զորացրու իմ ձեռքերը» (Նեեմիա 6.9):*

Նորից մենք տեսնում ենք վախեցնելու նպատակը, այսինքն՝ թուլացնել մեզ, որ չկարողանանք իրագործել Աստծո կամքը և այլևս չդիմադրել մեզ վախեցնողին: Եթե մենք սրա դեմ հաստատակամ չկանգնենք, կպարտվենք:

Մեր թշնամին՝ սատանան, ձեռնարկում է վախեցնելու շատ ուղիներ, երբ մենք մտնում ենք նրա տարածք: Սատանան մի անգամ չէ, որ փորձում է ու հետո ետ է քաշվում: Եթե նա կարողանա ստիպել, որ հապաղենք, կանգնենք, կամ թուլանանք, դրանից հետո կխանգարի Աստծո արքայության առաջընթացին:

Նեեմիան և իր մարդիկ ավարտեցին պարսպի վերականգնումը:

Այժմ պաշտպանված քաղաքը կարող էր վերականգնվել: Դա հեշտ չէր: Ամեն քայլափոխի նրանք վիթխարի դիմադրության ու հակառակության էին հանդիպում: Բայց մարդիկ գիտեին, որ Աստված էր խոսել, և նրանք մերժում էին նահանջելը:

Կոտրել վախը՝ ճեղքելով դիմադրությունը

Նեեմիայի վճռականությունը մի դասական օրինակ է հավատացյալների համար.

> *«Ոչ իբր արդեն բռնած լինեմ, կամ թե արդեն կատարյալ եղած լինեմ, բայց հետևում եմ (ձգտում եմ), որ գուցե թե հասնեմ Նրան, ինչպես որ էլ հենց Քրիստոս Հիսուսից բռնված եմ» (Փիլիպ. 3.12):*

Այստեղ բանալին «ձգտել» բառն է: Պողոսը Սուրբ Հոգով ասաց՝ ես ձգտում եմ: Նեեմիան նույնպես ձգտում էր՝ հաճախ անցնելով դիմադրության միջով: Մենք չենք կարող ուղղակի շրջանցել: Մենք պետք է վճռականորեն գործենք և ճեղքելով անցնենք դրա միջով:

Պողոսը շարունակում էր՝ ասելով.

> *«Հետևում եմ (ձգտում եմ) դեպի նպատակը՝ Աստծո վերին կոչումի մրցանակին Քրիստոս Հիսուսում» (Փիլիպ. 3.14):*

Գոյություն ունի վերին (բարձր) կոչում և ցածր կոչում: Վերին կոչումը մի կյանք է, որով ապրում են երկրի վրա՝ երկնքի չափանիշներով: Այդ կյանքի մեջ Աստծո թագավորությունը դրսևորվում է անհատի կյանքով: Մարդիկ, ովքեր ապրում են վերին կոչման մեջ, ազդում են իենց շրջապատի վրա: Մնալով իրենց իշխանության մեջ՝ նրանք փոխում են հոգևոր մթնոլորտը և ազատություն են բերում ճնշումներից:

Խավարը չի կարող հաղթել լույսին. լույսը քշում է խավարը:

Որքան պայծառ է լույսը, այնքան շատ խավար է ցրվում: Ահա թե ինչպես ենք մենք քայլում Աստծո արքայության իշխանության մեջ: Այդպես մեր շրջապատի մարդկանց բերում ենք Աստծո արքայության ղեկավարման տակ:

Հիսուսը կարող էր հաց կիսել մեղավորների հետ, քանի որ կարող էր վերահսկել մթնոլորտը: Եթե դու Աստծո մեջ ավելի ուժեղ ես, քան անհավատը սատանայի մեջ, դու կարող ես վերահսկել մթնոլորտը: Եթե մեղավորը չարի մեջ ավելի գերիշխող է, քան հավատացյալն արդարության մեջ, ապա անհավատը կվերահսկի հոգևոր մթնոլորտը:

Եթե դու որոշել ես ապրել վերին կոչման մեջ, կհանդիպես դիմադրության և հակառակության: «Եվ ամենը, որ կամենում են աստվածապաշտությամբ ապրել Քրիստոս Հիսուսում, հալածանք պիտի կրեն» (Բ Տիմոթ. 3.12): Նորից մեզ ասվում է. «Շատ նեղություններով պետք է ձեզ մտնել Աստծո արքայությունը» (Գործք 14.21):

Մինչդեռ շատ քրիստոնյաներ որոշում և ապրում են ցածր կոչման մեջ: Ինչո՞ւ: Նրանք չեն ցանկանում հանդիպել այն դիմադրությանը, որով վճռականորեն կգործեն դեպի վերին կոչումը: Նրանք գերադասում են հարմարվել իրենց շրջապատի մարդկանց, քան թե աստվածային դիմադրությամբ փոխել նրանց: Ավելի հեշտ է համակերպվել, քան դեմ կանգնել: Ոմանք, երբ հանդիպում են հակառակության, որոշում են փոխզիջման գնալ և փնտրում են ամենամեղմ դիմադրության ուղին:

Ես կարծում եմ, որ երբեմն հեշտ ու հարմարավետ կյանք կառուցելու մեր ցանկությունն է լինում պատճառը, որ մենք չենք ցանկանում հակառակվել: Մենք զգուշորեն կառուցում ենք մեր կյանքը՝ խուսափելով ցանկացած դժվարությունից: Ես ոչ թե արդարացնում եմ կյանքի դժվարությունները, այլ, իրոք, կարծում եմ, որ մենք ավելի շատ վստահում ենք մեր նախագծերին ու ծրագրերին, քան Աստծուն:

ԱՄՆ-ում մենք ունենք բժշկական ապահովագրություն: Եթե հիվանդանում ենք, անմիջապես վազում ենք բժշկի մոտ, բայց չենք մտածում նախ՝ աղոթելու մասին, որովհետև գիտենք, որ մեր ունեցած ապահովագրությունը ծածկում է ծախսերը: Մեր աշխատանքի դիմաց յուրաքանչյուր մեկ կամ երկու շաբաթը մեկ անգամ մեզ տրամադրում են աշխատավարձի կտրոն: Եթե կորցնում ենք մեր աշխատանքը, ստանում ենք գործազուրկի կարգավիճակ, որը ֆինանսական որոշակի աջակցություն է ապահովում: Եթե դա էլ է սպառվում, գոյություն ունի նպաստ: Եթե նպաստն էլ չտրվի, մենք կարող ենք գտնել մեկ այլ ծրագիր, որը հոգ կտանի մեր մասին: Հնարավոր է, որ նույնիսկ ծուլության համար մեզ վճարեն:

Հեռուստատեսությունը նույնպես քաջալերում է մեզ ապրել պասսիվ կյանքով: Սովորական ամերիկացին շաբաթվա ընթացքում մոտ քսանչորս ժամ անցկացնում է հեռուստացույցի առաջ: Մենք թույլ ենք տալիս, որ ինտերնետային կայքերը և Հոլիվուդը մտածեն մեր փոխարեն: Մեր սկզբունքները ձևավորվում են նրանց ծրագրերից:

Միկրոալիքային վառարանները և արագ պատրաստվող սննդի վայրերը առաջարկում են մեզ պատրաստի կերակուր՝ առանց ջանք գործադրելու: Ոմանք էլ նույնիսկ երաշխավորում են անվճար ճաշ, եթե պատվիրած ուտելիքը չհասցնեն պատրաստել տասնհինգ րոպեի ընթացքում: Մենք ունենք արագ փոստ, հագուստի մեկժամյա չոր քիմիական մաքրում, լուսանկարների արագ երևակում, մեքենաների յուղի արագ փոխում, շուրջօրյա միջազգային լուրերի ստացում, և սրանք մեզ մատչելի հարմարություններից ընդամենը մի քանիսն են:

Սրանցից շատերը հիանալի են: Սրանցով մենք խնայում ենք մեր ժամանակն ավելի կարևոր բաների համար: Բայց և այնպես, հաճախ մենք չենք կարողանում ընտրել կարևորը: Շատ մարդիկ այսօր գործեր չեն ձեռնարկում, եթե դրա համար շատ պետք է աշխատեն:

Դժբախտաբար, այս մտածելակերպը ներթափանցել է արևմուտքի եկեղեցի: Քիչ քրիստոնյաներ ունեն կայուն և վճռական բնավորություն, որն անհրաժեշտ է Աստծո վերին կոչմանը հասնելու համար: Երբ նրանք հանդիպում են դիմադրության, իրենց քայլերը փոխում են դեպի նվազագույն դիմադրության ուղին: Սկզբում փախուստի այս ուղին թվում է, թե լավ ընտրություն է, որը խոստանում է հեշտ ձեռք բերված հաջողություն: Բայց այս ճանապարհին բնորոշ են գոլ վիճակի հատկանիշները՝ փոխզիջում, անտարբերություն և ինքնապահպանում: Հիսուսը սովորեցրեց մեզ դեմ կանգնել թշնամական լեռներին, որից հետո դրանք տեղահան կլինեն: Այլ խոսքերով՝ ոչնչացրո՛ւ լեռը, նույնիսկ եթե դու ստիպված ես քար առ քար ոչնչացնել: Նեեմիայի նման Քրիստոսի ճշմարիտ պատերազմողները վճռականորեն ճեղքելով անցնում են լեռների միջով՝ վստահ լինելով, որ անհնարին ոչինչ չկա նրանց համար, ովքեր հավատում են (Մաթ. 17.20): Սրան հակառակ, նրանք, ովքեր գնում են հեշտության ճանապարհով, շրջանցում են իրեց լեռները՝ խուսափելով հակառակությունից:

Այս աշխարհի համակարգը հիմնված է օդի իշխանի կողմից (Եփես. 2.2): Երկինքը բացահայտ հակառակության մեջ է այս համակարգի հետ: Գնալ երկնքի ճանապարհով նշանակում է մշտապես հանդիպել դիմադրության այս աշխարհի համակարգի կողմից: Դժբախտաբար այս աշխարհի համակարգը գերիշխող է նաև եկեղեցիներից շատերում:

Ես այս դիմադրությունը նմանեցնում եմ մի նավակի, որը լողում է արագահոս գետի հոսանքին հակառակ: Դու շարունակաբար և վճռականորեն պետք է թիավարես ջրի հոսանքին հակառակ: Քո թիակները պետք է միշտ ջրի մեջ լինեն, և դու պետք է անդադար թիավարես: Դու չես կարող նույնիսկ մի վարկյան դադարեցնել թիավարելը: Եթե դադարեցնես, գուցե որոշ ժամանակ իներցիայով գնաս, բայց դա երկար չի տևի, և հոսանքը քեզ կտանի իր ուղղու-

թյամբ: Միգուցե նավակիդ քիթը դեպի վեր է պարզած, սակայն դու գնում ես դեպի ներքև: Այսպես է լինում այն հավատացյալների հետ, ովքեր համառորեն չեն ձգտում առաջ գնալ: Նրանք շարունակում են ցույց տալ, որ քրիստոնեության ուղղությամբ են գնում, բայց հիմա նրանք աշխարհի հետ ետ են գնում:

Այդպիսիք դառնում են կրոնավոր: Նրանք կորցրել են իրենց զորությունը և անարդյունավետ են: Հիսուսի խոսքերը մեջբերելով կարող ենք ասել, որ նրանք «այլևս ոչնչի պետք չեն» (Մաթ. 5.13):

Զորացի՛ր

Այն բանից հետո, երբ Պողոսը հորդորեց Տիմոթեոսին բորբոքել Աստծո պարգևը, նա շտապեց ավելացնել. «Արդ դո՛ւ, իմ որդյա՛կ, զորացի՛ր այն շնորհքով, որ Քրիստոս Հիսուսում է» (Բ Տիմոթ. 2.1): Վճռականորեն առաջ գնալու և երկչոտությունը հաղթահարելու համար մենք պետք է զորանանք:

Պողոսը այսպես է խրատում Կորնթոսի եկեղեցուն. «Արթուն եղե՛ք, հաստատ կացե՛ք հավատքում, արիացե՛ք և ուժովացե՛ք»

(Ա Կորնթ. 16.13):

Խիզախ հավատացյալը դեմ առ դեմ կանգնում է դժվար իրավիճակներին՝ առանց դրանից ետ քաշվելու:

Աստված Հեսուին ոչ թե մեկ, այլ յոթ անգամ քաջալերեց, որ զորանա և շատ քաջություն ունենա:

> *«Միայն թե զորացիր և շատ քաջ եղիր, որ պահես և անես այն օրենքի պես, որ Իմ ծառա Մովսեսը քեզ պատվիրել է: Նրանից չխոտորվես աջ կամ ձախ, որ ամենումն էլ խելամուտ լինես, ուր որ գնում ես» (Հեսու 1.7):*

Ուշադրություն դարձրու, Աստված ասաց, որ զորանա և շատ քաջ լինի: Ո՞րն էր նպատակը՝ պատերազմներում հաղթելու համա՞ր, թե՞ մեծ առաջնորդ լինելու: Ո՛չ, Տիրոջ Խոսքը պահելու համար: Հենց սրանով Հեսուն կլիներ մեծ առաջնորդ և կհաղթեր ցան-

կացած պատերազմում: Երկչտությունը փորձում է զրկել քեզ այն ազատությունից, որով հնազանդվում ես Աստծո Խոսքին կամ կամքին: Դրա համար էլ մենք պետք է ամեն անգամ ուժեղ և քաջ լինենք, այլ ոչ թե փախչենք նրանից, ինչը գիտենք, որ ճիշտ է:

Եկեք սահմանենք *«քաջություն»* բառի նշանակությունը.

> *քաջությունը մեզ համար դժվարություն, վտանգ ներկայացնող կամ ցավոտ հանդիսացող ամեն ինչին դեմ առ դեմ կանգնելու և դրանք լուծելու պատրաստակամությունն է, դժվարություններից չխուսափելու վերաբերմունքը կամ արձագանքը:*

Իսկ ո՞րն է քաջության հակառակը: Դու կարող ես տրամաբանորեն ենթադրել, որ հակառակը վախն է կամ էլ թուլությունը: Եվ սա ինչ-որ չափով ճիշտ է: Բայց և այնպես, ե՛կ վերցնենք վհատություն բառը (անգլերենում՝ courage-խիզախություն և discourage-վհատություն բառերը հականիշներ են): Այնպես որ, Աստված պատվիրում էր Հեսուին և մեզ զորանալ, քաջ լինել՝ թույլ չտալով, որ վհատությունը մտնի մեր սրտի մեջ: Վհատությունը մեզ ետ կպահի Աստծո կամքը իրագործելուց:

Եկե՛ք սահմանենք *«վհատվել»* բառի նշանակությունը.

> *վհատվել նշանակում է զրկվել քաջությունից, դառնալ քիչ վստահող կամ հուսահատ, ունենալ վստահության կամ հույսի պակաս, լինել հուսալքված:*

Հիշի՛ր, թե ինչպես էր Եղիան ընկճված Հեզաբելի վախի պատճառով եկած հուսահատությունից: Նա խույս տվեց և փախավ: Եղիան այնքան հուսահատված էր, որ դուրս էր եկել իր ունեցած իշխանությունից: Մենք պետք է վհատությանը վերաբերվենք որպես թշնամու: Մենք պետք է չթերագնահատենք դրա զորությունը, դա խանգարում է մեզ հասնել Աստծո վերին կոչմանը: Վհատու-

թյունը սպանում է: Եթե դրան չհակառակվենք, այն կստիպի մեզ նահանջել:

> *«Բայց արդարը հավատքից կապրի, և եթե մեկը ետ քաշվի, Իմ անձը նրան չի հավանի» (Եբր. 10.38):*

Շատ կարևոր է հասկանալ, որ Աստված չի հավանում վախկոտներին: Մեզ ասված է. «Ով որ հաղթի, ամենը կժառանգի, և Ես կլինեմ նրան Աստված, և նա կլինի Ինձ որդի: Իսկ *վախկոտներին* և անհավատներին, և պիղծերին, և մարդասպաններին, և պոռնիկներին, և կախարդներին, և կռապաշտներին և ամեն տեսակ ստախոսների բաժինը այս լճում կլինի, որ կրակով և ծծմբով վառված է: Սա է երկրորդ մահը» (Հայտն. 21.7,8):

«*Վախկոտ*» բառը բնորոշում է մեկին, որը վտանգի կամ ցավի հանդիպելիս դրսևորում է ամոթալի վախ»: Արդյո՞ք սթափեցնող չէ, որ Աստված վախկոտներին մարդասպանների և անբարոյականների շարքում է դասել, իսկ մենք արդարացնում ենք մեզ՝ պնդելով, թե վախկոտությունը թուլություն է:

Ո՛չ, վախկոտությունը գալիս է անհավատությունից, իսկ անհավատության համար Իսրայելի զավակները վճարեցին իրենց կյանքով: Նրանք երբեք չմտան խոստացված երկիրը: «Եվ տեսնում ենք, որ չկարողացան մտնել անհավատության պատճառով» (Եբր. 3.19):

Դա ճիշտ է նաև այսօր. վախկոտը չի հաղթում: Նա չի ստանա այն, ինչ խոստացված է իրեն: Պողոս առաքյալի միջոցով Տերը զորավոր ձևով հորդորում է մեզ.

> *«Միայն թե Քրիստոսի Ավետարանին վայելող կերպով գնացեք, որ թե գամ և տեսնեմ ձեզ, և թե հեռու լինեմ և լսեմ ձեր մասին, որ հաստատ եք… Եվ ոչ մի բանով մի զարհուրեք հակառակորդներից» (Փիլիպ. 1.27,28):*

Հաստատուն կանգնիր և թույլ մի տուր քո հակառակորդներին վախեցնել քեզ: Եղի՛ր քաջ, ուժեղ ու խիզախ, պատրաստ հանդիպելու և գործ ունենալու ցանկացած հակառակության հետ՝ չխուսափելով դրանից: Հաջորդ խոսքում Պողոսը շարունակում է.

> *«Եվ ձեզ Աստծուց այդ շնորհք եղավ, ոչ միայն հավատալ Նրան, այլ Նրա համար չարչարվել էլ» (Փիլիպ. 1.29):*

Ի՞նչ չարչարանք է սա, որ մենք պետք է ունենանք: Պետրոսը պատասխանում է.

> *«Արդ Քրիստոս, որ մարմնով մեզ համար չարչարվեց, դուք էլ նույն մտքով զինվորվեք, որ մարմնով չարչարվողը մեղքից դադարեց: Որ այլևս ոչ թե մարդկանց ցանկությունների պես, այլ Աստծո կամքի պես ապրեք մարմնում մնացած ժամանակը» (Ա Պետր. 4.1,2):*

Չարչարանքն այն է, ինչին մենք հանդիպում կամ ինչը համբերում ենք, երբ մեր սեփական մարմինը կամ ուրիշների ազդեցությունն է ճնշում մեզ, որպեսզի գնանք մի ուղղությամբ, այնինչ Աստծո կամքը մեզ համար հակառակ ուղղությամբ գնալն է: Մեզ հրամայված է զորանալ և քաջ լինել, որպեսզի կարողանանք պահել Տիրոջ խոսքը:

Պետրոսն ասում է, որ մենք պետք է մեզ զինենք սրա համար: Եթե քրիստոնյան չի զինվում կամ չի նախապատրաստվում չարչարվելու համար, նման է մի զինվորի, ով գնում է մարտի առանց սպառազինության: Այս զինվորը կա՛մ գերի կընկնի կա՛մ կսպանվի: Այն քրիստոնյաները, որոնք զինված չեն չարչարվելու համար, հեշտությամբ են գերի ընկնում, բանտարկվում են մարդկանցից վախենալու պատճառով:

Մենք պետք է պատրաստ լինենք անսպասելի դիմադրությանը, որը ուղեկցելու է մեզ վերին կոչմանը ձգտելու ընթացքում: Բայց և

այնպես, Պողոսը շտապում էր վստահությամբ ասել. «Եվ կփրկի ինձ Տերն ամեն չար բանից և կազատի, կհասցնի Իր երկնային արքայությանը, Որին լինի փառք հավիտյանս հավիտենից» (Բ Տիմոթ. 4.18): Աստված միշտ էլ մեզ կազատագրի, որ հասնենք Իր փառքին: Ալելուիա՜:

Ուշադրությամբ կարդա Աստծո խոսքից հետևյալ հորդորները: Կարդա այնպես, կարծես դու այն երբևիցե չես կարդացել: Կա՛նգ առ և ժամանակ հատկացրու յուրաքանչյուր Խոսքի վրա խորհելու համար՝ թույլ տալով, որ Սուրբ Հոգին լուսավորի դրանք:

«Եթե Աստված մեր (իմ) կողմն է, ո՞վ է մեզ (ինձ) հակառակ» (Հռոմ. 8.31):

«Ապա ո՞վ կբաժանի մեզ Քրիստոսի սիրուց՝ տառապանք, թե՞ նեղություն, թե՞ հալածանք, թե՞ սով, թե՞ մերկություն, թե՞ վտանգ, թե՞ սուր… Բայց այս ամեն բաներում առավել ևս հաղթում ենք Նրա միջոցով, որ մեզ սիրեց» (Հռոմ. 8.35,37):

«Դուք Աստծուց եք, որդյակնե՛ր, և հաղթեցիք նրան, որովհետև ավելի մեծ է Նա, որ ձեզանում է, քան թե նա, որ աշխարհում է» (Ա Հովհ. 4.4):

Պահպանի՛ր քո սրտի մաքրությունը և մնա իշխանության քո դիրքում որպես Աստծո զավակ և ծառա: Միայն այդ դեպքում դու կարող ես համարձակորեն հայտարարել.

Ավարտելով գիրքը՝ ես հորդորում եմ ձեզ երբեք թույլ չտալ, որ նախկին ձախողումներից որևէ մեկը ձեզ ետ քաշի: Մի՛ գնահատիր քո ապագան քո անցյալով: Եթե դու այդպես անես, երբեք քո անցյալից առաջ չես գնա: Կարևոր չէ, թե որքան հաճախ ես ընկել, միևնույն է, կա մի հաստատուն հույս. Աստված վախկոտներին հաղթող դարձնելու մասնագետ է: Ալելուիա՜: Նրա զորությունը գործում է տկարության մեջ:

Որպես քաջալերանքի մի օրինակ՝ քննենք Սիմոն Պետրոսի եղբոր՝ Անդրեասի կյանքը: Այն գիշեր, երբ Հիսուսին ձերբակալեցին, բոլոր աշակերտները Նրան թողեցին-փախան (Մաթ. 26.56): Պետրոսը միակը չէր, որ վախեցավ. Անդրեասը ևս իր կյանքը փրկելու համար փախավ: Մինչդեռ վախկոտության այս քայլը չի նշանակում, որ Անդրեասը կմնար վախկոտ:

Հիսուսի հարությունից հետո Անդրեասը քարոզեց Եթովպիայում, որը գտնվում էր Հռոմի տիրապետության տակ: Ահա մի պատմական գրառում, թե ինչպես Անդրեասը փառավորեց Հիսուսին (Ֆոքսի «Աշխարհի քրիստոնյա նահատակները» գրքից):

> *Երբ Անդրեասն իր ջանասեր քարոզչության միջոցով շատերին բերեց Քրիստոսի հավատքին, կառավարիչ Էգեասը թույլտվություն խնդրեց Հռոմի սենատից բոլոր քրիստոնյաներին բռնի ուժով զոհաբերել ի պատիվ հռոմեա-*

կան կուռքերի: Անդրեասը մտածեց, որ նա պետք է դիմադրի էգեասին, գնա և ասի նրան, որ մարդկանց դատավորը նախ պետք է ճանաչի և երկրպագի իր երկնային Դատավորին: Անդրեասը ասաց, որ երկրպագելով ճշմարիտ Աստծուն, էգեասը պետք է հեռացնի բոլոր կեղծ աստվածներին և վերացնի կուռքերին իր մտքից:

էգեասը, Անդրեասի վրա կատաղած, պահանջում էր իմանալ, թե արդյոք նա՞ էր այն մարդը, ով վերջերս խառնաշփոթ էր ստեղծել աստվածների տաճարում և մարդկանց համոզում էր քրիստոնյա դառնալ, իսկ քրիստոնեությունը «սնահավատ աղանդ» էր, որը Հռոմում ճանաչվել էր անօրինական:

Անդրեասը պատասխանեց, որ Հռոմի կառավարիչները չէին հասկանում ճշմարտությունը: Աստծո Որդին, Որը եկավ աշխարհի մարդկանց համար, սովորեցրեց, որ հռոմեական աստվածները դևեր են, մարդկության թշնամիներ, որոնք սովորեցնում են մարդկանց վիրավորել Աստծուն և դրանց պատճառով Աստված հեռանում է մարդկանցից: Ծառայելով դևին՝ մարդիկ ընկնում են ամեն տեսակի չարության մեջ, ասում էր Անդրեասը, և մահանալուց հետո բացի չար արարքներից ուրիշ էլ ոչինչ չի հիշվում:

Կուսակալը հրամայեց Անդրեասին երբեք չքարոզել այս բաները, հակառակ դեպքում նա անմիջապես կխաչվեր: Սրանից հետո Անդրեասը պատասխանեց. «Ես չէի քարոզի, որ խաչը պատիվ և փառք է, եթե վախենայի խաչի մահից»: Նա դատապարտվեց խաչելության՝ նոր աղանդի ուսուցման և հռոմեական աստվածների կրոնը մերժելու համար:

Անդրեասը գնաց մահապատժի վայրը և տեսնելով իրեն սպասող խաչը՝ չփոխեց իր դեմքի արտահայտությունը և ոչ էլ հրաժարվեց իր ասածներից: Մահապատժի գնալիս Անդրեասը չկորցրեց գիտակցությունը, ինչպես դա պատահում է մահվան գնացող մարդկանց հետ: Նա ասաց. «Օ՜, երկար սպասված և ցանկալի խաչ: Մտքով պատ-

ռաստ, ուրախությամբ լցված և մեծ ցանկությամբ ես գալիս եմ քեզ մոտ: Ես Նրա աշակետն եմ, Ում գամեցին խաչի վրա: Ես միշտ սիրել եմ քեզ և փափագել եմ փարվել քեզ»:

Սա այն նույն մարդը չէր, ով իր կյանքը փրկելու համար փախավ, երբ Հիսուսին ձերբակալեցին: Նա փոխվել էր:

Փաստորեն, բոլոր աշակերտներն էլ, ովքեր փախան, վերջում սպանվեցին Հիսուս Քրիստոսի վկայության համար: Աստված նրանց արտոնություն շնորհեց հանդիպել հենց այն բանին, ինչից փախան: Վտանգելով իրենց կյանքերը՝ աշակերտները կոտրեցին երկչոտության զորությունը:

Մենք մխիթարվում ենք այն բանի գիտակցումից, որ «Նա, որ ձեզանում սկսեց այս բարի գործը, կկատարի էլ մինչև Հիսուս Քրիստոսի օրը» (Փիլիպ. 1.6):

Աշակերտների կյանքը մեզ վկայում է այն մասին, թե ինչպես է Աստված մեր ձախողումները վերածում հաղթանակների: Մի՛ նահանջիր, այլ խիզախիր հավատալ այն Մեկին, Ով սիրեց քեզ և տվեց Իր անձը քեզ համար:

Ե՛կ միասին աղոթենք.

«Հա՛յր, Հիսուսի անունով ես խնդրում եմ Քեզ, զորացրու ինձ Քո սիրո և իմաստության միջոցով: Ների՛ր ինձ, որ նահանջել եմ դժվարության պահերին՝ իմ սեփական հարմարավետությունը և ապահովությունը պահպանելու համար: Տեր Հիսո՛ւս, այսօր ես ընտրում եմ մերժել իմ անձը, վերցնել իմ խաչը և հետևել Քեզ: Ես Քո ծառան եմ, ես ընդունում եմ Քո շնորհքը, որը կզորացնի ինձ, որպեսզի ես կարողանամ խոսել Քո խոսքը և կատարել Քո կամքը ամենայն համարձակությամբ ու սիրով»:

Այժմ ասա՛ վախի և վերահսկողության հոգուն.

«Ես քանդում եմ վախի և վերահսկողության խոսքերը, որոնք իմ կամ ուրիշների կողմից հռչակվել են իմ կյանքի վրա: Ես քանդում եմ մարդու վախի կապանքները իմ կյանքում: Խավարի պիղծ ոգիներ՛, ես հակառակվում եմ ձեզ և իմ անձը հնազանդեցնում եմ Աստծուն: Իմ կյանքում դու տեղ չունես, հեռացի՛ր իմ Տեր Հիսուս Քրիստոսի անունով: Ամեն»:

*«Եվ Նրան, որ կարող է անարատ
պահել ձեզ եւ անկեղծ կանգնեցնել Իր փառքի առաջին
անբիծ ցնծությունով: Այն մեկ իմաստուն Աստծուն եւ մեր
Փրկչին (մեր Տեր Հիսուս Քրիստոսով) փառք եւ
մեծություն, զորության եւ իշխանություն
(բոլոր դարերից առաջ) եւ հիմա եւ ամեն
Հավիտյաններում: Ամեն»
(Հուդա 24,25):*

These and other teachings in Armenian from John and Lisa Bevere are available to download from:

www.CloudLibrary.org & MessengerInternational.org

Additional resources in many languages are available to view & download on Youtube.com & Yuku.com and other media sharing sites.

Քայլի՛ր Աստծուց քեզ տրված իշխանությամբ, կա՛մ թե ոչ, ինչ-որ մեկը կվերցնի այն եւ կօգտագործի քո դեմ:

Յուրաքանչյուր ոք իր կյանքում ինչ-որ ժամանակ վախեցած է եղել: Դու իսկապե՞ս գիտես, թե ինչու դա պատահեց, կամ ինչ անել, որ այն նորից տեղի չունենա: Ջոն Բիվերը բացահայտում է սպառնալիքներն ու ճնշումները, կոտրում է երկչոտության շղթան եւ ուսուցանում է քեզ ազատ արձակել Աստծո պարգեւները ու հաստատել Նրա գերիշխանությունը քո կյանքի մեջ:

ԴՈՒ ԿԱՐՈՂ ԵՍ ԴԱ ԱՆԵԼ

Դիմակայիր երկչոտության ամենախոր արմատներին եւ սովորի՛ր, թե ինչու է դժվար քեզ համար «ո՛չ» ասելը, թե ինչու ես վախեցած պայքարելուց, թե ինչու ես ջանում խուսափել բախումից եւ թե ինչու ես այդքան շատ էներգիա ծախսում ուրիշներին հաճեցնելու համար:

Թույլ մի՛ տուր, որ քո վախը քեզ եւր պահի: Սթափվի՛ր՝ ազատվելով ընկճվածությունից, եւ քայլի՛ր մի նոր համարձակության ու վստահության մեջ՝ Հիսուս Քրիստոսի զորությամբ:

ՋՈՆ ԲԻՎԵՐԸ հանրաճանաչ հեղինակ է, հոգեժողովների հանրահայտ խոսնակ և օծված ծառայող: Նա և իր կինը՝ Լիզան, որը ևս հանրաճանաչ հեղինակ է, 1990 թ-ին հիմնեցին «Ջոն Բիվերի Ծառայություններ»: Ծառայությունն աճելով դարձել է բազմակողմանի միջազգային մի ծառայություն, որն իր մեջ ներառում է նաև ամեն շաբաթ հեռարձակվող «Պատգամաբեր» հեռատաքծրագիրը: Ջոնի մյուս գրքերն են՝ «Սատանայի խայծը», «Տիրոջ երկյուղը», «Այսպե՞ս էաառում Տերը» և «Սատանայի դուռը».

Download this & other resources at:
www.CloudLibrary.org & MessengerInternational.org